<p>5.</p>	<p>Վթարային, քանդման ենթակա շենքերից բնակիչների վերաբնակեցման նպատակով անհրաժեշտ նոր բազմաբնակարան շենքերի կառուցում և անհրաժեշտ միջոցների ձեռնարկում</p>	<p>Նախատեսվում է բնակարանային շինարարություն իրականացնելու միջոցով բնակելի ֆոնդի ստեղծում՝ 4-րդ կարգի վթարային բազմաբնակարան շենքերի բնակիչներին վերաբնակեցնելու նպատակով, մասնավորապես՝ Երևանի քաղաքապետարանի և ՀՀ կառավարության համատեղ ծրագրի շրջանակներում 2014 թվականին սկսվել է նոր 4 բազմաբնակարան շենքերի շինարարություն Աջափնյակ վարչական շրջանի տարածքում՝ Մարգարյան փողոցի հ.45, Շինարարների 15, Շինարարների 6 և Սիսակյան 16 հասցեներում: Շինարարության ավարտից հետո՝ 2015 թվականի վերջին, հնարավորություն կստեղծվի լուծել 2014 թվականի հունվարի 1-ի</p>	<p>2015 թվականին ավարտվել և շահագործման է հանձնվել թվով 4 բազմաբնակարան շենք՝ Աջափնյակ վարչական շրջանի Մարգարյան փողոցի հ.45, Սիսակյան փողոցի հ.16, Շինարարների փողոցի հ.6/1, Շինարարների փողոցի հ.15 հասցեներում: 01.01.2014 թվականի դրությամբ գույքագրված թվով 9 4-րդ աստիճանի վթարայնության բազմաբնակարան և հանրակացարանային շենքերի բնակիչների վերաբնակեցման հիմնախնդիրը լուծելու նպատակով միայն 2015 թվականին ձեռք բերված բնակարանների քանակը կազմել է 450: Վերջին երեք տարվա ընթացքում կառուցված թվով 6 բազմաբնակարան շենքերի թվով 650 բնակարանները հնարավորություն ստեղծեցին 01.01.2014 թվականի դրությամբ հաշվառված 4-րդ աստիճանի վթարային շենքերի բոլոր բնակիչների վերաբնակեցման համար:</p>		

Երևանի զարգացման 2015 թվականի ծրագրի իրականացման հաշվետվություն

		դրությամբ հաշվառված բոլոր քանդման ենթակա վթարային շենքերում բնակվող ընտանիքների վերաբնակեցման հարցերը:			
6.	Քաղաքացիների և իրավաբանական անձանց սեփականությունը հանդիսացող անշարժ գույքերի գործառնական նշանակությունների փոփոխում	Քաղաքացիների և իրավաբանական անձանց սեփականությունը հանդիսացող անշարժ գույքերի գործառնական նշանակությունների փոփոխում՝ համապատասխան որոշումների միջոցով:	Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2002 թվականի փետրվարի 2-ի <<Հայաստանի Հանրապետությունում շենքերի, շինությունների կամ դրանց մի հատվածի գործառնական նշանակությունը փոփոխելու կարգը հաստատելու մասին>> հ.88 որոշումը՝ աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության կողմից մշակված նախագծերի հիման վրա կայացվել են անշարժ գույքերի գործառնական և հողամասերի գործառնական նշանակությունների փոփոխման վերաբերյալ Երևանի քաղաքապետի թվով 160 որոշումներ, ինչը հնարավորություն է տվել գույքահարկի բազայում կատարել համապատասխան փոփոխություններ՝ գույքահարկի վճարի չափը համապատասխանեցնելով գույքի փաստացի օգտագործման նշանակությանը:		
7.	Նախկինում սեփականաշնորհված, սակայն սահմանված կարգով իրավունքներ չձևակերպած հողամասերի հաշվառման, գույքագրման, դրանց նկատմամբ իրավունքի վերականգնման և ձևակերպման գործառույթների	Նախկինում սեփականաշնորհված, սակայն սահմանված կարգով իրավունքներ չձևակերպած հողամասերի հաշվառման, գույքագրման, դրանց նկատմամբ իրավունքի վերականգնման և ձևակերպման գործառույթները	Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել է նախկինում սեփականաշնորհված, սակայն սահմանված կարգով իրավունքներ չձևակերպված թվով 87 գույքային միավորների հիմքերի վերականգնման և սահմանների ճշտման աշխատանքներ:		

Երևանի զարգացման 2015 թվականի ծրագրի իրականացման հաշվետվություն

	իրականացում	կշարունակվեն նաև 2015 թվականներին:			
8.	Վարձակալությամբ տրված տարածքների և հողամասերի պայմանագրերի ժամկետների վերանայում և վարձավճարների համապատասխանեցում Երևանի ավագանու կողմից սահմանված դրույքաչափերին	Վարձակալությամբ տրված տարածքների և հողամասերի պայմանագրերի ժամկետների վերանայում և վարձավճարների համապատասխանեցում Երևանի ավագանու կողմից սահմանված դրույքաչափերին:	Ավագանու 2014 թվականի դեկտեմբերի 23-ի հ.270-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 35-րդ և 39-րդ կետերի համաձայն, որը սահմանում է Երևան համայնքի սեփականություն հանդիսացող վարձակալության կամ կառուցապատման իրավունքով տրամադրվող հողամասերի տարեկան վարձավճարի չափը՝ հաշվետու ժամանակահատվածում վարչական շրջանների հետ համատեղ նախապատրաստվել և արդյունքում ընդունվել են Երևանի քաղաքապետի թվով 569 որոշումներ:		
9.	Անշարժ գույքի կառավարման էլեկտրոնային ծրագրի մշակում և ներդրում	Անշարժ գույքի կառավարման էլեկտրոնային ծրագրի մշակում և ներդրում, որը հնարավորություն կտա ավտոմատ ռեժիմով կառավարել գույքը, այդ թվում վարձակալությամբ տրամադրված գույքերի դեպքում՝ պայմանագրային պարտավորությունների նկատմամբ հսկողություն իրականացնել:	Երևան քաղաքի սեփականություն հանդիսացող անշարժ գույքի կառավարման համակարգի ներդրում: Համակարգն իրենից ներկայացնում է Երևան քաղաքի սեփականություն հանդիսացող անշարժ գույքի շտեմարան՝ դրանց հետ կնքված պայմանագրերի ժամկետների վերահսկման համակարգով:	<< Երևան քաղաքի կառավարման տեխնոլոգիաների կենտրոն >> ՓԲԸ	
10.	Երևան քաղաքի զարգացմանն ուղղված ներդրումների ակտիվացման նպատակով համապատասխան ծրագրերի	Երևան քաղաքի զարգացմանն ուղղված ներդրումների ակտիվացման նպատակով	Հաշվետու ժամանակահատվածում վարչությունը իր մասնակցությունն է ունեցել Երևան քաղաքում ներդրումային ծրագիր իրականացնելու նպատակով համայնքի սեփականություն հանդիսացող գույքերի		

Երևանի զարգացման 2015 թվականի ծրագրի իրականացման հաշվետվություն

	մշակման գործընթացի մասնակցություն	համապատասխան ծրագրերի մշակման գործընթացի մասնակցություն:	հայտնաբերման, առանձնացման և դրանց օտարումը խթանելու նպատակով ներդրումային առաջարկների կազմման, աճուրդի կամ մրցույթի ներկայացնելու գործընթացում:		
11.	Երևան համայնքի սեփականություն հանդիսացող ֆիզիկական և բարոյապես մաշված և պահպանման համար չհիմնավորված ծախսեր պահանջող գույքերի օտարման գործընթացի կազմակերպում, ինչպես նաև Երևան համայնքի հաշվեկշռում գտնվող գույքերի վարձակալությամբ տրամադրում	Երևան համայնքի սեփականություն հանդիսացող ֆիզիկապես և բարոյապես մաշվածություն ունեցող և պահպանման համար չհիմնավորված ծախսեր պահանջող գույքերի օտարում: Ինչպես նաև Երևան համայնքի հաշվեկշռում գտնվող գույքերի վարձակալությամբ տրամադրում:	Երևան համայնքի սեփականություն համարվող գույքն օգտագործման տրամադրելու, օտարման աճուրդի և մրցույթի կազմակերպման աշխատանքների շրջանակներում հաշվետու ժամանակահատվածում օտարվել է թվով 17 գույք: Բոլոր գույքերի մասով նախապատրաստվել և կազմվել են համապատասխան պայմանագրեր:		
12.	Քաղաքացիների և իրավաբանական անձանց կողմից առանց համապատասխան պայմանագրերի համայնքային սեփականություն հանդիսացող գույքերի օգտագործման դեպքերի հայտնաբերում և համապատասխան ձևակերպումների իրականացում	Քաղաքացիների և իրավաբանական անձանց կողմից առանց համապատասխան պայմանագրերի համայնքային սեփականություն հանդիսացող գույքերի օգտագործման դեպքերի հայտնաբերում և համապատասխան ձևակերպումների իրականացում:	Երևան համայնքի սեփականությունը հանդիսացող տարածքների գույքագրման և հաշվառման վերաբերյալ իրականացված հսկողության արդյունքում հաշվետու ժամանակահատվածում գանձվել է 41.060.100 ՀՀ դրամ վարձավճար, մշտական հսկողություն է սահմանված վարձակալած տարածքների օգտագործողների և վարձավճարների փոփոխության ուղղությամբ, ինչպես նաև կայացվել է դպրոցների ամրակցված շենքերում տարածքները վարձակալությամբ տրամադրելու մասին Երևանի քաղաքապետի թվով 84 որոշումներ:		

Երևանի զարգացման 2015 թվականի ծրագրի իրականացման հաշվետվություն

13.	Երևան քաղաքի կառուցապատման ծրագրերով, գերակա հանրային շահ ճանաչված տարածքներում քաղաքաշինական ծրագրերի կազմման աշխատանքներում համապատասխան աջակցության ցուցաբերում	Երևան քաղաքի կառուցապատման ծրագրերով, գերակա հանրային շահ ճանաչված տարածքներում քաղաքաշինական ծրագրերի կազմման աշխատանքներում համապատասխան աջակցության ցուցաբերում:	Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել է համապատասխան աջակցություն՝ կապված Երևան քաղաքի կառուցապատման ծրագրերով, գերակա հանրային շահ ճանաչված տարածքներում հողամասերի օտարման գործընթացի հետ:		
14.	Անշարժ գույքի օտարման տարեկան ծրագրերի մշակում	Նախորդ տարիների փորձից ելնելով՝ անշարժ գույքերի օտարման տարեկան ծրագրերի մշակում:	Նախապատրաստվել է Երևան քաղաքի սեփականություն համարվող գույքն օգտագործման տրամադրելու և օտարման 2016 թվականի ծրագիրը, որը 2015 թվականի դեկտեմբեր ամսին հաստատվել է Երևան քաղաքի ավագանու կողմից:		
15.	Քաղաքաշինության ոլորտում, ինչպես նաև ՀՀ Հողային օրենսգրքում փոփոխությունների օրենսդրական փաթեթների մշակում, հողային հաշվեկշռի ամենամյա հաստատմանն ուղղված աշխատանքների իրականացում	Քաղաքաշինության ոլորտում, ինչպես նաև ՀՀ Հողային օրենսգրքում փոփոխությունների օրենսդրական փաթեթների մշակում, հողային հաշվեկշռի ամենամյա հաստատմանն ուղղված աշխատանքների իրականացում:	Նախապատրաստվել է Երևան քաղաքի հողային հաշվեկշիռը, որը 2015 թվականի սեպտեմբեր ամսին հաստատվել է Երևան քաղաքի ավագանու կողմից:		
16.	Համայնքային սեփականություն հանդիսացող գույքերի գույքագրում, ընդհանուր բազայի ստեղծում	Համայնքային սեփականություն հանդիսացող գույքերի գույքագրում, ընդհանուր բազայի ստեղծում:	Կատարվել է անշարժ գույքի կառավարման էլեկտրոնային ընդհանուր բազայում մուտքագրված թվով 637 անշարժ գույքի միավորների էլեկտրոնային տվյալների վերլուծություն, ինչի արդյունքում առանձնացվել են բոլոր օտարված անշարժ գույքերի		

Երևանի զարգացման 2015 թվականի ծրագրի իրականացման հաշվետվություն

		միավորները:			
Կոմունալ ոլորտ					
Հ/հ	Ծրագրի կամ միջոցառման անվանումը	Նախատեսված աշխատանքների նկարագիր	Աշխատանքների իրականացման գործընթաց	Իրականացնող կազմակերպություն, կատարման ժամկետ	Նշումներ
1	2	3	4	5	6
1.	Ջրարտադրության, ջրատար համակարգերի և ջրամատակարարման բաշխիչ ցանցերի կառավարման բարելավմանը, ջրային համակարգերի շահագործման արդյունավետության բարձրացմանն ուղղված աշխատանքների իրականացում	(Պայմանագրային 9-րդ տարի 01.06.2014թ.- 31.05.2015թ.) Պայմանագրային 9-րդ տարում շարունակվելու են ջրարտադրության, ջրատար համակարգերի և ջրամատակարարման բաշխիչ ցանցերի կառավարման բարելավմանը, ջրային համակարգերի շահագործման արդյունավետության բարձրացմանն ուղղված աշխատանքները: Ընդ որում, ջրամատակարարման շարունակականության բարելավման հետ մեկտեղ	2015 թվականի հունիսի 1-ին ավարտվեց Երևանի ջրային համակարգերի «Վարձակալության պայմանագրի» 9-րդ տարին: Պայմանագրի իրականացման 9 տարիների ընթացքում զգալիորեն բարելավվել է Երևանի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգը, այն դարձել է արդյունավետ և կառավարելի: Միջոցառումներ են իրականացվել ջրարտադրության, ջրատար համակարգերի և ջրամատակարարման բաշխիչ ցանցերի կառավարման բարելավման, ջրային համակարգերի շահագործման արդյունավետության բարձրացմանն ուղղությամբ: Երևան քաղաքի բոլոր վարչական շրջաններում իրականացվել են ջրամատակարարման բաշխիչ ցանցերի գոտիավորման և ճնշումների կառավարման ծրագրեր, որոնց արդյունքում ընկերության գործունեության և այն բնութագրող հիմնական կատարողական ցուցանիշների գծով զգալի առաջընթաց է ապահովվել:	«Երևան Ջուր» ՓԲԸ	

Երևանի զարգացման 2015 թվականի ծրագրի իրականացման հաշվետվություն

2.	Ջրային օբյեկտների սանիտարական գոտիների սանիտարահիգիենիկ պայմանների պահպանման, բարելավման և անվտանգության ապահովման աշխատանքների իրականացում	կարևորվում են նաև ջրամատակարարման հուսալիության ապահովման հարցերը: Ջրամատակարարման շարունակականության (օրվա ջրամատակարարման ժամերի միջին տևողության) բարելավման հարցում առանձնակի ուշադրություն է դարձվելու ջրամատակարարման առումով ոչ բարենպաստ պայմաններում գտնվող գոտիների բարելավմանը: 2014թ. Երևան քաղաքի բոլոր սպառողների համար ժամը 7 ⁰⁰ -24 ⁰⁰ -ն ընկած ժամանակահատվածում ջրամատակարարման նվազագույն տևողության ցուցանիշ է սահմանվել 12-ժամյա ջրամատակարարումը, սակայն ձեռնարկվելու են միջոցառումներ՝ պայմանագրային 9-րդ տարվա ընթացքում ջրամատակարարման նվազագույն շեմն էլ ավելի բարձրացնելու համար: Պայմանագրային 9-րդ տարում նախատեսվող	<p>Հատկապես հատկանշական է Երևան քաղաքի բնակիչների ջրամատակարարման շարունակականության ցուցանիշի մասով Պայմանագրային 9-րդ տարվա արձանագրված առաջընթացը.</p> <ul style="list-style-type: none"> • Երևան քաղաքի բնակիչներին ջրի մատակարարման միջին տևողությունը օրվա ընթացքում կազմել է 97.13% կամ 23.31 ժամ, այն դեպքում, երբ պայմանագրով նախատեսված 95% ցուցանիշը պետք է ապահովվեր 10-րդ պայմանագրային տարում: • Ջրամատակարարման նվազագույն տևողությունը կազմում է 17 ժամ, ընդ որում՝ բաժանորդների 80%-ն ապահովված է շուրջօրյա ջրամատակարարմամբ, 20%-ը՝ առնվազն 17 ժամ ջրամատակարարմամբ: Ընդ որում, վերջիններիս ջրամատակարարումն ընդհատվում է միայն •իշերային ժամերին: • Ջրամատակարարման տևողության արձանագրված առաջընթացի պահպանման պարագայում տարեցտարի նվազեցվում են նաև ջրարտադրության ծավալները: Պայմանաթի մեկնարկին նախորդող տարվա համար արձանագրված 358.2 մլն խմ ջրատադրության համեմատությամբ՝ պայմանագրային 9-րդ տարում այն նվազեցվել է մինչև 275.2 մլն խմ: Այս առաջընթացն ապահովվել է համակարգում ջրի կորուստների կրճատման և ջրաքանակների օպտիմալ վերաբաշման արդյունքում մեխանիկական եղանակով ջրառի նվազեցման (հին և անարդյունավետ պոմպակայանները շահագործումից 		
3.	Ջրահեռացման ծառայություններ և կեղտաջրերի մաքրում				
4.	Երևան քաղաքի կեղտաջրերի մաքրման «Աէրացիա» կայանի վերականգնում ծրագիր				
5.	Հիմնական կոյուղագծերի վերականգնման ծրագիր				
6.	Երևան քաղաքի ջրամատակարարման ու ջրահեռացման ցանցի վերականգնման և բարելավման ծրագիր				
7.	Ջրամատակարարման ամբողջ ցանցի հեռակառավարման ՍԿԱԴԱ				

Երևանի զարգացման 2015 թվականի ծրագրի իրականացման հաշվետվություն

	ծրագիր	<p>կարևոր բարեփոխումներից են՝ Նոր-Նորքի I և II զանգվածների նվազագույն ջրամատակարարման շեմը 17 ժամ սահմանելը՝ նախկին՝ 12 ժամի փոխարեն, 16 և 17 թաղամասերում 24 ժամ՝ նախկին՝ 17 ժամի փոխարեն, Հարավ-Արևմտյան Ա թաղամասում 24 ժամ՝ նախկին 17 ժամի փոխարեն, և քաղաքի տարբեր թաղամասերի մոտ 80 շենքերում, ջրամատակարարման հին պոմպերը նոր պոմպերով և վարիատորներով փոխարինելու շնորհիվ՝ 3-րդ հարկից բարձր բաժանորդները՝ նախկին 12 ժամի փոխարեն կստանան առնվազն 17-ժամյա ջրամատակարարում:</p> <p>«Վարձակալության պայմանագրի» 9-րդ տարում (01.06.2014-31.05.2015)</p> <p>«Պահպանման և վերանորոգման ընդլայնված աշխատանքների ծրագրով» նախատեսվում է կատարել 1760.0 հազ. ՀՀ դրամի աշխատանքներ:</p> <p>Միայն ջրամատակարարման</p>	<p>հանելու) հաշվին.</p> <ul style="list-style-type: none"> - պոմպերով ջրարտադրությունը 155.6 մլն խմ-ից նվազեցվել է մինչև 58.53 մլն խմ, - ինքնահոս ջրարտադրությունը 202.6 մլն խմ-ից ավելացվել է մինչև 216.67մլն խմ, • էլեկտրաէներգիայի ծախսը 119.4 մլն խմ-ից նվազեցվել է մինչև 22.3 մլն խմ (81.3%-ով), • 2006-2014թթ. ընթացքում ջրամատակարարման համակարգում ջրակորուստը 84.4%-ից նվազեցվել է մինչև 75.33%: Նույն ցուցանիշը 10-րդ տարվա նոյեմբեր ամսվա վերջին կազմել է 74.66% • Անհատական ջրաչափեր տեղադրած բաժանորդների թիվը 89.7%-ից հասցվել է 98%-ի, իսկ ջրաչափերի ցուցմունքների հիման վրա հասույթ ձևավորած ջրածավալը 76%-ից հասել է 99.26%-ի: • Բնապահպանական առումով կարևորվում է նաև անցած տարիների ընթացքում չմաքրված կեղտաջրերի շրջակա միջավայր (ուղղակի գետեր) կատարվող արտանետումների կանխմանն ուղղված «Երևան Ջուր» ՓԲԸ-ի ձեռնարկումները: Պայմանագրի մեկնարկին արձանագրված թվով 17 արտանետումներից արդեն իսկ կանխվել է 11-ը: <p>ՊՎԸԱԾ-ն իրականացվում է ջրի վարձավճարների հավաքման միջոցների հաշվին, որի նպատակն ընդունման պահին գույքի վիճակի գուտ պահպանումից բացի, դրա վիճակի որոշ չափով բարելավումն է: Ծրագրով պայմանագրային 10 տարիների ընթացքում պետք է կատարվեն 17.6 մլն</p>		
--	--------	---	--	--	--

Երևանի զարգացման 2015 թվականի ծրագրի իրականացման հաշվետվություն

		<p>բաշխիչ ցանցի և կոյուղագծերի բարելավման ու վերակառուցման համար «Երևան Ջուր» ՓԲԸ-ի շահագործման պատասխանատուների կողմից ներկայացված առաջնահերթ աշխատանքների համար անհրաժեշտ ընդհանուր գումարը կազմում է 780 մլն ՀՀ դրամ, այդ թվում՝ բախշիչ ցանցի համար՝ 615 մլն ՀՀ դրամ, կոյուղու ցանցի համար՝ 200 մլն ՀՀ դրամ: Ծարունակվելու են ջրային օբյեկտների սանիտարական գոտիների սանիտարահիգիենիկ պայմանների պահպանման, բարելավման և անվտանգության ապահովման միջոցառումները: Այս նպատակների համար նախատեսվում է իրականացնել առնվազն 70 մլն ՀՀ դրամի աշխատանքներ: Մասնավորապես, պայմանագրային 9-րդ տարում ջրային օբյեկտների «Պահպանման և վերանորոգման ընդլայնված աշխատանքների» ծրագրի</p>	<p>Եվրո կամ 10.64 մլրդ ՀՀ դրամ գումարի աշխատանքներ: Վարձակալության պայմանագրով՝ 9-րդ տարում (01.06.2014-31.05.2015) նախատեսված էր կատարել 1451520 հազ. ՀՀ դրամի աշխատանքներ, սակայն «Երևան Ջուր» ՓԲԸ-ի կողմից փաստացի իրականացվել է 2884524 հազ. ՀՀ դրամի գույքի պահպանման, վերանորոգման աշխատանքներ: 10-րդ տարում (01.06.2015-31.05.2016) նախատեսված է կատարել 1451520 հազ. ՀՀ դրամի աշխատանքներ: Մինչդեռ, Երևան Ջուր ՓԲԸ-ի կողմից պայմանագրային 10-րդ տարում նախատեսվել է իրականացնել 2224560 հազ. ՀՀ դրամի աշխատանքներ, իսկ փաստացի, միայն 1-ին կիսամյակի /01.06.2015թ.-30.11.2015թ./ ընթացքում, կատարվել են 1586904 հազ. ՀՀ դրամի աշխատանքներ՝ հետևյալ ուղղություններով՝ ՊՎԸԱԾ աշխատանքներ</p> <p>Ջրամատակարարման բաշխիչ ցանցի բարելավման աշխատանքներ 975878 հազ. ՀՀ դրամ</p> <p>Կոյուղու ցանցի վերակառուցման աշխատանքներ 83146 հազ. ՀՀ դրամ</p> <p>Դիտահորերի վերականգնում 5294 հազ. ՀՀ դրամ</p> <p>Շինարարական աշխատանքներ 120724 հազ. ՀՀ դրամ</p> <p>Նախագծային աշխատանքներ 91108 հազ. ՀՀ դրամ</p> <p>Ասֆալտապատում 110635 հազ. ՀՀ դրամ</p> <p>Ջրամատակարարման բարելավման լրացուցիչ աշխատանքներ 200119 հազ. ՀՀ դրամ</p> <p>Ընդամենը 1586904 հազ. ՀՀ դրամ</p>		
--	--	---	---	--	--

Երևանի զարգացման 2015 թվականի ծրագրի իրականացման հաշվետվություն

		<p>շրջանակներում նախատեսվում է՝ ավարտել Ծարավ Աղբյուրի սանիտարական գոտու վերանորոգման աշխատանքները, բոլոր սանիտարական գոտիներում և պոմպակայաններում իրականացնել անհրաժեշտ վերանորոգումներ, սանիտարական մաքրություն և փոքրածավալ այլ աշխատանքներ, շարունակել ջրատարների վրա հոսակուրուստների հայտնաբերմանն ու դրանց վերացմանն ուղղված միջոցառումները, ավարտել բոլոր ՕԿՋ-ների լվացման աշխատանքները:</p> <p>Ջրահեռացման ծառայություններ և կեղտաջրերի մաքրում</p> <p>«Աերացիա» կեղտաջրերի մաքրման կայանը գործում է մասնակի, կատարվում է միայն մասնակի մեխանիկական մաքրում 16 մմ ճաղավանդակով և ավագորսիչներով, որոնց մաքրումն իրականացվում է</p>	<p>2015 թվականի դեկտեմբերի 28-ի դրությամբ «Պահպանման և վերանորոգման ընդլայնված աշխատանքների» ծրագրի շրջանակներում «Երևան Ջուր» ՓԲԸ-ի կողմից իրականացվել են 14729 գծմ երկարությամբ ջրագծերի, 1240գծմ երկարությամբ կոյուղագծերի, թվով 48 դիտահորերի, հակահրդեհային հիդրանտների 7 հորերի, 603 անհատական ջրաչափական հորերի, 32 բաժանարար դիտահորերի կառուցման և վերակառուցման աշխատանքներ, ինչպես նաև թվով 12 բակային պոմպակայանների վերակառուցման աշխատանքներ:</p> <p>Արձանագրված այս բարելավումների հարցում իր էական ազդեցությունն է ունեցել Համաշխարհային բանկի վարկավորմամբ 2006-2011թթ. 'Երևանի ջրամատակարարման և ջրահեռացման ծրագրի' արդյունավետ իրականացումը:</p> <p>Ակնհայտ է, որ Երևանի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգը ժամանակակից միջազգային ստանդարտներին համապատասխանեցնելու և համակարգի կառավարման անընդհատ կատարելագործումն ապահովելու համար անհրաժեշտ էր շարունակել ներդրումային ծրագրերի իրականացումը:</p>		
--	--	---	---	--	--

Երևանի զարգացման 2015 թվականի ծրագրի իրականացման հաշվետվություն

		<p>տարեկան 6 անգամ:</p> <p>Մաքրման կայան մուտք գործող կեղտաջրերի տարեկան քանակը աճել է 21.7 %-ով՝ 59 մլն մ³-ից հասնելով մինչև 71.8 մլն.մ³-ի: Դեռևս պահպանվում են թվով 6 կետերում կեղտաջրերի ուղղակի արտանետումները դեպի տարբեր ջրային ավազաններ:</p> <p>«Երևան Ջուր» փակ բաժնետիրական ընկերության կողմից իրականացվող ներդրումային ծրագրերից բացի, որոնք հիմնականում ֆինանսավորվում են երկու աղբյուրից՝ Ընկերության սեփական ֆինանսական միջոցների հաշվին (Պահմանման և վերանորոգման ընդլայնված ծրագրի շրջանակներում, որպես Վարձակալության պայմանագրի պարտավորություն) և Համաշխարհային Բանկի վարկային միջոցների հաշվին (Երևանի ջրամատակարարման և</p>	<p>Վարձատուի կողմից նախաձեռնվել է երկու՝ Ֆրանսիայի հանրապետության կառավարության և Վերակառուցման և Ջարգացման Եվրոպական Բանկի ֆինանսավորմամբ իրականացվող վարկային նոր ծրագրերի իրականացումը, որոնց մեկնարկը նախատեսված էր 2015 թվականին:</p> <p>Ծրագրով նախատեսվում է իրականացնել «Աերացիա» կոյուղու մաքրման կայանի վերականգնման (10,186 մլն եվրո), Երևան քաղաքի ջրամատակարարման և ջրահեռացման ցանցի վերականգնման և բարելավման (11.59 մլն եվրո) և Ջրամատակարարման ամբողջ համակարգի հեռակառավարման ՄԿԱԴԱ ծրագրի (1,77 մլն եվրո) աշխատանքներ: Աշխատանքների Պատվիրատու՝ «Համայնքային զարգացման ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ: Գլխավոր Կապալառու՝ ֆրանսիական «Սադե ԲԸ» բաժնետիրական ընկերության հայաստանյան մասնաճյուղ</p>		
--	--	--	--	--	--

Երևանի զարգացման 2015 թվականի ծրագրի իրականացման հաշվետվություն

		<p>ջրահեռացման ծրագրի շրջանակներում՝ ԵԶԶՕ), Ֆրանսիան Հայաստանի Հանրապետությանը տրամադրել է արտոնյալ պայմաններով վարկ Զարգացող Երկրների Պահուստային Ֆոնդի (ԶԵՊՖ) միջոցներից: ԶԵՊՖ-ի տրամադրած ֆոնդի ամբողջ գումարը կազմում է 27,3 մլն եվրո, որից 24,9 մլն եվրոն տրամադրում է Ֆրանսիան, իսկ 2,4 մլն եվրոն համաֆինանսավորման տեսքով հատկացնում է Հայաստանի Հանրապետությունը: Ներդրումային ծրագրի ընդհանուր նպատակը ջրամատակարարման, կեղտաջրերի հավաքման և մաքրման համակարգերի բարելավումն է: Երևան քաղաքի կեղտաջրերի մաքրման</p>	<p>1.Պայմանագրային արժեքը կազմում է 10.186մլն. եվրո Ներմուծվել են 2296022 եվրո ընդհանուր</p>		
	<p>1.Երևան քաղաքի կեղտաջրերի մաքրման «Ալրացիա» կայանի</p>				

Երևանի զարգացման 2015 թվականի ծրագրի իրականացման հաշվետվություն

		<p>վերականգնման ծրագիր նախատեսվում է իրականացնել 2 փուլով՝ 1. Կարճաժամկետ, որի ընթացքում նախատեսվում է մեխանիկական մաքրման համակարգի վերականգնում և առաջնային տիղմի մշակում՝ ժամանակավոր բնապահպանական նորմերի պահանջները բավարարելու համար: Այս ծրագրով միայն 1-ին փուլի իրականացման համար նախատեսված է 10.27 մլն եվրո: 2. Երկարաժամկետ, որը ենթադրում է կենսաբանական և ֆիզիկաքիմիական մաքրումներով ընդարձակել առաջնային մաքրումը՝ միջազգային նորմերը բավարարելու համար:</p> <p><u>2.Ջրամատակարարման ամբողջ ցանցի հեռակառավար մաս</u></p>	<p>արժողությամբ սարքավորումներ և կատարվել են 1484945 եվրո ընդհանուր արժողությամբ հետևյալ աշխատանքները.</p> <p>1. Ինժեներական ուսումնասիրություններ /սարքավորումների և մեքենա/մեխանիզմների տեղակայում, աշխատանքային գծագրերի պատրաստում և փորձաքննության հանձնում /</p> <p>2. Ընդունիչ խցի, խոշոր և մանր ճաղավանդակների կոնստրուկցիաների, հորերի, ավազորսիչի և յուղի անջատման ավազանների, առաջնային պարզարանների</p> <ul style="list-style-type: none"> - հողային աշխատանքներ /գրունտի մշակում և տեղափոխում, ետլիցք, հիմքի հողի ենթաշերտի նախապատրաստում և տոփանում/ - բետոնային աշխատանքներ /հիմքի և պատերի ամրանավորում, բետոնի մատակարարում և տեղադրում, անջրթափանցելիության փորձարկում, շրջանակների տեղակայում/ <p>3. Տիղմի մշակման գոյություն ունեցող շենքի վերականգնում.</p> <ul style="list-style-type: none"> - տանիքի վերականգնում/ գոյություն ունեցող բիտումային ծածկի հեռացում և տեղափոխում, ջրամեկուսացման և մեկուսացման համալիրի մատակարարում, տեղադրում/ - շենքի արևմտյան, հյուսիսային և հարավային ճակատների վերականգնում/ դռների, պատուհանների ապամոնտաժում, նորերի մատակարարում և տեղադրում / <p>2.Պայմանագրային արժեքը կազմում է 1.77 մլն. եվրո:</p>		
--	--	---	---	--	--

Երևանի զարգացման 2015 թվականի ծրագրի իրականացման հաշվետվություն

		<p><u>ՄԿԱՂԱ ծրագիր</u> Ծրագրի նպատակն է «Երևան Ջուր» ՓԲԸ գրասենյակում ստեղծել ավտոմատ կառավարման հանգույց, որը հնարավորություն կտա ոչ միայն տեղեկատվություն ստանալ ջրամատակարարման ցանցում ջրի հոսքի և ճնշումների վերաբերյալ, այլ նաև ավտոմատացված կերպով դրանք կառավարել:</p> <p>3. Հիմնական կոյուղագծերի վերականգման ծրագիր – 1.83 մլն եվրո արժեքով: Ծրագիրը ենթադրում է Երևան քաղաքում ջրամատակարարման և ջրահեռացման ցանցի (18 կմ), ջրամիացումների առաձևացման (10 000 կետերում) և մայր ջրատարների վերակառուցման (15 կմ) աշխատանքներ:</p>	<p>Ներմուծվել են 697366 եվրո ընդհանուր արժողությամբ սարքավորումներ և կատարվել են 278811 եվրո ընդհանուր արժողությամբ հետևյալ աշխատանքները.</p> <ul style="list-style-type: none"> • Ծախսաչափերի ցուցիչների տեղադրում Ապարանի և Կաթնաղբյուրի հորատանցքերում-29 հատ • D=200-500մմ ծախսաչափերի տեղադրում թվով 12 ՕԿՋ-ներում - 27 հատ • D=900մմ ծախսաչափի տեղադրում Արզնի պ/կայանում - 1 հատ • Հեռակառավարման սարքավորումների տեղադրում Բաշխիչ ցանցում - 49 հատ • Հեռակառավարման սարքավորումների տեղադրում ջրատարների վրա - 5 հատ • Հեռակառավարման սարքավորումների տեղադրում ՕԿՋ-ներում - 9 հատ • Հեռակառավարման սարքավորումների տեղադրում պոմպակայաններում - 2 հատ <p>3. Պայմանագրային արժեքը կազմում է 11.59 մլն. եվրո Ծրագրի շրջանակներում նախատեսված էր 23 հասցեներում վերակառուցել d=90-500մմ տրամագծով 5210 զծմ երկարությամբ կոյուղագծեր: 2015թ. դեկտեմբերի 28-ի դրությամբ արդեն վերակառուցվել և շահագործման է հանձնվել 5203զծմ երկարությամբ կոյուղագծեր:</p> <p>Երևան քաղաքի Նորագավիթ, Շահումյան, Կիլիկիա, Դավթաշեն և Քանաքեռ-Զեյթուն թաղամասերում ընդհանուր առմամբ նախատեսված էր փոխարինել</p>		
--	--	---	---	--	--

Երևանի զարգացման 2015 թվականի ծրագրի իրականացման հաշվետվություն

		<p>Հաշվետու ժամանակաձրջանում ֆրանսիական «Սադե» Կապալառու ընկերության կողմից Նորագավիթ, Դավիթաշեն և Շահումյան թաղամասերում, ինչպես նաև Կենտրոն վարչական շրջանի Զաքիյան-Բուզանդ փողոցների հատման խաչմերուկից մինչև Զաքիյան-Քրիստափոր փողոցների խաչմերուկ ընկած հատվածում, Սարի Թաղի 26-րդ և 28-րդ փողոցներում, ինչպես նաև Ծխախոտագործներ-Քրիստափոր փողոցների խաչմերուկ հատվածում հուլիս-օգոստոս-սեպտեմբեր ամիսներին իրականացվել են մոտ 630-650 հազ. եվրո ընդհանուր գումարի կամ 11683 գծամետր ջրամատակարարման ու ջրահեռացման ցանցի խողովակների փոխարինման և դիտահորերի տեղադրման աշխատանքներ:</p>	<p>D=20-225մմ տրամագծի 93754 գծ.մ ջրագիծ: Փոխարինվել է 107027 գծմ երկարությամբ ջրագիծ, որը ընդհանուր ծավալը գերազանցում է 14.1% -ով: Նախատեսված 5883-ի դիմաց փաստացի տեղադրվել է 6278 անհատական ջրաչափական հոր, որը ընդհանուր ծավալը գերազանցում է 6.7% -ով:</p>		
--	--	--	--	--	--

Երևանի զարգացման 2015 թվականի ծրագրի իրականացման հաշվետվություն

		<p>Վերակառուցման և Զարգացման Եվրոպական Բանկի վարկային ծրագիր</p> <p>Վերակառուցման Զարգացման Եվրոպական Բանկի (ՎՋԵԲ) կողմից նախատեսվում է Վարկի տրամադրում Հայաստանի Հանրապետությանը (Վարկառուին)՝ Երևանի ջրամատակարարման բարելավման համար անհրաժեշտ առաջնահերթ ներդրումների իրականացման նպատակով:</p> <p>Ծրագրի իրականացման համար նախատեսված 21 մլն ԱՄՆ դոլար գումարը տրամադրվում է հետևյալ երեք ներդրողների կողմից. Վերակառուցման և Զարգացման Եվրոպական Բանկ (ՎՋԵԲ)՝ 7 մլն ԱՄՆ դոլար:</p> <p>Եվրոպական ներդրումային Բանկ (ԵՆԲ)՝ 7 մլն ԱՄՆ դոլար:</p> <p>ԵՄ հարևանության ներդրումային գործիք (ՀՆԳ)՝ 7 մլն ԱՄՆ դոլար դրամաշնորհ:</p> <p>Ներդրումների ծավալների ուղղությունները որոշվել են</p>	<p>Ծրագրի իրականացմանն աջակցելու նպատակով՝ ՎՋԵԲ-ի ընթացակարգերի համաձայն, վերջինիս հատուկ դրամաշնորհային միջոցներից տրամադրվել է 0.5 մլն Եվրո՝ Ծրագրի աջակցման Խորհրդատուի պայմանագրային գումարի մի մասի վճարումները իրականացնելու համար:</p> <p>Ծրագիրն ուժի մեջ է մտել 2015 թվականի հունիսի 29-ին: Ծրագրի իրականացման ժամկետը սահմանված է 3 տարի:</p> <p>Խորհրդատուի գնահատմամբ Երևան քաղաքի ջրամատակարարման բաշխիչ ցանցում այս ծրագրով նախատեսվում է վերականգնել շուրջ 152 կմ ընդհանուր երկարությամբ ջրազձեր և մասնավոր մոտ 20.000 միացումներ՝ ընդհանուր 15 580 000 ԱՄՆ դոլար արժեքով: Ծրագրի շրջանակներում կկառուցվեն 30 նոր պոմպակայաններ:</p> <p>Հաշվետու ժամանակահատվածում կնքվել է երկու պայմանագիր.</p> <p><u>Ծրագրի իրականացման աջակցման խորհրդատուի պայմանագիրը՝ 0.917 մլն Եվրո (մոտ 486 մլն ՀՀ դրամ) ընդհանուր գումարով:</u> Ծրագրով նախատեսված է շինարարական աշխատանքների նախագծում և գնվելիք ապրանքների տեխնիկական մասնագրերի պատրաստում, աշխատանքների ու ապրանքների գնման մրցութային փաստաթղթերի պատրաստում և մրցույթների արդյունքների գնահատում, դրանց իրականացման վերահսկողության (ներառյալ շինարարական աշխատանքների տեխնիկական վերահսկողության) իրականացում, ինչպես նաև</p>		
--	--	--	--	--	--

Երևանի զարգացման 2015 թվականի ծրագրի իրականացման հաշվետվություն

		<p>այդ նպատակով ներգրավված Տեխնիկական խորհրդատուի՝ չեխական «Centroproject a.s.» ընկերության և ենթախորհրդատու «Grant Thornton» ՓԲԸ-ի (Հայաստան) կողմից, որը ֆինանսավորվել է Չեխիայի հանրապետության կառավարության կողմից տրամադրված 275 հազ. ԱՄՆ դոլար դրամաշնորհի հաշվին:</p> <p style="text-align: center;">Ծրագրում ներառվել են հետևյալ աշխատանքները.</p> <p>Բակային նոր 30 պոմպակայանների կառուցում՝ 1197.0 հազ. ԱՄՆ դոլար արժեքով, ջրամատակարարման բաշխիչ ցանցի շուրջ 152կմ ընդհանուր երկարությամբ առանձին հատվածների վերականգնում՝ 10.2մլն ԱՄՆ դոլար արժեքով այդ հատվածներում առկա անհատական շուրջ 22 կմ ընդհանուր երկարությամբ միացումների փոխարինում՝ 9487.0 հազ. ԱՄՆ դոլար արժեքով:</p> <p style="text-align: center;">Ծրագրի իրականացման</p>	<p>պայմանագրերի հետ կապված ֆինանսական գործառնությունների իրականացում:</p> <p><u>Բակային պոմպակայանների կառուցման և վերակառուցման աշխատանքների պայմանագիրը՝ 414 մլն ՀՀ դրամ ընդհանուր գումարով:</u> Պայմանագիրը ներառում է պոմպակայանների նախագծման, պոմպերի մատակարարման, տեղադրման և պոմպակայանների կառուցման աշխատանքները: Բակային պոմպակայանների կառուցման և վերակառուցման աշխատանքների պայմանագրով ավարտվել են բոլոր 30 պոմպերի ներկրման աշխատանքները:</p> <p>2015թ. դեկտեմբեր ամսին ավարտվել են Մաշտոցի 27ա, Սարյան 33, Սարյան 36, Պուշկինի 60, Սայաթ Նովա 29 հասցեների պոմպակայանների կառուցման աշխատանքները</p>		
--	--	--	---	--	--

Երևանի զարգացման 2015 թվականի ծրագրի իրականացման հաշվետվություն

		<p>արդյունքում նախատեսվում է՝ առանձնատների թվով 39304 անհատական ջրաչափերի փոխարինում ջրամատակարարման բաշխիչ ցանցի վերականգնվող հատվածներում ջրի կորստի նվազեցում՝ 30%-ով, էլեկտրաէներգիայի սպառման կրճատում, ջրամատակարարման տևողության ավելացում, անխափան ջրամատակարարման ապահովում և բաշխիչ ցանցում վթարների նվազեցում:</p>			
9.	Աղբահանության և սանիտարական մաքրման աշխատանքներ	<p>Համաձայն կնքված պայմանագրերի՝ մոբիլիզացիոն ժամկետի (նախապատրաստական աշխատանքներ) ավարտից հետո կմեկնարկեն նոր օպերատորների կողմից Երևան քաղաքի աղբահանության և սանիտարական մաքրման (ներառյալ ձմռան ամիսների) ծառայությունների մատուցման</p>	<p>17.09.2013թ. N ԵՔ-ՄԵԾՁԲ-13/71 Ամենօրյա հսկողություն է իրականացվել Երևան քաղաքի սանիտարական մաքրման ընկերությունների կողմից մայրաքաղաքի փողոցների, մայրերի, հրապարակների, բակային և ընդհանուր օգտագործման այլ տարածքների սանիտարական մաքրման, ինչպես նաև թվով 4865 բազմաբնակարան շենքերից և մոտ 55000 մասնավոր տնատիրություններից իրականացվող աղբահանության աշխատանքների կատարման որակի նկատմամբ: «Սանիթեք» ընկերությունը իրականացնում է Երևան քաղաքի Կենտրոն, Դավթաշեն, Աջափնյակ, Մալաթիա-Մեքաստիա, Արաբկիր, Նորք-Մարաշ, Նոր Նորք, Քանաքեռ-Զեյթուն, Նուբարաշեն և Շենգավիթ</p>	«Սանիթեք» ՍՊԸ	

Երևանի զարգացման 2015 թվականի ծրագրի իրականացման հաշվետվություն

		<p>աշխատանքները, որի արդյունքում Երևան քաղաքի վարչական տարածքում կապահովվի միջազգային չափանիշներին համապատասխան սանիտարական մաքրում և աղբահանություն, կապահովվի համապատասխան տեխնիկայով, մայրաքաղաքի հանրային և բակային տարածքներում կտեղադրվեն միջազգային չափանիշներին համապատասխանող նոր աղբամաններ:</p> <p>Երևան քաղաքի վարչական շրջանների բազմաբնակարան շենքերի խցանված աղբամուղերի մաքրման, ախտահանման, աղբընդունիչի վերանորոգման, շինարարական աղբի տեղափոխման, ինչպես նաև գետերի հունների մաքրման աշխատանքների իրականացման համար</p>	<p>վարչական շրջանների աղբահանության և սանիտարական մաքրման աշխատանքները, որոնց արդյունքում տեղադրվել է եվրոպական չափանիշներին համապատասխան մոտ 4900 հատ 1100լ տարողությամբ անվավոր կոնտեյներներ:</p> <p>Հունվար-փետրվար ամիսներին Երևանի վարչական տարածքում ձյան տեղումների առկայության դեպքում ամեն օր իրականացվել են փողոցների, մայթերի, հրապարակների, ստորգետնյա և վերգետնյա անցումների աստիճանավանդակների և այլ ինժինեռական կառույցների ձյան մաքրման և աղբահանության, իսկ անհրաժեշտության դեպքում մերկասառույցի՝ տեխնիկական աղի և ավազի խառնուրդով մշակման աշխատանքներ:</p> <p>2015թ. Երևանի վարչական տարածքից հավաքվել և տարբեր աղբավայրեր է տեղափոխվել շուրջ՝ 470.000 տոննա կենցաղային աղբ, որից 310.000 տոննան տեղափոխվել է տեղափոխվել է Նուբարաշենի քաղաքային աղբավայր:</p> <p>2015թ. Երևանում հայտարարված համաքաղաքային շաբաթօրյակների աշխատանքներին ակտիվ մասնակցություն են ունեցել սանիտարական մաքրման ընկերությունների աշխատակիցներն՝ իրենց մեքենա-մեխանիզմներով: Շաբաթօրյակին մասնակցեցին նաև ՀՀ նախարարությունների աշխատակազմեր, բուհեր, բանկեր և մի շարք հասարակական կազմակերպություններ:</p> <p>Երևանի ավագանու 25.11.2015թ. հ.416-Ա որոշմամբ ստեղծվել է «Երևանի քաղաքային նոր աղբավայր» փակ բաժնետիրական ընկերությունը:</p>		
--	--	--	---	--	--

Երևանի զարգացման 2015 թվականի ծրագրի իրականացման հաշվետվություն

		<p>կնքվել է ծառայությունների գնման պայմանագիր՝ 10 (տասը) տարի ժամկետով: Նշված աշխատանքների մեկնարկային ժամկետ է սահմանվել 2015թ. հունվարի 1-ը:</p> <p>Աշխատանքներ կիրականացվեն Նուբարաշենի քաղաքային աղբավայրի վիճակը բարելավելու նպատակով: Կիրականացվեն նախապատրաստական աշխատանքներ՝ աղբի վերամշակման տեխնիկական առաջադրանքների մշակման ուղղությամբ՝ ներգրավելով միջազգային խորհրդատվական ընկերությունների: Արդյունքում ակնկալվում է ունենալ միջազգային չափանիշներին համապատասխան կենցաղային աղբի տեսակավորման և վերամշակման գործարաններ:</p>			
--	--	--	--	--	--

Երևանի զարգացման 2015 թվականի ծրագրի իրականացման հաշվետվություն

10.	Կառավարման մարմիններին տեղեկատվական և խորհրդատվական օգնության տրամադրում	Կառավարման մարմիններին տեղեկատվական և խորհրդատվական աջակցության տրամադրում:	<p>Համատիրություններում իրականացված ուսումնասիրությունների ժամանակ հայտնաբերված թերությունները շտկելու համար տրամադրվել է անհրաժեշտ խորհրդատվություն:</p> <p>2015թ. մարտի 25-ին կազմակերպել է «Բազմաբնակարան շենքի կառավարում» թեմայով սեմինար վարչական շրջանների ղեկավարների աշխատակազմերի համապատասխան աշխատակիցների համար:</p> <p>2015թ. հունիսի 18-ին և հուլիսի 2-ին Տնտեսագիտության և կառավարման ինստիտուտում «Բազմաբնակարան շենքերի կառավարման խնդիրները Երևան քաղաքում» թեմայով դասընթաց է անցկացվել Երևանի քաղաքապետարանի և վարչական շրջանների ղեկավարների աշխատակազմերի վերապատրաստվող աշխատակիցների համար:</p> <p>Դավթաշեն, Արաբկիր, Էրեբունի, Շենգավիթ, Քանաքեռ-Զեյթուն, Ավան և Կենտրոն վարչական շրջաններում կազմակերպել էր «Բազմաբնակարան շենքի կառավարում» թեմայով սեմինարներ համատիրությունների նախագահների, կառավարիչների և հաշվապահների համար:</p>		
11.	«Բազմաբնակարան շենքի ընդհանուր բաժնային սեփականության պահպանման պարտադիր նորմերը սահմանելու մասին» որոշման պահանջների վերահսկողություն	«Բազմաբնակարան շենքի ընդհանուր բաժնային սեփականության պահպանման պարտադիր նորմերը սահմանելու մասին» որոշման պահանջների	Ուսումնասիրվել է շենքերի կառավարման մարմիններում պարտադիր նորմերի գծով իրականացված աշխատանքները, համատիրությունների նախագահների և կառավարիչների աշխատանքային գործունեությունը և բնակչության հետ նրանց համագործակցությունը, սեփականատերերին ներկայացվող ամենամսյա		

Երևանի զարգացման 2015 թվականի ծրագրի իրականացման հաշվետվություն

		վերահսկողության իրականացում:	հաշվետվությունների օրինականությունը, որոնց արդյունքներն արտահայտվում են ամենամսյա գնահատման չափորոշիչներում:		
12.	Սպասարկման վարձավճարների գանձման համակարգի կատարելագործում	Սպասարկման վարձավճարների գանձման համակարգի կատարելագործում:	Բազմաբնակարան շենքերի կառավարման մարմիններին առաջարկվել է կանխիկ գանձման կտրոնների հաշվառման համակարգը համապատասխանեցնել խիստ հաշվառման փաստաթղթերի կարգին:		
13.	Շենքերի ջերմամեկուսացում, էներգաօգտագործման արդյունավետության բարձրացման նպատակով ծրագրեր իրականացնող կազմակերպությունների հետ համագործակցություն	Շենքերի ջերմամեկուսացում, էներգաօգտագործման արդյունավետության բարձրացման նպատակով ծրագրեր իրականացնող կազմակերպությունների հետ համագործակցություն:	Համագործակցություն է ծավալվել Հաբիթաթ Ֆոր Հյումենիթի Արմենիա հիմնադրամի հետ, որը իրականացնում է բազմաբնակարան շենքերի էներգաարդյունավետության բարձրացման ծրագիր: Հիմնադրամին տրամադրվում է համատիրությունների և բազմաբնակարան շենքերի վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվություն: «Հաբիթաթ Ֆոր Հյումենիթի Արմենիա» հիմնադրամի կողմից 2015թ. փետրվարի 24-ին կազմակերպվել էր համաժողով-կլոր սեղան, որի ժամանակ ներկայացվեց բազմաբնակարան շենքերի կառավարման քաղաքականության բարելավմանն ուղղված առաջարկների փաթեթը, ինչպես նաև բազմաբնակարան շենքերի էներգաարդյունավետության բարձրացման ծրագրի իրականացման արդյունքները, նվաճումները և դժվարությունները: 2014թ. դեկտեմբերի 22-ին Երևան համայնքի և Հաբիթաթ Ֆոր Հյումենիթի Արմենիա հիմնադրամի միջև կնքված փոխըմբռնման հուշագրի շրջանակներում Երևանի Ավան վարչական շրջանի Թումանյան թաղ. հ.6/1 շենքում, Երևանի Աջափնյակ	Հաբիթաթ Ֆոր Հյումենիթի Արմենիա հիմնադրամ	Ավան 4 համատիրություն «Աջափնյակ-1» համատիրություն «Զարթոնք»

Երևանի զարգացման 2015 թվականի ծրագրի իրականացման հաշվետվություն

			վարչական շրջանի Հալաբյան փող. հ.9/1 շենքում, Երևանի Շենգավիթ վարչական շրջանի Ֆրունզե փող. հ.6/3 շենքում, Ֆրունզե փող. հ.6/4 շենքում իրականացվել են էներգաարդյունավետության բարձրացմանն ուղղված աշխատանքներ, իսկ Երևանի Ավան վարչական շրջանի Ավան Առինջ 1մ/2 հ.1/4 շենքում՝ աշխատանքներն ընթացքի մեջ են:	համատիրություն Ավան-Առինջ 1 համատիրություն	
14.	Բազմաբնակարան շենքերի մուտքերի վերանորոգում	Բազմաբնակարան շենքերի շուրջ 800 մուտքերի վերանորոգում	Վերանորոգվել է 866 մուտք:	Վարչական շրջաններ, համատիրություններ	
14.1			Հաբիթաթ Ֆոր Հյուսնենիթի Արմենիա հիմնադրամի և Երևան համայնքի միջև կնքված փոխըմբռնման հուշագրի շրջանակներում Շենգավիթ վարչական շրջանի Ֆրունզե փող. Հ6/3 շենքում, Ֆրունզե փող. Հ6/4 շենքում, Նոր Նորք վարչական շրջանի Վիլյուսի փող.Հ53 և 57 շենքերում կատարվել են ընդհանուր օգտագործման տարածքների վերանորոգման աշխատանքներ, իսկ Ավան վարչական շրջանի Դուրյան թաղ. Հ37 և Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի Շերամի փող. Հ67 շենքերում աշխատանքներն ընթացքի մեջ են:	Հաբիթաթ Ֆոր Հյուսնենիթի Արմենիա հիմնադրամ Չարթոնք, Վիլյուսի36, Դուրյան, Տարոն համատիրություններ	
15.	Երևան քաղաքի բազմաբնակարան բնակելի շենքերի հարթ տանիքների վերանորոգում	Կվերանորոգվեն բազմաբնակարան շենքերի շուրջ 75000քմ հարթ տանիքներ:	Վերանորոգվել է 81697 քմ հարթ տանիք:	Վարչական շրջաններ, համատիրություններ	
16.	Երևան քաղաքի բազմաբնակարան բնակելի շենքերի թեք տանիքների վերանորոգում	Կվերանորոգվեն բազմաբնակարան շենքերի շուրջ 45000քմ թեք տանիքներ:	Վերանորոգվել է 50571 քմ թեք տանիք:	Վարչական շրջաններ, համատիրություններ	

Երևանի զարգացման 2015 թվականի ծրագրի իրականացման հաշվետվություն

17.	Արտաքին լուսավորություն	<p>2015թ նախատեսվում է իրականացնել արտաքին լուսավորության ցանցի կապիտալ վերանորոգման աշխատանքներ, որի շնորհիվ կվերականգնվի ևս 50 կմ ցանց, և 2015թ. տարեվերջին Երևան քաղաքի արտաքին լուսավորության ցանցի երկարությունը կկազմի 1514 կմ: Նախատեսվում է շարունակել նաև բակային լուսավորության գործընթացը: Նախատեսվում է 2015թ. սկսել և հետագա տարիներին աստիճանաբար իրականացնել նաև Երևան քաղաքի արտաքին լուսավորության ցանցի արդիականացման աշխատանքներ, մասնավորապես փոխարինել առկա լուսատուները լուսադիոդային լուսատուներով, շահագործման</p>	<p>2015թ. սահմանված պահանջներին համապատասխան ապահովվել է Երևան քաղաքի արտաքին լուսավորության ցանցի շահագործումն ու ընթացիկ նորոգումը: Միաժամանակ 2015թ. Վերակառուցման և Զարգացման Եվրոպական բանկի և ՀՀ-ի միջև, ինչպես նաև E5P հիմնադրամի միջև կնքվել է Երևան քաղաքի արտաքին լուսավորության ցանցի արդիականացման ծրագրի վարկային և դրամաշնորհային համաձայնագրերը, որոնք վավերացվել են ՀՀ ԱԺ-ի կողմից: Կայացել է խորհրդատուի մրցույթը, որի հետ պայմանագիրը կկնքվի 2016 թվականին: Խորհրդատուի կողմից մրցութային փաստաթղթերը պատրաստելուց հետո կհայտարարվի մրցույթ: Շինարարական աշխատանքների մեկնարկը նախատեսվում է 2016 թվականին:</p>	«Երբադլույս» ՓԲԸ	
-----	-------------------------	--	---	------------------	--

Երևանի զարգացման 2015 թվականի ծրագրի իրականացման հաշվետվություն

		<p>աշխատանքների կազմակերպման ներկայիս եղանակից անցնել շուրջօրյա շահագործման, ավելացնել սպասարկող անձնակազմի թիվը, կազմավորել հերթափոխներ, որոնք շուրջօրյա կիրականացնեն մայրաքաղաքի արտաքին լուսավորության ցանցի շահագործումը և պահպանումը:</p> <p>Նախատեսվում է առաջիկա տարիներին սպասարկման համար ձեռք բերել 12 միավոր նոր տեխնիկա (ավտովերնակ, ավտոլաբորատորիա)՝ գոյություն ունեցող հնացած տեխնիկան փոխարինելու, ինչպես նաև շուրջօրյա աշխատանքներ կատարելու համար:</p>			
18.	Երևանի վերելակային տնտեսության շահագործման հայեցակարգի մշակում	Նախատեսվում է մշակել Երևանի վերելակային տնտեսության շահագործման հայեցակարգ:	Մշակվում է Երևանի վերելակային տնտեսության շահագործման հայեցակարգի նախագիծը:		
19.	Վերելակային տնտեսությունը	Վերելակային	Երևան քաղաքի բազմաբնակարան շենքերի		

Երևանի զարգացման 2015 թվականի ծրագրի իրականացման հաշվետվություն

	<p>հավատարմագրային կառավարման հանձնելու ուղղությամբ աշխատանքների իրականացում</p>	<p>տնտեսության կառավարման արդյունավետությունը բարձրացնելու, համակարգը նոր վերելակներով համալրելու, վերազինելու, արդիականացնելու նպատակով համայնք-մասնավոր հատված համագործակցության շրջանակում բանակցություններ են վարվում մասնավոր ընկերությունների հետ Երևան քաղաքի վերելակային տնտեսությունը հավատարմագրային կառավարման հանձնելու ուղղությամբ: Երևանի քաղաքապետարանը ներգրավել է խորհրդատվական ընկերությունների՝ վերելակային տնտեսությունը հավատարմագրային կառավարման հանձնելու նպատակով տեխնիկական բնութագիր կազմելու համար: Աշխատանքները կշարունակվեն նաև 2016 թվականին:</p>	<p>վերելակների վերաբերյալ հավաքագրվել է անհրաժեշտ տվյալներ, քննարկվել են դրանց հետագա շահագործման վերաբերյալ մասնագիտական կազմակերպություններից ստացված առաջարկները: Մշակվում է Երևանի վերելակային տնտեսության շահագործման հայեցակարգի նախագիծ: Բանակցություններ են վարվել մասնավոր ընկերությունների հետ՝ Երևան քաղաքի վերելակային տնտեսությունը հավատարմագրային կառավարման հանձնելու ուղղությամբ: Երևանի քաղաքապետարանը ներգրավել է խորհրդատվական ընկերությունների՝ վերելակային տնտեսությունը հավատարմագրային կառավարման հանձնելու նպատակով տեխնիկական բնութագիր կազմելու համար: Աշխատանքները կշարունակվեն նաև 2016 թվականին:</p>		
--	--	--	--	--	--

Երևանի զարգացման 2015 թվականի ծրագրի իրականացման հաշվետվություն

		<p>համար: Աշխատանքները կշարունակվեն նաև 2015թվականին:</p>			
<p>20.</p>	<p>«Քաղաքային կանաչ լուսավորություն» ծրագիր</p>	<p>«Քաղաքային կանաչ լուսավորություն» ծրագրի շրջանակում 2015թ. նախատեսվում է առկա էներգատար լուսատուները փոխարինել ժամանակակից, էներգաարդյունավետ և ավելի երկարակյաց լուսատուներով, որոնք աշխատում են լուսարձակման բարելավված ցուցանիշներով օժտված լուսադիոդներով: Այս ծրագիրը ներառելու է Երևանից դեպի արևմուտք՝ Հաղթանակի կամրջից մինչև Ջվարթնոց օդանավակայանի խաչմերուկ ձգվող 9 կմ ընդհանուր երկարությամբ ճանապարհահատվածը: Լուսատուների տեղադրումից հետո նախատեսվում է պիլոտային փողոցի</p>	<p>«Քաղաքային կանաչ լուսավորություն» ծրագրի պիլոտային նախագծի շրջանակում 9 կմ ընդհանուր երկարությամբ Իսակովի պողոտայի և Թաիրովի փողոցի՝ մինչև «Ջվարթնոց» օդանավակայանի խաչմերուկ ընկած հատվածի արտաքին լուսավորության ցանցի արդիականացման նպատակով 756 լուսատուները փոխարինվել են ժամանակակից, էներգախնայող և առավել երկարակյաց 482 լուսատուներով, որոնք աշխատում են լուսարձակման բարելավված ցուցանիշներով օժտված լուսադիոդներով:</p> <p>Պիլոտային նախագծերի շրջանակներում ընդգրկվել են նաև Երևանի կենդանաբանական այգու արտաքին լուսավորության համակարգի արդիականացման աշխատանքները: Արդյունքում տեղադրվել է 39Վտ հզորությամբ 112 էներգաարդյունավետ լուսատու, փոխարինվել և տեղադրվել են նոր սյուներ, մալուխագծերն անցկացվել են ստորգետնյա եղանակով: Երևանի կենդանաբանական այգու լուսավորության համակարգի արդիականացման, էներգաարդյունավետության բարձրացման աշխատանքներն իրականացվել են ՄԱԿ-ի Ջարգացման ծրագրի և Երևանի քաղաքապետարանի համաֆինանսավորմամբ:</p> <p>Երևան քաղաքի արտաքին լուսավորության համակարգում էներգաարդյունավետ տեխնոլոգիաների ներդրման ֆինանսավորման ապահովման համար</p>	<p>ՄԱԶԾ մեկնարկը 2014թ, ծրագրի տևողությունն է 4 տարի:</p>	

Երևանի զարգացման 2015 թվականի ծրագրի իրականացման հաշվետվություն

		<p>մոնիտորինգի կազմակերպում: Երևան քաղաքի արտաքին լուսավորության համակարգում էներգաարդյունավետ տեխնոլոգիաների ներդրման ֆինանսավորման ապահովման համար կմշակվի նոր քաղաքային վերականգնվող ֆոնդի հայեցակարգը և կստեղծվի նպատակային վերականգնվող ֆոնդ: Ֆոնդի սկզբնական համալրումն իրականացվելու է էներգաարդյունավետության բարձրացման փորձնական ծրագրի իրականացման արդյունքում գոյացող ֆինանսական խնայողություններից: Ֆոնդում կուտակված միջոցները նպատակային ձևով ուղղվելու են Երևան քաղաքի լուսավորության համակարգում</p>	<p>մշակվել է «Լուսավորության համակարգերի էներգաարդյունավետության բարձրացման, նպատակային ֆոնդի ստեղծման և դրա կառավարման» հայեցակարգը: Երևանի քաղաքապետի՝ 30.07.2015թ. «Երևանի քաղաքապետարանի և Միավորված ազգերի կազմակերպության զարգացման ծրագրի միջև 2014թ. ստորագրված «Մտադրությունների մասին» հուշագրի դրույթների կատարումն ապահովելու մասին» հ.2354-Ա որոշմամբ հաստատվել է «Երևան քաղաքի արտաքին լուսավորության համակարգերի էներգաարդյունավետության բարձրացման նպատակային ֆոնդի հաշվի միջոցների օգտագործման» կարգը, որի արդյունքում 2015թ. «Երբաղլույս» ՓԲԸ-ում ստեղծվել է վերականգնվող նպատակային ֆոնդ: Ֆոնդի սկզբնական համալրումն իրականացվել է Երևանի քաղաքապետարանի և ՄԱԶԾ-ԳԷՖ «Քաղաքային կանաչ լուսավորություն» ծրագրի կողմից՝ համատեղ իրականացվող պիլոտային նախագծերի իրականացման շնորհիվ լուսավորության համակարգի շահագործման և պահպանման տարեկան ծախսերի նվազեցումից առաջացող խնայված միջոցների հաշվին: Խնայված միջոցների հաշվին նախատեսվում է իրականացնել Մաշտոցի պողոտայի արտաքին լուսավորության ցանցի արդիականացման աշխատանքները: Մաշտոցի պողոտայում լուսավորության համակարգի էներգաարդյունավետ վերազինման նախագիծը կիրականացվի ՄԱԶԾ հետ համատեղ ֆինանսավորմամբ՝ համաձայն Երևանի</p>		
--	--	--	--	--	--

Երևանի զարգացման 2015 թվականի ծրագրի իրականացման հաշվետվություն

		<p>էներգաարդյունավետ տեխնոլոգիաների ներդրման նախագծերի իրականացմանը:</p> <p>Ծրագրի շրջանակում նախատեսվում է Երևանի քաղաքապետարանի քաղաքային լուսավորության համակարգի համապարփակ էներգետիկ առողիտի կազմակերպման և քաղաքային լուսավորության համակարգի վերազինման ռազմավարության մշակում:</p>	<p>քաղաքապետարանի և ՄԱԶԾ միջև ստորագրված համաձայնագրերի:</p> <p>Ծրագրի շրջանակում մարտի 24-ին կազմակերպվել է «Լուսավորության սարքերի կիրառման տեխնիկական կանոնակարգումը մաքսային միության շրջանակներում և փորձարկման ազգային լաբորատորիայի ստեղծման խնդիրները» թեմայով ուսուցում:</p>		
Առևտրի և սպասարկումների ոլորտ					
Հ/հ	Ծրագրի կամ միջոցառման անվանումը	Նախատեսված աշխատանքների նկարագիր	Աշխատանքների իրականացման գործընթաց	Իրականացնող կազմակերպություն, կատարման ժամկետ	Նշումներ
1	2	3	4	5	6
1.	Առևտրի և ծառայությունների ոլորտի օրենսդրական դաշտի կատարելագործման նպատակով առաջարկությունների ձևավորում և ներկայացում	Առևտրի և ծառայությունների ոլորտի օրենսդրական դաշտի կատարելագործման նպատակով առաջարկությունների ձևավորում և ներկայացում:	Աշխատանքներ են տարվել 2015թ. ծրագրով նախատեսված առևտրի և սպասարկման ոլորտի օրենսդրության կատարելագործման ուղղությամբ: Առաջարկություններ են ներկայացվել «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ նոր օրենսգրքի նախագծում, «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու, ՀՀ կառավարության աշխատակազմի «Օրենսդրության կարգավորման ազգային կենտրոնի	Աշխատակազմի առևտրի և սպասարկումների վարչություն, ամբողջ տարվա ընթացքում	

Երևանի զարգացման 2015 թվականի ծրագրի իրականացման հաշվետվություն

			<p>ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի կողմից «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքում և Երևանի ավագանու 2011 թվականի հոկտեմբերի 24-ի «Երևան քաղաքում ընտանի կենդանիներ պահելու և հաշվառելու կանոնները հաստատելու մասին» N 312-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու նպատակով Երևանի քաղաքապետարան ներկայացված փաթեթի վերաբերյալ:</p> <p>Երևանի քույր քաղաքներից ստացվել են քաղաքային համայնքներում թափառող կենդանիների թվաքանակի կարգավորման ուղղությամբ կիրառվող փորձը և անհրաժեշտ օրենսդրական ակտերը, ինչպես նաև ինտերնետային կայքերից հավաքագրվել են թափառող կենդանիների խնդիրների վերաբերյալ տեղադրված նյութերը, որոնք ուսումնասիրվել են և հաջողված փորձը կներդրվի գործնական աշխատանքներում:</p>		
2.	<p>Բացօթյա առևտրի նկատմամբ անհրաժեշտ հսկողության իրականացում և կանոնակարգում, բացօթյա ապօրինի առևտրի վերացման ուղղությամբ միջոցառումների իրականացում</p>	<p>Բացօթյա առևտրի նկատմամբ անհրաժեշտ հսկողության իրականացում և կանոնակարգում: Միջոցառումներ կձեռնարկվեն Երևան քաղաքում բացօթյա ապօրինի առևտրի վերացման ուղղությամբ:</p>	<p>Առևտրի ոլորտի օրենսդրական պահանջների կատարման նկատմամբ հսկողությունն ավելի արդյունավետ կազմակերպելու նպատակով 2015թ. կազմակերպվել են ամենօրյա շրջայցեր, որոնց արդյունքում բացօթյա ապօրինի առևտրի արգելման ու կանխարգելման աշխատանքներ են իրականացվել Երևան քաղաքի բոլոր վարչական շրջաններում, ինչպես նաև բազմաբնակարան շենքերի բակերում: Տարվա ընթացքում ամբողջովին վերացվել է Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի Վանթյան և Սվաճյան փողոցներում, Վարդանանց և Գնունի փողոցներում՝ շինանյութի շուկայի հարակից հատվածում, Սասունցի Դավիթ կայարանի մերձակա տարածքներում, Գայի և Տիգրան Մեծի պողոտաների, Գարեգին Նժդեհի հրապարակի, մետրոպոլիտենի Բարեկամության կայարանի հարակից տարածքներում</p>	<p>Աշխատակազմի առևտրի և սպասարկումների վարչություն, հասարակական կարգի պահպանության ծառայություն, վարչական շրջաններ, ամբողջ տարվա ընթացքում</p>	

Երևանի զարգացման 2015 թվականի ծրագրի իրականացման հաշվետվություն

			<p>և գետնանցումներում իրականացվող բացօթյա ապօրինի առևտուրը:</p> <p>Բացօթյա ապօրինի առևտրից ազատված տարածքներում առևտրի վերսկսումը բացառելու նպատակով շաբաթվա բոլոր օրերին, այդ թվում՝ հանգստյան օրերին, կազմակերպվել են շրջայցեր: Քաղաքի կենտրոնական փողոցներում և հրապարակներում սահմանվել է հերթապահություն, այդ թվում աշխատանքային օրերին՝ երեկոյան ժամը 18.00- 21.00-ը, իսկ շաբաթ, կիրակի և տոնական օրերին՝ ժամը 12.00- 21.00-ը: Օրինազանցների նկատմամբ կազմվել են վարչական իրավախախտումների վերաբերյալ արձանագրություններ:</p> <p>Բացօթյա ապօրինի առևտուր իրականացնելու համար առևտրի ոլորտում տարվա ընթացքում կազմվել են վարչական իրավախախտումների վերաբերյալ 482 արձանագրություններ:</p> <p>Կանոնակարգվել է նաև օրենքով թույլատրվող ապրանքների բացօթյա առևտուրը: Շրջայցերի ընթացքում փողոցների և պողոտաների մայթերից տեղահանվել են առանց թույլտվության տեղադրված պաղպաղակի և զովացուցիչ ջրերի վաճառքի համար նախատեսված սառնարանները և ծաղիկների վաճառքի համար նախատեսված բաց տաղավարները: Առևտուրը կանոնակարգվել է նաև Երևանի գետնանցումներում:</p> <p>Արգելվել է փողոցներում իրականացվող ավտոմեքենաների վաճառքը:</p> <p>Պարբերաբար ուսումնասիրություններ են կատարվել Երևան քաղաքում գործող գյուղատնտեսական արտադրանքի և գյուղմթերքի փոքրածավալ բոլոր 23</p>		
--	--	--	--	--	--

Երևանի զարգացման 2015 թվականի ծրագրի իրականացման հաշվետվություն

			շուկաներում և համապատասխան միջոցներ են ձեռնարկվել հայտնաբերված խախտումների և թերությունների վերացման, սպասարկման որակի բարելավման ուղղությամբ:		
3.	Շաբաթ, կիրակի և տոնական օրերին գյուղատնտեսական արտադրանքի, սպառողական ապրանքների շուկաների, տոնավաճառների կազմակերպում	Մայրաքաղաքում գյուղմթերքների առևտուրը կանոնակարգելու, արտադրող-սպառող անմիջական կապն ապահովելու, ազգաբնակչությանը թարմ ու որակյալ մթերքով ապահովելու նպատակով կշարունակվի վարչական շրջաններում շաբաթ, կիրակի և տոնական օրերին գյուղատնտեսական արտադրանքի, սպառողական ապրանքների շուկաների, տոնավաճառների կազմակերպման գործընթացը:	Երևանի քաղաքապետարանի և ՀՀ գյուղատնտեսության նախարարության համագործակցության շնորհիվ մայրաքաղաքում գյուղմթերքների առևտուրը կանոնակարգելու, բացօթյա ապօրինի առևտուրը վերացնելու, արտադրող-սպառող անմիջական կապն ապահովելու, ազգաբնակչությանը թարմ ու որակյալ, մատչելի գներով մթերքներով ապահովելու նպատակով Արաբկիր վարչական շրջանում, Կասյան փողոցի սկզբնամասում և «Մալիբու» սրճարանի հետնամասում հաջողությամբ գործում են գյուղատնտեսական մթերքների տոնավաճառները, որտեղ առևտուր են իրականացնում միայն գյուղմթերք արտադրողները:	Աշխատակազմի առևտրի և սպասարկումների վարչություն, վարչական շրջանների առևտրի, սպասարկումների և գովազդի բաժիններ Կատարման ժամկետը՝ 2015թ. 2-րդ և 3-րդ եռամսյակներ:	
4.	Մասնավոր ներդրումների հաշվին գյուղմթերքի փոքրածավալ շուկաներ ստեղծելու նպատակով դրանց տեղակայման վայրերի որոշում, քաղաքաշինական փաթեթի մշակում և	Մասնավոր ներդրումների հաշվին գյուղմթերքի փոքրածավալ շուկաներ ստեղծելու նպատակով դրանց տեղակայման վայրերի որոշում, քաղաքաշինական փաթեթի	Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի Ահարոնյան 12 հասցեում գործունեություն է սկսել ծավալել գյուղմթերքի փոքրածավալ շուկան, որտեղ գյուղմթերք իրացնողներին աջակցելու նպատակով տրամադրվել են անվճար տեղեր առևտուր իրականացնելու համար: Մասնավոր ներդրումների հաշվին գյուղմթերքի փոքրածավալ շուկաներ կառուցելու նպատակով Նոր	Աշխատակազմի առևտրի և սպասարկումների վարչություն, վարչական շրջանների առևտրի,	

Երևանի զարգացման 2015 թվականի ծրագրի իրականացման հաշվետվություն

	կառուցում	մշակում և կառուցում:	Նորք, Արաբկիր, Դավթաշեն և Նուբարաշեն վարչական շրջաններում ձևավորվել են առաջարկություններ:	սպասարկումներ ի և գովազդի բաժիններ Կատարման Ժամկետը՝ 2015թ. 2-րդ, 3-րդ և 4-րդ եռամսյակներ:	
5.	Առևտրի օբյեկտներում պիտանիության ժամկետն անցած ապրանքների վաճառքի դեպքերը հայտնաբերելու, արգելելու և կանխարգելելու ուղղությամբ անհրաժեշտ միջոցառումների իրականացում	Առևտրի օբյեկտներում պիտանիության ժամկետն անցած ապրանքների վաճառքի դեպքերը հայտնաբերելու, արգելելու և կանխարգելելու ուղղությամբ անհրաժեշտ միջոցառումների իրականացում:	Անհրաժեշտ աշխատանքներ են իրականացվել առևտրի և հանրային սննդի օբյեկտներում պիտանիության ժամկետն անցած ապրանքների վաճառքի դեպքերը հայտնաբերելու, արգելելու և կանխարգելելու ուղղությամբ: Հսկողություն իրականացված օբյեկտներում պիտանիության ժամկետն անցած ապրանքների վաճառք իրականացնելու համար կազմվել է 9 արձանագրություն:	Աշխատակազմի առևտրի և սպասարկումներ ի վարչություն, վարչական շրջանների առևտրի, սպ. և գովազդի բաժիններ Կատարման ժամկետը՝ ամբողջ տարվա ընթացքում:	
6.	Մտորգետնյա անցումներում իրականացվող առևտրի նկատմամբ հսկողության իրականացում և կանոնակարգում	Մտորգետնյա անցումներում իրականացվող առևտրի նկատմամբ հսկողության իրականացում և կանոնակարգում:	Երևան քաղաքի 17 ստորգետնյա անցումներում վարչության կողմից պարբերաբար կազմակերպվել են շրջայցեր: Ապօրինի առևտրի արգելման ու կանոնակարգման աշխատանքներ են իրականացվել Աբովյան – Կորյուն փող. խաչմերուկի, Գայի, Տիգրան Մեծի պողոտաների, Գարեգին Նժդեհի հրապարակի, Վարդանանց – Խանջյան փող. խաչմերուկի, Նժդեհի փող. և Արշակունյաց պող. խաչմերուկի, մետրոպոլիտենի Բարեկամության կայարանի հարակից տարածքներում և ստորգետնյա	Աշխատակազմի առևտրի և սպասարկումներ ի վարչություն Կատարման ժամկետը՝ 2015թ. 2-րդ և 4-րդ եռամսյակներ:	

Երևանի զարգացման 2015 թվականի ծրագրի իրականացման հաշվետվություն

			անցումներում:		
7.	Թափառող կենդանիների վնասազերծման աշխատանքների նկատմամբ հսկողության իրականացում, ոլորտի արդյունավետ կառավարման մեխանիզմների մշակում, ինչպես նաև համապատասխան օրենսդրական դաշտի ձևավորում	Թափառող կենդանիների վնասազերծման աշխատանքների նկատմամբ հսկողության իրականացում, ոլորտի արդյունավետ կառավարման մեխանիզմների մշակում, ինչպես նաև համապատասխան օրենսդրական դաշտի ձևավորում («Կենդանիների մասին», Կենդանիների պաշտպանության մասին» ՀՀ օրենքների նախագծերի մշակման նպատակով առաջարկությունների ներկայացում):	<p>Անհրաժեշտ հսկողություն է իրականացվել նաև թափառող կենդանիների վնասազերծման աշխատանքների նկատմամբ: 2015թ. ընթացքում «Յունիգրաֆ-Իքս» ՍՊԸ-ի կողմից ստերիլիզացվել է՝ 4278, քնեցվել՝ 214, վնասազերծվել՝ 8020 թափառող կենդանի: Ներկայումս Երևան քաղաքում թափառող կենդանիների թվաքանակը կառավարելի է, գտնվում է հսկողության տակ և թույլ չի տրվում դրանց անհարկի բազմացում: Ձեռնարկված միջոցառումների շնորհիվ Երևան քաղաքում 2015թ. ընթացքում նվազել է թափառող կենդանիների թվաքանակը:</p> <p>Աշխատանքներ են տարվել նաև Երևան քաղաքի ավագանու 2011 թվականի հոկտեմբերի 24-ի «Երևան քաղաքում ընտանի կենդանիներ պահելու և հաշվառելու կանոնները հաստատելու մասին» N 312-Ն որոշման պահանջներն ապահովելու ուղղությամբ: Ընտանի կենդանիներ պահելու կանոնները խախտելու համար կազմվել է 86 արձանագրություն:</p> <p>Առաջարկություններ է ներկայացվել «Կենդանիների մասին», և «Կենդանիների պաշտպանության մասին» ՀՀ օրենքների նախագծերի մշակման և ընդունման անհրաժեշտության վերաբերյալ:</p>	ամբողջ տարվա ընթացքում	
Տրանսպորտ					
Հ/հ	Ծրագրի կամ միջոցառման անվանումը	Նախատեսված աշխատանքների նկարագիր	Աշխատանքների իրականացման գործընթաց	Իրականացնող կազմակերպություն, կատարման ժամկետ	Նշումներ
1	2	3	4	5	6
1.	Ավտոբուսային	Փոքր և միջին	2015 թվականին շարունակվել են բանակցությունները		

Երևանի զարգացման 2015 թվականի ծրագրի իրականացման հաշվետվություն

	<p>հավաքակազմը փոքր և միջին տեղատարողության քաղաքային ավտոբուսներով համալրում՝ հիմնականում մասնավոր կազմակերպությունների միջոցով</p>	<p>տեղատարողության նոր, քաղաքային ավտոբուսների ձեռքբերման աշխատանքների շարունակում՝ հիմնականում մասնավոր կազմակերպությունների միջոցով:</p>	<p>երթուղիները սպասարկող կազմակերպությունների հետ նոր ավտոբուսներ ներկրելու վերաբերյալ: Միաժամանակ ձեռնարկվել են միջոցներ «Երևանի ավտոբուս» կազմակերպության կողմից շահագործվող ավտոբուսների արդյունավետությունը բարձրացնելու ուղղությամբ:</p>		
2.	<p>Ուղևորատար տրանսպորտի նոր երթուղային ցանցի ներդրման գործընթացի աշխատանքների շարունակում, այդ նպատակով ներքաղաքային ավտոբուսային և միկրոավտոբուսային երթուղիների սպասարկման իրավունքի հատկացման նոր մրցույթների անցկացում, միկրոավտոբուսների քանակի վերջնական կրճատում և սահմանված քանակի ավտոբուսային երթուղիների սպասարկման ապահովում</p>	<p>Ուղևորատար տրանսպորտի նոր երթուղային ցանցի ներդրման գործընթացի աշխատանքների շարունակում, այդ նպատակով ներքաղաքային ավտոբուսային և միկրոավտոբուսային երթուղիների սպասարկման իրավունքի հատկացման նոր մրցույթների կազմակերպում և անցկացում, արդյունքում՝ միկրոավտոբուսների քանակի վերջնական կրճատում (80 միավորով) և սահմանված քանակի ավտոբուսային երթուղիների սպասարկման ապահովում:</p>	<p>2015 թվականին փոփոխություններ են կատարվել գործող երթուղային ցանցում՝ երթուղիների արդյունավետությունն ու սպասարկման որակը բարձրացնելու նպատակով: Միաժամանակ Ասիական զարգացման բանկի հետ համատեղ մշակվել է Երևան քաղաքի նոր երթուղային ցանցի մշակման տեխնիկական առաջադրանքը, որի հիման վրա 2016 թվականին կհայտարարվի միջազգային մրցույթ:</p>	<p>Աշխատակազմի տրանսպորտի վարչություն</p>	
3.	<p>Տրոլեյբուսների, հպակային և</p>	<p>2015թ. նախատեսվում է</p>	<p>Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել են</p>	<p>«Երևանի</p>	

Երևանի զարգացման 2015 թվականի ծրագրի իրականացման հաշվետվություն

	<p>մալուխային ցանցերի, քարշի ենթակայանների հիմնանորոգման, հպակային ցանցի վերանորոգման, քարշի ենթակայանների վերակառուցման ու վերագործարկման, տրոլեյբուսային տնտեսության արտադրատեխնիկական վերազինման, տրոլեյբուսների շահագործման արդյունավետության բարձրացմանն ուղղված աշխատանքներ</p>	<p>շարունակել տրոլեյբուսների, հպակային և մալուխային ցանցերի, քարշի ենթակայանների հիմնանորոգման, հպակային ցանցի վերանորոգման, քարշի ենթակայանների վերակառուցման ու վերագործարկման, տրոլեյբուսային տնտեսության արտադրատեխնիկական վերազինման, ինչպես նաև տրոլեյբուսների շահագործման արդյունավետության բարձրացմանն ուղղված աշխատանքները:</p>	<p>հետևյալ հիմնական աշխատանքները՝ -մի շարք փողոցներում (Արցախի, Էրեբունու, Գ.Նժդեհի և այլն) տրոլեյբուսի հպակային ցանցի վերանորոգում և կառուցում (4510 զծամետր) նախկինում օգտագործված պղնձալարերով. -մի շարք փողոցներում հպակային ցանցի հենասյուների ներկման աշխատանքների իրականացում: Ներկվել է 1033 հատ հենասյուն (որից 679-ը մասնակի՝ 3-5 մետր բարձրությամբ) և 98 հատ կալունակ -վերանորոգվել է բարձր և ցածր լարման թվով 51 մալուխ, այդ նպատակով տեղադրվել է 160 հատ մալուխի կցորդիչ - Մյասնիկյան, Մարշալ Բաղրամյան, Արտաշիսյան պողոտաներում և Հերացու, Թևոսյան, Կասյան փողոցներում տրոլեյբուսային հպակային ցանցի վերանորոգում (19000 զծամետր հպակային լար փոխարինվել է նոր պղնձալարերով). -թվով 43 տրոլեյբուսների թափքի և ուղեսրահի մասնակի վերանորոգում. -թվով 56 տրոլեյբուսների օդային համակարգի փչամաքրում և հակասառեցնող հեղուկի ներարկում:</p>	<p>Էլեկտրատրանսպորտ» ՓԲԸ</p>	
<p>4.</p>	<p>Մետրոպոլիտենի վերականգնման ծրագրի 2-րդ փուլ Մետրոպոլիտենի վագոնների հիմնանորոգում և արդիականացում, դրենաժային թունելի վերակառուցում և ընդլայնում,</p>	<p>Մետրոպոլիտենի վերականգնման ծրագրի 2-րդ փուլը (ծրագրի ընդհանուր արժեքը՝ 15.0 մլն եվրո) իր մեջ ներառում է՝ վագոնների հիմնանորոգում և արդիականացում, դրենաժային թունելի</p>	<p>Մետրոպոլիտենի մեքենավարների ուսուցման կենտրոնի ստեղծման աշխատանքներն ավարտված են: Անցկացված մրցույթի արդյունքում հաղթող կազմակերպությունը ներկայումս աշխատում է դրենաժային թունելի նախագծերի վրա՝ դրանք փորձաքննության հանձնելու համար: Գործող թունելի ներսում և ջրթափի մերձակայքում 70%-ի չափով իրականացվել են մաքրման և նախապատրաստական</p>	<p>«Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ</p>	

Երևանի զարգացման 2015 թվականի ծրագրի իրականացման հաշվետվություն

	գործող թունելի վիճակի բարելավում, մեքենավարների ուսումնական ծրագրերի կենտրոնի ստեղծում, վագոնների լվացման կայարանների կառուցում, հակահրդեհային միջոցների ձեռք բերում, շարժասանդուղքների հիմնանորոգում, մետրոպոլիտենի շահագործման և երթևեկության անվտանգության բարձրացմանն ուղղված միջոցառումների իրականացում	կառուցում, գործող թունելի վիճակի բարելավում (ներառյալ հակակոռոզիոն ծրագիր), մեքենավարների ուսումնական ծրագրերի կենտրոնի ստեղծում, վագոնների լվացման կայարանի կառուցում, հակահրդեհային միջոցների ձեռքբերում: Բացի այդ, ՎՋԵԲ-ը իր միջոցներով պատրաստ է իրականացնել վերականգնման ծրագրի 3-րդ փուլի՝ դեպի Աջափնյակ 2 նոր կայարանների կառուցման իրագործելիության նախնական ուսումնասիրություն:	աշխատանքներ: Վագոնների լվացման կայանի շինմունտաժային աշխատանքներն ավարտվել են և 2015թ. դեկտեմբեր ամսին հանձնվել շահագործման: Վերանորոգվել են «Մարշալ Բաղրամյան» կայարանի հ.2 և «Մ.Դավիթ» կայարանի հ.հ.1, 2 շարժասանդուղքները: Բոլոր ընթացային թունելներում ավարտվել են լուսավորության համակարգի արդիականացման աշխատանքները:		
5.	Մետրոպոլիտենի վերականգնման ծրագրի 3-րդ փուլ Դեպի Աջափնյակ երկու նոր կայարանների կառուցման իրագործելիության նախնական ուսումնասիրության իրականացում	Դեպի Աջափնյակ երկու նոր կայարանների կառուցման իրագործելիության նախնական ուսումնասիրության իրականացում (ՎՋԵԲ-ի կողմից):	ՎՋԵԲ-ի կողմից իրականացվող ուսումնասիրությունները ընթացքի մեջ են:	Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկ	
6.	Երևանի ընդհանուր օգտագործման տրանս-	Երևանի ընդհանուր օգտագործման	Գույքագրման և ուսումնասիրության արդյունքում հայտնաբերված՝ վնասված թվով 219	«Երևանտրանս» ՓԲԸ	

Երևանի զարգացման 2015 թվականի ծրագրի իրականացման հաշվետվություն

	պորտային միջոցների առանձին կանգառներում տեղադրված վնասված կանգառանշանների ու կանգառասրահների նորոգում և վերականգնում	տրանսպորտային միջոցների առանձին կանգառներում, ընթացիկ տարում, վնասվել են տեղադրված կանգառանշաններն ու կանգառասրահները և անհրաժեշտություն է առաջացել իրականացնել դրանց նորոգման և վերականգնման աշխատանքներ:	կանգառասրահներն ու թվով 72 կանգառանշաններն ամբողջությամբ վերանորոգվել են:	«Աուդոր Էֆեկտ» ՍՊԸ	
7.	Նախկինում տեղադրված որոշ կանգառների տեղերի համապատասխանեցում շինարարական նորմերին ու կանոններին, ճանապարհային երթևեկության կանոններով սահմանված պահանջներին	Ճանապարհային երթևեկության կանոններով սահմանված պահանջներին համապատասխանեցնել նախկինում տեղադրված որոշ կանգառների տեղերը՝ հաշվի առնելով նաև միջկանգառային հեռավորությունները:	Արցախի պողոտայի վրա, մինչև Արցախի պ.-Գ.Նժդեհի փ. Խաչմերուկն ընկած հատվածում տեղաբաշխված կանգառը տեղափոխվել է խաչմերուկից հետո ընկած հատված /դեպի Էրեբունի փողոցի ուղղությամբ/ և իրականացվել է կանգառի կահավորումը: Աշխատանքները կշարունակվեն 2016 թվականին:		
8.	Կանգառների սահմանման ուղղությամբ աշխատանքների իրականացում	Մայրաքաղաքի նոր երթուղային ցանցի ներդրումը ենթադրում է նաև շարունակել նոր կանգառների սահմանման ուղղությամբ նախկինում մեկնարկած աշխատանքները:	Մահմանվել են հասարակական տրանսպորտի թվով 35 կանգառներ հետևյալ փողոցներում՝ Վաղարշյան (3 հատ), Ավետիսյան (2 հատ), Ավանի Թումանյան թաղամաս (4 հատ), Ա.Ահարոնյան (4 հատ), Մալաթիայի (4 հատ), Կուրդինյան (4 հատ), Արզումանյան (1 հատ), Բաշինջաղյան (1 հատ), Քրիստափորի (1 հատ), Բագրատունյաց (1 հատ), Նոր Խարբերդի ամառանոցների Եղբայրության փողոցում (10 հատ):	Աշխատակազմի տրանսպորտի վարչություն	

Երևանի զարգացման 2015 թվականի ծրագրի իրականացման հաշվետվություն

9.	Երևանի քաղաքային ընդհանուր օգտագործման տրանսպորտային միջոցների նոր կանգառների սահմանման և կահավորման (մասնավորապես՝ նոր կանգառասրահներով) ուղղությամբ աշխատանքների իրականացում	Երևանի քաղաքային ընդհանուր օգտագործման տրանսպորտային միջոցների նոր կանգառների սահմանման և կահավորման (մասնավորապես՝ նոր կանգառ-սրահներով, թվով 10-15 կանգառներում) ուղղությամբ աշխատանքների իրականացում:	Կանգառները կահավորվել են միայն կանգառանշաններով, հաշվետու ժամանակահատվածում տեղադրվել է 201 հատ կանգառանշան:	Տրանսպորտի վարչություն ՀՀ Ճանապարհային ոստիկանություն	
10.	Մայլակավոր հաշմանդամների տրանսպորտային սպասարկումն ապահովելու նպատակով ավտոբուսների վերասարքավորում և հարմարեցում	Թվով 10 ավտոբուսների վերասարքավորում և հարմարեցում՝ սայլակավոր հաշմանդամների տրանսպորտային սպասարկումն ապահովելու համար:	Զինական «ՀԻԳԵՏ» մակնիշի ևս 10 ավտոբուսներ կահավորվել են շարժման սահմանափակ հնարավորություն ունեցող հաշմանդամների տրանսպորտային սպասարկման ապահովման համար նախատեսված հատուկ վերելակային հարմարանքներով: Ներկայումս ներքաղաքային երթուղիներում շահագործվում են նմանատիպ վերելակներով կահավորված թվով 20 ավտոբուսներ (երթուղիներ՝ հ.հ.3, 13, 20, 22, 28, 35):		
11.	Հասարակական տրանսպորտը կույր հաշմանդամներին մատչելի դարձնելու նպատակով ավտոբուսների ուղեսրահներում կանգառների հայտարարման սարքերի տեղադրում	Հասարակական տրանսպորտը կույր հաշմանդամներին մատչելի դարձնելու նպատակով թվով 37 ավտոբուսների ուղեսրահներում կանգառների հայտարարման սարքերի տեղադրում:	Կույր հաշմանդամների՝ հասարակական տրանսպորտից օգտվելու հարմարություն և մատչելիության ապահովման նպատակով Երևանի ներքաղաքային երթուղիներում (ավտոբուսային հ.հ.5, 20, 41) շահագործվող թվով 37 ավտոբուսների ուղեսրահներում տեղադրվել են կանգառների անվանումների ավտոմատ հայտարարման սարքեր և ներկայումս նշված երթուղիների ավտոբուսներում իրականացվում է կանգառների անվանումների		

Երևանի զարգացման 2015 թվականի ծրագրի իրականացման հաշվետվություն

			հայտարարումը հայերեն և անգլերեն լեզուներով:		
12.	Մայրաքաղաքում ավտոկայանատեղերի կազմակերպմանն ու կանոնակարգմանն ուղղված միջոցառումների իրականացում	Մայրաքաղաքում ավտոկայանատեղերի կազմակերպմանն ու կանոնակարգմանն ուղղված միջոցառումների իրականացում:	Գործող կայանատեղերում պարբերաբար իրականացվել են ճանապարհային նշանների վերականգնման, գծանշումների թարմացման աշխատանքներ: Երևանի ավագանու 23.12.2015թ. հ.452-Ա որոշմամբ թույլատրվել է շարունակել ծառայողական ավտոկայանատեղերի շահագործումը գործող կայանատեղերի թվով 31 կազմակերպիչներին, ինչպես նաև կազմակերպել նոր ծառայողական կայանատեղեր՝ թվով 4 կազմակերպությունների: Երևանի քաղաքապետի համապատասխան որոշումներով սահմանվել է մարդատար տաքսի-ավտոմոբիլների թվով 14 նոր կայանատեղեր:	Աշխատակազմի տրանսպորտի վարչություն «Փարկինգ Սիթի Մերվիս» և «Լոկատոր» ՓԲԸ-ների կոնսորցիում	
13.	Երթակարգավարական կետերի բարեկարգման և կահավորման աշխատանքների իրականացում	Երթակարգավարական կետերի բարեկարգման և կահավորման աշխատանքների իրականացում:	Հ.25 երթակարգավարական կետում ամբողջությամբ փոխարինվել են էլեկտրամատակարարման հաղորդալարերը (մոտ 430մ երկարությամբ):		
14.	Ճանապարհային երթևեկության կազմակերպման ոլորտում ուսումնասիրությունների իրականացում և համապատասխան լուծումների կիրառմամբ՝ վիճակի բարելավման արդյունքների ստացում	Ճանապարհային երթևեկության կազմակերպման ոլորտում ուսումնասիրությունների իրականացում և համապատասխան լուծումների կիրառմամբ՝ վիճակի բարելավման արդյունքների ստացում:	Ճանապարհային երթևեկության կազմակերպման վիճակի բարելավման և անվտանգության ապահովման նպատակով ՀՀ ճանապարհային ոստիկանության հետ համատեղ կատարվել են հետևյալ աշխատանքները՝ - փոփոխություն է կատարվել Ձոր.Անդրանիկի հրապարակում շրջանաձև երթևեկության կազմակերպման սխեմայում. - Միեր Մկրտչյան հրապարակում կատարվել է երթևեկության կազմակերպման սխեմայի փոփոխություն, ավելացվել է երթևեկելի մեկ գոտի՝ միայն ձախ շարժման համար.	Տրանսպորտի վարչություն ՀՀ ճանապարհային ոստիկանություն	

Երևանի զարգացման 2015 թվականի ծրագրի իրականացման հաշվետվություն

			<p>- փորձական կարգով միակողմ երթևեկություն է սահմանվել Բայրոնի փողոցի՝ Մոսկովյան փողոցից մինչև Մայաթ Նովայի պողոտա ընկած հատվածում և Մպենդիարյան փողոցի՝ Մոսկովյան փողոցից մինչև Թումանյան փողոցն ընկած հատվածում:</p> <p>- փոփոխություն է կատարվել Գ.Նժդեհի հրապարակում շրջանաձև երթևեկության կազմակերպման սխեմայում.</p> <p>-Ամիրյան-Զաքիյան և Արցախի-Այվազովսկու փողոցների խաչմերուկում լուսացուցային կարգավորում կիրառելու նպատակով իրականացվել է լուսացուցային օբյեկտների մոնտաժում: Ուսումնական տարվան ընդառաջ թարմացվել են ճանապարհային գծանշումները և նշանները մայրաքաղաքի դպրոցներին և այլ ուսումնական հաստատություններին հարակից ճանապարհահատվածներում:</p> <p>- շահագործման է հանձնվել Ամիրյան-Զաքիյան, Բաշինջաղյան-Մարգարյան, Խաչատրյան-Փափազյան, Բելինսկու-Ս.Դավթի, Աբովյան-Արամի, Զոր.Անդրանիկի-Ա.Բաբաջանյան, Տարոնցու-Շենգավիթի 10-րդ, Արշակունյաց-Մասիսի, Ադոնցի-Շիրվանզադեի, Վարդանանց-Հանրապետության փողոցների խաչմերուկների վերազինված և նոր լուսացուցային օբյեկտները, ինչպես նաև Թումանյան փողոցի՝ Հյուսիսային պողոտան Ազատության հրապարակին կապող հատվածին հարակից ճանապարհահատվածի հետիոտնային անցման լուսացուցային օբյեկտը:</p>		
15.	Ուղևորների սպասարկման որակի բարձրացմանն ուղարկված միջոցառումների	Ուղևորների սպասարկման որակի բարձրացմանն ուղարկված	Վերանայվել և լրամշակվել է գործող երթուղային ցանցը, արդյունքում բարձրացել է առանձին ավտոբուսային երթուղիների շահագործման	Աշխատակազմի տրանսպորտի վարչություն	

Երևանի զարգացման 2015 թվականի ծրագրի իրականացման հաշվետվություն

	<p>իրականացում</p>	<p>միջոցառումների իրականացում:</p>	<p>արդյունավետությունը, բարելավվել ուղևորների սպասարկման վիճակը: Պարբերաբար երթուղիներում իրականացվել են ստուգայցեր՝ անբավարար արտաքին տեսք և ուղեսրահ ունեցող տրանսպորտային միջոցների աշխատանքը արգելելու, վարորդների կողմից աշխատանքի ժամանակ ծխելու, երաժշտություն միացնելու դեպքերը բացառելու համար: Երևանի քաղաքապետի 01.09.2015թ. հ.2700-Ա որոշման հիման վրա վերագործարկվել է նախկինում գործող ավտոբուսային հ.15 երթուղին (Նոր Նորքի 6-րդ-Աերացիա), որի արդյունքում զգալիորեն բարելավվել է Աերացիա թաղամասի, Շիրակի, Գյուրջյան փողոցների, Նոր Նորքի 1-ին և 6-րդ զանգվածների տրանսպորտային սպասարկման վիճակը: «Տիգրան» ՍՊԸ-ի կողմից ավտոբուսային հ.հ.33, 48 երթուղիների սպասարկումից հրաժարվելուց հետո. ա) կազմակերպվել է ավտոբուսային հ.33 երթուղու աշխատանքը «ՀԻԳԵՆ» մակնիշի ավտոբուսներով, ինչի արդյունքում բարձրացել է երթուղու շահագործման արդյունավետությունը, ինչպես նաև ուղևորների սպասարկման հարմարավետությունն ու որակը: բ) ավտոբուսային հ.48 երթուղուց նախկինում օգտվող ուղևորների սպասարկումը կոմպենսացնելու նպատակով մասնակիորեն փոփոխվել է ավտոբուսային հ.16 երթուղու ուղեգիծը (Նուբարաշեն-Աբովյան պուրակ), այն ներկայումս շահագործվում է Կորյունի փողոցից դեպի Պետ.օպերա, այնուհետև ավտոբուսային հ.48 երթուղու ուղեգծով (Մարշալ Բաղրամյան, Կոմիտասի պողոտաներով)՝ մինչ Զեյթուն:</p>		
--	--------------------	--	---	--	--

Երևանի զարգացման 2015 թվականի ծրագրի իրականացման հաշվետվություն

			Ծարավ Աղբյուրի փողոցին հարող բազմաբնակարան շենքերի բնակիչների տրանսպորտային սպասարկման վիճակը բարելավելու նպատակով, փորձնական կարգով, կազմակերպվել է ավտոբուսային հ.2Ա երթուղին՝ Ծարավ Աղբյուրի փողոց-Պետական համալսարան ուղեգծով:		
16.	Միասնական տոմսային համակարգի անցման հնարավորության ուսումնասիրություն	Նախադրյալներ կստեղծվեն հետագայում միասնական տոմսային համակարգի անցման գործընթացի և անկանխիկ վճարման միջոցների ներդրման համար:	ԱԶԲ-ի աջակցությամբ իրականացվող նոր երթուղային ցանցի մշակման տեխնիկական առաջադրանքը ներառում է նաև միասնական էլեկտրոնային տոմսային համակարգի ներդրման հնարավորությունների, չափորոշիչների ուսումնասիրությունը և առաջարկությունների ներկայացումը:		
17.	Ավտոբուսային (միկրոավտոբուսային) երթուղիներում շարժակազմերի համալրման և փոխարինման աշխատանքների իրականացում	Ավտոբուսային (միկրոավտոբուսային) երթուղիներում շարժակազմերի համալրման և փոխարինման աշխատանքների իրականացում:	Կազմակերպվել է երթուղիների համալրման (փոխարինման) թվով 8 գործընթաց, որի ընթացքում տարբեր երթուղիներում կազմակերպությունների կողմից ներկայացվել են, ընդհանուր առմամբ, թվով 72 միավոր տրանսպորտային միջոցներ:	Աշխատակազմի տրանսպորտի վարչություն Մրցութային հանձնաժողով	
Բնապահպանություն					
Հ/հ	Ծրագրի կամ միջոցառման անվանումը	Նախատեսված աշխատանքների նկարագիր	Աշխատանքների իրականացման գործընթաց	Իրականացնող կազմակերպություն, կատարման ժամկետ	Նշումներ
1	2	3	4	5	6
1.	Ծառերի և ծաղիկների տնկում	Նախատեսվում է տնկել շուրջ 54.0 հազ. ծառ և թուփ, շուրջ 570.0 հազ.	2015 թվականի ընթացքում իրականացվել են շուրջ 54.0 հազ. ծառերի և թփերի, 750.0 հազ. վարդակակաչի սոխուկների տնկման աշխատանքներ:		

Երևանի զարգացման 2015 թվականի ծրագրի իրականացման հաշվետվություն

		վարդակակաչի սխումբ:	Մայրաքաղաքի ծաղկանոցները տարվա ընթացքում համալրվել են շուրջ 20.0 հազ. վարդի թփերով:		
2.	Մայրաքաղաքի ծաղկանոցների համալրում ծաղկասածիլներով	Մայրաքաղաքի ծաղկանոցները կհամալրվեն շուրջ 2.500.0 հազ. ծաղկասածիլներով, ինչը կապահովվի 7.2 հա ծաղկային մակերես:	Երևան քաղաքում տնկվել է 2 200 000 ծաղկասածիլ, հիմնականում պետունյա, ցինյա, գեորգենի, թավշածաղիկ, տագետես, կատարան-տուս, փիփերտ տեսակի:		
3.	Կոմպոզիցիաների տեղադրում	Կտեղադրվի 95 կոմպոզիցիա:	Տեղադրվել է թվով 103 կոմպոզիցիա:		
4.	Միզամարգերի բարեկարգում և նոր սիզամարգերի ստեղծում	Կներկրվի 20.0 հազ. խ.մ. բուսահող և 1.0 հազ. խ.մ. կարմիր ավազ, որոնց տեղադրմամբ կբարելավվեն շուրջ 25 հա սիզամարգեր, կստեղծվեն 6 հա նոր սիզամարգային տարածքներ:	Բուսահողի, կարմիր ավազի տեղադրմամբ և ցանքսի միջոցով ստեղծվել է շուրջ 6.7 հա նոր և բարելավվել, վերականգնվել են շուրջ 12 հա սիզամարգեր: 2015 թվականին տեղադրվել է շուրջ 15900 խմ բուսահող:		Աշխատանքները կատարվել են բյուջեով հաստատված ֆինանսական միջոցների համապատասխան
5.	Ծառերի ձևավորում և էտ	Կձևավորվի շուրջ 25.0 հազ. ծառ:	Ընդհանուր առմամբ 2015 թվականին էտվել է շուրջ 35000 ծառ: Մայրաքաղաքում կրապատվել է շուրջ 65000 ծառ:		
6.	Խորքային հորերի հորատում	Նախատեսվում է հորատել 5 խորքային հոր, որոնց ջրերը կօգտագործվեն ոռոգման նպատակով՝ Ավան, Նոր Նորք և	Հորատվել են թվով 4 խորքային հորեր՝ Ավան վ.շ. Առինջ-Ավան թաղամասում, Նոր Նորք վ.շ. «Բազալտ» գործարանին կից տարածքում, Շենգավիթ վ.շ. Ե. Թաղևոսյան և Շիրակի 22-24 փողոցներին կից տարածքներում:		Նախատեսված 5 խորքային հորերից /որից 2-ը

Երևանի զարգացման 2015 թվականի ծրագրի իրականացման հաշվետվություն

		Շենգավիթ վարչական շրջաններում			Ավան վարչական շրջանում/ կառուցվել են 4-ը, քանի որ Ավան վարչական շրջանում կառուցված 1 խորքային հորը ապահովեց վարչական շրջանի ընդհանուր օգտագործման կանաչ տարածքների ռոռզման ջրի պահանջը:
7.	Նոր ռոռզման ցանցերի ստեղծում	Կկառուցվեն նոր ռոռզման ցանցեր՝ Կենտրոն վ.շ. - Ալեք Մանուկյան փողոց, Աջափնյակ վ.շ. - Ալիխանյան փողոց, Էրեբունի վ.շ. - Խաղաղ Դոնի և Աթոյան փողոցներ, Շենգավիթ վ.շ. -	Ընդհանուր առմամբ 2015 թվականին ստեղծված նոր ռոռզման ցանցերի երկարությունը կազմել է 12 կմ: Ավարտված են Շենգավիթ վ.շ. Արտաշիսյան-Շիրակ, Էրեբունի վ.շ. Խաղաղ Դոն, Կենտրոն վ.շ. Ալ.Մանուկյան և Աջափնյակ վ.շ. Ալիխանյան փող. ռոռզման ջրագծերի անցկացման աշխատանքները:		

Երևանի զարգացման 2015 թվականի ծրագրի իրականացման հաշվետվություն

		Բազրատունյաց պողոտա, Զեխովի փողոց հասցեներում:			
8.	Միլիկյան թաղամասում նոր կանաչ գոտու ստեղծում	Աջափնյակ վարչական շրջանի Միլիկյան թաղամասում կստեղծվի նոր կանաչ գոտի՝ 1.2 հա մակերեսով	Միլիկյան թաղամասում ստեղծվել է նոր կանաչ գոտի, որտեղ տեղադրվել է շուրջ 800 խմ բուսահող, իրականացվել են ոռոգման ցանցի ստեղծման, խոտածածկույթի ստեղծման և 250 դեկորատիվ տնկիների տնկման աշխատանքներ:		
9.	Ա. Կարապետյանի անվան զբոսայգու վերակառուցում	Շենգավիթ վարչական շրջանում կվերակառուցվի Ա. Կարապետյանի անվան զբոսայգին՝ 1 հա մակերեսով:	Իրականացվել են Ա. Կարապետյանի անվան կանաչ գոտու բարեկարգման և կանաչապատման աշխատանքներ: Վերակառուցվել է ոռոգման ջրագիծը, անց է կացվել լուսավորության համակարգ, տեղադրվել են շուրջ 800 խմ բուսահող, նստարաններ, աղբամաններ, հովանոցներ, վերափոխվել են անցուղիների սալիկները, կատարվել են ծառատնկման աշխատանքներ:		
10.	Եվրոպական միության «Քաղաքապետերի դաշնագրի» շրջանակում «Քաղաքի կայուն էներգետիկ զարգացման գործողությունների ծրագրի» մշակում	Եվրոպական միության «Քաղաքապետերի դաշնագրի» շրջանակում նախատեսվում է մշակել Քաղաքի կայուն էներգետիկ զարգացման գործողությունների ծրագրի, որը կներառի. ա) «Արտանետումների բազային կադաստր» քաղաքում էներգասպառման և ջերմոցային գազերի արտանետումների ելակետային ցուցանիշների գնահատումը բազային	Ի կատարումն Երևան քաղաքի ավագանու 09.09.14թ. «Եվրոպական միության «Քաղաքապետերի Դաշնագրի» նախաձեռնությանը միանալու մասին» հ204-Ա որոշման՝ Երևանի քաղաքապետի 25.12.2014թ. Հ.1090-Ա կարգադրությամբ ստեղծվել է աշխատանքային խումբ Երևան քաղաքի «Կայուն էներգետիկ զարգացման գործողությունների ծրագրի» /ԿԶԳԾ/ մշակման համար անհրաժեշտ ելակետային տվյալների հավաքագրման նպատակով: Աշխատակազմի համապատասխան ստորաբաժանումների կողմից հավաքագրվել է անհրաժեշտ տեղեկատվությունը, միաժամանակ հավաքագրվել և մշակվել է գործընկեր կազմակերպությունների կողմից 2008թ. ի վեր		

Երևանի զարգացման 2015 թվականի ծրագրի իրականացման հաշվետվություն

		<p>տարվա համար, բ) էներգախնայողության և էներգաարդյունավետության բարձրացման, ինչպես նաև վերականգնվող էներգետիկ ռեսուրսների կիրառմանն ուղղված միջոցառումների ցանկ, որոնք նախատեսվում է իրականացնել քաղաքում մինչև 2020թ.՝ բազային տարում գրանցված արտանետումներն առնվազն 20% նվազեցնելու նպատակով, գ) առաջարկվող միջոցառումների իրականացման ծրագիր և ժամանակացույց, ինչպես նաև միջոցառումների իրականացման համար պատասխանատու անձանց և/կամ կազմակերպությունների և ֆինանսավորման աղբյուրների ակնարկ, դ) միջոցառումների իրականացումից ակնկալվող տնտեսական և բնապահպանական արդյունքների գնահատում, ե) ստացված արդյունքների մոնիտորինգի ընթացակարգ:</p>	<p>Երևանում իրականացված կամ իրականացվող ծրագրերի, ինչպես նաև ոլորտային ուսումնասիրությունների վերաբերյալ տեղեկատվություն: Ծրագրի մշակման նպատակով տեղի են ունեցել հանդիպումներ և քննարկումներ «Քաղաքապետերի դաշնագիր՝ Արևելք» ծրագրի հայաստանյան փորձագետի, ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների, ՀՀ բնապահպանության նախարարությունների, ՀՀ ազգային վիճակագրական ծառայության, ինչպես նաև այլ կառույցների ներկայացուցիչների հետ: Հայաստանում ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի (ՄԱԶԾ-Հայաստան) հետ ձեռք է բերվել համաձայնություն՝ «Քաղաքապետերի դաշնագիր» նախաձեռնության շրջանակում քաղաքի «Կայուն էներգետիկ զարգացման գործողությունների ծրագիրը» մշակելու և հաստատելու համար Երևանին տեխնիկական աջակցություն տրամադրելու հարցի շուրջ: Երևանի քաղաքապետարանի համապատասխան ստորաբաժանումների մասնակցությամբ մշակվել է ԿԷԶԳԾ մշակման համար տեխնիկական առաջադրանքը: Այնուհետև ՄԱԶԾ կողմից հայտարարվել է մասնագիտական ծառայության մատուցման մրցույթ, որում հաղթող ճանաչված ընկերության հետ կազմակերպվել է հանդիպում: Մեկնարկել են «Կայուն էներգետիկ զարգացման գործողությունների ծրագրի» մշակման աշխատանքները:</p>		
--	--	--	---	--	--

Երևանի զարգացման 2015 թվականի ծրագրի իրականացման հաշվետվություն

11.	Էներգիայի օրերի կազմակերպում	Նախատեսվում է նաև 2015թ. կազմակերպել Էներգիայի օրեր Եվրախորհրդի և այլ շահագրգիռ կողմերի հետ համագործակցությամբ:	Կայուն էներգետիկ զարգացման գործողությունների ծրագրի բաղադրիչ հանդիսացող Էներգիայի օրերի կազմակերպումը կիրականացվի ԿԷԶԳԾ մշակումից և հաստատումից հետո: Ապահովվել է մասնակցությունը «Էներգետիկան կայուն զարգացման համար» միջազգային 6-րդ ֆորումին, որտեղ ներկայացվել են Երևան քաղաքում Էներգախնայողության բնագավառում իրականացված և նախատեսվող ծրագրերը:		
Հանրակրթություն					
Հ/հ	Ծրագրի կամ միջոցառման անվանումը	Նախատեսված աշխատանքների նկարագիր	Աշխատանքների իրականացման գործընթաց	Իրականացնող կազմակերպություն, կատարման ժամկետ	Նշումներ
1	2	3	4	5	6
1.	Դպրոցների շենքերի վերանորոգում և հիմնանորոգում	Դպրոցների շենքերի վերանորոգման և հիմնանորոգման շարունակականության ապահովում:	Դպրոցների շենքերի վերանորոգման և հիմնանորոգման նպատակով ըստ առաջնահերթության հավաքագրվել և ՀՀ քաղաքաշինության նախարարություն է ներկայացվել վերանորոգման ենթակա դպրոցների ցանկը. Վարչական շրջան Հիմնանորոգում Աջափնյակ Հ.հ 102,122,146,156 Արաբկիր Հ.հ 21,37,145 Ավան Հ.հ 124, հ.6 հատուկ Դավթաշեն Հ.199 Էրեբունի Հ.հ 34,49,64,68,70,107, 120,178 Կենտրոն Հ.հ 4,23,33,81, «Հ. Կոչոյան» Մալաթիա-Սեբաստիա Հ.հ 91,152, 162,191 Նոր Նորք Հ.հ 88,133, 141, 163, 166, 186, 187 Նորք Մարաշ Հ.հ 157 Նուբարաշեն Հ.175		

Երևանի զարգացման 2015 թվականի ծրագրի իրականացման հաշվետվություն

			Շենգավիթ Քանաքեռ-Զեյթուն	Հ.հ74,161 Հ.հ 48,85, 8 հատուկ		
2.	Դպրոցների գործունեության առավել թափանցիկությունն ու հրապարակայնությունն ապահովող շարունակական աշխատանքների իրականացում	Դպրոցների գործունեության առավել թափանցիկությունն ու հրապարակայնությունն ապահովող շարունակական աշխատանքների իրականացում:	Դպրոցների գործունեության առավել թափանցիկության ու հրապարակայնության ապահովման նպատակով dasar.am , ktak.am և Yerevan.am կայքերով դպրոցների գործունեության վերաբերյալ ներկայացվել է տեղեկատվություն:			
3.	Երևանի ենթակայությամբ գործող 14 միջնակարգ դպրոցների, որից երկուսը՝ կրթահամալիր, ինչպես նաև երկու խնամքի գիշերօթիկ և կույրերի երեկոյան հաստատությունների ֆինանսական փաստաթղթերի տեղադրում կայքում	Երևանի ենթակայությամբ գործող 14 միջնակարգ դպրոցների, որից երկուսը՝ կրթահամալիր («Հ. Կոջոյան», մեկ հատուկ (հ.8) կրթահամալիր՝ խոսքի ծանր խանգարում ունեցող երեխաների համար) և կույրերի երեկոյան մեկ դպրոց (գործում են 6-12-րդ դասարաններ), ինչպես նաև երկու խնամքի գիշերօթիկ (հ.2, հ.6) հաստատությունների (մտավոր թերզարգացում ունեցող երեխաների համար) ֆինանսական փաստաթղթերի տեղադրում կայքում:	Երևանի ենթակայությամբ գործող 14 միջնակարգ դպրոցների, ինչպես նաև հատուկ /օժանդակ/ գիշերօթիկ հաստատությունների մասին տվյալները տեղադրված են Yerevan.am կայքի հանրակրթության բաժնում:			
4.	Երևանի քաղաքապետարանի	Երևանի	Երևանի քաղաքապետարանի և միջին			

Երևանի զարգացման 2015 թվականի ծրագրի իրականացման հաշվետվություն

	<p>և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների միջև համագործակցության հաստատում՝ ձևակերպելով ծառայությունների մատուցման ոլորտի մասնագետների պատրաստման չափորոշիչներ</p>	<p>քաղաքապետարանի և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների միջև համագործակցության հաստատում՝ ձևակերպելով ծառայությունների մատուցման ոլորտի մասնագետների պատրաստման չափորոշիչներ:</p>	<p>մասնագիտական ուսումնական հաստատությունների միջև համագործակցության շրջանակում ՀՀ կրթության և գիտության նախարարություն է ուղարկվել միջին մասնագիտական կրթության մասնագիտությունների ցանկ՝ Երևան քաղաքի տարբեր ոլորտների ծառայություններում համապատասխան մասնագետների պատրաստման առաջարկով:</p>		
5.	<p>Մովորողների և մանկավարժների՝ համակարգչային գրագիտության մակարդակի բարձրացում՝ որպես նորագույն տեխնոլոգիաների լայնածավալ կիրառման հիմք</p>	<p>Մովորողների և մանկավարժների՝ համակարգչային գրագիտության մակարդակի բարձրացում՝ որպես նորագույն տեխնոլոգիաների լայնածավալ կիրառման հիմք:</p>	<p>Դպրոց կենտրոնների համագործակցությամբ իրականացվել է «Սոցիալական մեդիան և թվային գործիքների կիրառումը ուսումնական գործընթացում» միջազգային ծրագրի ներդրումը Երևանի թվով 20 դպրոցներում՝ որպես փորձարարական փուլ: Կրթության ազգային ինստիտուտը, համաձայն համագործակցության հուշագրի, ուսուցիչների համար պարբերաբար կազմակերպել է վերապատրաստման դասընթացներ՝ «Ինտերակտիվ և համագործակցային ուսուցման մեթոդները դասապրոցեսում» թեմայով:</p>	<p>Աշխատակազմի հանրակրթության վարչություն Դպրոց-կենտրոններ</p>	
6.	<p>Տեղեկատվական հաղորդակցման տեխնոլոգիաների՝ որպես ուսուցման նոր միջոցի, ոչ ձևական օգտագործման ապահովում դասապրոցեսում: Ինտերակտիվ և համագործակցային</p>	<p>Տեղեկատվական հաղորդակցման տեխնոլոգիաների՝ որպես ուսուցման նոր միջոցի, ոչ ձևական օգտագործման ապահովում դասապրոցեսում: Ինտերակտիվ և համագործակցային ուսուցման մեթոդների կիրառում:</p>	<p>Կրթության որակի բարձրացմանը նպաստելու նպատակով Երևանի քաղաքապետարանի և «Փյունիկ» բարեգործական հիմնադրամի համագործակցությամբ թվով 87 կրթական հաստատություններ համալրվել են համակարգիչներով: Ծրագիրը շարունակական է: Ապահովվել է ինտերակտիվ և համագործակցային մեթոդների կիրառումը դասապրոցեսում:</p>	<p>Աշխատակազմի հանրակրթության վարչություն և «Փյունիկ» բարեգործական հիմնադրամ</p>	

Երևանի զարգացման 2015 թվականի ծրագրի իրականացման հաշվետվություն

	ուսուցման մեթոդների կիրառում				
7.	«Տարվա լավագույնը պրոց», «Տարվա լավագույն տնօրեն», «Տարվա լավագույն ուսուցիչ» մրցույթի քաղաքային փուլի անցակցում, «Երևան քաղաքի լավագույն ուսուցիչ» մրցույթի սկզբնավորում	Մանկավարժների խրախուսման նպատակով «Տարվա լավագույն դպրոց», «Տարվա լավագույն տնօրեն», «Տարվա լավագույն ուսուցիչ» մրցույթի քաղաքային փուլի անցակցում, ինչպես նաև «Երևան քաղաքի լավագույն ուսուցիչ» մրցույթի սկզբնավորում:	ա/ Երևանի քաղաքապետի՝ 29.04.2015թ. հ.341-Ա կարգադրությամբ ստեղծված «Տարվա լավագույն տնօրեն, ուսուցիչ» մրցույթի կարգի պահանջներին համապատասխան՝ իրականացվել է մրցույթի քաղաքային փուլը: Հոկտեմբերի 5-ին տեղի է ունեցել հաղթող ճանաչված թեկնածուների պարզևատրումը: բ/Քաղաքապետարանի հանրակրթական դպրոցների խրախուսված ուսուցիչները արժանացել են դրամական պարգևի:		
8.	Մովորողների մարզական, Ազգային ժողովի գավաթի կիսաեզրափակիչ խաղերի անցկացում /քաղաքային, հանրապետական փուլեր/	Մովորողների մարզական, Ազգային ժողովի գավաթի կիսաեզրափակիչ խաղերի անցկացում /քաղաքային, հանրապետական փուլեր/:	Համաձայն «ՀՀ անկախության 24 –րդ ամյակին նվիրված մարզական խաղերի» կանոնադրության /ՀՀ կրթության և գիտության նախարարի 06.02.2015թ. հ.64-Ա/Ք և 09.09.2014թ. հ.888-Ա/Ք հրամանների/ և համապատասխան ժամանակացույցի՝ կազմակերպվել են վերոնշյալ մրցումների և «ԱԾ գավաթի խաղարկության» տարածքային և քաղաքային փուլերը:	Աշխատակազմի հանրակրթության վարչություն, ՀՀ կրթության և գիտության նախարարություն	
9.	Առարկայական օլիմպիադաների տարածքային, քաղաքային և հանրապետական փուլերի կազմակերպում և անցկացում	Առարկայական օլիմպիադաների տարածքային, քաղաքային և հանրապետական փուլերի կազմակերպում և անցկացում:	ՀՀ դպրոցականների առարկայական օլիմպիադայի՝ Երևանի համայնքային և քաղաքային փուլերը կազմակերպվել են համաձայն կանոնադրության: Համայնքային փուլին մասնակցել է 7800 աշակերտ, իսկ քաղաքայինին՝ 1935 աշակերտ. դիպլոմների են արժանացել՝ 1-ին կարգ՝ 56 աշակերտ 2-րդ կարգ՝ 112 աշակերտ 3-րդ կարգ՝ 156 դպրոցականներ:	Աշխատակազմի հանրակրթության վարչություն, դպրոցներ:	

Երևանի զարգացման 2015 թվականի ծրագրի իրականացման հաշվետվություն

10.	Անվանակիր դպրոցների անվանատուներին նվիրված շաբաթների, տասնօրյակների և միամսյակների, հոբելյանական միջոցառումների, հիշատակիօրերի (Հայոց ցեղասպանություն-100), ինչպես նաև ՀՀ քաղաքացու համակողմանի զարգացմանը նպաստող այլ միջոցառումների կազմակերպում	Անվանակիր դպրոցների անվանատուներին նվիրված շաբաթների, տասնօրյակների և միամսյակների, հոբելյանական միջոցառումների, հիշատակի օրերի (Հայոց ցեղասպանություն-100), ինչպես նաև ՀՀ քաղաքացու համակողմանի զարգացմանը նպաստող այլ միջոցառումների կազմակերպում:	<p>Հաղթողները ստացել են արժեքավոր նվերներ:</p> <p>1. Ռուբեն Սևակի, Դանիել Վարուժանի, Սիամանթոյի, Սմբատ Բյուրատի, Հակոբ Օշականի, Մուշեղ Իշխանի, Հրանտ Դինքի անվան երևանյան դպրոցները ծնողական համայնքների համար կազմակերպել են եղեռնազարկ, ինչպես նաև աշխարհասփյուռ հայ մտավորականներին նվիրված ճանաչողական միջոցառումներ:</p> <p>2. Դպրոցներում ձևավորվել են` Հայոց ցեղասպանության օրերին, մեր ժողովրդին սատարած օտարազգի արվեստագետներին, մտավորականներին, պետական-քաղաքական գործիչներին, դիվանագետներին, անվանի անհատներին նվիրված սրահներ, հիշատակի պատեր, ալբոմներ (Ֆ.Նանսեն-հհ.50,150, Ն.Մորգենթաու- հհ.166, 126, Յ.Լեփսիուս-հհ.88, 113, ՖՎերֆել-հհ.131,137, 161 դպրոցներ):</p> <p>3. Դպրոցներում ներկայացվել են Հայոց ցեղասպանությունը ճանաչած պետությունները / հհ. 135,154 և այլն/:</p> <p>4.«Տարվա հոբելյաններ» շարքով իրականացվել են Վ.Տերյան-130, Ավ. Իսահակյան-140, Բաճճի-180 հոբելյանական միջոցառումներ:</p> <p>5. Երևանի հհ.36,27,74,95,140,86,106,166 և այլ դպրոցներում Հայոց ցեղասպանության 100-ամյա տարելիցի միջոցառումների շրջանակում կազմակերպվել են կլոր սեղաններ, քննարկումներ «Սև գիրք» ժողովածուի նյութերի շուրջ:</p> <p>6. Տարվա միջոցառումների ծաղկաքաղով կազմակերպվել է ամփոփիչ բեմականացում` «Մենք զավակները օգոստոսափառ... >>:</p>	Աշխատակազմի հանրակրթության վարչություն, Երևանի Վ. Տերյանի անվան հ. 60 դպրոց և «Ջավախքի աջակցության հիմնադրամ»	
-----	--	--	---	---	--

Երևանի զարգացման 2015 թվականի ծրագրի իրականացման հաշվետվություն

11.	Ասմունքի, շարադրության, ինչպես նաև մտավոր առանձնահատուկ օժտվածությամբ դպրոցականների հայտնաբերման նպատակով մրցույթների անցկացում	Ասմունքի, շարադրության, ինչպես նաև մտավոր առանձնահատուկ օժտվածությամբ դպրոցականների հայտնաբերման նպատակով մրցույթների կազմակերպում:	Կազմակերպվել է ասմունքի և շարադրությունների մրցույթներ՝ առանձնահատուկ օժտվածությամբ դպրոցականների հայտնաբերման նպատակով: Մրցույթի քաղաքային փուլի հաղթողները երաշխավորվել են մասնակցելու հանրապետական փուլին:	Աշխատակազմի հանրակրթության վարչություն, ՀՀ կրթության և գիտության նախարարություն	
12.	Իրականացվող մարզական և այլ կարգի մրցույթներում սահմանափակ կարողություններով երեխաների ընդգրկում, վերջիններիս համար մայրաքաղաքի մշակութային օջախներ այցելելու ծրագրերի իրականացում	Իրականացվող մարզական և այլ կարգի մրցույթներում սահմանափակ կարողություններով երեխաների ընդգրկում: Վերջիններիս համար մայրաքաղաքի մշակութային օջախներ այցելելու ծրագրերի իրականացում:	Երևանի քաղաքապետարանի հատուկ, ինչպես նաև հանրակրթական դպրոցների հատուկ կարիքներով երեխաները մասնակցել են ասմունքի, շարադրությունների մրցույթներին, նրանց համար կազմակերպվել է էքսկուրսիա Երևան քաղաքի պատմության թանգարան:	Աշխատակազմի հանրակրթության վարչություն, դպրոցներ:	
13.	«Բարեկարգ շրջակայք, կանաչապատ և ծառաշատ դպրոց» ծրագրի իրականացում	«Բարեկարգ շրջակայք, կանաչապատ և ծառաշատ դպրոց» ծրագրի իրականացում:	«Բարեկարգ շրջակայք, կանաչապատ և ծառաշատ բակ» ծրագիրը իրականացվել է հ.հ.31,32, 35, 68,77,80, 84,87,90,91,93, 95,99,101,120,137175,196, Հր. Մաթևոսյան դպրոցներում: Կատարվել են խոտհունձի և ծառերի կրապատման աշխատանքներ:	Աշխատակազմի հանրակրթության և բնապահպանության վարչություններ, վարչական շրջաններ, դպրոցներ	
14.	Փորձի փոխանակման նպատակով Ստեփանակերտի	Փորձի փոխանակման նպատակով Ստեփանակերտի	Ստեփանակերտի դպրոցների 21 ուսուցիչներ և աշակերտներ աշխատակազմի հանրակրթության վարչության հրավերով հյուրընկալվել են Երևանում:	Աշխատակազմի հանրակրթության վարչություն,	

Երևանի զարգացման 2015 թվականի ծրագրի իրականացման հաշվետվություն

	հանրակրթական դպրոցների ուսուցիչների և աշակերտների եռօրյա այց Երևան:	հանրակրթական դպրոցների ուսուցիչների և աշակերտների եռօրյա այց Երևան:	Նախապես մշակած ծրագրով հյուրերը, փորձի փոխանակման նպատակով, այցելել են դպրոցներ, եղել են մշակութային տարբեր օջախներում (Խ. Աբովյանիտուն- թանգարան, Երևանի պատմության, Էրեբունի արգելանոց թանգարաններ, Ծիծեռնակաբերդի հուշահամալիր, թատրոն), եղել են ժամանցի մանկական կենտրոններում:	դպրոցներ մայիս	
15.	Երևանի քաղաքապետարանի ներառական կրթություն իրականացնող դպրոցներում «Վորլդ Վիժնի» համագործակցությամբ երկօրյա վերապատրաստում՝ Իսրայելի նույնատիպ դպրոցների փորձի մասսայականացման նպատակով	Երևանի քաղաքապետարանի ներառական կրթություն իրականացնող դպրոցներում «Վորլդ Վիժնի» համագործակցությամբ երկօրյա վերապատրաստում՝ Իսրայելի նույնատիպ դպրոցների փորձի մասսայականացման նպատակով:	«Վորլդ Վիժն» ՀԿ-ի համագործակցությամբ իրականացվել է Երևանի քաղաքապետարանի ներառական կրթություն իրականացնող դպրոցների ուսուցիչների երկօրյա վերապատրաստում՝ «Ներառական դպրոցների ուժեղացման ծրագրի» շրջանակում:	Աշխատակազմի հանրակրթության վարչություն, դպրոցներ, «Վորլդ Վիժն» ՀԿ հոկտեմբեր	
16.	«Դասը վարում է մտավորականը» ծրագրի մշակում և հանդիպումների շարքի իրականացում	«Դասը վարում է մտավորականը» ծրագրի հանդիպումների շարքի իրականացում՝ ըստ ժամանակացույցի:	Հայոց ցեղասպանության գոհերի հիշատակի ոգեկոչման 100-րդ տարելիցի միջոցառումների շրջանակում շարունակվել է բաց դասերի կազմակերպումը: Հայոց ցեղասպանության ինստիտուտ – թանգարանի, Ազգային ակադեմիայի պատմության ինստիտուտի մասնագետները, գրողներն ու գրականագետները, ինչպես նաև ուսուցիչները դպրոցականներին ներկայացրել են այդ ծանր շրջանի, ինչպես նաև ժողովրդի ինքապաշտպանական մարտերի մասին:	Աշխատակազմի հանրակրթության վարչություն, Երևանի դպրոցներ, Ցեղասպանության թանգարան	
17.	Եռօրյա սեմինար	Եռօրյա սեմինար	Սեմինարների կազմակերպումը տեղափոխվել է		

Երևանի զարգացման 2015 թվականի ծրագրի իրականացման հաշվետվություն

	Ստեփանակերտում՝ Երևանի քաղաքապետարանի ենթակայության որոշ մանկապարտեզների փորձի մասսայականացումը Ստեփանակերտի որոշ մանկապարտեզներում իրականացնելու նպատակով, մեթոդական նյութերի տրամադրում	Ստեփանակերտում՝ Երևանի քաղաքապետարանի ենթակայության հ.հ. 154 և 141 մանկապարտեզների փորձի մասսայականացումը Ստեփանակերտի հ.հ. 1,2,3 մանկապարտեզներում իրականացնելու նպատակով: Մեթոդական նյութերի տրամադրում:	2016թ.:		
18.	«Ղեկավարման և կառավարման նորմատիվ ակտերը /նոր/ նախադպրոցական կրթության ոլորտում» թեմայով սեմինարի կազմակերպում՝ Երևանի քաղաքապետարանի մանկապարտեզների տնօրենների համար	Սեմինար՝ «Ղեկավարման և կառավարման նորմատիվ ակտերը/նոր/ նախադպրոցական կրթության ոլորտում» թեմայով՝ Երևանի քաղաքապետարանի մանկապարտեզների տնօրենների համար:	Երևանի քաղաքապետարանի մանկապարտեզների տնօրենների համար՝ հրավիրված մասնագետների ուժերով կազմակերպվել է «Ղեկավարման և կառավարման նորմատիվ ակտերը նախադպրոցական կրթության ոլորտում» թեմայով սեմինար:	Աշխատակազմի հանրակրթության վարչություն, «Միտոյան»- կենտրոն Հոկտեմբերի 30	
19.	Մանկապարտեզների շենքերի մասնակի նորոգման և հիմնանորոգման շարունակականության ապահովում	Մանկապարտեզների շենքերի մասնակի նորոգման և հիմնանորոգման շարունակականության ապահովում:	Տե՛ս շինարարություն և բարեկարգում:		
20.	Մինչև 5 տարեկան երեխաների՝ օրենքով	Մինչև 5 տարեկան երեխաների՝ օրենքով	Մանկապարտեզ չհաճախած՝ առաջին դասարան ընդունվող երեխաների համար՝ հավասար	Աշխատակազմի հանրակրթության	

Երևանի զարգացման 2015 թվականի ծրագրի իրականացման հաշվետվություն

	սահմանված կարգով նախադպրոցական կրթություն ստանալու հնարավորությունն ընդլայնելու ծրագիր	սահմանված կարգով նախադպրոցական կրթություն ստանալու հնարավորությունը ընդլայնելու ծրագիր:	մեկնարկային պայմաններ ապահովելու նպատակով Երևանի հ.175,1,21 դպրոցներում «Կրթական ծրագրերի կենտրոն» ՄԻԳ-ի համագործակցությամբ բացվել են նախակրթարաններ: Ծրագիրը շարունակական է:	վարչություն, դպրոցներ, «Կրթական ծրագրերի կենտրոն» ՄԻԳ	
21.	Մանկապարտեզներ հաճախող և հերթագրված երեխաների հաշվառման էլեկտրոնային ծրագրի ստեղծում	Մանկապարտեզներ հաճախող և հերթագրված երեխաների հաշվառման էլեկտրոնային ծրագրի ստեղծում:	Ապահովվել է մանկապարտեզ երեխաների ընդունելության և հաշվառման գործընթացի էլեկտրոնային ծրագրի ստեղծումը և ներդրումը:	Աշխատակազմի հանրակրթության վարչություն, Երևան քաղաքի կառավարման տեխնոլոգիաների կենտրոն ՓԲԸ	
22.	Մանկավարժների խրախուսման նպատակով «Տարվա լավագույն դաստիարակ» մրցույթի քաղաքային փուլի անցակցում	Մանկավարժների խրախուսման նպատակով «Տարվա լավագույն դաստիարակ» մրցույթի քաղաքային փուլի անցակցում:	Կազմակերպվել է «Տարվա լավագույն դաստիարակ» մրցույթի քաղաքային փուլը: Հաղթող ճանաչված մանկավարժը մասնակցել է հանրապետական փուլին և պարգևատրվել ավտոմեքենայով:	Աշխատակազմի հանրակրթության վարչություն, վարչական շրջաններ	
23.	«Բարեկարգ շրջակայք, կանաչապատ և ծառաշատ մանկապարտեզ» ծրագրի իրագործում	«Բարեկարգ շրջակայք, կանաչապատ և ծառաշատ մանկապարտեզ» ծրագրի իրագործում:	Վարչական շրջանների օժանդակությամբ մանկապարտեզների հարակից տարածքներում կատարվել են խոտհունձի և ծառերի կրապատման աշխատանքներ:	Աշխատակազմի հանրակրթության և բնապահպանության վարչություններ, վարչական շրջաններ	
Առողջապահություն					
Հ/հ	Ծրագրի կամ միջոցառման անվանումը	Նախատեսված աշխատանքների նկարագիր	Աշխատանքների իրականացման գործընթաց	Իրականացնող կազմակերպություն, կատարման ժամկետ	Նշումներ
1	2	3	4	5	6
1.	Բուժսարքավորումների ձեռքբերում	2015թ. նախատեսվում է ձեռք բերել նոր	1. 02.03.2015թ. ԵՔ-ՇՀԱՊՁԲ-15/58-1 2. 02.03.2015թ. ԵՔ-ՇՀԱՊՁԲ-15/58-2	1. <<Փինգ Ֆլամինգո Գ և Ա	

Երևանի զարգացման 2015 թվականի ծրագրի իրականացման հաշվետվություն

		բուժսարքավորումներ, մասնավորապես՝ 5 ուլտրաձայնային հետազոտման սարք՝ տվիչով /դոպպլեր/, 10 ճեղքային լամպ, 10 մակլակովի տոնոմետր, 10 ֆոկուս լինզա, 5 կոլպոսկոպ, 10 արյան կլինիկական անալիզատոր, (71,500.0 հազ. դրամ՝ Երևանի բյուջե):	3. 02.03.2015թ. ԵՔ-ՇՀԱՊՁԲ-15/58-3 Ձեռք է բերվել. 1. 5 ուլտրաձայնային հետազոտման սարք՝ տվիչով /դոպպլեր/, 2. 10 ճեղքային լամպ, 3. 5 կոլպոսկոպ, 4. 10 արյան կլինիկական անալիզատոր: Ֆոկուս լինզա՝ 10 հատ և մակլակովի տոնոմետր՝ 10 հատ բուժսարքավորումների ձեռքբերման համար երեք անգամ հայտարարվել է մրցույթ, որոնք «Գնումների մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին և նույն հոդվածի 1-ին կետի 3-րդ ենթակետերի համաձայն համարվել են չկայացած:	կենտրոն»՝ ՍՊԸ մինչև 10.04.2015 2. <<Կոնցենս-Էներգոմաշ» ՍՊԸ 17.03.2015 – 23.03.2015 3. <<Ավեմեդ» ՍՊԸ 19.03.2015	
2.	Երևանի բնակչության համար պետության կողմից երաշխավորված թանկարժեք և դժվարամատչելի հետազոտության՝ կոմպյուտերային տոմոգրաֆիայի ծառայությունների ձեռքբերում	2015 թվականին նախատեսվում է ձեռք բերել Երևանի բնակչության համար պետության կողմից երաշխավորված թանկարժեք և դժվարամատչելի հետազոտության՝ կոմպյուտերային տոմոգրաֆիայի ծառայություններ (ընդամենը 200 հատ, 12,000.0 հազ. դրամ՝ Երևանի բյուջե):	11.02.2015թ. ԵՔ-ՊԸՄՁԲ-15/31 Ձեռք է բերվել 200 հատ կոմպյուտերային տոմոգրաֆիայի ծառայություն, որոնցից օգտվել են 200 քաղաքացիներ:	«Սլավմեդ Բժշկական կենտրոն» ՍՊԸ 25.12.2015թ.	
3.	Երևանի ենթակայության <<Հակատուբերկուլյոզային դիսպանսեր» ՓԲԸ-ի	2015թ. Երևանի ենթակայության «Հակատուբերկուլյոզային	Վերանորոգման աշխատանքներն ավարտվել են:	Աշխատանքները կատարվել են բուժհաստատությ	

Երևանի զարգացման 2015 թվականի ծրագրի իրականացման հաշվետվություն

	ռենտգեն կաբինետի վերանորոգում	դիսպանսեր» ՓԲԸ-ում նախատեսվում է իրականացնել ռենտգեն կաբինետի վերանորոգում՝ նոր ռենտգեն ապարատի տեղադրման նպատակով՝ 4,825.0 հազար դրամ ընդհանուր արժեքով		ան համապատասխան աշխատակիցների կողմից	
4.	Բուժհաստատությունների նորոգում	Նախատեսվում է 1 բուժհաստատությունում կատարել տանիքի մասնակի վերանորոգում, 1-ում՝ փոխարինել պատուհանները:	Վերանորոգման աշխատանքներ են կատարվել երկու օբյեկտներում: ԵՔ-ԲԸ-ԱՇՁԲ-15/75-2 1.«Թիվ 17 պոլիկլինիկա» ՓԲԸ-ի թեք տանիքի վերանորոգում: ԵՔ-ԲԸ-ԱՇՁԲ-15/75-1 2.«Թիվ 5 պոլիկլինիկա» ՓԲԸ-ի լուսամուտների փոխարինում:	1.«Կոմերցիալ Պարտներս» ՍՊԸ, 18.03.2015թ-25.08.2015թ. 2.«Ազարակ» ԲԲԸ, 18.03.2015թ-04.05.2015թ.	
Սոցիալական ապահովություն					
Հ/հ	Ծրագրի կամ միջոցառման անվանումը	Նախատեսված աշխատանքների նկարագիր	Աշխատանքների իրականացման գործընթաց	Իրականացնող կազմակերպություն, կատարման ժամկետ	Նշումներ
1	2	3	4	5	6
1.	Պետական սոցիալական օժանդակության ծրագրեր և պետական սոցիալական ապահովության ծրագրեր	2015թ. ընթացքում Երևան քաղաքում ընտանիքների անապահովության գնահատման համակարգում կփաստագրվի շուրջ 17280 ընտանիք:	12 ամիսների ընթացքում փաստագրվել են շուրջ 23594 կարիքավոր ընտանիքներ, իսկ միջին հաշվով շուրջ 18160 ընտանիքներ ստացել են ընտանեկան, սոցիալական նպաստներ և հրատապ օգնություններ: Մինչև 2 տարեկան երեխայի խնամքի նպաստ է նշանակվել 5979 ընտանիքների, դրամական ավանդների դիմաց փոխհատուցում է նշանակվել 1034 ընտանիքների: Երևանի 12 ՍՍՏԲ-ներում	Երևանի 12 ՍՕՏԲ-ներ հունվար-դեկտեմբեր	

Երևանի զարգացման 2015 թվականի ծրագրի իրականացման հաշվետվություն

			<p>ուսումնասիրվել են ընտանեկան, սոցիալական նպաստի և հրատապ օգնության 232 գործեր, որից 38 գործերում հայտնաբերվել են վիրապումներ և թերացումներ, որոնք էլ շտկվել են:</p> <p>Վերլուծվել և ամփոփվել են սխալ տեղեկատվության արդյունքում ավել վճարված նպաստների հետգանձումները, դրանք սահմանված ժամկետում վերադարձվել են ՀՀ պետական բյուջե:</p>		
2.	<p>Սոցիալական խավերի համար որոշակի միջոցառումների իրագործում՝ քաղաքացիների սոցիալական դժվարությունները մեղմելու նպատակով</p>	<p>Սոցիալական ապահովության ոլորտում Երևանի քաղաքապետարանի գործունեության կարևորագույն մասն են կազմում նաև սոցիալական խավերի համար իրականացվող միջոցառումները, որոնք որոշակիորեն մեղմում են քաղաքացիների սոցիալական դժվարությունները:</p>			
2.1	<p>Կարիքավորության գնահատման համակարգում հաշվառված և սոցիալական խմբեր ներկայացնող կանանց համար մարտի 8-ի կապակցությամբ միջոցառումների կազմակերպում</p>	<p>Կանանց միջազգային օրվա՝ մարտի 8-ի կապակցությամբ կկազմակերպվեն միջոցառումներ՝ նվիրված կարիքավորության գնահատման համակարգում հաշվառված</p>	<p>Կազմակերպվել և իրականացվել է մարտի 8-ին նվիրված հանդիսություն Հ.Պարոնյանի անվան թատրոնում՝ բոլոր սոցիալական խմբերը ներկայացնող 2000 կանանց մասնակցությամբ: Տոնական ներկայացման ավարտից հետո կանանց տրամադրվել են նվերներ:</p>		

Երևանի զարգացման 2015 թվականի ծրագրի իրականացման հաշվետվություն

		և սոցիալական խմբեր ներկայացնող շուրջ 2000 կանանց համար:			
2.2	Ապրիլի 7-ի կապակցությամբ մայրության խրախուսման նպատակով 5 և ավելի երեխաներ ունեցող բազմազավակ մայրերին դրամական աջակցության տրամադրում	Մայրության օրվա՝ ապրիլի 7-ի կապակցությամբ մայրության խրախուսման նպատակով 5 և ավելի երեխաներ ունեցող բազմազավակ մայրերին կտրամադրվի դրամական աջակցություն:	Ապրիլի 7-ին մայրության օրվա կապակցությամբ իրականացվել է մեկանգամյա նպաստի վճարման ծրագիր 4 և ավելի երեխաներ ունեցող մինչև 1 տարեկան երեխաների, ինչպես նաև ԱԳՀ-ում հաշվառված կարիքավոր, բազմազավակ մայրերի համար: Այցելություն է կատարվել 100 ընտանիքներ, նրանց փոխանցվել են քաղաքապետի շնորհավորական բացիկները և տրամադրվել է դրամական աջակցության:		
2.3	Ապրիլի 24-ին՝ Եղեռնի 100-ամյակի կապակցությամբ շուրջ 12 վերապրած քաղաքացիներին դրամական օգնության տրամադրում	Ապրիլի 24-ին՝ Եղեռնի 100-ամյակի կապակցությամբ շուրջ 12 վերապրած քաղաքացիներին կտրամադրվի դրամական օգնություն:	Մեծ եղեռնի 100-ամյակի կապակցությամբ կատարվել են այցելություններ Երևանում բնակվող, Եղեռնը վերապրած թվով 8 քաղաքացիների բնակարաններ, նրանց տրամադրվել է դրամական միանվագ օգնություն:		
3.	Կարիքավոր, բազմազավակ ընտանիքների 7-13 տարեկան շուրջ 1200 երեխայի ամառային հանգիստի կազմակերպում Ծաղկաձորի, Հանքավանի և այլ մանկական առողջարարական ճամբարներում	Կարիքավոր, բազմազավակ ընտանիքների 7-13 տարեկան երեխա իր ամառային հանգիստը կանցկացնի Ծաղկաձորի, Հանքավանի և այլ մանկական առողջարարական ճամբարներում:	Երևանի քաղաքապետարանը ՀՀ կառավարության հետ համատեղ պետական բյուջեի միջոցների հաշվին 3 հերթափոխով կազմակերպել է զոհված, հաշմանդամ դարձած զինծառայողների, ծնողագուրկ ու սակավ ապահովված բազմազավակ ընտանիքի 7-13 տարեկան 1100-երեխաների ամառային հանգստի ծրագիրը՝ Ծաղկաձորի, Հանքավանի և այլ մանկական առողջարարական ճամբարներում:		
4.	Տարեցների համար սոցիալական աջակցության	Տարեցների օրվա կապակցությամբ	Տարվա ընթացքում աջակցություն է տրամադրվել Երևան քաղաքի 10 վարչական շրջաններում գործող		

Երևանի զարգացման 2015 թվականի ծրագրի իրականացման հաշվետվություն

	ծրագրերի իրագործում, ցերեկային խնամքի կենտրոնների գործունեության կազմակերպում: Տարեցների օրվա կապակցությամբ (հոկտեմբերի 1)՝ տարեցներին (մասնավորապես 100 և ավելի տարիք ունեցող) դրամական օգնության տրամադրում	(հոկտեմբերի 1)՝ տարեցներին (մասնավորապես 100 և ավելի տարիք ունեցող) կտրամադրվի դրամական օգնություն:	բարեգործական ճաշարաններին և տարեցների սոցիալական սպասարկման կենտրոններին և հսկողություն է իրականացվել դրանց նկատմամբ, աշխատանքներ են իրականացվել նկատված թերացումները վերացնելու ուղղությամբ, խրախուսվել են լավագույն կազմակերպությունների ղեկավարները: Տարեցների օրվա կապակցությամբ 19 տարեցի տրամադրվել է դրամական աջակցություն:		
5.	Հասարակական կառույցների հետ համագործակցությամբ սոցիալական ծրագրերի իրականացում	Հաշվի առնելով հասարակական կառույցների՝ մարդկանց աջակցելու յուրահատուկ փորձը, ինչպես նաև հենվելով սոցիալական գործընկերության սկզբունքի վրա՝ համատեղ կիրականացվեն սոցիալական ծրագրեր՝ առկա ռեսուրսների նպատակային օգտագործմամբ և սոցիալական խնդիրների լուծմամբ:	Համագործակցություն է ծավալվել Երևան քաղաքում սոցիալական ապահովության ոլորտում գործունեություն իրականացնող «Գերմանական կարմիր խաչ», «Առաքելություն Հայաստան», «Հայ օգնության ֆոնդ», «Հանս Քրիստիան Կոֆոեդ», «Միքիահայերի խնդիրների համակարգման խորհուրդ», «Հայաստանի վետերանների խորհուրդ», «Արցախյան պատերազմի մասնակից կանանց հանրապետական խորհուրդ», Արցախում զոհվածների և անհայտ կորած ազատամարտիկների կազմակերպությունների հետ, որոնց շրջանակներում իրականացվել են սոցիալական աջակցություն տարբեր ծրագրեր, շահառուներին տրամադրվել են նվերներ: Հայրենական պատերազմում տարած հաղթանակի 70-ամյակի միջոցառումների շրջանակում կազմակերպվել է ՀՀ վետերանների խորհրդի պատվիրակության այցը ԼՂՀ, որտեղ իրականացվել են մի շարք միջոցառումներ:		
6.	Դեկտեմբերի 3-ին՝ հաշմանդամների միջազգային օրվա կապակցությամբ	Դեկտեմբերի 3-ին՝ հաշմանդամների միջազգային օրվա	Դեկտեմբերի 3-ի Հաշմանդամների միջազգային օրվա կապակցությամբ դրամական աջակցություն է տրամադրվել «Հայաստանի կույրերի, խուլերի		

Երևանի զարգացման 2015 թվականի ծրագրի իրականացման հաշվետվություն

	միջոցառումների կազմակերպում սոցիալական հիմնախնդիրներով զբաղվող հասարակական կազմակերպություններին համաքաղաքային նշանակության սոցիալական ծրագրերի իրականացման կամ համաֆինանսավորման նպատակով դրամական օժանդակության ցուցաբերում	կապակցությամբ կիրականացվեն միջոցառումներ, սոցիալական հիմնախնդիրներով զբաղվող հասարակական կազմակերպություններին համաքաղաքային նշանակության սոցիալական ծրագրերի իրականացման կամ համաֆինանսավորման նպատակով կցուցաբերվի դրամական օժանդակություն:	միավորումներին», և հաշմանդամություն ունեցող այլ կարիքավոր թվով 110 քաղաքացիների:		
7.	Կարիքավորության գնահատման համակարգում ընդգրկված սոցիալապես անապահով ընտանիքների երեխաների համար Ամանորի և Սուրբ Ծննդյան տոների կապակցությամբ միջոցառումների կազմակերպում	Կարիքավորության գնահատման համակարգում ընդգրկված սոցիալապես անապահով ընտանիքների երեխաների համար Ամանորի և Սուրբ Ծննդյան տոների կապակցությամբ նախատեսվում են միջոցառումներ:	Կարիքավորության գնահատման համակարգում ընդգրկված սոցիալապես անապահով ընտանիքների համար Ամանորի և Սուրբ Ծննդյան տոների կապակցությամբ իրականացվել են միջոցառումներ:		
8.	Սոցիալական կարիքի մեջ գտնվող քաղաքացիներին դրամական օժանդակության տրամադրում	Սոցիալական կարիքի մեջ գտնվող քաղաքացիներին կցուցաբերվի դրամական օժանդակություն:	«Էրեբունի Երևան -2796» տոնակատարության շրջանակներում սոցիալապես անապահով ընտանիքների նվիրաբերվել է անհրաժեշտ կենցաղային տեխնիկա և այլ ապրանքներ: Տարվա ընթացքում ընդունելությանը մասնակցած		

Երևանի զարգացման 2015 թվականի ծրագրի իրականացման հաշվետվություն

			սոցիալական կարիքի մեջ գտնվող անձանց տրամադրվել են կենցաղային ապրանքներ, հագուստ, կոշիկներ և դրամական աջակցություն:		
9.	Անօթևան անձանց ժամանակավոր կացարանում տեղավորման գործընթացի կազմակերպում	Շարունակվում է անօթևան անձանց ժամանակավոր կացարանում տեղավորման գործընթացը	Տարվա ընթացքում մայրաքաղաքի փողոցներից հավաքագրվել և անօթևանների ժամանակավոր կացարան են տեղափոխվել 157 անօթևաններ, որոնցից 28-ը՝ քրեակատարողական հիմնարկներից ազատ արձակված անձիք են:	Աշխատակազմի սոցիալական ապահովության վարչություն, վարչական շրջաններ և Կոֆոեդ հիմնադրամ	
10.	Սոցիալական բնակարանային ֆոնդի ձևավորման նպատակով սոցիալապես անապահով և հատուկ խմբերին դասված բնակելի տարածության կարիք ունեցող անձանց հաշվառման աշխատանքների իրականացում	ՀՀ կառավարության 15.09.2015թ. հ. 1069-Ն որոշմամբ սոցիալական բնակարանային ֆոնդի ձևավորման նպատակով սոցիալապես անապահով և հատուկ խմբերին դասված բնակելի տարածության կարիք ունեցող անձանց (ընտանիքներին) հաշվառման աշխատանքների իրականացում:	Տարվա ընթացքում սոցիալական բնակարանային ֆոնդի ձևավորման նպատակով ՍՕՏԲ-ների միջոցով հաշվառվել է 9 ընտանիք, ներկայացվել է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն:	Երևանի ՄՕՏԲ-ներ	
11.	Ինտեգրված սոցիալական ծառայությունների համակարգի ներդրում, բնակչությանը մատուցվող սոցիալական ծառայությունների	Ինտեգրված սոցիալական ծառայությունների համակարգի ներդրում, բնակչությանը մատուցվող սոցիալական ծառայությունների	Երևան քաղաքում սոցիալական ծառայությունների համալիր կենտրոններ են գործում 5 վարչական շրջաններում՝ Աջափնյակում, Ավանում, Նորք-Մարաշում, Նուբարաշենում, Դավթաշենում:	Աշխատակազմի սոցիալական ապահովության վարչություն, վարչական շրջաններ և ՀՀ	

Երևանի զարգացման 2015 թվականի ծրագրի իրականացման հաշվետվություն

	կատարելագործում	կատարելագործում		աշխատանքի և սոցիալական ապահովության նախարարություն	
12.	Արցախյան պատերազմում զոհվածների ընտանիքների, հաշմանդամ դարձած ազատամարտիկների, Հայրենական Մեծ և Աֆղանական պատերազմների վետերանների, ցեղասպանությունը վերապրած և աջակցության կարիք ունեցող այլ ընտանիքների համար սոցիալական աջակցության ծրագրերի իրագործում:	2015թ. Արցախյան պատերազմում զոհվածների ընտանիքների, հաշմանդամ դարձած ազատամարտիկների, Հայրենական և Աֆղանական պատերազմների վետերանների համար կկազմակերպվեն միջոցառումներ, կտրամադրվի դրամական աջակցություն:	Հայրենական պատերազմում տարած հաղթանակի 70-ամյակի միջոցառումների շրջանակում կազմակերպվել է այցելություն Հայաստան վետերանների խորհրդ: Կազմակերպվել է ՀՀ վետերանների միավորման շուրջ 400 անդամների այցելություն անհայտ զինվորի հուշահամալիր: Բոլոր վետերանների համար կազմակերպվել են տոնական միջոցառումներ՝ համերգներ, ճաշկերույթներ, տրամադրվել են դրամական աջակցություններ: Երևանաբնակ կարիքավոր շուրջ 2500 ծնողների համար կազմակերպվել է տեսակցություն Տավուշի, Սյունիքի և Լեռնային Ղարաբաղի զորամասերում ծառայող իրենց զինվոր որդիների հետ:		
13,	Նորածին երեխաներ ունեցող, բազմազավակ ընտանիքների համար սոցիալական աջակցության ծրագրերի իրագործում:	Մայրության օրվան կապակցությամբ բազմազավակ մայրերի համար խրախուսման նպատակով կկազմակերպվեն մեծարման միջոցառումներ, նրանց Երևանի բյուջեից կտրամադրվեն դրամական օժանդակություններ:	Սոցիալապես անապահով նորածին երեխաներ ունեցող 100 ընտանիքների նվիրաբերվել են մահճակալներ:		
Մշակույթ					
Հ/հ	Ծրագրի կամ միջոցառման	Նախատեսված	Աշխատանքների իրականացման գործընթաց	Իրականացնող	Նշումներ

Երևանի զարգացման 2015 թվականի ծրագրի իրականացման հաշվետվություն

	անվանումը	աշխատանքների նկարագիր		կազմակերպություն, կատարման ժամկետ	
1	2	3	4	5	6
1.	Մշակութային միջոցառումների կազմակերպում՝ նվիրված տոն և հիշատակի օրերին	2015թ. պետական և ազգային տոներին, հիշատակի օրերին նվիրված միջոցառումները կունենան շարունակական բնույթ: Ավանդական միջոցառումներից բացի նախատեսվում են ազգային տոների վերականգնմանն ու անցկացմանն ուղղված մի շարք նախագծեր: Կկազմակերպվեն շքերթներ, միջոցառումներ, կապահովվի բնակչության անմիջական մասնակցությունը մշակութային միջոցառումներին:	<p>ԵՀ-ԾՁԲ-14/36 2015 թվականի առաջին եռամսյակում իրականացվել են Նոր տարվա և Սուրբ Ծննդյան տոների առիթով Հանրապետության հրապարակում տոնական համերգային ծրագրեր/հունվարի 5-ին՝ մանկական համերգ, 6-ին՝ Սուրբ Ծննունդ/:</p> <p>ԵՀ-ԾՁԲ-15/7 Մարտի 8-ին՝ Կանանց միջազգային օրվա առիթով Երևանի կենտրոնի տարբեր հատվածներում՝ Հյուսիսային Պողոտայի և Աբովյան փողոցի հատման մասում, Շարլ Ազնավուրի հրապարակում և Կարապի լճի հարևանությամբ կազմակերպվել են երևանյան ֆոլկ-համերգ՝ տոնական ծրագրեր:</p> <p>ԵՀ-ԾՁԲ-15/9-1 և ԵՀ-ԾՁԲ-15/9-2 Մարտի 26-ին Երևանի քաղաքապետի կողմից կազմակերպվել է ընդունելություն՝ նվիրված Թատրոնի միջազգային օրվան, որն ընթացել է պարզևատրումներով և գեղարվեստական ծրագրով:</p> <p>ԵՀ-ԾՁԲ-15/3 Մայրության և Գեղեցկության տոնին նվիրված միջոցառումներ են կազմակերպվել մայրաքաղաքի տարբեր վայրերում՝ ժամը 12.00-ին Հանրապետության հրապարակում, շատրվանների մեկնարկին զուգընթաց իրականացվել է պարային ֆլեշմոբ երիտասարդ պարողների մասնակցությամբ: Ժամը 13.00-15.00-ն մետրոպոլիտենի 2 շարժակազմում հնչել է կենդանի երաժշտություն:</p>	<p>«Սթեյզ Դիզայն» ՍՊԸ, հունվարի 5, 6</p> <p>«ՄիքսԱրտ» ՍՊԸ, մարտի 8</p> <p>«Ֆրիզե»ՍՊԸ, «Սլայդ Արտ» ՍՊԸ , մարտի 26</p> <p>«Միքսարտ» ՍՊԸ , ապրիլի 4, 7</p>	

Երևանի զարգացման 2015 թվականի ծրագրի իրականացման հաշվետվություն

			<p>Շառլ Ազնավուրի հրապարակում տեղակայված շատրվանների բացման մեկնարկը ազդարարվել է «Էրեբունի-Երևան» երգի կատարմամբ, մանկապատանեկան երգչախմբի մասնակցությամբ: Ժամը 17.30-19.30-ը Շառլ Ազնավուրի անվան հրապարակում իրականացվել է համերգային ծրագիր՝ Էստրադային նվագախմբի մասնակցությամբ: Ժամը 17.30-19.30-ին Կարապի լճի կղզյակում իրականացվեց համերգային ծրագիր՝ հեղինակային երգերի կատարումներով:</p> <p>Ապրիլի 4-ին կազմակերպվել է Անրի Վերնոյի անվան փողոցի բացման հանդիսավոր արարողություն:</p> <p>ԵՀ-ԲԱՀԾՁԲ-15/2 Ապրիլի 24-ին, ժամը 13.30-ից մինչև 21.00-ն Ծիծեռնակաբերդի հուշահամալիրում իրականացվել է գեղարվեստական ծրագիր, որին մասնակցել են Հայաստանի Հանրապետության լավագույն երգչախմբերը, համույթները, Երևանի քաղաքապետարանի ենթակայությամբ գործող երաժշտական և արվեստի դպրոցների սաները, ինչպես նաև անհատ կատարողներ:</p> <p>ԵՀ-ՊԸՄՁԲ-15/3 Ապրիլի 29-ին Ազատության հրապարակում «Կարին» ավանդական պարի խմբի մասնակցությամբ նշվել է «Պարի միջազգային օրը»:</p> <p>Ապրիլի 30-ին Կասկադ համալիրում կազմակերպվել է Ջազի միջազգային օրվան նվիրված համերգային ծրագիր, որտեղ իրենց մասնակցությունն են ունեցել Հայաստանի և Մակեդոնիայից ժամանած հայտնի ջազմեններ:</p> <p>ԵՀ-ԲԸԱՀԾՁԲ-15/4 Մայիսի 22-ին Ազատության հրապարակում</p>	<p>«Թի Էն Մաունդ» ՍՊԸ, ապրիլի 24</p>	
--	--	--	--	--------------------------------------	--

Երևանի զարգացման 2015 թվականի ծրագրի իրականացման հաշվետվություն

			<p>կազմակերպվել է «Վերջին զանգ»-ին նվիրված համերգային ծրագիր՝ մասնակցությամբ մայրաքաղաքի լավագույն կատարողների, որը եզրափակվել է հրավառությամբ:</p> <p>ԵՀ-ՊԸԾՁԲ-15/8</p> <p>Հունիսի 1-ից մեկնարկել է «Երևանյան ամառ 2015» եռամսյա միջոցառումների ծրագիրը, որի շրջանակում հունիսի 1-ին՝ Երեխաների իրավունքների պաշտպանության օրվա առիթով «Երևանը՝ փոքրիկների համար» խորագրով միջոցառումների շրջանակում «Հաղթանակ» զբոսայգու» և «Մանկական երկաթուղու» մանկական զվարճախաղերը ժամը 10.00-ից մինչև ժամը 13:00-ը գործել են անվճար: Երեխաների իրավունքների պաշտպանության օրվան նվիրված միջոցառումների շարքում Հյուսիսային պողոտայում երեխաների համար կազմակերպվել է կերպարվեստի բաց դաս: Երևանի քաղաքապետարանի նախաձեռնությամբ հունիսմեկյան տոնական միջոցառումների շրջանակում Ազատության հրապարակում կազմակերպվել է կավճանկարչություն և մանկական տոնական համերգային ծրագիր, իսկ նույն օրը երեկոյան Կարապի լճի էկրանին ցուցադրվել են հայկական կարճամետրաժ մուլտֆիլմեր երեխաների համար:</p> <p>Հունիսի 1-ին կազմակերպվել է Երևանի կենդանաբանական այգու տարեշրջանի բացման հանդիսավոր արարողությունը:</p> <p>Հունիսի 2-ին Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի մշակույթի և տուրիզմի վարչության կողմից առաջին անգամ կազմակերպվեց Երևանի երաժշտական և արվեստի դպրոցների բաց դաս:</p> <p>ԵՀ-ՊԸԾՁԲ-15/13</p> <p>Հունիսի 27, 28, 29 և 30-ին Կարապի լճի տարածքում կազմակերպվել է «Ֆրեսկո» արդի արվեստի և հոգևոր արվեստի ֆիլմերի միջազգային փառատոնի</p>	<p>«Թի Էն Սաունդ» ՍՊԸ, ապրիլի 29, 30</p> <p>«Թի Էն Սաունդ» ՍՊԸ, մայիսի 22</p> <p>«Բրիդջ» ՍՊԸ, հունիսի 1, 2</p> <p>«Բրիդջ» ՍՊԸ, հունիսի 27, 28, 29, 30</p>	
--	--	--	---	---	--

Երևանի զարգացման 2015 թվականի ծրագրի իրականացման հաշվետվություն

			<p>շրջանակում ֆիլմերի դիտում, քննարկում և գնահատում, ինչպես նաև իրականացվել են համերգային ծրագրեր:</p> <p style="text-align: center;">ԵՀ-ՊԸԾՁԲ-15/13</p> <p>Մհեր Մկրտչյանի ծննդյան 85-ամյակի օրը Կոմիտասի անվան պանթեոնում մեծանուն արտիստի հիշատակին հարգանքի տուրք է մատուցվել Երևանի քաղաքապետի, աշխատակազմի և բազմաթիվ արվեստագետների կողմից:</p> <p>«Երևանյան ամառ 2015» ծրագիր Միսակ Մանուշյանի անվան պուրակում կազմակերպվել է «Խոսող խաղալիք» հեքիաթների հերոսների առաջին շքերթ-փառատոնը, որն այս ծրագրի նորույթն էր:</p> <p>Վարդավառի տոնի առթիվ Կարապի լճում ու լճի շրջակայքում կազմակերպվել է գլխավոր միջոցառումը: Առավոտից հնչում էր երաժշտություն ու իրականացվեց յուրօրինակ «ջրային դիսկոտեկ»:</p> <p>Ազատության հրապարակում կայացավ բացօթյա երեք ժամ տևած դիսկոտեկը՝ նվիրված Երիտասարդների միջազգային օրվան:</p> <p style="text-align: center;">ԵՀ-ՊԸԾՁԲ-15/17</p> <p>Շառլ Անգնավորի հրապարակում կազմակերպվել է «Պարում է Երևանը» տանգոյի երեկո, որի շրջանակում կենդանի երաժշտության ներքո անցկացվեցին պարային կատարումներ և կազմակերպվեց բաց դաս: Հերթական միջոցառումը Սիրահարների այգում կայացած լուսանկարների բացօթյա ցուցադրությունն էր՝ «Երևանի 12 գույները» խորագրով, որտեղ ներկայացված էին Երևանի 12 վարչական շրջաններում</p>	<p>Հուլիսի 4 «Բրիդջ» ՄՊԸ</p> <p>Հուլիսի 6-ին</p> <p>Հուլիսի 12</p> <p>Հուլիսի 26</p> <p>«Բրիդջ» ՄՊԸ Օգոստոսի 7-ին</p> <p>Օգոստոսի 20-ին</p>	
--	--	--	--	---	--

Երևանի զարգացման 2015 թվականի ծրագրի իրականացման հաշվետվություն

			<p>կատարված բազմաբովանդակ 140 լուսանկարներ:</p> <p>Կասկադ համալիրի պուրակում կայացավ «Երևանյան բառ» խորագրով հեղինակային երգի երեկո, որտեղ հին ու նոր երգերով ելույթ են ունեցել ճանաչված հեղինակ-կատարողները:</p> <p>«Երևանյան ամառ 2015»-ի միջոցառումներից էր ջազի օրը: «Քաղաքը ջազ է լսում» խորագրով համերգը կայացավ Կասկադ համալիրում: Բացօթյա բեմում ելույթ ունեցան Երևանյան հանրահայտ ջազմեններն ու ջազբեմերը:</p> <p>«Տերյան» մշակութային կենտրոնի հետ համատեղ իրականացվել է «Երևան SU.ՐԱՋՖեստ» առաջին փառատոնը, որը «Երևանյան ամառ 2015» եռամսյա ծրագրում ներառված ազգագրական բնույթի միջոցառումներից է:</p> <p>Կարապի լճի շուրջօրը հայկական գարեջրային շուկայի առաջատար ընկերությունները, քաղաքի գարեջրատները, սրճարանները, փաբերը և գարեջուր ներմուծող կազմակերպությունները Երևանի գարեջրի փառատոնի այցելուներին առանձին տաղավարներում ներկայացրել են գարեջրի լավագույն ավանդույթները, առաջարկել թարմ ու տարատեսակ գարեջուր և գարեջրի խորտիկներ:</p> <p>«Երևանյան ամառ 2015» եռամսյա միջոցառումներն ամփոփվել է օգոստոսի 31-ին՝ Կարապի լճում, եզրափակիչ համերգային ծրագրով: Ելույթ ունեցան Հայաստանի ջազ նվագախումբը և անհատ կատարողներ:</p> <p>Երևանի քաղաքապետարանի ճեմասրահում իրականացվել է ուսուցչի և գրադարանավարի օրերին</p>	<p>Օգոստոսի 21-ին</p> <p>Օգոստոսի 5-ին</p> <p>Օգոստոսի 7-ին</p> <p>Օգոստոսի 22-ին</p> <p>Օգոստոսի 31-ին</p>	
--	--	--	---	---	--

Երևանի զարգացման 2015 թվականի ծրագրի իրականացման հաշվետվություն

			<p>նվիրված միջոցառում, լավագույն աշխատակիցները պարգևատրվել են քաղաքապետի պատվոգրերով, միջոցառումն ուղեկցվել է համերգային ծրագրով:</p> <p>ԵՀ-ԲԸՀԾՁԲ-15/1</p> <p>Համակարգվել և կազմակերպվել է Երևանի հիմնադրման 2797-ամյակին նվիրված «Էրեբունի – Երևան 2797» տոնակատարությունը, որի շրջանակում 41 հարթակում իրականացվել է բազմաժանր միջոցառումներ:</p> <p>Երևանի հիմնադրման 2797-ամյակին նվիրված «Էրեբունի – Երևան 2797» տոնակատարության Շառլ Ազնավուրի հրապարակում միասնական մեկ հարթակում իրականացվել է ՀՀ մարզերի քաղաքների ողջունի համերգային ծրագիրը «Նվիրում ենք մայրաքաղաքին» խորագրով:</p> <p>ԵՀ-ԲԸՀԾՁԲ-15/2</p> <p>Կազմակերպվել է մայրաքաղաքի գլխավոր տոնաձառի լույսերի վառման արարողությունը և իրականացվել է տոնական համերգային ծրագիր:</p>	<p>Հոկտեմբերի 5-ին</p> <p>«Էյ Դի Վի Մեդիա ԷՍ» ՍՊԸ Հոկտեմբերի 10-ին, 11-ին</p> <p>Հոկտեմբերի 11-ին</p> <p>«Էյ Դի Վի Մեդիա ԷՍ» ՍՊԸ Դեկտեմբերի 22</p>	
2.	Արտերկրի քաղաքների հետ մշակութային երկխոսության ընդլայնում, սփյուռքի ակտիվ ներգրավում Երևանի մշակութային կյանքին, արտերկրում հայկական մշակույթին նպատակաուղղված ծրագրի մշակում ու իրագործում	Նախատեսվում է արտերկրի քաղաքների հետ մշակութային երկխոսության ընդլայնում, սփյուռքի ակտիվ ներգրավում Երևանի մշակութային կյանքին, արտերկրում հայկական մշակույթին	Երևանի քաղաքապետի հրավերով ապրիլի 29-ից մայիսի 2-ը պաշտոնական այցով Երևան է ժամանել Սանկտ Պետերբուրգի նահանգապետի գլխավորած պատվիրակությունը: Այցի շրջանակում Երևանի քաղաքապետարանի և Սանկտ Պետերբուրգի կառավարության միջև ստորագրվել է առևտրատնտեսական, գիտատեխնիկական և հումանիտար ոլորտներում 2015-2020թթ. համագործակցության ծրագիրը:		

Երևանի զարգացման 2015 թվականի ծրագրի իրականացման հաշվետվություն

		<p>նպատակաուղղված ծրագրի մշակում ու իրագործում:</p>	<p>Մայիսի 1-ին Հ. Պարոնյանի անվան թատրոնում Մանկտ Պետերբուրգի Մարիինյան թատրոնի մենեդժիչների և Հայաստանի ֆիլհարմոնիկ նվագախմբի հետ համատեղ կազմակերպվել է դասական համերգ: Ապրիլի 30-ին Երևանի Արաբկիր վարչական շրջանում կազմակերպվել է պաշարված Լենինգրադի երեխաներին նվիրված հուշարձանի բացման հանդիսավոր արարողությունը: Վրաստանի Հանրապետության Բաթումիի քաղաքի հայ համայնքի հետ անցկացվել է քննարկում Բաթումի քաղաքի արական երգչախմբի՝ «Էրեբունի – Երևան 2797» տոնակատարությանը մասնակցելու համար, տարվել են նախապատրաստական աշխատանքներ: «Էրեբունի – Երևան 2797» տոնակատարությանը իր մասնակցությունն է բերել Վրաստանի Հանրապետության Բաթումիի քաղաքի հայ համայնքի արական երգչախումբը:</p>		
3.	<p>Երևանում բնակվող ազգային փոքրամասնությունների համար մշակութային ծրագրերի իրականացում</p>	<p>Կիրականացվեն ծրագրեր՝ ուղղված Երևանում բնակվող ազգային փոքրամասնությունների պատմական, հոգևոր, մշակութային արժեքների և էթնիկ ինքնության պաշտպանության ապահովմանն ու ինքնաարտահայտմանը, կատեղծվեն անհրաժեշտ պայմաններ՝ ազգային</p>	<p>Հոկտեմբերի 11-ին Երևանի հիմնադրման 2797-ամյակին նվիրված «Էրեբունի – Երևան 2797» տոնակատարության շրջանակում Կարապի 14ի բեմահարթակում Երևանում բնակվող ազգային փոքրամասնությունների համայնքների ու անհատ կատարողների մասնակցությամբ իրականացվել է մեկ միասնական համերգային ծրագիր:</p>	<p>Հոկտեմբերի 11</p>	

Երևանի զարգացման 2015 թվականի ծրագրի իրականացման հաշվետվություն

		փոքրամասնությունների մշակույթի դրսևորման համար:			
4.	Մշակութային համագործակցություն քույր և գործընկեր քաղաքների հետ	Երևանի քույր և գործընկեր քաղաքների հետ համատեղ կիրականացվեն մշակութային ծրագրեր, որոնք խթան կհանդիսանան մշակութային համագործակցության շրջանակների ընդլայնման համար:	Երևանի քաղաքապետարանի հրավերով և աջակցությամբ՝ «Երևանյան ամառ 2015» եռամսյա միջոցառումների շրջանակում, առաջին անգամ հյուրախաղերով մայրաքաղաքի Կոմիտասի անվան զբոսայգում՝ նախկին դելֆինարիումի տեղում հանդես է եկել Մանկտ Պետերբուրգի «Իմպերիալ» շապիտո կրկեսը, որի երևանյան ներկայացումները նվիրված էին Լեոնիդ Ենգիբարյանի ծննդյան 80-ամյակին:	Օգոստոս-նոյեմբեր	
5.	Գրադարաններ				
5.1	Գրական, գրական-երաժշտական երեկոների, գրքերի շնորհանդեսների, մանկապատանեկան գրքի և այլ միջոցառումների կազմակերպում	Գրադարաններում կիրականացվեն գրական, գրական-երաժշտական երեկոներ, գրքերի շնորհանդեսներ, մանկապատանեկան գրքի և երաժշտության շաբաթ, Ազգային գրադարանային շաբաթ, կկազմակերպվեն հանդիպումներ մշակույթի և արվեստի անվանի գործիչների հետ: Կմասնակցեն «Հանդիպման վայրը գրադարան» ամենամյա միջոցառմանը: Մեծ Եղեռնի 100-ամյա տարելիցին նվիրված	Գրադարաններում անցկացվել են գրական, գրական-երաժշտական, հուշ-երեկոներ, կազմակերպվել են հանդիպումներ մշակույթի և արվեստի անվանի գործիչների հետ, իրականացվել են գրքերի շնորհանդեսներ, մանկապատանեկան գրքի և երաժշտության շաբաթ: Կազմակերպվել են մասսայական բնույթի միջոցառումներ՝ որպես նոր ընթերցողների ներգրավման և մշակութային, կրթադաստիարակչական քաղաքականության վարման կարևորագույն միջոց: Կազմակերպվել են հիշարժան և հոբելյանական տարեթվերին նվիրված գրքի ցուցահանդեսներ: Կազմակերպվել են գիտության և մշակույթի հայ հայտնի գործիչների ծննդյան օրերին և հիշարժան տարելիցներին նվիրված «Այսօր-հիշում ենք... » և «Այսօր -նշում ենք ...» ծրագրերը Սիլվա Կապուտիկյան, Պարույր Սևակ, Տիգրան Մանսուրյան, Վահան Տերյան, Հայոց բանակի օր. «Հայ զինվորի աղոթքը», Վաղարշ Վաղարշյան, Ջորի Բալայան -80 , Արամ Ղանալանյան, Ռուբեն Սևակ-130, Հրանտ Մաթևոսյան-80, Հովհաննես Թումանյան, Ռուբեն		

Երևանի զարգացման 2015 թվականի ծրագրի իրականացման հաշվետվություն

		<p>տարվա ընթացքում նախատեսվում են կազմակերպել միջոցառումներ:</p> <p>«Ավ.Իսահակյանի անվան գրադարան» ՀՈԱԿ-ը նշելու է իսահակյանական եռատոն գրադարանի ստեղծման 80-ամյակը, վարպետի ծննդյան 140-ամյակը և գրադարանը Իսահակյանի անունով կոչելու 60-ամյակը:</p>	<p>Օրբելի -135, Անդրանիկ Օզանյան-150, Մարտիրոս Մարյան-135, Վազգեն Սարգսյան, Փանոս Թերլեմեզյան-150, Թորոս Թորամանյան, Վարդուհի Վարդերեսյան, Թատրոնի միջազգային օր: Նշվել է «Գրքի նվիրատվության» օրը:</p> <p>«Ավ. Իսահակյանի անվան կենտրոնական գրադարան» ՀՈԱԿ-ում գործում է «Ամերիկյան անկյունը» և «Բրիտանական կենտրոնը», որոնք մշտապես համալրվում են բարձրարժեք գրականությամբ, տեղեկատվական կրիչներով, կահույքով: Կազմակերպվում են ֆիլմերի անվճար ցուցադրություններ, դասախոսություններ, անվճար ուսուցման դասընթացներ տարիքային տարբեր խմբերի համար:</p> <p>Հայոց ցեղասպանության 100-ամյա տարելիցին ընդառաջ մայրաքաղաքի գրադարաններում անցկացվել են մի շարք միջոցառումներ և ֆիլմերի դիտումներ:</p> <p>«Ավ. Իսահակյանի անվան կենտրոնական գրադարան» ՀՈԱԿ-ում կազմակերպվել է.</p> <p>«Ճանաչենք մեր Հայրենիքը – Հայկ Նահապետից մինչև Արցախ» էլեկտրոնային խաղ-մրցույթ՝ 1-ին փուլը՝ մարտի 4, 2-րդ փուլ՝ մարտի 5, եզրափակիչ փուլ՝ մարտի 11:</p> <p>Կազմակերպվել է նաև 2-րդ եռամսյակի հիշարժան և հորեյանական տարեթվերին նվիրված գրքային ցուցահանդեսներ, որից՝ կենտրոնական գրադարանում 40 միջոցառում, մասնաճյուղերում՝ 47 միջոցառում: Գիտության և մշակույթի հայ հայտնի գործիչների ծննդյան օրերին և հիշարժան տարելիցներին նվիրված «Այսօր-հիշում ենք...» և «Այսօր –նշում ենք...» ծրագրերը՝ Խորեն Աբրահամյան, Րաֆֆի-180, Հովհաննես Շիրազ, «Հարսանիք լեռներում, Արամ Խաչատրյան, Երեխաների պաշտպանության միջազգային օր, ՀՀ Պետական խորհրդանիշների օր:</p>		
--	--	--	---	--	--

Երևանի զարգացման 2015 թվականի ծրագրի իրականացման հաշվետվություն

			<p>Բոլոր կազմակերպություններում իրականացվել են միջոցառումներ նվիրված Հայոց ցեղասպանության 100 ամյա տարելիցին՝ գրական – երաժշտական ցերեկույթներ, հուշ-երեկոներ, ցուցահանդեսներ, փաստավավերագրական ֆիլմերի դիտում, Եղեռնի հուշահամալիրի մակետի, անմոռուկների պատրաստում:</p> <p>«Ա.Իսահակյանի անվան կենտրոնական գրադարան» ՀՈԱԿ-ը «Հոգևոր դասեր» թեմայով-Արարատյան Հայրապետական թեմի հետ համատեղ անցկացրել են հանդիպումներ և զրույցների շարք՝ «Եկեղեցական տոնացույց», «Հայ եկեղեցու պատմություն» և այլ խորագրերով:</p> <p>Իրականացվել է հայերեն, անգլերեն, ֆրանսերեն, ռուսերեն լեզուներով գեղարվեստական և ուսումնավավերագրական ֆիլմերի ցուցադրություն:</p> <p>«Հեքիաթին հյուր» խորագրի տակ ամեն ուրբաթ անց են կացվել հեքիաթի օրեր, Բարձրաձայն ընթերցանություններ, ցուցադրվել մուլտֆիլմեր:</p> <p>«Երիտասարդական մշակութային ակումբի» հանդիպումների շարք «Գրքամոլ» երիտասարդական ակումբի հանդիպումներ:</p> <p>Գրական-երաժշտական հանդիսություն՝ նվիրված Շառլ Ազնավուրին:</p> <p>«Երևանյան ամառ» ծրագրի միջոցառումներից է «Ընթերցող Երևան» խորագրով գրքերի բացօթյա տոնավաճառը, որը կազմակերպվում է հուլիսի 10, 11-ը արդեն երկրորդ տարին անընդմեջ՝ Երևանի Միսակ Մանուշյանի անվան պուրակում:</p> <p>Շարունակական բնույթ են կրում ՀՀ-ում ԱՄՆ-ի, Մեծ Բրիտանիայի, Ռուսաստանի, Ֆրանսիայի, Իրանի և այլ երկրների դեսպանատների և ՀՈԱԿ-ի համագործակցության ծրագրերը:</p> <p>Մի շարք միջոցառումներ են կազմակերպվել նվիրված ամանորի տոնակատարությանը ընդառաջ:</p>		
--	--	--	---	--	--

Երևանի զարգացման 2015 թվականի ծրագրի իրականացման հաշվետվություն

			<p>Բոլոր գրադարաններում իրականացվել է «Հանդիպման վայրը-գրադարան» ծրագիրը՝ «Դարձիր գրադարանի բարեկամ» կարգախոսով: Կազմակերպվել է ցուցահանդեսներ, տեսանյութերի ցուցադրություններ, գրադարանի օրվան նվիրված հանդիպություններ:</p> <p>Լավագույն աշխատանքային արդյունքներ ցուցաբերած գրադարանավարները արժանացել են Երևանի քաղաքապետի պարգևների:</p> <p>Կազմակերպվել է ցուցահանդեսներ՝ «Ստեղծագործում են գրադարանավարները», «Գրադարանը նվիրում է ...», շրջայց գրադարանում և նոր ծրագրերի ներկայացում, ԿԳ-ի գործունեության մասին տեսանյութերի ցուցադրություն, համերգ-դասախոսություն. «Ակնը -ավանդական երգի օրրան», «Իսահակյան» թատերախմբի ներկայացումը. «Խաղում ենք Իսահակյան», գրական – երաժշտական երեկո . «Իսահակյանը և երաժշտությունը», «Գրադարանավարի տոն» հանդիսություն :</p> <p>«Հայոց ցեղասպանության 100-ամյա տարելիցի» միջոցառումների ծրագրի շրջանակներում կազմակերպվել է «Արմին Վեգների հայանպաստ գործունեությունը» թեմայով դասախոսություն:</p>		
5.2	<p>Գրադարաններում տեղեկատվական– հաղորդակցական, նոր տեխնոլոգիաների և էլեկտրոնային կառավարման համակարգերի ներդրում, գրադարանային ֆոնդերի թվայնացման գործընթացի</p>	<p>Գրադարաններում նախատեսվում է տեղեկատվական– հաղորդակցական, նոր տեխնոլոգիաների և էլեկտրոնային կառավարման համակարգերի ներդրում,</p>	<p>«Ա. Իսահակյանի անվան ԿԳ» ՀՈԱԿ-ը, որը դեռևս 2004թ. միացել է «Հայաստանի գրադարանների ավտոմատացման ցանց» ծրագրին /ինտերնետ/ ապահովելով ընթերցողների արագ, մատչելի և անվճար տեղեկատվական սպասարկումը՝ նաև WI-FI հասանելիությամբ: WI-FI հնարավորություններով ապահովված են նաև ՀՈԱԿ-ի բոլոր գրադարան-մասնաճյուղերը՝ Երևանի քաղաքապետարանի աջակցության ծրագրով: Նախապատրաստական աշխատանքներ են տարվում երկու մասնաճյուղերում</p>		

Երևանի զարգացման 2015 թվականի ծրագրի իրականացման հաշվետվություն

	<p>խթանում</p>	<p>գրադարանային ֆոնդերի թվայնացման գործընթացի խթանում: Նախատեսվում է 2015թ. ավարտել գրադարանների և մասնաճյուղերի շենքերի հիմնանորոգման և արդիականացման աշխատանքները:</p>	<p>և /թիվ 21 գ/մ և արվեստի գրականության բաժին / ընթերցողների էլեկտրոնային սպասարկումը 2015 թ. 2-րդ եռամսյակից կազմակերպելու համար, քանի որ ձեռք է բերվել անհրաժեշտ թվով համակարգչային տեխնիկա և ավարտվել են այդ մասնաճյուղերում էլեկտրոնային <<ԱԼԵՖ>> ծրագրով գրացուցակների ստեղծման աշխատանքները: Բոլոր համակարգիչներն ապահովված են ծրագրային համապատասխան փաթեթներով:</p> <p>Շարունակվել է մուտքագրումներն ընդհանուր տեղեկատվական բազա.</p> <p>1-ին եռամսյակում՝ 3572 անուն գիրք 2-րդ եռամսյակում՝ 4535 անուն գիրք 3-րդ եռամսյակում՝ 2935 անուն գիրք կամ 8538 կտոր 4-րդ եռամսյակում 4276 անուն գիրք կամ 12361 կտոր:</p>		
6.	Թանգարաններ				
6.1	<p>Թանգարաններում ցուցահանդեսների և միջոցառումների կազմակերպում</p>	<p>Թանգարաններում կկազմակերպվեն ցուցահանդեսներ և միջոցառումներ: Կանցկացվեն մի շարք միջոցառումներ՝ նվիրված Թանգարանների միջազգային օրվան, Եվրոպական ժառանգության օրվան: Մեծ Եղեռնի 100-ամյա տարելիցին նվիրված տարվա ընթացքում նախատեսվում են կազմակերպել միջոցառումներ և</p>	<p>Երեբունի պատմահնափոսական արգելոց - թանգարանն ու նրա Կարմիր բլուր և Շենգավիթ մասնաճյուղերն իրականացրել են հուշարձանների պահպանության, վերականգնման ու ամրակայման, ֆոնդային, ցուցադրական, էքսկուրսիոն-մասսայական, սպասարկման, գիտա-գործնական, գիտահետազոտական տնտեսական, մարկետինգի և այլ աշխատանքներ, 104 էքսկուրսիաներ:</p> <p>«Երևան քաղաքի պատմության թանգարան» ՀՈԱԿ- ը նախապատրաստել է Հայոց ցեղասպանության 100-ամյակին նվիրված՝ «Հիշիր և պահանջիր. Վերածնունդ» խորագրով ցուցահանդես:</p> <p>- Մարտի 3-ին Աբստրակտ ոճում լուսանկարչական ցուցահանդես՝ Գաբրիել և Աստղիկ Փանոսյանների աշխատանքները՝ Սփյուռքի նախարարության հետ համատեղ:</p> <p>- Կազմվել է 2014թ. դեկտեմբերի և 2015 թ. հունվարի</p>		

Երևանի զարգացման 2015 թվականի ծրագրի իրականացման հաշվետվություն

		<p>ցուցահանդեսներ: «Էրեբունի» պատմահնագիտական արգելոց-թանգարանը կկազմակերպի միջոցառումների շարք՝ նվիրված Հուշարձանների միջազգային օրվան: «Էրեբունի» պատմահնագիտական արգելոց-թանգարան» ՀՈԱԿ-ի վերակառուցման ծրագիրն ունի շարունակական բնույթ:</p>	<p>Երևանի տարեգրությունը: -ՀՀ Մշակույթի նախարարությունը հրատարակության է պատրաստում կատալոգ –ուղեցույց ՀՀ թանգարանների վերաբերյալ. Տրվել է պահանջված բոլոր տեղեկությունները /պատմությունը, տարածքը,1-ին ցուցանմուշը և այլն/թանգարանի մասին: Անցկացվել է 102 էքսկուրսիա: Փետրվարի 4-ին «Տիկնիկային պատմություններ» ցուցադրության շրջանակներում անցկացվել է միջոցառում սոցիալապես անապահով երեխաների համար: Թանգարանում արտադրական պրակտիկա են անցել Խ. Աբովյանի անվան մանկավարժական և Վ. Բրյուսովի անվան լեզվաբանական համալսարանների ուսանողները /9փետրվարի-20 մարտի/ Թանգարանը քաղաքապետարանի հետ համատեղ անց է կացրել՝ 1. ուսուցիչներին որակավորման վկայականների հանձման միջոցառում/մարտ/ 2. Տերյանի թանգարանը130-ամյակին նվիրված աշակերտական մրցույթ/մարտ/ 6. Dasaran.am կայքում տեղադրվել են հետևյալ ճանաչողական հոդվածները՝ «Հունաստանի մարալ աղջիկներ», «Թուրք են թափ տալիս», «Մոզոցողները», «Լոպազը», «Չիստիլիկը», Իսկ դուք գիտե՞ք «Յոթ ցայտադրյուրի» պատմությունը, «Կարմիր կամուրջ կամ Խոջա Փիլավի», «Տյառնընդառաջի խորհուրդը», «Ս. Մարգիս՝ երիտասարդների և սիրո բարեխոս», «Մուրբ Զատիկ», «Երևան անվան ծագումը», «Ուտիս տատ և Պաս պապ», «Չիաքարշի պատմությունը», «Միգրանտ անոթներ գարեջուր պատրաստելու համար»: Ապրիլի 10-ին կազմակերպվել է գեղանկարչական</p>		
--	--	--	---	--	--

Երևանի զարգացման 2015 թվականի ծրագրի իրականացման հաշվետվություն

			<p>աշխատանքների ցուցահանդես «Հայաստանը օտարերկրյա նկարիչների աչքերով» նվիրված Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին:</p> <p>Ապրիլի 15-ին կազմակերպվել է «Ֆրանկոֆոն քաղաքները ցեղասպանության մասին» ցուցահանդես-միջոցառումը:</p> <p>Ապրիլի 16-ին կազմակերպվել է Հայոց ցեղասպանության 100-ամյա տարելիցին նվիրված «Հիշում եմ և պահանջում. Վերածնունդ» խորագրով ցուցահանդեսը:</p> <p>«Հայ-արտ» մշակութային կենտրոնի հետ համատեղ կազմակերպվել է «Հայկական լուսանկարչության պատմություն» խորագրով ցուցահանդես:</p> <p>Մայիսի 16-ին Թանգարանների գիշեր ակցիայի շրջանակներում կազմակերպվել է Զարմինե Վասիլյանի «Կյանքը անհատի քառուղիներում» գրքի շնորհանդեսը: Թանգարանը մասնակցություն է ունեցել Երևանի պատմությանն ու մշակույթին նվիրված հեռուստատեսային և ռադիոհաղորդումներին.</p> <p>ա/ Դար 21 ՀՀ, Եվրոպան և Հայաստանը բ/ Հ1 ՀՀ «Հարցեր հայոց պատմության հնագույն շրջանի մասին», «Հայ Ասպետ» հաղորդաշար գ/ ATV-ի հեռուստաալիքի համար պատրաստվել և ներկայացվել է « Երևանի 1724թ. պաշտպանությունը» թեմայով հաղորդումը /հունիս/:</p> <p>դ/ Հանրային ռադիոյի Երևան ծրագրի համար պատրաստվել է</p> <ul style="list-style-type: none"> -Մ. Մուսինյանի վերաբերյալ հաղորդում - «Երևանի էլեկտրաֆիկացումը» հաղորդումը <p>/նկարահանվել է 6 փաստաթուղթ/:</p> <ul style="list-style-type: none"> - Հին Երևանին նվիրված ռադիոհաղորդում - Երևանի հին շուկային` Ղանթարին նվիրված հաղորդում - Երևանի հայրենակցական թաղերը/ապրիլ/ 		
--	--	--	---	--	--

Երևանի զարգացման 2015 թվականի ծրագրի իրականացման հաշվետվություն

			<p>հաղորդաշար «Երևան քաղաքի պատմություն թանգարան» ՀՈԱԿ-ի կողմից սեպտեմբերի 21-ին «Զվարթնոց արգելոց թանգարանի» հետ համատեղ կազմակերպվել է «Քաղաքային մշակույթ ցուցահանդեսը, 3-րդ եռամսյակում մասնակցել է «Երևանյան ամառ 2015 » միջոցառումների ծրագրերին: Անկախության օրվան նվիրված 9 միջոցառումների շրջանակում՝ Պատմամշակութային արգելոց թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ-ի հետ համատեղ կազմակերպված «Ալեքսանդրապոլ – Գյումրու քաղաքային մշակույթը» խորագիրը կրող ցուցահանդեսին /տրամադրվել է 8 ազգագրական առարկա՝ կահույք և տարագ, 21 սեպտեմբերի -21 հոկտեմբերի/: Թանգարանի ձեռնարահում բացվել է «Դեկարտ» մանկապատանեկան ստուդիայի սաների աշխատանքների ցուցահանդեսը /19-26 դեկտեմբեր/:</p> <p>«Ժամանակակից արվեստի թանգարան» ՀՈԱԿ-ի կողմից հունվարի 20-ին կայացավ «Նաշ դոմ.ՐՍ» 2015թ. Միջազգային Ինտերնետ-փառատոնի ընտրական փուլը, փետրվարի 3-ին "Երաժշտություն խաղաղության համար" միջազգային նախագծի շրջանակներում անցկացվեց սաքսոֆոնի վարպետության դաս: Հունվարի 21, 22, 23-ին "Զանգակ" հրատարակչության հետ կազմակերպվեց հայտնի նկարագարող Մարիոն Դյուշարի "Եկեք ստեղծենք մեծարվեստ" գրքի հայկական տարբերակի դաս-շնորհանդեսը: « Հայոց Փետրվարի 6-12-ը կազմակերպվել է Թեթև արդյունաբերության քոլեջի սաների ցուցահանդեսը, Իսկ փետրվարի 18-25-ը՝ Աննա Հարությունյանի «Ու կյանքը սկսվեց» խորագրով ցուցահանդեսը նվիրված Մեծ Եղեռնի 100-րդ տարելիցին:</p>		
--	--	--	---	--	--

Երևանի զարգացման 2015 թվականի ծրագրի իրականացման հաշվետվություն

			<p>Մարտի 5-ից ապրիլի 5-ը կազմակերպվել է Հենրիկ Իգիթյանի 83 ամյակին նվիրված ցուցահանդես, որտեղ ներկայացված էին վերջին չորս տարիների նվիրատվությունները:</p> <p>Ապրիլի 3-ին կայացավ SANTAL նորաձևության թատրոնի զարնանային հագուստների ցուցադրությունը:</p> <p>Ապրիլի 15-ից մայիսի 4-ը՝ կազմակերպվել է «Ես քո հիշողությունն եմ» խորագիրը կրող ցուցահանդես, նվիրված Հայոց Մեծ Եղեռնի 100- ամյակին:</p> <p>Մայիսի 7-ից հունիսի 10-ը կազմակերպվել է կանադահայ նկարիչ, քանդակագործ Կարեն Պետրոսյանի «Պատերազմ և Խաղաղություն» խորագիրը կրող ցուցահանդեսը:</p> <p>Մայիսի 27-ին կազմակերպվել է «Հայկական ժայռապատկերները՝ որպես հնագույն գիտելիքներ՝ Ասիայի, Եվրոպայի, Սկանդինավյան քաղաքակրթության պատմությունը ճանաչելու համար» թեմայով դասասխոսություն, որը կարդաց Գրիգոր Վահանյանը:</p> <p>Հունիսի 14-ից 30-ը կազմակերպվել է Ռուբեն Ադալյանի 85-ամյակին նվիրված հոբելյանական ցուցահանդես: «Ժամանակակից արվեստի թանգարան» ՀՈԱԿ-ը օգոստոսի 14-ից 30-ը ֆրանսիահայ Էդմոն Հաբեթյանի մասնակցությամբ կազմակերպվել է Հայոց ցեղասպանության 100—րդ տարելիցին նվիրված բաց դաս և ցուցահանդես:</p> <p>Սեպտեմբերի 25-ին կազմակերպվել է Ավստրալիայի հայ արվեստագետների ժամանակակից ստեղծագործությունների ցուցահանդես: «Երևան քաղաքի պատմություն թանգարան» ՀՈԱԿ-ը մասնակցություն է ունեցել Էրեբունի-Երևան 2797 տոնակատարության շրջանակներում կազմակերպված</p>		
--	--	--	---	--	--

Երևանի զարգացման 2015 թվականի ծրագրի իրականացման հաշվետվություն

			<p>ցուցահանդեսներին՝ Հյուսիսային պողոտայում և մետրոյում /գրվել բացատրագրեր ու պիտակներ հայերեն, ռուսերեն, անգլերեն, տրամադրվել է 4 փաստաթուղթ, 50 լուսանկար, 4 տարազի համալիր՝ 13 առարկայով և 20 լուսանկար/:</p> <p>«Ժամանակակից արվեստի թանգարան» ՀՈԱԿ-ը կազմակերպել է՝</p> <p>Լեո-Լեո Վարդանյան «Մեդիտացիա», «Էրեբունի – Երևան 2797» տոնակատարության շրջանակում Մամվել Կարապետյանի «»Հայաստան՝ Ավետյաց երկիր», Ռուբեն Արուստյանի դիմանկարների ցուցահանդեսները: Կայացել է դաշնակահար, մանկավարժ Յակով Զարգարյանի բացառիկ հավաքածուների ցուցահանդեսը: Կայացել է Հայկ Մեսրոպյանի և Գագո Զթյանի «Դուետ» նախագիծը:</p> <p>Էրեբունի պատմահնագիտական արգելոց - թանգարան ՀՈԱԿ-ը իրականացրել է «Վրեժ և հատուցում» խորագիրը կրող միջոցառումը՝ նվիրված Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին:</p> <p>Ապրիլի 18-ին՝ Հուշարձանների և տեսարժան վայրերի միջազգային օրվա շրջանակում կազմակերպվել է «Արևմտյան Հայաստանի ուրարտական ժառանգությունը» խորագրով ցուցահանդեսը: Մայիսի 16-ին թանգարանը միացել է Թանգարանների եվրոպական զիշեր միջազգային նախաձեռնությանը և «Թանգարանները հանուն կայուն հասարակայնության» խորոգրով իրականացնելով մի շարք միջոցառումներ: Ընթանում է «Էրեբունի պատմահնագիտական արգելոց-թանգարան» ՀՈԱԿ-ի վերակառուցման ծրագիրը: Պատվիրվել և մշակվում է «Էրեբունի ամրոցի միջնաբերդի վերականգնման և արդիականացման ծրագրի նախագծա-նախահաշվային փաստաթղթերի փաթեթը:</p>		
--	--	--	--	--	--

Երևանի զարգացման 2015 թվականի ծրագրի իրականացման հաշվետվություն

			<p>Եվրոպական ժառանգության օրերի շրջանակում սեպտեմբերի 26-ին բացվել է «Էրեբունի Պերսեպոլիս, ուրարտական և արեմենյան մշակույթների հանգույցում» ցուցահանդեսը: «Հողաշեն ազգային ժառանգություն» խորագրով՝ «Հողը որպես նյութ Հայաստանի տարածքային զարգացման համար» թեմայով և Լիոնի ճարտարապետական Համալսարանի ուսանողների դիպլոմային աշխատանքների ցուցահանդեսը՝ նվիրված Էրեբունի թանգարանի շենքի վերակազմությանը:</p> <p>«Կարեն Դեմիրճյան թանգարան» ՀՈԱԿ-ը ապրիլի 22-ին կազմակերպել է Հայոց ցեղասպանության 100-ամյա տարելիցին նվիրված «Վերածնունդ» խորագրով ցուցահանդեսը: Ցուցադրությամբ ներկայացվել է Խորհրդային տարիներին Հայոց ցեղասպանության հարցի վերաբերյալ կատարված աշխատանքները և հայրենադարձությունը:</p> <p>Ապրիլի 29-ին կազմակերպվել է Էդուարդ Տեր-Ղազարյանի մանրաքանդակների ցուցահանդեսը: Ցուցադրվել են վարպետի աշխատանքներից 7-ը, որոնցից երկուսը հանդիսանում են թանգարանի հիմնական ցուցանմուշները:</p> <p>Մայիսի 16-ին կազմակերպվել է գեղանկարների ցուցահանդես, որի բացումը տեղի է ունեցել Գեղարվեստի Ակադեմիայի հետ համատեղ: Ցուցահանդեսում ներկայացված էին անվանի հայ նկարիչների աշխատանքներ:</p>		
7.	Թատրոններ				
7.1	Թատրոնների խաղացանկերի համալրում	Թատրոնների խաղացանկերը համալրելու նպատակով յուրաքանչյուր տարի նախատեսվում է բեմադրել 9-10 նոր ներկայացում: Մեծ Եղեռնի	«Պատանի հանդիսատեսի թատրոն» ՀՈԱԿ-ը բեմադրել է նոր ներկայացումներ՝ «Մերը տարիք չի հարցնում» բեմադրող Մարգարիտա Մնացականյան, «Քաղցած է, կատաղած և շատ վտանգավոր» բեմադրող Ի.Ղարիբյան, «Մերսեդես»՝ բեմադրող Հ.Ղազանյան և «Թոմ Սոյերի և Հեքլբերրի Ֆիննի արկածները» բեմադրող Ռ.Խաչատրյան, «Մաթիուս և Մատիլդա» նոր		

Երևանի զարգացման 2015 թվականի ծրագրի իրականացման հաշվետվություն

		<p>100-ամյա տարելիցին նվիրված տարվա ընթացքում նախատեսվում են նոր ներկայացումներ:</p>	<p>ներկայացումը: Դեկտեմբերի 22-29-ը խաղացվել է «Ա՜խ այդ վիուկը» ամանորյա ներկայացումը: Հր. Ղափլանյանի անվան թատրոն ՀՈԱԿ-ի կողմից Մեծ Եղեռնի 100-ամյա տարելիցին նվիրված բեմադրվել է Պերճ Ջեյթունցյանի «Փարիզյան դատավճիռ» ներկայացումը, բեմադրիչ՝ Արմեն Խանդիկյան: «Հր. Ղափլանյանի անվան դրամատիկական թատրոնը բեմադրել է Նիլ Սայմոնի «N 707» և Գրիգոր Խաչատրյանի «Արքայադուստրը և ճագարիկը» ներկայացումները: «Մհեր Մկրտչյանի անվան արտիստական թատրոն» ՀՈԱԿ-ը բեմադրել է Վ.Շեքսպիրի «Անսանձ կնոջ սանձահարումը» և «Ամանորյա ճամփորդություն» ներկայացումները:</p>		
8.	Երաժշտական և արվեստի դպրոցներ				
8.1	<p>Միջոցառումների և ցուցահանդեսների կազմակերպում</p>	<p>Մեծ Եղեռնի 100-ամյա տարելիցին նվիրված տարվա ընթացքում նախատեսվում են կազմակերպել միջոցառումներ և ցուցահանդեսներ:</p>	<p>Երաժշտական և արվեստի դպրոցներում Հայոց ցեղասպանության 100 - ամյակին ընդառաջ կազմակերպվել են մի շարք միջոցառումներ՝ գրական, երաժշտական ցերեկույթներ, համերգներ, ցուցահանդեսներ, ուկնդրումներ՝ Մեծ Եղեռնի միջոցառումների շրջանակում կազմակերպվող համերգների մասնակցության նպատակով:</p> <p>Ստ. Զրբաշյանի անվան երաժշտական դպրոցում կազմակերպվել է միջոցառում «Ղողանջներ» ըստ Պարույր Սևակի «Անլուելի զանգակատուն» պոեմի գրական-երաժշտական կոմպոզիցիայի բեմականացումը:</p> <p>Միասնական համերգային ծրագրով հանդես եկան Ա. Տիգրանյանի անվան և Արթիկի երաժշտական դպրոցների սաները:</p> <p>Ավետ Տերտերյանի անվան արվեստի դպրոցում տեղի է ունեցել միջոցառում և ցուցահանդես: Ցուցահանդեսի ժամանակ ներկայացված էին գեղանկարչության, գրաֆիկայի, քանդակագործության և բառիկայի աշխատանքներ: Ապրիլի 20-22-ը դպրոցում կազմակերպվել է երաժշտական և արվեստի դպրոցների</p>		

Երևանի զարգացման 2015 թվականի ծրագրի իրականացման հաշվետվություն

			<p>աշակերտների «Իմ պատմական հայրենիքը» խորագրով ցուցահանդես-մրցույթ:</p> <p>Տ.Չուխաջյանի անվան երաժշտական դպրոցում ապրիլի 21-ին տեղի ունեցավ համերգ նվիրված հայ մեծանուն կոմպոզիտոր Կոմիտաս վարդապետին:</p> <p>Մ.Մալունցյանի անվան արվեստի դպրոցը ապրիլի 21-ին Արամ Խաչատրյան տուն-թանգարանում կազմակերպել է համերգ՝ Ֆրանսիայից ժամանած պատվիրակության համար:</p> <p>Մայիսի 6-ին Ս.Բարխուդարյանի անվան արվեստի դպրոցը «Զեյթուն» մշակութային կենտրոնում կազմակերպել է հուշ երեկո:</p> <p>Գ. Բուդաղյանի անվան արվեստի դպրոցում ապրիլի 20-ին տեղի ունեցավ համերգ Հիշատակի դռան ջններ խորագրով:</p>		
8.2	Երաժշտական և արվեստի դպրոցներում ազգային, լարային և փողային նվագարանների գծով ուսուցման ծրագրի իրականացում	Շարունակվելու է երաժշտական և արվեստի դպրոցներում ազգային, լարային և փողային նվագարանների գծով ուսուցման ծրագիրը:	2006 թվականից երաժշտական և արվեստի դպրոցներում իրականացվում է ազգային, լարային և փողային նվագարանների գծով ուսման վարձավճարների փոխհատուցման ծրագիր, որի շրջանակում 2015թ. սովորում են 610 աշակերտ		
8.3	Երաժշտական և արվեստի դպրոցներում վերանորոգման և հիմնանորոգման աշխատանքների իրականացում	2015թ. նախատեսվում է 3 երաժշտական և 9 արվեստի դպրոցներում իրականացնել վերանորոգման և հիմնանորոգման աշխատանքներ, ինչպես նաև շարունակել և ավարտել 2014թ. ընթացքում սկսած 2 երաժշտական և մեկ արվեստի դպրոցների վերանորոգման և	տե՛ս շինարարության և բարեկարգման ոլորտ		

Երևանի զարգացման 2015 թվականի ծրագրի իրականացման հաշվետվություն

		հիմնանորոգման աշխատանքները, որի շնորհիվ ծրագիրը ամբողջությամբ կավարտվի:			
8.4	Համերգների, մրցույթների, փառատոների կազմակերպում	Երաժշտական և արվեստի դպրոցներում նախատեսվում է համերգների, հանրապետական ու միջազգային մրցույթների և փառատոների կազմակերպում և մասնակցություն: Ուսումնական տարվա վերջում կկազմակերպվի երաժշտական և արվեստի դպրոցների մրցույթ-փառատոն և հաշվետու համերգներ:	Երաժշտական և արվեստի դպրոցների դաշնամուրի, լարային, փողային, վոկալի և կերպարվեստի բաժինների աշակերտների մասնակցությամբ կազմակերպել են համերգային ծրագրեր, թեմատիկ միջոցառումներ, ցուցահանդեսներ՝ նվիրված Ամանորի, մարտի 8-ի տոներին, ուսուցչի օրվան : Տարբեր դպրոցների աշակերտներ մասնակցել են փառատոնների, մրցույթների և ցուցահանդեսների՝ շահելով մրցանակներ և դիպլոմներ: Ակտիվ մասնակցություն են ունեցել «Էրեբունի – Երևան 2797» տոնակատարությանը: Նշվել է Ա.Տիգրանյանի անվան երաժշտական դպրոցի հիմնադրման 85-ամյակը, որի շրջանակում կազմակերպվել է մի շարք համերգներ, բեմադրվել է «Անուշ» օպերան: Դպրոցները ամանորի տոնակատարության շրջանակում բարեգործական համերգներ են կազմակերպել մանկատներում և ծերանոցներում: Կազմակերպվել է տարեվերջյան հաշվետու համերգներ, ինչպես աշակերտների, այնպես էլ դասատուների մասնակցությամբ:		
9.	Մշակույթի տներ և գեղագիտական կենտրոններ				
9.1	Հաշմանդամ, ծնողազուրկ, բազմազավակ և անապահով ընտանիքների երեխաների ընդգրկվածության մեծացման նպատակով կրթամշակութային և սոցիալական ծրագրերի իրականացում, տարբեր սոցիալական խմբերի համար՝	Հաշմանդամ, ծնողազուրկ, բազմազավակ և անապահով ընտանիքների երեխաների ընդգրկվածության մեծացման նպատակով կրթամշակութային և սոցիալական ծրագրերի	Մշակույթի տների և գեղագիտական կենտրոնների կողմից կազմակերպվել և իրականացվել են տոնական, ազգային տոներին նվիրված մշակութային միջոցառումներ, համերգային ծրագրեր, ցուցահանդեսներ՝ Ամանոր, Տյառնըդառաջ, Բարեկենդան, Բանակի օր, Մարտի 8, Թատրոնի միջազգային օր: Կազմակերպվել է «Մանկապատանեկան տեխնիկական ստեղծագործությունների կենտրոն» ՀՈԱԿ-ի		

Երևանի զարգացման 2015 թվականի ծրագրի իրականացման հաշվետվություն

<p>մշակութային ծրագրերի մշակում և ընդլայնում</p>	<p>իրականացում, տարբեր սոցիալական խմբերի համար՝ մշակութային ծրագրերի մշակում և ընդլայնում:</p>	<p>նկարչության խմբակների երեխաների այցը գեղանկարիչ Լենա Ներսիսյանի «Բազմաձայն պատարագ» գրաֆիկական աշխատանքների անհատական ցուցահանդեսին: Կազմակերպվել է «Մարաթոն» ՀՈԱԿ-ի ազգագրական – երգի պարի համույթի մասնակցությունը Հանրապետության Հրապարակում կայացած ամանորյա համերգներին, ինչպես նաև „Վարդանանց տոն,-ին՝ Եռաբլուրում, Զորավար Անդրանիկի ծննդյան 150 ամյակ՝ Օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնում, համերգ մանկատան երեխաների համար՝ Ա. Բաբաջանյան համերգասրահում: «Երևանի մանկապատանեական ստեղծագործության քաղաքային կենտրոն» ՀՈԱԿ-ի «Մատադոր» պարային ստուդիան Մոսկվայում հունվարի 10-11-ը մասնակցել է սպորտային պարերի առաջնությանը: «Կռունկ» պարային համույթը մասնակցել է Գ. Մունդուկյանի անվան պետական թատրոնում կայացած պարային փառատոնին: «Պատանեկության ստեղծագործական կենտրոն» ՀՈԱԿ-ի «Ծիծեռնակ» թատրոն ստուդիան ապրիլի 1 -3ը Գ. Մունդուկյանի թատրոնում կազմակերպեց մանկական շոու ներկայացում: Ապրիլի 4-ին «Կասկադ համալիրում» կենդանիների միջազգային օրվա կապակցությամբ կազմակերպվել է նկարների ցուցահանդես, Սրբ. Հարության տոնին նվիրված համերգային ծրագիր, ցուցադրություն և ներկած ձվերի և քաղցրավենիքի բաժանում: «Մանկապատանեական ստեղծագործական կենտրոն»</p>		
--	--	---	--	--

Երևանի զարգացման 2015 թվականի ծրագրի իրականացման հաշվետվություն

			<p>ՀՈԱԿ-ը ապրիլի 1-ին նշել է ծիծաղի և կատակի օրը: Հումորային ներկայացումներ, կատակ երգեր ու պարեր: Ապրիլի 3-ին հ.60 դպրոցում տեղի ունեցավ ընկերական հանդիպում կենտրոնի շախմատի սաների և դպրոցի սաների միջև: Ապրիլի 6-ին Հիսուս Քրիստոսի Հարության տոնին ընդառաջ Մանկապատանեկան ստեղծագործական կենտրոնի նախասրահի բաց դահլիճում կայացավ տոնական միջոցառում-ցուցահանդես՝ գեղեցիկ բեմադրությամբ, օրվա խորհրդին համահունչ ձևավորումներով, խորհրդանշական ուտեստներով: Ապրիլի 12-ին Խուլ ու համրերի մշակույթի տանը տեղի ունեցավ Հայաստանի Մպորտային պարերի ֆեդերացիայի «Մատաղոռ» ակումբի բաց առաջնությունը, որին մասնակցեց կենտրոնի ժամանակակից պարերի «Լոտուս» խմբի սանը: Մայիսի 4- 10-ը «Հայաստան» ժողովրդական պարային խումբը մասնակցել է «Նոր Շունչ» մրցույթ փառատոնին և անցել եզրափակիչ: Մայիսի 24-ին «Լոտուս» ժամանակակից պարային խմբի սաները Նոր Նորքի մշակույթի տանը մասնակցեցին Կարին արվեստի կենտրոնի կազմակերպած մրցույթին՝ գրավելով 1-ին տեղ: Սաները ապրիլի 1-ին <<Ինքնազարգացման>> կենտրոնում մասնակցել են պարային բարեգործական երեկոյին: Ապրիլի 3-ին Ժամանակակից արվեստի թանգարանում «Սանտա-Լ.» ստուդիան մասնակցել է ավանգարդ ոճի հագուստի ցուցադրությանը՝ նվիրված մայրության և գեղեցկության օրվան:</p> <p>Մայիսի 2- 3-ը պարային խմբերը մասնակցել են «Նոր շունչ» ամենամյա պարային մրցույթին: Մայիսի 5-ին</p>		
--	--	--	---	--	--

Երևանի զարգացման 2015 թվականի ծրագրի իրականացման հաշվետվություն

			<p>Թբլիսիում մասնակցել են հայ-վրացական պարային փառատոնին: Մայիսի 9- 10-ը ք. Մոսկվայում մասնակցել են սպորտային պարերի աշխարհի բաց առաջնությանը: Մայիսի 17- 18-ը Թբլիսիում մասնակցել են սպորտային պարերի միջազգային գավաթի խաղարկությանը: Հունիսի 1-ին՝ Երեխաների պաշտպանության օրվան նվիրված մի շարք միջոցառումների և ցուցահանդեսների կազմակերպում: Հունիսի 5-ին մասնակցել են «Նոր շունչ» ամենամյա պարային մրցույթի գալա համերգին: Հունիսի 6-ին Գ. Մունդուկյանի անվան ազգային թատրոնում կայացել է կենտրոնի հաշվետու համերգը: «Երևանի մանկապատանեական ստեղծագործության քաղաքային կենտրոն» ՀՈԱԿ-ի սաները հոկտեմբերի 1-ին մասնակցել են դպրոցական ավիամոդելիստների առաջնությանը, հոկտեմբերի 11-ին՝ ազատ թռչող մոդելների Հայաստանի գավաթի առաջնությանը, հոկտեմբերի 16-ին՝ Տուր ռիթմ բարեգործական պարային փառատոնին, նոյեմբերի 13-22-ը՝ սպորտային պարերի աշխարհի բաց Հռոմում և Վիենայում, նոյեմբերի 14-ին՝ Մուսսալեռան 100-ամյակին նվիրված կառավարական միջոցառմանը, դեկտեմբերի 13-ին՝ Մատադոր պ/ս – ի 20- ամյակին նվիրված համերգին՝ Հ.Պարոնյանի անվ. թատրոնում: Դեկտեմբերի 14-ին կազմակերպվել է Կամերտոն վոկալ ստուդիայի կատարմամբ՝ մյուզիք «Մեր բակում» Երևանի պետական տիկնիկային թատրոնում: Դեկտեմբերի 20-ին Մեդոներ թատերախումբը ներկայացրել է Լսեք թագավորի հրամանը ներկայացումը: Մանտա-Լ, նորաձևության թատրոնը</p>		
--	--	--	--	--	--

Երևանի զարգացման 2015 թվականի ծրագրի իրականացման հաշվետվություն

			<p>դեկտեմբերի 26-ին՝ Տոնական հագուստի ցուցադրություն-ը և դեկտեմբերի 28-ին՝ հաշվետու/ամսափոփիչ միջոցառումը:</p> <p>Նոյեմբերի 20-ին «Մերաստիա» մշակույթի կենտրոնի սաները Ախալքալաքում մասնակցել են Ջավախքյան տիկնիկների ցուցահանդեսին՝ «Ոսկե աշունը Ջավախքում» խորագրով: Նոյեմբերի 23-ին «Միլեն» շոու-բալետի պարային համույթը Վրաստանում մասնակցել է «Գեորգոբա» Մուրբ Գիորգիի տոնին: «Մերաստիա մշակութային կենտրոն» ՀՈԱԿ-ը ապրիլի 5-ին Մուրբ Ջատկի տոնին նվիրված ժողովրդական տոնախմբություն է կազմակերպել Ապարանում՝ ժողգործիքների խմբի սաների մասնակցությամբ: Կենտրոնի «Միլեն» շոու բալետը ապրիլի 1-4-ը մասնակցել է Թբիլիսիում անցկացվող պարի փառատոնին և արժանացել է պատվոգրի և գավաթի:</p> <p>Մայիսի 25-ին Քութաիսիի քաղաքապետի հրավերով կենտրոնի սաները համերգային ծրագրով մասնակցել են Քութաիսի քաղաքում կայացած միջոցառմանը՝ նվիրված Վրաստանի անկախության օրվան: Համերգային ծրագրով հանդես են եկել Մարդարապատում անցկացվող Հանրապետության օրվան նվիրված միջոցառմանը:</p> <p>Մայիսի 22-ին կենտրոնի սաները համերգային ծրագրով մասնակցել են Վայք քաղաքի թիվ 1 ավագ դպրոցում կազմակերպված վերջին զանգի միջոցառմանը:</p> <p>Մայիսի 28-ին Հանրապետության տոնի կապակցությամբ՝ այցելություն Բաշ-Ապարանի հերոսամարտի հուշահամալիր և Ապարանում</p>		
--	--	--	--	--	--

Երևանի զարգացման 2015 թվականի ծրագրի իրականացման հաշվետվություն

			<p>համերգային ծրագիր՝ ժող. նվագարանների մենակատարների մասնակցությամբ: Մայիսի 28-ին համերգային ծրագրով հանդես են եկել Մարդարապատում անցկացվող Հանրապետության օրվան նվիրված միջոցառմանը: Հունիսի 2-ին Աջարիայի քաղաքապետարանի հրավերով կենտրոնի «Միլեն» շոու-բալետը մասնակցել է Աջարիայի պարի պետական ակադեմիական խմբի հոբելյանական համերգին: Դեկտեմբերի 12-ին «Սեբաստիա» մշակութային կենտրոնի սաները մասնակցել են Թբիլիսիում մշակույթի վաստակավոր գործիչ պրոֆեսոր Ռեզո Ճանիշվիլիի անունով աստղի բացման արարողությանը:</p> <p>Ընթանում են շարունակական աշխատանքներ՝ ուղղված սոցիալական տարբեր խմբերում ընդգրկված երեխաների ներգրավմանը ուսումնական և գեղագիտական խմբակներում:</p>		
9.2	Մեծ Եղեռնի 100-ամյա տարելիցին նվիրված միջոցառումների և ցուցահանդեսների կազմակերպում	Մեծ Եղեռնի 100-ամյա տարելիցին նվիրված տարվա ընթացքում նախատեսվում են միջոցառումներ և ցուցահանդեսներ:	<p>«Աջափնյակ գեղագիտական կենտրոն» ՀՈԱԿ-ի «Վասպուրիկ», խամաճիկների թատրոնը ելույթ է ունեցել Գ. Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոնում կայացած ցեղասպանության 100- ամյա տարելիցին նվիրված «Հավերժի կռունկ», միջոցառմանը:</p> <p>«Մանկապատանեկան տեխնիկական ստեղծագործությունների կենտրոն» ՀՈԱԿ-ի ավիամոդելային խմբակի սաները ցեղասպանության 100-ամյակին նվիրված միջոցառումների շրջանակում մասնակցել են «Երևան», կորդորումում անցկացված ավիամոդելիստների հանրապետական «Թռիչք հավերժության», մրցումներին:</p>		

Երևանի զարգացման 2015 թվականի ծրագրի իրականացման հաշվետվություն

			<p>«Զեյթուն մշակութային կենտրոն» ՀՈԱԿ-ը ապրիլի 22-ին անցկացրել է Հայոց Ցեղասպանության 100-ամյա տարելիցին նվիրված վարչական շրջանի գլխավոր միջոցառումը՝ վարչական շրջանի հանրակրթական, արվեստի, երաժշտական դպրոցների և մշակութային կենտրոնի երեխաների մասնակցությամբ:</p> <p>«Ավանի մշակույթի տուն» ՀՈԱԿ-ում մայիսի 6-ին տեղի ունեցավ «Ու՛մ թողիր քու էրգիբ, լա՛ն» խորագրով միջոցառում՝ նվիրված Հայոց Ցեղասպանության 100-ամյա տարելիցին:</p>		
9.3	«Մշակույթի տների հիմնանորոգում և վերանորոգում» ծրագիրը	2015թ. «Մշակույթի տների հիմնանորոգում և վերանորոգում» ծրագիրը նախատեսվում է ավարտել՝ հիմնանորոգելով «Ավանի մշակույթի կենտրոնը», «Սեբաստիա» մշակույթի կենտրոնը» և «Շենգավիթ համայնքի թ. 5 մշակույթի կենտրոնը»:	տե՛ս շինարարության և բարեկարգման ոլորտ		
10.	Այլ մշակութային կազմակերպություններ				
10.1	Համերգներին, փառատոներին, ցուցահանդեսներին մասնակցություն	Նախատեսվում է ապահովել վերոնշյալ կազմակերպությունների մասնակցությունը համերգների, փառատոների, ցուցահանդեսների ինչպես Հայաստանում, այնպես էլ արտերկրում: Հայոց Ցեղասպանության 100-	Հայ-Արտ մշակութային կենտրոնե ՓԲԸ-ն հունվարի 13-25-ը կազմակերպել է Տարեմուտի Հայ ավանդական տոնակատարություն-ցուցահանդես՝ անվանի նկարիչների և արվեստագետների մասնակցությամբ, փետրվարի 7-27-ը՝ Ձեռարվեստի և նկարչության պատանեկան ցուցահանդես, փետրվարի 11-ին՝ Հրանտ Մաթևոսյանի ծննդյան տարեդարձին նվիրված երեկո, փետրվարի 13-ին՝ Ծիսական միջոցառում <<Տեառնընդառաջ>>, մարտի 7-ից ապրիլի 7-ը՝ Կինը կերպարվեստում		

Երևանի զարգացման 2015 թվականի ծրագրի իրականացման հաշվետվություն

		<p>ամյա տարելիցին նվիրված նախատեսվում է կազմակերպել միջոցառումներ և ցուցահանդեսներ:</p>	<p>ցուցահանդես- բանախոսություն, մարտի 16-ին՝ Կին քանոնահարների անսամբլի ելույթը Հայ-Արտ-ում (զեղ. ղեկավար ՀՀ. Ժող. արտիստ՝ Անժելա Աթաբեկյան), մարտի 20-ին՝ «Հագուստը մշակույթ է» թեմայով ցուցադրություն-բանախոսություն, մարտի 27-ին՝ Ֆրակոֆոնիայի օրերի շրջանակներում՝ Միսաք Մանուշյանին նվիրված երեկո: Ապրիլի 22-ին կազմակերպվել է «Ցեղասպանությունն իմ մեջ» խորագրով երեկո: Ապրիլի 27-ին կայացավ «Անդրանիկ Օզանյան» ֆիլմի դիտում նվիրված՝ Մեծ գորավարի ծննդյան 150-ամյակին և Մեծ եղեռնի 100-րդ տարելիցին:</p> <p>Երեկոյին համերգային ծրագրով հանդես եկան երգիչ Սահակ Սահակյանը և «Մասնա ծոեր» երգի պարի ազգագրական համույթը: Դահլիճում հրավիրված սիրիահայերը ներկայացան հայ ազգագրական երգ ու պարով: Մայիսի 14-16-ը կայացավ «Գրիչը միայն նկարելու համար չէ» Դ. Հովակիմյանի ցուցահանդեսը: Մայիսի 19-29-ը կայացավ 1-ին միջազգային «Արվեստ» EXPO -15 ցուցահանդեսը: Հունիսի 1- 6-ը կայացավ Արտ Ֆեստ երիտասարդական փառատոնի շրջանակներում Կերպարվեստի և քանդակի ցուցահանդեսը: Հունիսի 12-ից հուլիսի 12-ը իրականացվում է «Հայտնիները հայ լուսանկրիչների աչքերով» ցուցահանդեսը:</p> <p>Հոկտեմբերի 1-10-ը կազմակերպվել է լուսանկարչական ցուցահանդես՝ «1/19 F20» խորագրով, հոկտեմբերի 12-ին ցուցադրվել է Ռիտա Շառոյանի «Հնագույն նվագարաններ» ֆիլմաշարի 8-րդ ֆիլմը «Թառ» անվանումով,</p>		
--	--	---	---	--	--

Երևանի զարգացման 2015 թվականի ծրագրի իրականացման հաշվետվություն

			<p>հոկտեմբերի 14-24-ը կազմակերպվել է գեղարվեստական լուսանկարչության ցուցահանդես՝ Էդմոնդ Քեշիշյան (ԱՄՆ), հոկտեմբերի 26-31-ը՝ գեղանկարիչ Արսեն Հարությունյանի ստեղծագործությունների անհատական ցուցահանդեսը, նոյեմբերի 28-30-ը՝ լուսանկարիչ Էդգար Հարությունյանի անհատական ցուցահանդեսը՝ «Դուք լավն եք, մարդիկ» խորագրով, դեկտեմբերի 2-4-ը՝ «Հավասար» լուսանկարչական ցուցահանդես՝ «Օքսֆամ» կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի և «ՕքսԷՋեն» հիմնադրամի նախաձեռնությամբ, դեկտեմբերի 5-ին՝ կամերային երաժշտության երեկո՝ Shell Trio-ի մասնակցությամբ, դեկտեմբերի 5-17-ը՝ նախատոնական բարեգործական ցուցահանդես՝ «Մերը կյանք է» խորագրով, դեկտեմբերի 22-26-ը՝ Կոտայքի մարզի գեղանկարիչների ցուցահանդես, դեկտեմբերի 27-ին՝ տարեմուտի հանդիսություն: «Հայաստանի Փոքրիկ Երգիչներ» մանկական ֆիլիարմոնիա» ՀՈԱԿ-ի երգչախումբը ս/թ ապրիլի 2-8-ը Հունաստանում կայանալիք «Մեզարոնի» 5-րդ մանկական երգչախմբային փառատոնին մասնակցելու նպատակով սովորել է հունարեն ստեղծագործություններ, գրեթե ավարտին են հասցրել Հունաստան մեկնելու ծրագիրը:</p> <p>Նախապատրաստական աշխատանքներ են տարվել հրեա խմբավար Մայա Շավիթի՝ ապրիլին Հայաստան գալու կապակցությամբ: Երեխաները սովորել են բազմաթիվ երբայերեն ստեղծագործություններ, բաց դասեր են անցկացրել: Կատարել են Բենժամին</p>		
--	--	--	---	--	--

Երևանի զարգացման 2015 թվականի ծրագրի իրականացման հաշվետվություն

			<p>Բրիտտենին նվիրված ձայնակավառակի որոշ ստեղծագործությունների ձայնագրություններ: Երգչախմբի անդամները ապրիլի 24-ին մասնակցեցին Ծիծեռնակաբերդում՝ Հայոց Ցեղասպանության 100-ամյա տարելիցին նվիրված պաշտոնական արարողությանը: Երգչախմբի մենահամերգը ապրիլի 28-ին կայացավ Վանաձորի N1 երաժշտական դպրոցի դահլիճում:</p> <p>Ապրիլի 30-ին Երևանի Կոմիտասի անվան կամերային երաժշտության տանը տեղի ունեցավ «Հայաստանի Փոքրիկ Երգիչներ» երգչախմբի «Հանուն սիրո և կյանքի» խորագիրը կրող համերգը՝ «Էֆրոնի» երգչախմբի ղեկավար Մայա Շավիթի և «Հայաստանի Փոքրիկ Երգիչներ» երգչախմբի գեղարվեստական ղեկավար Տիգրան Հեքեքյանի ղեկավարությամբ: Հայոց Մեծ եղեռնի 100 ամյակին նվիրված միջոցառումների շրջանակում Հայաստանում երգունվում Դանիայի Յուլանդի շրջանի Հերնինգ քաղաքի «ՄիդՎեստ» աղջիկների երգչախումբը: «Հայաստանի Փոքրիկ Երգիչներ» մանկական ֆիլիարմոնիան կազմակերպել է «ՄիդՎեստ» աղջիկների երգչախմբի բարեգործական համերգային շրջագայությունը Վանաձորում, Գյումրիում, Դիլիջանում, Ծաղկունք գյուղում և Երևանում: Նոյեմբերի 20-ին Սայաթ-Նովայի անվան երաժշտական դպրոցի մեծ համերգասրահում տեղի ունեցավ «Հայաստանի ամենափոքրիկ երգիչներ» երգչախմբի համերգը: Ծրագրում ընդգրկված էին հայ ժամանակակից, ռուս և արտասահմանյան կոմպոզիտորների</p>		
--	--	--	---	--	--

Երևանի զարգացման 2015 թվականի ծրագրի իրականացման հաշվետվություն

			<p>ստեղծագործություններ: Դեկտեմբերի 14-ին, Կոմիտասի անվան կամերային երաժշտության տանը տեղի ունեցավ «Հայաստանի փոքրիկ երգիչներ» երգչախմբի «Խաղաղություն մոլորակին» համերգային նախագիծը: Երեկոյի ընթացքում երգչախումբն ունկնդրին ներկայացավ տարբեր ազգերի կոմպոզիտորների ստեղծագործությունների կատարումներով: Համերգի ընթացքում հնչեցին ՀՓԵ Խմբերգերի Միջազգային Մրցույթի ավարտական փուլ անցած լավագույն ստեղծագործությունները: Դեկտեմբերի 27-ին Սայաթ-Նովայի անվան երաժշտական դպրոցի մեծ համերգասրահում տեղի ունեցավ «Հայաստանի ամենափոքրիկ երգիչներ» երգչախմբի «Մեր մանկության հեքիաթը» խորագիրը կրող համերգ՝ նվիրված Ամանորի և Սուրբ Ծննդյան տոներին:</p> <p>«Յու.Բախշյանի անվան մանկական ֆիլհարմոնիա» ՀՈԱԿ-ը</p> <p>Շանթ Հ/Ը Պարահանդես նախագծին մասնակցեց Ստիլ պարի խումբը, փետրվարի 28-ին Ֆիեստա բաց առաջնությանը՝ սաներից 15-ը արժանացան 1-ին մրցանակի, մարտի 15-ին կայացած ՀՀ Սպորտային պարերի պաշտոնական առաջնությանը Ֆիլհարմոնիայի սաները գրավեցին պատվավոր 3-րդ տեղ, մարտի 25-ին՝ Թատրոնի օրվան նվիրված միջոցառում՝ Մարաջյանի անվան երաժշտական դպրոցում, մարտի 29-ին՝ Ծաղկազարդը Վ.Դավթյանի անվան զբոսայգում, մարտի 29-ին ՀՀ Սպորտային պարերի ֆեդերացիայի Ռետրո՝ ակումբի բաց առաջնությանն արժանացան յոթ 1-ին , մեկ 2-րդ և</p>		
--	--	--	---	--	--

Երևանի զարգացման 2015 թվականի ծրագրի իրականացման հաշվետվություն

			<p>երկու՝ 3-րդ մրցանակների: «Յու.Բախշյանի անվան մանկական ֆիլիարմոնիա» ՀՈԱԿ-ը ապրիլի 12 –ին մասնակցել է «Ոսկե սրինգ» ամենամյա փառատոնի 1-ին փուլին: Ապրիլի 12-ին ՀՀ սպորտային պարերի ֆեդերացիայի «Մատադո» սպորտային պարերի ակումբի բաց առաջնությանը մասնակցել են «Style» պարային խմբի սաները:</p> <p>Ապրիլի 16-ին քաղաքապետարանում Եղեռնի 100-ամյա տարելիցի միջոցառմանը մասնակցել է կամերային նվագախումբը:</p> <p>Ապրիլի 24-ին Մոսկվայում կայանալիք «Նոր ալիք» մանկական միջազգային մրցույթի կիսաեզրափակիչ փուլին մասնակցել է Մանկական ֆիլիարմոնիայի սան Աննա Միվոլյանը: Մայիսի 1-5-ը Փարիզում տեղի ունեցած միջազգային փառատոնին մասնակցել են կամերային նվագախումբը և «Style» պարային խումբը:</p> <p>Մայիսի 8-13-ը Բաթումի «Ոսկե խխունջ» միջազգային փառատոնին մասնակցել է ժող. գործիքների նվագախումբը: Մասնակցություն են ունեցել «Երևանյան ամառ 2015» ծրագրի շրջանակում իրականացված համարգներին, ցուցահանդեսներին: Հոկտեմբերի 3- 4- ը Ծաղկաձոր քաղաքի 1020-ամյակին նվիրված միջոցառման շրջանակներում մասնակցել են փառատոնի: Հոկտեմբերի –5 ին քաղաքապետարանի՝ ուսուցչի օրվան նվիրված միջոցառմանը մասնակցել է կամերային նվագախումբը: Հոկտեմբեր ամսին մասնակցել է ՀՀ Սպորտային պարերի ֆեդերացիայի առաջնություն</p>		
--	--	--	--	--	--

Երևանի զարգացման 2015 թվականի ծրագրի իրականացման հաշվետվություն

			<p>“Style” խումբը: Նոյեմբերի 22 – ին Ա.Բաբաջանյան համերգասրահում կազմակերպվել է համերգ՝ ֆիլիարմոնիայի խմբերի մասնակցությամբ: Նոյեմբերի 28 –ին մասնակցել են « Ոսկե սրինգ» 2015 փառատոնի եզրափակիչ փուլին: Դեկտեմբերի 15 – Ռուսաստանի դաշնության դեսպանատան աշխատակիցների համար համերգ՝ Մանկական ֆիլիարմոնիայի սաների մասնակցությամբ: Դեկտեմբերի 16–ին կայացել է Մանկական Ֆիլիարմոնիայի սաների ստեղծագործությունների ցուցահանդես՝ կամերային նվագախմբի մասնակցությամբ: Դեկտեմբերի 29–ին՝ Ամանորյա ուրախ հանդես Մանկական Ֆիլիարմոնիայում: «Երևան» փողային նվագախումբ» ՀՈԱԿ-ը ապրիլի 16-ին մասնակցել է մարզադպրոցի հիմնարկերի արարողությանը: Ապրիլի 30-ին Լենինգրադի բլոկադայի երեխաների հուշարձանի բացման արարողությանը՝ Արաբկիր համայնքում: Հունիսի 1-ին ելույթ է ունեցել Ազատության հրապարակում՝ նվիրված երեխաների պաշտպանության օրվան: «Երևան» փողային նվագախումբ» ՀՈԱԿ-ը «Էրեբունի-Երևան » տոնակատարության շրջանակում հոկտեմբերի 11-ին մասնակցել է համերգային ծրագրին: Նոյեմբերի 28-ին մասնակցել է Ա.Խաչատրյանի անվան մեծ համերգասրահում կազմակերպված «Տիգրան Մեծ» զնդին նվիրված միջոցառմանը: Դեկտեմբերի 5-ին մասնակցել է գեղասահքի դպրոցի բացման արարողությանը:</p>		
10.2	Կենդանաբանական այգու վերակառուցման ծրագրի	2015թ. նախատեսվում է շարունակել և ավարտել	«Երևանի կենդանաբանական այգի» ՀՈԱԿ-ում ավարտվել է վագրների նոր կղզյակի իրականացման,		

Երևանի զարգացման 2015 թվականի ծրագրի իրականացման հաշվետվություն

	<p>իրականացում</p>	<p>2014 թ. սկսած վագրների նոր կղզյակի իրականացման, այգու տարածքում արջերի և գայլերի նոր ազատավանդակի կառուցման, այգու տարածքում մանկական /կենդանիների հետ անմիջական շփման/ այգու կառուցման աշխատանքները: Ծրագրի իրականացման արդյունքում մայրաքաղաքը կունենա արդի չափանիշներին համապատասխան կենդանաբանական այգի:</p>	<p>այգու տարածքում արջերի և գայլերի նոր ազատավանդակի կառուցման, այգու տարածքում մանկական այգու և մանկական ներառական խաղահրապարակի կառուցման աշխատանքները: Կառուցվել են նոր ազատավանդակներ կրիաների, հարավամերիկյան յագուարի, ծիածանագույն լորիկետերի, ժակոնների և թութակների, սուրիկատների և ջրասամույրների համար: Իրականացվել են ուղտերի և թուրքմենական կուլանների տարածքի բարեկարգման և ազատավանդակների արդիականացման աշխատանքները: Կատարվել է պրժնալսկու ձիերի ազատավանդակների և ցայտաղբյուրների արդիականացում, կառուցվել է նոր կղզյակներ կատվալեմուրների, սկյուռակապիկների և կարապների համար: Իրականացվել են պոմպակայանի կառուցման, պոմպի տեղադրման, խմելու ջրի ներքին ցանցի վերակառուցման, էլեկտրական ներքին ցանցի վերակառուցման և հզորությունների ավելացման, օպտիկական մալուխի անցկացման աշխատանքներ:</p>		
Ֆիզիկական կուլտուրա և սպորտ					
Հ/հ	Ծրագրի կամ միջոցառման անվանումը	Նախատեսված աշխատանքների նկարագիր	Աշխատանքների իրականացման գործընթաց	Իրականացնող կազմակերպություն, կատարման ժամկետ	Նշումներ
1	2	3	4	5	6
1.	Մի շարք մարզական ՀՈԱԿ-ների վերակազմակերպում	«Երևանի սպորտ կոմիտե» կազմակերպության վերակազմակերպում՝ «Բարձրագույն մարզական վարպետության	Հարցի քննարկումը տեղափոխվել է 2016թ:		

Երևանի զարգացման 2015 թվականի ծրագրի իրականացման հաշվետվություն

		մարզադպրոց» ՀՈԱԿ-ի, ինչպես նաև մի շարք այլ մարզական ՀՈԱԿ-ների վերակազմակերպում:			
2.	Երևան- Մոսկվա, Երևան-Մտեփանակերտ քաղաքների համագործակցության ծրագրով նախատեսված ոլորտին վերաբերող միջոցառումների իրականացում	Երևան և Մոսկվա, Երևան-Մտեփանակերտ քաղաքների համագործակցության ծրագրով նախատեսված ոլորտին վերաբերող միջոցառումների իրականացում:	Ծրագիրը կիրականացվի 2016 թվականին:		
3.	Երևանցի մարզիկների և Երևանի թիմերի համար բարձրակարգ մարզաբազաներում ուսումնամարզական հավաքների կազմակերպում	Հանրապետական և միջազգային մրցաշարերին պատշաճ մակարդակով մասնակցելու նպատակով Երևանցի մարզիկների և Երևանի թիմերի համար բարձրակարգ մարզաբազաներում ուսումնամարզական հավաքների կազմակերպում:	Համահայկական ամառային 6-րդ խաղերի մասնակից Երևան քաղաքի հավաքական թիմերի համար կազմակերպվել են 19 ուսումնամարզական հավաքներ: Գյումրի քաղաքում անցկացվել է 12- օրյա ուսումնամարզական հավաք ակրոբատիկայի Երևան քաղաքի հավաքական թիմի համար:	03-14-ը օգոստոսի	
4.	Առողջարարական, զանգվածային ու երիտասարդական միջոցառումների կազմակերպում, Երևանի քաղաքապետի մրցանակի և փոխանցիկ գավաթի համար	Առողջարարական, զանգվածային ու երիտասարդական 13 միջոցառումների կազմակերպում, Երևանի քաղաքապետի մրցանակի և փոխանցիկ գավաթի	Տիգրան Պետրոսյանի անվան շախմատիստի տանը անցկացվել է շախմատի Երևան քաղաքի պատանեկան առաջնություն, որի հաղթողները իրավունք են ստացել մասնակցելու ՀՀ պատանեկան առաջնության կիսաեզրափակիչ մրցաշարին: Մրցանակակիրներին գավաթներն ու մեդալները հանձնել է Երևանի քաղաքապետ, Երևանի շախմատի ֆեդերացիայի նախագահ Տարոն Մարգարյանը:	Փետրվարի 14-22	1-ին եռամսյակ

Երևանի զարգացման 2015 թվականի ծրագրի իրականացման հաշվետվություն

<p>մարզաառողջարարական միջոցառումների անցկացում, Հայաստանի Հանրապետության նախագահի մրցանակի համար մարզական մրցույթների կազմակերպում և մասնակցության ապահովում, Երևան քաղաքի առաջնությունների և մրցաշարերի անցկացում, ՀՀ առաջնություններին, մրցաշարերին Երևանի թիմերի նախապատրաստում և մասնակցության ապահովում</p>	<p>համար մարզաառողջարարական 7 միջոցառման անցկացում, Հայաստանի Հանրապետության նախագահի մրցանակի համար մարզական մրցույթների կազմակերպում և մասնակցության ապահովում՝ 5 միջոցառում, Երևան քաղաքի առաջնությունների և մրցաշարերի անցկացում 43 մարզաձևից, ՀՀ առաջնություններին, մրցաշարերին Երևանի թիմերի նախապատրաստում և մասնակցության ապահովում 8 մարզաձևից:</p>	<p>Անցկացվել են ռենձյուի, աթլետիկայի, բոնցքամարտի, շաշկու Երևան քաղաքի առաջնություններ: Կազմակերպվել է «Էկո սերունդ» բնապահպանական միջոցառումը: Երևանի հավաքական թիմերը մասնակցել են Գորիսում անցկացված ՀՀ առաջնությանը: Կազմակերպվել են՝</p> <ul style="list-style-type: none"> - արևելյան մարզաձևերի փառատոն, - վոլեյբոլի Երևան քաղաքի պատանեկան առաջնություն, - «Հիշում ենք և պահանջում» երիտասադական միջոցառման շրջանակներում Վրաստանի մայրաքաղաքում կայացած մարզամշակութային փառատոնին Երևանի պատվիրակության մասնակցություն, - «Առողջ և գեղեցիկ ապրելու բանաձև» միջոցառման շրջանակում նախատեսված բաղմինթոնի երիտասարդական մրցաշար, ՀՀ վաստակավոր մարզիչ Տիգրան Թերզիյանին նվիրված հանդբոլի հուշամրցաշար, Երեխաների իրավունքների պաշտպանության միջազգային օրվան նվիրված մարզահամերգային տոնահանդես՝ մանկապարտեզների երեխաների մասնակցությամբ Ազատության հրապարակում, - Երևանի քաղաքապետարանի ֆուտբոլի հավաքական թիմի մարզումների կազմակերպում Երևանի Հմայակ Խաչատրյանի անվան մանկապատանեկան համալիր մարզադպրոցի մարզադաշտում, - Երևանի քաղաքապետարանի և Գերմանիայի քաղաքապետների ֆուտբոլի հավաքական թիմերի 	<p>2-րդ եռամսյակ</p>	
--	--	---	----------------------	--

Երևանի զարգացման 2015 թվականի ծրագրի իրականացման հաշվետվություն

			<p>ընկերական խաղը՝ Վազգեն Մարգարյանի անվան մարզադաշտում, Երևան քաղաքի ֆուտբոլի հավաքական թիմի մասնակցություն Իջևան քաղաքում կայացած Անդրանիկ Մարգարյանի ֆուտբոլի ավանդական հուշամրցաշարին:</p> <p>Մանդա-ուշուի, ազատ և հունահռոմեական ոճի ըմբշամարտի, շախմատի, գեղարվեստական մարմնամարզության, ֆուտբոլի թիմերը մասնակցել են հանրապետական ու միջազգային տարբեր մրցաշարերի:</p> <p>«Երևանյան ամառ 2015» մարզամշակութային միջոցառման կազմակերպում:</p> <p>Հաշմանդամություն ունեցող անձանց ստեղծագործությունների ցուցահանդեսի կազմակերպում Երևանի քաղաքապետարանի ձեմասրահում: «Երևանյան ձմեռ» մարզամշակութային միջոցառման կազմակերպում:</p> <p>Հանդերձի, ակրոբատիկայի, գեղարվեստական մարմնամարզության, սպորտային մարմնամարզության Երևան քաղաքի առաջնություն:</p>	<p>3-րդ եռամսյակ</p> <p>4-րդ եռամսյակ</p>	
5.	Համահայկական 6-րդ խաղերին երևանցի մարզիկների նախապատրաստում և մասնակցության ապահովում	Համահայկական 6-րդ խաղերին երևանցի մարզիկների նախապատրաստում և մասնակցության ապահովում՝ 3 միջոցառում 17 մարզաձևերից:	<p>Համահայկական ամառային 6-րդ խաղերի 17 մարզաձևերին մասնակից Երևան քաղաքի 32 հավաքական թիմերի մարզումների անցկացում, Համահայկական ամառային 6-րդ խաղերի Երևան քաղաքի 500 անձից բաղկացած մարզական պատվիրակության ապահովում</p> <p>մարզահանդերձանքով:</p> <p>Համահայկական ամառային 6-րդ խաղերին Երևանի հավաքական թիմերը մասնակցել են բոլոր 17 մարզաձևերի մրցաշարերին և նվաճել 140 մեդալ, այդ</p>	Մարտ-օգոստոս	

Երևանի զարգացման 2015 թվականի ծրագրի իրականացման հաշվետվություն

			թվում՝ 51 ոսկե, 42 արծաթե, 47 բրոնզե, ընդհանուր հաշվարկով գրավելով 1-ին պատվավոր տեղը:		
6.	«Առողջ սերունդ՝ պաշտպանված հայրենիք» համաքաղաքային բակային ավանդական փառատոնի վերածում միջազգային՝ համագործակցելով Երևանի քույր քաղաքների հետ	«Առողջ սերունդ՝ պաշտպանված հայրենիք» համաքաղաքային բակային ավանդական փառատոնի վերածում միջազգային՝ համագործակցելով Երևանի քույր քաղաքների հետ:	Իրականացվել են նախապատրաստական աշխատանքներ, հաստատվել է «Առողջ սերունդ՝ պաշտպանված հայրենիք» համաքաղաքային բակային ավանդական փառատոնի կանոնակարգը: «Առողջ սերունդ՝ պաշտպանված հայրենիք» համաքաղաքային ավանդական բակային փառատոնի անցկացում և հաղթող ու մրցանակային տեղեր գրաված թիմերի պարգևատրում գավաթներով, մեդալներով, դիպլոմներով, պատվոգրերով ու շնորհակալագրերով: Երևանի քաղաքապետի փոխանցիկ գավաթի հանձնման հանդիսավոր արարողության կազմակերպում:	Հունիս-սեպտեմբեր	22.09.2015
7.	Հանրապետական, միջազգային մրցաշարերում, Եվրոպայի ու աշխարհի առաջնություններում և օլիմպիական խաղերում բարձր արդյունքներ ցուցաբերած երևանցի մարզիկների խրախուսում	Հանրապետական, միջազգային մրցաշարերում, Եվրոպայի ու աշխարհի առաջնություններում և օլիմպիական խաղերում բարձր արդյունքներ ցուցաբերած երևանցի մարզիկների խրախուսում:	ՀՀ Նախագահի մրցանակի համար «Հաշմանդամություն ունեցող լավագույն մարզիկ» հանրապետական մրցույթում առաջին տեղ գրաված Երևանի թիմի լտողական, տեսողական, հենաշարժողական խնդիրներ ունեցող 22 մարզիկ պարգևատրվեցին Երևանի քաղաքապետի շնորհակալագրերով:		
8.	Երևանի գեղասահքի և տափօղակով հոկեյի մանկապատանեկան մարզադպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպության համար մարզաբազայի կառուցում	Երևանի գեղասահքի և տափօղակով հոկեյի մանկապատանեկան մարզադպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպության համար	Շահագործման հանձնվեց Երևանի գեղասահքի մարզաբազան Իսակովի 27/10 հասցեում և Երևան քաղաքի ավագանու 25.11.2015թ. հ.428-Ս որոշմամբ մարզադպրոցն անվանափոխվել է «Իրինա Ռոդինայի գեղասահքի մարզադպրոց» ՀՈԱԿ:	05.12.2015թ.	

Երևանի զարգացման 2015 թվականի ծրագրի իրականացման հաշվետվություն

		մարզաբազայի կառուցում:			
9.	Երևանի ենթակայության մարզական կազմակերպությունների տարածքների հիմնանորոգման և ժամանակակից մարզագույքով ապահովման աշխատանքների իրականացում	Երևանի ենթակայության մարզական կազմակերպությունների տարածքների հիմնանորոգման և ժամանակակից մարզագույքով ապահովման աշխատանքների իրականացում:	Վերանորոգվել է «Երևանի Քանաքեռ-Զեյթունի մանկապատանեկան համալիր մարզադպրոց» ՀՈԱԿ-ի շենքը: Վերանորոգվել է «Երևանի մարզատրամաբանական խաղերի մանկապատանեկան մարզադպրոց» ՀՈԱԿ-ի տարածքը: Մարզագույք և կահույք է բաշխվել Երևան համայնքի մարզադպրոցներին:	Մայիս - դեկտեմբեր	
10.	Սոցիալական գովազդի, մասնավորապես տեսահոլովակների միջոցով մայրաքաղաքում առողջ ապրելակերպի քարոզում	Սոցիալական գովազդի, մասնավորապես տեսահոլովակների միջոցով մայրաքաղաքում առողջ ապրելակերպի քարոզում:	Ծրագիրը իրականացվում է ըստ անհրաժեշտության: 2015թ. աշխատանքներ չեն իրականացվել:		
Երիտասարդության հետ տարվող աշխատանքներ					
Հ/հ	Ծրագրի կամ միջոցառման անվանումը	Նախատեսված աշխատանքների նկարագիր	Աշխատանքների իրականացման գործընթաց	Իրականացնող կազմակերպություն, կատարման ժամկետ	Նշումներ
1	2	3	4	5	6
1.	Մայրաքաղաքում գործող երիտասարդական հասարակական կազմակերպությունների, ուսանողական խորհուրդների, սփյուռքի և հանրապետության մարզերի երիտասարդական	Արդյունավետ համագործակցության ծավալում մայրաքաղաքում գործող երիտասարդական հասարակական կազմակերպությունների, ուսանողական խորհուրդների, սփյուռքի և	Մայիսի 22-ին Երևանի քաղաքապետարանում տեղի է ունեցել Հայաստանում Եվրոպական երիտասարդական պառլամենտի կողմից կազմակերպված ԵԵՊ 2-րդ միջազգային համաժողովի հանդիսավոր բացումը և առաջին սեսիոն քննարկումները: Համաժողովի շրջանակում Երևանում գտնվող տասնյակ երկրների 200-ից ավելի պատվիրակներ մարդու իրավունքների, հանրային կառավարման, տնտեսական կայունության, ինչպես նաև քաղաքային զարգացման		

Երևանի զարգացման 2015 թվականի ծրագրի իրականացման հաշվետվություն

<p>կազմակերպությունների, ինչպես նաև միջազգային երիտասարդական կառույցների հետ համագործակցության ծավալում</p>	<p>հանրապետության մարզերի երիտասարդական կազմակերպությունների, ինչպես նաև միջազգային երիտասարդական կառույցների հետ:</p>	<p>ու զբոսաշրջությանն առնչվող հարցերի շուրջ քննարկումների ընթացքում կարծիքներ են փոխանակել և ներկայացրել խնդիրների լուծման վերաբերյալ իրենց մոտեցումները:</p> <p>«Երիտասարդ պատմագետների ասոցիացիա» ՀԿ Համբարձման տոն</p> <p>2015 թվականի մայիսի 14-ին Մանկական այգում Երևանի քաղաքապետին կից երիտասարդության հարցերի խորհրդի աջակցությամբ «Երիտասարդ պատմագետների ասոցիացիա» ՀԿ-ի նախաձեռնությամբ իրականացվեց «Ինքնության պահպանումն ավանդական տոների միջոցով. Համբարձման տոն, վիճակ» միջոցառումը:</p> <p>Տոնակատարությունը մեկնարկել է Տերունական աղոթքով և ավանդական ուտեստների օրհնությամբ, ազգային ուտեստի՝ կաթնապուրի համտեսով, որին հաջորդել է վիճակի արարողությունը, ազգային երգը, պարն ու խաղերը:</p> <p>Միջոցառմանն իրենց մասնակցությունն ունեցան Մասնա ծոեր և Նուբար երգի-պարի ազգագրական համույթները, ինչպես նաև անհատ կատարողներ, Խորհրդի անդամ-կառույցների ներկայացուցիչներ:</p> <p><<Մփյուռքահայ ուսանողների խորհուրդ>></p> <p>Հանդիպում Նարեկ Դուրյանի հետ</p> <p>Ապրիլի 15-ին Երևանի քաղաքապետին կից երիտասարդության հարցերի խորհրդի երիտասարդական կենտրոնում «Հարմոնիա» հոգեբանության հանրային զարգացման կենտրոնի եւ «Մփյուռքահայ ուսանողների խորհուրդի» նախաձեռնությամբ տեղի ունեցավ «Ականջդ բեր ասեմ» խորագրով ծրագրի 3-րդ հանդիպումը: Այս անգամ ծրագրի հյուրն էր ճանաչված դերասան Նարեկ Դուրյանը:</p>		
---	--	--	--	--

Երևանի զարգացման 2015 թվականի ծրագրի իրականացման հաշվետվություն

			<p>Հանդիպումը հարց ու պատասխանի ձևաչափով էր, խոսելու հնարավորություն ունեւր ոչ միայն հյուրը, այլ նաև՝ ներկաները, ինչն ապահովում էր ակտիվ քննարկում:</p> <p>«Համախմբված երիտասարդություն» միջազգային ՀԿ Մարտի 26-ին Երևանի քաղաքապետին կից երիտասարդության հարցերի խորհրդի անդամ «Համախմբված երիտասարդություն» միջազգային ՀԿ-ի կամավորների նախաձեռնությամբ և Խորհրդի աջակցությամբ կազմակերպվեց լիտվական երեկո, որի ժամանակ լիտվացի կամավորը ներկայացրեց մի շարք հետաքրքիր և ուշագրավ փաստեր Լիտվայի մասին: Երեկոյի հյուրն էր Հայաստանում Լիտվայի դեսպան Էրիկաս Պետրիկասը: Երեկոյի ընթացքում դեսպանը խոսեց Հայաստան-Լիտվա հարաբերությունների, տնտեսական համագործակցության մասին:</p>		
2.	<p>Հաշմանդամ երիտասարդներին մայրաքաղաքի երիտասարդական կյանքին ինտեգրելու նպատակով հաշմանդամ երիտասարդներին աջակցող կազմակերպությունների հետ սերտ համագործակցության ծավալում</p>	<p>Հաշմանդամ երիտասարդներին մայրաքաղաքի երիտասարդական կյանքին ինտեգրելու նպատակով սերտ համագործակցության ծավալում հաշմանդամ երիտասարդներին աջակցող կազմակերպությունների հետ:</p>	<p>Հայաստանի հաշմանդամների «Փյունիկ» միություն, «Հայաստանի ազգային պարաօլիմպիկ կոմիտե» հասարակական կազմակերպությունների հետ համատեղ՝ «Գրանդ սպորտ» մարզահամալիրում անցկացվել է հաշմանդամություն ունեցող անձանց Երևան քաղաքի սպարտակիադա, ՀՀ Նախագահի մրցանակի համար «Լավագույն մարզական ընտանիք» հանրապետական մրցույթին Երևանի թիմում ընդգրկվել են հաշմանդամություն ունեցող անձանց ութ ընտանիք, Հանրապետությունում առաջին անգամ կազմակերպվել է ՀՀ Նախագահի մրցանակի համար «Հաշմանդամություն ունեցող լավագույն մարզիկ» հանրապետական մրցույթը, որին Երևանից մասնակցել են լսողական, տեսողական, հենաշարժողական խնդիրներ ունեցող 22 մարզիկ, և ընդհանուր</p>	Մեպտեմբեր – հոկտեմբեր	

Երևանի զարգացման 2015 թվականի ծրագրի իրականացման հաշվետվություն

			հաշվարկով Երևանի թիմը գրավել է առաջին տեղը: «Էրեբունի-Երևան» տոնակատարության ծրագրի շրջանակներում կազմակերպվել է սայլակավազք:		
3.	Երիտասարդության շրջանում առողջ ապրելակերպի գաղափարի լայն տարածմանը նպատակաուղղված զանգվածային մշակութային, մարզական միջոցառումների կազմակերպում	Երիտասարդության շրջանում առողջ ապրելակերպի գաղափարի լայն տարածմանը նպատակաուղղված զանգվածային մշակութային, մարզական միջոցառումների կազմակերպում:	Երևանի քաղաքապետին կից երիտասարդության հարցերի խորհրդի անդամների միջև անցկացվեց Բաղմինթոնի մրցաշար: Մրցաշարին մասնակցեցին «Ակտիվ երիտասարդ քաղաքացիների նախաձեռնություն» ՀԿ-ի, «Երիտասարդ պատմագետների ասոցիացիա»-ի, «Լամբրոնացի» «Քաղաքացիական մասնակցության զարգացման կենտրոն» ՀԿ-ի, «Համախմբված երիտասարդություն» ՄՀԿ-ի, «Հայ Երիտասարդ Մտածողներ» ընթերցասերների ակումբի, «Հայաստանի ուսանողական ազգային ասոցիացիա» ՀԿ-ի, «Հայաստանի Ազգային Պոլիտեխնիկական համալսարան» ՈՒՄ-ի, «Նախնյաց Հետքերով» ՄՀԿ-ի, «Մփյուռքահայ ուսանողների խորհուրդ»-ի և “Street workout” մարզական ՀԿ-ի ներկայացուցիչները:	Ապրիլի 30	
4.	Երիտասարդների համար ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի, թմրամոլության մասին իրազեկության ապահովմանը և կանխարգելմանն ուղղված զանգվածային մարզական միջոցառումների, կլոբ սեղանների կազմակերպում	Երիտասարդների համար ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի, թմրամոլության մասին իրազեկության ապահովմանը և կանխարգելմանն ուղղված զանգվածային մարզական միջոցառումների, կլոբ սեղանների կազմակերպում:	Իրականացվել են երիտասարդների իրազեկվածության բարձրացման աշխատանքներ: Երևան քաղաքի առողջարարական, հանրային, մարզական ու երիտասարդական միջոցառումների 2015թ. օրացուցային պլանով նախատեսված Երևան համայնքի երիտասարդ համայնքային ծառայողների ֆիզիկական պատրաստականության ստուգատեսի և մարզաառողջարարական հետիոտն արշավների շրջանակներում կազմակերպվել են գրույցներ, քննարկումներ:		
5.	Հաշմանդամություն ունեցող տաղանդավոր	Հաշմանդամություն ունեցող տաղանդավոր	Կազմակերպվել է հաշմանդամություն ունեցող անձանց ստեղծագործությունների ցուցահանդես Երևանի	11.12.2015թ	

Երևանի զարգացման 2015 թվականի ծրագրի իրականացման հաշվետվություն

	երիտասարդների ստեղծագործական ցուցահանդեսների, համերգների կազմակերպում	երիտասարդների ստեղծագործական ցուցահանդեսների, համերգների կազմակերպում:	քաղաքապետարանի ճեմասրահում:		
6.	Երևանի, քույր քաղաքների, Հայաստանի Հանրապետության այլ համայնքների, Արցախի երիտասարդների հետ համատեղ մարզամշակութային միջոցառումների կազմակերպում	Երևանի, քույր քաղաքների, Հայաստանի Հանրապետության այլ համայնքների, Արցախի երիտասարդների համատեղ մարզամշակութային միջոցառումների կազմակերպում:	Երևանում կազմակերպվել է ըմբշամարտի Ռուդոլֆ և Եղիշե Կարապետյանների միջազգային հուշամրցաշարը, Երևան քաղաքի ֆուտբոլի հավաքական թիմը մասնակցել է Իջևան քաղաքում կայացած Անդրանիկ Մարգարյանի ֆուտբոլի ավանդական հուշամրցաշարին, վոլեյբոլի Երևան քաղաքի հավաքական թիմերը մասնակցել են Գորիսում անցկացված ՀՀ առաջնությանը: Երևան-Ստեփանակերտ համագործակցության շրջանակում կազմակերպվել է մարզամշակութային միջոցառում:	Հունիս-նոյեմբեր	
7.	«Երևանը Եվրոպական ուսանողական մայաքաղաք» միջազգային երիտասարդական միջոցառում	2015 թվականին կկազմակերպվի Երևանը «Եվրոպական ուսանողական մայաքաղաք» միջազգային երիտասարդական միջոցառումը, որին կմասնակցեն Եվրոպական մի շարք երկրների ուսանողական կառույցների ներկայացուցիչներ:	«Հայաստանի ուսանողական ազգային ասոցիացիա» ՀԿ Երևանի քաղաքապետին կից երիտասարդության հարցերի խորհրդի անդամ կազմակերպություն Հայաստանի ուսանողական ազգային ասոցիացիայի ջանքերով Երևանը հռչակվեց Եվրոպական ուսանողական մայաքաղաք: Մայիսի 7-ին Երևանի քաղաքապետ Տարոն Մարգարյանը հյուրընկալել էր Երևանը 2015 թվականի Եվրոպական ուսանողական մայաքաղաք հռչակվելու շրջանակում Երևան ժամանած Եվրոպական ուսանողական միության պատվիրակներին, նաև Հայաստանի ուսանողական ազգային ասոցիացիայի անդամներին՝ շուրջ 250 երիտասարդ: Հանդիպում քննարկումների արդյունքում		

Երևանի զարգացման 2015 թվականի ծրագրի իրականացման հաշվետվություն

			<p>մի շարք երկրների ուսանողական խորհրդների հետ մշակվեցին նոր համագործակցության և զարգացման ծրագրեր:</p> <p>Համաժողովն իրականացվել է Խորհրդի աջակցությամբ</p>		
8.	<p>Խորհրդի կողմից իրականացվող միջոցառումներ («Կամավորների բանկ», «Բանավեճի ակումբ», «Ընթացասերների ակումբ», ծառատունկեր, շաբաթօրյակներ և այլն)</p>	<p>Կշարունակվեն խորհրդի կողմից իրականացվող բոլոր միջոցառումները («Կամավորների բանկ», «Բանավեճի ակումբ», «Ընթացասերների ակումբ», ծառատունկեր, շաբաթօրյակներ և այլն): Կիրականացվեն նաև նոր ծրագրեր:</p>	<p>Երևանի քաղաքապետին կից երիտասարդության հարցերի խորհրդի և «Ակտիվ երիտասարդ քաղաքացիների նախաձեռնություն» ՀԿ-ի հետ համատեղ իրականացվել են հետևյալ ծրագրերը.</p> <p>«Խոսենք ֆիլմից»</p> <p>Նախագծի նպատակն է կազմակերպել ֆիլմերի ցուցադրություն և քննարկում, որտեղ հենց ֆիլմի ստեղծողները կխոսեն ֆիլմի պատմության մասին, կպատասխանեն ներկաների բոլոր հարցերին: Կազմակերպվել է ամիսը մեկ կամ երկու անգամ պարբերականությամբ:</p> <p>«Երբ բանավիճում են երիտասարդները» բանավեճի ակումբ</p> <p>2015 թվականի մրցաշարը մեկնարկել է մարտի 1-ից, երկրորդ փուլը՝ հոկտեմբեր ամսվանից: Երկու մրցաշարերին մասնակցության հայտ են ներկայացրել 50-ից ավել թիմեր, բայց մրցույթի արդյունքում մրցաշարին հնարավորություն են ստացել մասնակցել 32 թիմ՝ թվով 160 երիտասարդ:</p> <p>«Հայ Երիտասարդ Մտածողներ» ընթերցասերների ակումբ</p> <p>Հանդիպումները տեղի են ունենում շաբաթը մեկ պարբերականությամբ: Նախապես ընտրվում է հեղինակը և ստեղծագործությունները, որոնք և</p>		

Երևանի զարգացման 2015 թվականի ծրագրի իրականացման հաշվետվություն

			<p>քննարկվում են հանդիպման ընթացքում: Յուրաքանչյուր ամսվա վերջին հանդիպումը լինում է բաց հանդիպում, որտեղ ակումբն ունենում է հյուր /գրականագետներ, հոգեբաններ, խոսքի վարպետներ և այլոք/, կոնկրետ թեմա և բացի ակումբի անդամներից ներկա կարող են լինել բոլոր ցանկացողները:</p> <p>Անգլախոսների ակումբ Ակումբի նպատական է օգնել երիտասարդներին ազատ շփման միջոցով բարելավել իրենց անգլերեն լեզվի խոսակցական հմտությունները: Ներկայումս գործում է 2 խումբ, յուրաքանչյուրում՝ 25-ական մասնակից: Հանդիպումները տեղի են ունենում շաբաթը մեկ անգամ՝ ուրբաթ և շաբաթ օրերին: Ակումբի աշխատանքային լեզուն բացառապես անգլերենն է: Հանդիպումները ներառում են թեմատիկ քննարկումներ, անգլալեզու կարճամետրաժ ֆիլմեր, հոդվածների, նովելների ընթերցում ու քննարկում, խաղեր և այլն:</p> <p>Էկո սերունդ Մարտի 3-ից մայիսի 15-ը Երևանի քաղաքապետին կից երիտասարդության հարցերի խորհրդի աջակցությամբ «Ակտիվ երիտասարդ քաղաքացիների նախաձեռնություն» հասարակական կազմակերպությունը և «Երիտասարդ Բարեգործների Ակումբ»-ը իրականացրեցին «Էկո Սերունդ» պատանեկան ծրագիրը: Ծրագրի աշխատանքային թիմը Երևանի 5 դպրոցներում անցկացրեց էկոլոգիային վերաբերող դասընթացներ,</p>		
--	--	--	---	--	--

Երևանի զարգացման 2015 թվականի ծրագրի իրականացման հաշվետվություն

			<p>որոնք զուգորդվեցին գործնական աշխատանքներով, որպեսզի մասնակիցները տեղում հնարավորություն ունենային կիրառել սովորած տեսական նյութը:</p> <p>Դասընթացին մասնակցում էին 6-րդ և 7-րդ դասարանի 20 աշակերտներ: Ծրագիրը կազմված էր 8 դասընթացից: Ծրագրի ընթացքում պատանիները ծրագրի աշխատանքային թիմի հետ միասին մասնակցեցին համաքաղաքային ծառատունկին:</p> <p>Մայիսի 15-ին Թումանյանի այգում տեղի ունեցավ «Էկո Մերունդ» պատանեկան ծրագրի վերջին փուլը՝ Էկո ցուցահանդեսը, որտեղ ներկայացվեցին Երևան քաղաքի հինգ դպրոցներում ծրագրին մասնակցած պատանիների աշխատանքները:</p> <p>Ծրագրի ավարտին մասնակիցները ստացան մասնակցության վկայականներ:</p> <p>«Հայոց հարցը հայ երիտասարդների դիտանկյունից» ծրագիր, 2-րդ փուլ</p> <p>«Ակտիվ երիտասարդ քաղաքացիների նախաձեռնություն» ՀԿ-ն փետրվարի 28-ից մայիսի 10-ը Երևանի քաղաքապետին կից երիտասարդության հարցերի խորհրդի աջակցությամբ իրականացրեց «Հայոց հարցը հայ երիտասարդների դիտանկյունից» ծրագրի 2-րդ փուլը:</p> <p>Ծրագրով իրականացվել են հանդիպում-քննարկումներ, կինոդիտումներ և լրացուցիչ նախաձեռնություններ: Մարտի 3-ին, կայացավ առաջին հանդիպում-քննարկումը, որի խորագիրն էր «Հայոց հարց» եզրի մեկնաբանում, սահմանում, լուծման տեսլականը: Ծրագիրն իրականացվեց մինչև հունիս</p>		
--	--	--	---	--	--

Երևանի զարգացման 2015 թվականի ծրագրի իրականացման հաշվետվություն

			<p>ամիս : Ծրագրի մասնակից 17 երիտասարդներն հյուրընկալեցին ԵՊՀ Հայագիտական հետազոտությունների ինստիտուտի ղեկավար Մհեր Հովհաննիսյանին, ով համապարփակ մեկնաբանեց «Հայոց հարց» եզրը, ներկայացրեց նախապատմությունը, տվեց երևույթի գիտահանրամատչելի սահմանումը, ինչպես նաև խոսեց լուծման հնարավոր տեսլականներից ու այդ գործում երիտասարդության կողմից ակնկալվող ջանքերից: Ծրագրի ընթացքում իրականացվել են ֆիլմի դիտում-քննարկումներ, որոնց ընթացքում հիմնականում ներկայացվել են օտարազգի ռեժիսորների աշխատանքերը, որոնք պատմում են Հայոց Ցեղասպանության մասին:</p> <p>Մայիսի 10-ին կայացավ «Հայոց հարցը հայ երիտասարդների դիտանկյունից» ծրագրի 2-րդ փուլի վերջին հանդիպումը, որը նվիրված էր Վանի հերոսամարտի 100 ամյակին:</p> <p>Հայ կամավորների բանկ 2013 թվականի օգոստոսի 1-ից մեկնարկել է «Հայ կամավորների բանկ» ծրագիրը www.volunteers.am, որի նպատակն է ստեղծել կամավորների կոորդինացման բազա և, կապող օղակ հանդիսանալով երիտասարդների և գործատուի միջև, աջակցել երիտասարդներին՝ կամավորական աշխատանքի միջոցով ստանալ մասնագիտական (ինչպես նաև ադմինիստրատիվ) աշխատանքային փորձ: Արդեն հաջողությամբ իրականացվել են ծրագրի 3 փուլեր, որին մասնակցել է մոտ 200 երիտասարդ: Համագործակցություն է ձևավորվել շուրջ 70</p>		
--	--	--	---	--	--

Երևանի զարգացման 2015 թվականի ծրագրի իրականացման հաշվետվություն

			<p>պետական և ոչ պետական կառույցների հետ:</p> <p>Երևանի քաղաքապետին կից երիտասարդության հարցերի խորհրդի և «Տլեշմոբ դիվիզիա» ՀԳ-ի հետ համատեղ իրականացվել է «Գրքի բանկ» ծրագիրը: Մարտի 27-ին Խնկո-Ապր անվան ազգային մանկական գրադարանի դիմաց՝ «Ընթերցողը» հուշարձանի հարևանությամբ մեկնարկեց «ԳՐՔԻ ԲԱՆԿ՝ նվիրատվության տաղավար» ծրագիրը: «Գրքի բանկ» ծրագրի շրջանակներում իրականացվեցին գրքերի նվիրատվության բազմաթիվ նախագծեր: «Գրքի բանկում» հավաքված ողջ գրականությունը՝ 12000-ից ավելի կտոր, փոխանցվեց ՀՀ գործառնական, համայնքային գրադարաններին, մանկական խնամքի կենտրոններին և այլ հաստատություններին:</p>		
Երեխաների իրավունքների պաշտպանության ոլորտ					
Հ/հ	Ծրագրի կամ միջոցառման անվանումը	Նախատեսված աշխատանքների նկարագիր	Աշխատանքների իրականացման գործընթաց	Իրականացնող կազմակերպություն, կատարման ժամկետ	Նշումներ
1	2	3	4	5	6
1.	Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների հայտնաբերման, հաշվառման, կարիքների գնահատման, վերականգնողական ծրագրերի կազմման և ՀՀ օրենսդրությամբ սահմանված արտոնությունների	Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների հայտնաբերում, հաշվառում, կարիքների գնահատում, վերականգնողական ծրագրերի կազմում և ՀՀ օրենսդրությամբ	Հայտնաբերվել և հաշվառման են վերցվել առանց ծնողական խնամքի մնացած 157 երեխա, ինչպես նաև առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվին պատկանող 12 անձ, իրականացվել է կարիքների գնահատում և ուղղորդում համապատասխան կառույցներ՝ մասնագիտական աջակցություն ստանալու նպատակով: ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի	Հունվար-դեկտեմբեր	

Երևանի զարգացման 2015 թվականի ծրագրի իրականացման հաշվետվություն

	տրամադրման ապահովման աշխատանքների իրականացում	սահմանված արտոնությունների տրամադրման ապահովում:	նախարարությունից ստացված առանց ծնողական խնամքի մնացած երեխաների կենտրոնացված հաշվառման մասին տեղեկանքների հիման վրա 43 երեխաների վերաբերյալ առանց ծնողական խնամքի մնացած շտեմարանում կատարվել են համապատասխան փոփոխություններ:		
2.	Հատուկ դպրոցների երեխաների խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատությունների և մանկատների հնարավոր բեռնաթափման ուղղությամբ աշխատանքների կատարում	Հատուկ դպրոցների երեխաների խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատությունների և մանկատների հնարավոր բեռնաթափում	Երեխաների խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատություններից և մանկատներից ծնողների դիմումների հիման վրա դուրս է գրվել 38 երեխա:	Հունվար-դեկտեմբեր	
3.	Կյանքի դժվարին իրավիճակներում գտնվող երեխաների տեղավորում խնամքի և պաշտպանության հաստատություններում		Վարչական շրջաններից ստացված գրությունների, ծնողների դիմումների, ներկայացված փաստաթղթերի, ինչպես նաև կենսապայմանների ուսումնասիրման արդյունքների հիման վրա 99 երեխա տեղավորվել է մանկատուն, 13 երեխա՝ խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատություն, 3 երեխա «Զատիկ» խնամքի հաստատություն:	Հունվար-դեկտեմբեր	
4.	Կյանքի դժվարին իրավիճակներում գտնվող երեխաների տվյալների մուտքագրում		Երեխաների տվյալների շտեմարանում մուտքագրվել է կյանքի դժվարին իրավիճակներում գտնվող 215 երեխայի տվյալ: ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունից ստացված որդեգրման ենթակա 41 երեխաների և որդեգրել ցանկացող 38 անձանց կենտրոնացված հաշվառման վերցնելու մասին տեղեկանքների հիման վրա կյանքի դժվարին իրավիճակներում գտնվող շտեմարանում կատարվել են համապատասխան փոփոխություններ:	Հունվար-դեկտեմբեր	

Երևանի զարգացման 2015 թվականի ծրագրի իրականացման հաշվետվություն

5.	Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների առանձնահատուկ պայմանների կարիքի վկայագրում		Հիմք ընդունելով ծնողի դիմումը և Երևանի բժշկահոգեբանամանկավարժական գնահատման կենտրոնի եզրակացությունը՝ վկայագրվել է 1404 երեխայի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքը:	Հունվար-դեկտեմբեր	
6.	Խնամատարության ինստիտուտի կայացման աջակցություն	Մանկատների բեռնաթափման նպատակով խնամատարության ինստիտուտի կայացմանն աջակցություն:	3 դիմում է ստացվել խնամատար ծնող դառնալու հնարավորության մասին եզրակացություն ստանալու համար, տրվել են դրական եզրակացություններ: Խնամատար ծնողներից մեկի դիմումի հիման վրա լուծվել է Խնամատար ծնողի և քաղաքապետի միջև կնքված հ.1 պայմանագիրը: 4 խնամատար ծնող դիմել են «ՀՀ պետական բյուջեով նախատեսված միջոցները խնամատար ծնողին տրամադրելու մասին» պայմանագրի ժամկետը երկարացնելու համար: Պատրաստվել են պայմանագրերի նախագծերը և ներկայացվել են աշխատակազմի իրավաբանական վարչության հաստատմանը: Խնամատար ծնողներից մեկի դիմումի հիման վրա լուծվել է Խնամատար ծնողի և քաղաքապետի միջև կնքված հ.1 պայմանագիրը:	Հունվար-դեկտեմբեր	
7.	Երեխա որդեգրել ցանկացող քաղաքացիների որդեգրման դիմումների ուսումնասիրում, եզրակացությունների տրամադրում	Մանկատների բեռնաթափման, երեխայի ընտանիքում ապրելու իրավունքի իրացման նպատակով որդեգրման հնարավորության մասին եզրակացության տրամադրման գործընթացի	Հիմք ընդունելով քաղաքացիների կողմից ներկայացված փաստաթղթերը և կենսապայմանների ուսումնասիրության ակտերը՝ երեխա որդեգրելու հնարավորության մասին տրամադրվել է 38 դրական և 1 բացասական եզրակացություն: 8 օտարերկրյա քաղաքացու տրվել է խորհրդատվություն՝ երեխա որդեգրելու հնարավորության մասին եզրակացություն ստանալու	Հունվար-դեկտեմբեր	

Երևանի զարգացման 2015 թվականի ծրագրի իրականացման հաշվետվություն

		իրականացում:	վերաբերյալ և ուղղորդվել ՀՀ արդարադատության նախարարություն:		
7.1			Հիմք ընդունելով վարչական շրջաններից, բուժհաստատություններից, քաղաքացիներից ստացված գրություններն ու դիմումները, ինչպես նաև ներկայացված փաստաթղթերը՝ հաշվառման է վերցվել որդեգրման ենթակա 75 երեխա: 1 երեխայի որպես որդեգրման ենթակա հաշվառելու համար իրավաբանական պարզաբանում ստանալու նպատակով գրությամբ դիմել ենք ՀՀ արդարադատության նախարարությանը: Դատարանի վճիռների հիման վրա հաշվառումից հանվել է որդեգրման ենթակա 22 երեխա:	Հունվար-դեկտեմբեր	
7.2			Ներկայացված փաստաթղթերի, որդեգրման վերաբերյալ դրական եզրակացությունների հիման վրա հաշվառման է վերցվել երեխա որդեգրել ցանկացող 55 անձ: 7 քաղաքացու դիմումի հիման վրա կատարվել է հարցում ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն՝ որդեգրման նպատակով երեխայի ընտրության վերաբերյալ: Որպես որդեգրել ցանկացող անձ հաշվառման վերցված 47 անձանց տրվել է որդեգրման ենթակա երեխաների ցանկ:	Հունվար-դեկտեմբեր	
8.	Վարչական շրջանների խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների, բուժհաստատությունների և շահագրգիռ այլ կառույցների	Վարչական շրջանների խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների, բուժհաստատությունների և շահագրգիռ այլ	Մանկալսության դեպքերի կանխամանն ուղղված իրականացվել են այցելություններ ծննդատներ, Երևանի «Մանկան տուն» ՊՈԱԿ և «Միսիոներների բարեգործական կազմակերպություն» հայկական մասնաճյուղ: Ծնողների հետ իրականացված բացատրական աշխատանքների արդյունքում կանխվել	Հունվար-դեկտեմբեր	

Երևանի զարգացման 2015 թվականի ծրագրի իրականացման հաշվետվություն

	հետ համատեղ միջազատումների իրականացում՝ մանկալքության դեպքերը կանխելու համար	կառույցների հետ համատեղ միջազատումների իրականացում՝ մանկալքության դեպքերը կանխելու համար:	է 18 երեխայի տեղավորումը մանկատուն:		
9.	Վարչական շրջանների խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների աշխատանքների արդյունավետության բարձրացման նպատակով, ըստ անհրաժեշտության, մեթոդական և գործնական օգնության տրամադրում, մասնակցություն նիստերին	Վարչական շրջանների խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների աշխատանքների արդյունավետության բարձրացման նպատակով, ըստ անհրաժեշտության, մեթոդական և գործնական օգնության տրամադրում:	Երեխաների հետ կապված հատուկ դեպքերի առնչությամբ բաժինը մասնակցել է խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների 33 նիստի, տրամադրել է մեթոդական օգնություն:	տարեկան	
10.	Միջազգային և տեղական հասարակական կառույցների և կազմակերպությունների հետ համատեղ ընտանիքի, կանանց և երեխաների հիմնախնդիրների լուծմանն ուղղված ծրագրերի մշակում, համատեղ միջոցառումների իրականացում	Միջազգային և տեղական հասարակական կառույցների և կազմակերպությունների հետ համատեղ ընտանիքի, կանանց և երեխաների հիմնախնդիրների լուծմանն ուղղված ծրագրերի մշակում, համատեղ միջոցառումների իրականացում:	Մասնակցություն «Հույս և օգնություն» ՀԿ-ի կողմից իրականացված «Երեխաների նկատմամբ բռնության դրսևորումները ՀՀ-ում» հետազոտության շնորհանդեսին, ինչպես նաև «Երեխաների նկատմամբ բռնության կանխարգելումը և աջակցության կազմակերպումը» թեմայով սեմինարին: Մասնակցություն ՄԱԿ-ի Փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի հայաստանյան գրասենյակի կազմակերպած «Հրատապ օգնությունից մինչև կայուն լուծումներ» թեմայով սեմինարին: Համագործակցություն է իրականացվել «Սոցիալական արդարություն» ՀԿ-ի կողմից իրականացվող «Ընտանեկան բռնության հարցերով ոստիկանության կարողությունների զարգացում» ծրագրի		

Երևանի զարգացման 2015 թվականի ծրագրի իրականացման հաշվետվություն

			<p>շրջանակներում:</p> <p>Մասնակցություն ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամի կողմից կազմակերպված «Խոցելի խմբի երեխաների սոցիալական ներառում. Երեխայի խնամքի համակարգի բարեփոխման շրջանակներում այլընտրանքային խնամքի, ընտանիքի աջակցության և ներառական կրթության ծառայությունների ընդլայնման» ծրագրի շրջանակներում խնամատարության մասին աշխատաժողովին, «Սոցիալական արդարություն» ՀԿ-ի «Ընտանեկան բռնության հարցերով ուստիկանության կարողությունների զարգացում» ծրագրի հերթական քննարկմանը, ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամի «ՀՀ մարզերում սոցիալական ծառայությունների համագործակցության ինստիտուտի տնօրինմանն ուղղված» ծրագրի կլոր սեղան-քննարկմանը, ինչպես նաև «ՀՀ ընտանեկան օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի քննարկմանը:</p> <p>ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի հետ Կյանքի դժվարին իրավիճակում գտնվող 1 երեխայի հետագա տեղավորման հարցի քննարկում, ինչպես նաև Երեխաների պաշտպանության միջազգային օրվան նվիրված համատեղ միջոցառման կազմակերպչական աշխատանքների քննարկում:</p> <p>Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների և նրանց ընտանիքների խնդիրների հետ կապված համագործակցություն է հաստատվել Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի հետ:</p> <p>«Հասարակություն առանց բռնության» ՀԿ-ի կողմից</p>		
--	--	--	---	--	--

Երևանի զարգացման 2015 թվականի ծրագրի իրականացման հաշվետվություն

			<p>իրականացվող «Ընդդեմ գենդերային բռնության 2011-2015թթ.-ի ռազմավարական ծրագրի» հանրակրթությանն առնչվող ոլորտի հետ կապված տեղեկատվության տրամադրման հարցում առաջարկվել է բաժնի աջակցությունը:</p> <p>«Աստղիկներ» հաշմանդամ երեխաների ծնողների ՀԿ-ների ցանցի հետ՝ հատուկ կարիքներով, հաշմանդամություն ունեցող երեխաներին Հայաստանի մշակութային կոթողներին ծանոթացնելու նպատակով էքսկուրսիայի կազմակերպչական աշխատանքների իրականացում:</p> <p>Համագործակցություն «Մեյվ դը չիլդրեն» միջազգային կազմակերպության հետ, ապահովվել է մասնակցությունը «Խոցելի խմբի երեխաների սոցիալական ներառում. Երեխայի խնամքի համակարգի բարեփոխման շրջանակներում այլընտրանքային խնամքի, ընտանիքի աջակցության և ներառական կրթության ծառայությունների ընդլայնում» ծրագրի շրջանակներում իրականացված ՀՀ ընտանեկան օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենքի նախագծի շուրջ հրավիրված աշխատաժողովին:</p> <p>Համագործակցություն «Կանանց իրավունքների կենտրոն» հասարակական կազմակերպության հետ՝ «Բռնության կանխարգելում» թեմայով սեմինարի շրջանակներում:</p> <p>Կյանքի դժվարին իրավիճակում գտնվող երեխաների և նրանց ընտանիքների խնդիրների հետ կապված համագործակցել է «Օգնենք կարիքավոր ընտանիքներին» հասարակական կազմակերպության,</p>		
--	--	--	--	--	--

Երևանի զարգացման 2015 թվականի ծրագրի իրականացման հաշվետվություն

			<p>ինչպես նաև «Զատիկ» երեխաների աջակցության կենտրոն ՊՈԱԿ-ի հետ:</p> <p>Համագործակցություն «ՀՕՖ-ի երեխաների աջակցության կենտրոնի, ինչպես նաև «Մոցիալական արդարություն» ՀԿ-ի հետ՝ «Ընտանեկան բռնության կանխարգելում» ծրագրի շրջանակներում:</p> <p>Համագործակցություն «ՍՕՍ մանկական գյուղեր» միջազգային կազմակերպության հետ, Երևանի քաղաքապետարանի հետ համատեղ կնքվելիք փոխըմբռնման հուշագրի դրույթների քննարկմանը:</p> <p>Համագործակցություն «Հույս և օգնություն» հասարակական կազմակերպության հետ:</p> <p>Մասնակցություն ՀՀ ոստիկանության միջգերատեսչական աշխատանքային խմբի քննարկմանը, որտեղ ներկայացվել են կատարված աշխատանքները:</p> <p>Մասնակցություն ՀՀ աշխատանքի սոցիալական հարցերի նախարարության կողմից կազմակերպված երեխաների իրավունքների պաշտպանության ազգային հանձնաձողովի նիստին, ներկայացվել են առաջարկություններ՝ իրավական ակտերում համապատասխան փոփոխություններ կարատելու վերաբերյալ:</p>		
11.	Անչափահասների կողմից իրավախախտումների, մուրացիկության և թափառաշրջիկության կանխարգելման, հիմնախնդիրների առաջացման պատճառների	Անչափահասների կողմից իրավախախտումների, մուրացիկության և թափառաշրջիկության կանխարգելման, հիմնախնդիրների առաջացման պատճառների	ՀՀ ոստիկանությունից ստացված փաստաթղթերի և ծնողի դիմումի հիման վրա 13 երեխայի տրվել է «Կյանքի դժվարին իրավիճակում գտնվող երեխաների տեղեկատվական համակարգում» հաշվառված լինելու մասին տեղեկանք, որի հիման վրա վերջինս տեղավորվել է Հանրապետական հ. 1 հատուկ կրթահամալիր:	Հունվար-դեկտեմբեր	

Երևանի զարգացման 2015 թվականի ծրագրի իրականացման հաշվետվություն

	ուսումնասիրման և համապատասխան միջոցառումների ձեռնարկման նպատակով ուստիկանության անչափահասների գործերով բաժանմունքների հետ համագործություն՝ համատեղ նիստերի, շրջայցների կազմակերպում, հասցեական օգնության տրամադրում, երեխաների կողմնորոշում և տեղավորում	ուսումնասիրման և համապատասխան միջոցառումների ձեռնարկման նպատակով ուստիկանության անչափահասների գործերով բաժանմունքների հետ համագործություն՝ համատեղ նիստերի, շրջայցների կազմակերպում, հասցեական օգնության տրամադրում:			
12.	Կրթությունից դուրս մնացած երեխաների հայտնաբերման և նրանց կրթական համակարգում ընդգրկելու ուղղությամբ աշխատանքներ	Շահագրգիռ կառույցների հետ համատեղ կրթությունից դուրս մնացած երեխաներին կրթական համակարգում ընդգրկում:	Հայտնաբերվել է կրթությունից դուրս մնացած 29 երեխա, վարչական շրջանի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների և ուստիկանության հետ համատեղ հետևողական աշխատանքներ են տարվել երեխաներին կրթական համակարգում ընդգրկելու ուղղությամբ:	Հունվար-դեկտեմբեր	
13.	Շահագրգիռ կառույցների հետ համատեղ ծննդյան վկայական չունեցող երեխաների վկայականների ձեռքբերման գործընթացին աջակցում	Շահագրգիռ կառույցների հետ համատեղ ծննդյան վկայական չունեցող երեխաների վկայականների ձեռքբերման գործընթացին աջակցում:	Աշխատանքներ են իրականացվել 4 երեխայի ծննդյան վկայական ձեռքբերելու ուղղությամբ:	Հունվար-դեկտեմբեր	
14.	Ընտանիքի, կանանց և երեխաների ոլորտում առկա խնդիրներին վերաբերվող սեմինարների, կլոր սեղանների, գործնական	Ընտանիքի, կանանց և երեխաների ոլորտում առկա խնդիրներին վերաբերվող սեմինարների, կլոր սեղանների,	Առանձին դեպքերի առնչությամբ քննարկումներ են կազմակերպվել վարչական շրջանների խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների, հատուկ դպրոցների, մանկատների, երեխաների խնամքի և	Հունվար-դեկտեմբեր	

Երևանի զարգացման 2015 թվականի ծրագրի իրականացման հաշվետվություն

	քննարկումների կազմակերպում	գործնական քննարկումների կազմակերպում:	պաշտպանության գիշերօթիկ հաստատությունների ներկայացուցիչների հետ:		
15.	Վարչական շրջանների գենդերային հարցերով զբաղվող աշխատանքային խմբերի հետ գենդերային խնդիրների շուրջ եռամսյակային քննարկումների կազմակերպում	Վարչական շրջանների գենդերային հարցերով զբաղվող աշխատանքային խմբերի հետ գենդերային խնդիրների շուրջ եռամսյակային քննարկումներ:	Քննարկումներ են իրականացվել Կանանց և տղամարդկանց իրավահավասարության քաղաքականության և սեռի հատկանիշով բռնության 2015թ. տարեկան ծրագրերի միջոցառումների կատարման վերաբերյալ: ՀՀ կառավարության 2011թ. մայիսի 20-ի հ. 19 և հունիսի 17-ի հ.23 արձանագրային որոշումների պահանջներին համաձայն, ինչպես նաև ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը ներկայացված Երևան քաղաքի 2015թ. գենդերային ծրագրերով ամրագրված միջոցառումների կատարման նպատակով՝ Երևանի 12 վարչական շրջանների գենդերային հարցերով աշխատանքային խմբերի մասնակցությամբ կազմակերպվել են սեմինարներ: Ապահովվել է մասնակցությունն «Աղետների ռիսկի նվազեցման գործընթացում գենդերային հարցերի ուղղությամբ ջանքերի համատեղում և համակարգում» թեմայով սեմինարին: Ապրիլի 12-ին ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունում ապահովվել է մասնակցությունը Ընտանեկան բռնության, սեռով պայմանավորված բռնությունների կանխարգելման թեմայով քննարկմանը: Ապահովվել է մասնակցությունը Թուֆենկյան բարեգործական հիմնադրամում կազմակերպված «Կանանց նկատմամբ բռնության կանխարգելման» թեմայով քննարկմանը:	Հունվար-դեկտեմբեր	
16.	Երևան քաղաքում կանանց և	ՀՀ կառավարության 2011թ.	Քննարկումներ են իրականացվել Կանանց և	Հունվար-	

Երևանի զարգացման 2015 թվականի ծրագրի իրականացման հաշվետվություն

	տղամարդկանց իրավահավասարության քաղաքականության և սեռի հատկանիշով բռնության ծրագրերի իրականացման ապահովում	մայիսի 20-ի և հունիսի 17-ի նիստերի համապատասխանաբար հ.19 և հ.23 արձանագրային որոշումների հիման վրա մշակված գենդերային քաղաքականության, ինչպես նաև ընդդեմ գենդերային բռնության ծրագրերի իրականացման ապահովում Երևան քաղաքում:	տղամարդկանց իրավահավասարության քաղաքականության և սեռի հատկանիշով բռնության 2015թ. տարեկան ծրագրերի միջոցառումների կատարման վերաբերյալ: Ապրիլի 10-ին ապահովվել է մասնակցությունը ՀՀ վարչապետի 2015թ. մարտի 9-ի հ. 178 որոշմամբ ստեղծված Կանանց և տղամարդկանց հավասարության հիմնահարցերով խորհրդի անդրանիկ նիստին: Ապահովվել է մասնակցություն ՀՀ կառավարությունում ՀՀ-ում կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման հարցերով զբաղվող աշխատանքային խմբի հանդիպմանը:	դեկտեմբեր	
17.	Կյանքի դժվարին իրավիճակներում գտնվող երեխաների ընտանիքներին աջակցություն	Կյանքի դժվարին իրավիճակներում գտնվող երեխաների ընտանիքներին աջակցություն:	Կյանքի դժվարին իրավիճակում գտնվող 49 ընտանիքի տրամադրվել է սոցիալական աջակցություն՝ հագուստ, կոշիկ, 163 ընտանիքի տրամադրվել է իրավաբանական խորհրդատվություն: Կազմակերպվել է կյանքի դժվարին իրավիճակներում գտնվող շուրջ 400 երեխաների այցելություն «Շապիտո» կրկես:	Հունվար-դեկտեմբեր	
18.	Այցելություն քրեակատարողական հիմնարկներ՝ իրավախախտ երեխաների և կանանց խնդիրների վերհանում և խորհրդատվության տրամադրում	Այցելություն քրեակատարողական հիմնարկներ՝ իրավախախտ երեխաների և կանանց խնդիրների վերհանում և խորհրդատվության տրամադրում:	Կատարվում է ըստ անհրաժեշտության:	Հունվար-դեկտեմբեր	
19.	Երևան քաղաքի հատուկ դպրոցներ այցելություններ՝	Այցելություն Երևան քաղաքի հատուկ դպրոցներ՝ երեխաների իրավունքների	Այցելություն է իրականացվել Երևանի քաղաքի հ.2, հ.6, հ.14 հատուկ դպրոցներ, ինչպես նաև խոսքի ծանր խանգարումներ ունեցող երեխաների հ. 8 հատուկ	Հունվար-դեկտեմբեր	

Երևանի զարգացման 2015 թվականի ծրագրի իրականացման հաշվետվություն

	Երեխաների իրավունքների և շահերի պաշտպանության նպատակով	և շահերի պաշտպանության նպատակով:	կրթահամալիր, իրականացվել են քննարկումներ առանձին դեպքերի առնչությամբ: Այցելություն է իրականացվել Երևանի քաղաքի հ.2 հատուկ դպրոց, իրականացվել են քննարկումներ «Հայ ընտանիքն այսօր» թեմայով սեմինարի ժամանակ «Մշո հարսանիք» բեմականացման կազմակերպչական հարցերի առնչությամբ:		
22.	Թրաֆիքինգի վերաբերյալ դեպքերի քննարկում և ուղղորդում	Թրաֆիքինգի վերաբերյալ դեպքերի քննարկում և ուղղորդում:	Կանանց և երեխաների առուվաճառքի գոհերի վերաբերյալ տեղեկատվություն չի ստացվել:	Հունվար-դեկտեմբեր	
23.	Կանանց միամսյակի առիթով միջոցառման անցկացում	Կանանց միամսյակի առիթով միջոցառման անցկացում:	Մարտի 12 և 13-ին Երևանի հ.2 և հ.6 հատուկ դպրոցներում, ինչպես նաև խոսքի ծանր խանգարումներ ունեցող երեխաների հ. 8 հատուկ կրթահամալիրում իրականացվել է միջոցառում, կին ուսուցիչներին և երեխաների մայրերին տրամադրվել են նվերներ:	մարտ	
3.4	Մուտքերի վերանորոգում	2015թ. նախատեսվում է 42 շքամուտքերի /մինչև 5-րդ հարկ/ վերանորոգում:	<p>ԵՔ-ԲԸ-ԱՇՁԲ-15/22</p> <p>Իրականացվել է 5163,5քմ. վերանորոգման աշխատանքներ թվով 13 մուտքերում /Աթոյան փող. անցուղի հ. 3 և 15 շենքերի 1-ին և 2-րդ մուտքերում, Ավանետվի փող. հ. 8/2 շ., Ս. Մեծի պող. հ. 65 շ., Նոր Արեշի 15-րդ փող. հ. 5 շ., Էրեբունու փող. հ. 30 շ., Արցախի փող. հ. 8 շ./:</p> <p>Համատիրությունների միջոցներով կատարվել է թվով 34 մուտքերի վերանորոգման աշխատանքներ հետևյալ շենքերում՝ Ռոստոմյան փող. հ. 19 և 25, Էրեբունի փող. հ. 1, Արցախի պող. հ. 1, 8բ, 12, 14^ա, 23, Էրեբունի փող. հ. 1, 23, 27, 29, Նոր Արեշի 5-րդ փող. հ. 45^ա, Ավանետվի փող. հ. 8/2, Գաջեգործների փող. 74/1, Նոր Արեշի 35-րդ փող. հ. 127/3, Խաղաղ Դոնի փող. հ. 1/2, 5և Վարդաշենի 2-րդ փող. հ. 2:</p> <p>Համատիրությունների կողմից տեղադրել է թվով 23 մուտքի դուռ:</p>	«Բիդեք» ՍՊԸ 17.03.2015թ.-30.09.2015թ.	42 շքամուտքերի /մինչև 5-րդ հարկ/ վերանորոգումը և դրաների տեղադրման աշխատանքները կիրականացվեն համատիրությունների միջոցով:
4	Կրթություն, մշակույթ և սպորտ				
4.1	Կրթություն	Նախատեսվում է հիմնանորոգել հ. 71 մանկապարտեզը: 2015թ. նախատեսվում է 4	Վարչական շրջանի բոլոր մանկապարտեզներում պարբերաբար կատարվել են շրջայցեր՝ սննդի որակի վերահսկողության նպատակով: Խախտումներ չեն արձանագրվել:	«Բիդեք» ՍՊԸ Օգոստոս 2015թ.	

Երևանի զարգացման 2015 թվականի ծրագրի իրականացման հաշվետվություն

		մանկապարտեզների տանիքի վերանորոգում:	Վերանորոգվել է հ. 71 մանկապարտեզի տանիքը, խոհանոցը, սանհանգույցները, միջանցքը, կոյուղին, փոխվել են ջրագծերը, դռներն ու պատուհանները: Կատարվել են հ.հ 70 և 74 մանկապարտեզների տանիքների վերանորոգման աշխատանքներ:		
4.2	Մարզական միջոցառումներ	2015թ. կիրականացվեն մշակութային, սպորտային միջոցառումներ՝ նվիրված տոներին և հիշատակի օրերին:	Իրականացվել է հետրևյալ սպորտային միջոցառումները՝ «Առողջ սերունդ, պաշտպանված հայրենիք» համաքաղաքային բակային փառատոն, ՀՀ «Ազգային ժողովի գավաթի» խաղարկություն 1-6-րդ դասարանների միջև, Երեխաների պաշտպանության միջազգային օրվան նվիրված սպորտլանդիա, ՀՀ անկախության 24-րդ տարեդարձին նվիրված մարզական խաղեր, նախագորակոչային և գորակոչային ռազմամարզական խաղեր:		
4.3	Մշակութային միջոցառումներ	2015թ. կիրականացվեն մշակութային միջոցառումներ՝ նվիրված տոներին և հիշատակի օրերին: Բոլոր կրթամշակութային հաստատություններում կկազմակերպվեն միջոցառումներ՝ նվիրված Հայոց ցեղասպանության 100-ամյակին:	1. Կանանց միջազգայի օր: Կազմակերպվել է համերգային ծրագիր, մասնակցությամբ հրավիրված հանդիսավարի, Դո-ռե-մի համույթի: Հուշանվերներ և ծաղիկներ բոլոր կրթամշակութային հաստատությունների 2000 աշխատակիցների, նվերներ և ծաղկեփնջեր վարչական շրջանի ղեկավարի անունից: Մտանիսլավսկու անվան ռուսական դրամատիկական թատրոնում՝ ներկայացման հրավերք՝ հաստատությունների տնօրեններին: 2. Հաղթանակի տոն: Մայիսի 8-ին վարչական շրջանը մեծ շուքով նշեց Հաղթանակի և խաղաղության տոնը: Միջոցառմանը մասնակցում էին նաև վարչական շրջանի մշակութային ու երաժշտական հաստատությունների շնորհալի սաները, Դո Ռե Մի համույթի երգիչ երգչուհիները: Էրեբունու Մանկական զբոսայգում համախմբվել էին Էրեբունցի վետերաններ, երիտասարդներ, անցորդներ, ովքեր եկել էին վայելելու գեղեցիկ	«Էլիտա ԷՍՎԵ» ՍՊԸ 08.05-09.05.2015թ.	

Երևանի զարգացման 2015 թվականի ծրագրի իրականացման հաշվետվություն

			<p>տոնը: Էրեբունի վարչական շրջանի բնակիչ պատերազմի վետերանների համար կազմակերպվել էր դաշտային խոհանոց՝ հյուրասիրելով այն տարիները հիշեցնող կերակուրներով և խմիչքներով: Էրեբունի վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմը, դպրոցականների, ուսուցիչների, երիտասարդների, Հայրենական Մեծ պատերազմի և աշխատանքի վետերանների հետ այցելեց վարչական շրջանում գտնվող Եղբայրական գերեզման, հարգանքի տուրք մատուցելու, ծաղկեպսակ ու ծաղիկներ դրեց զոհվածների շիրիմներին, ինչպես նաև կատարվեց այցելություն Հաղթանակի զբոսայգի՝ ծաղկադրում պատերազմում զոհվածների հիշատակին: Էրեբունի վարչական շրջանի ղեկավարը և վարչական շրջանի գինվորական կոմիսարը վարչական շրջանի բնակիչ, երկրորդ աշխարհամարտի վետերաններին հանձնեցին կառավարական պարգևներ, նվերներ՝ հաղթանակի 70-ամյակի մեդալներ:</p> <p>3.Առաջին հանրապետության անկախության օր: Վարչական շրջանի հ.3 Մանկապատանեկան Ստեղծագործական Կենտրոնում կազմակերպվեց մեծ համերգային ծրագիր՝ երգիչների, ինչպես նաև Էրեբունի վարչական շրջանի Տ. Չուխաջյանի անվան երաժշտական դպրոցի և հ.3 Մանկապատանեկան Ստեղծագործական Կենտրոնիսաների, Դո Ռե Մի համույթի մասնակցությամբ:</p> <p>4.Երեխաների պաշտպանության միջազգային օր: Երեխաների իրավունքների պաշտպանության միջազգային օրվա առթիվ, Էրեբունի վարչական շրջանի «Մանկական» զբոսայգում կազմակերպվել էր մանկական միջոցառում, որտեղ տարաբնույթ համարներով հանդես եկան մշակութային</p>	<p>«Էլիտա ԷՄՎԵ» ՍՊԸ 27.05-29.05.2015թ.</p> <p>«Էլիտա ԷՄՎԵ» ՍՊԸ 30.05-02.06.2015թ.</p>	
--	--	--	---	---	--

Երևանի զարգացման 2015 թվականի ծրագրի իրականացման հաշվետվություն

		<p>հաստատությունների շնորհալի սաները՝ կատարելով մանկական, ուրախ ժամանցային երգեր, պարեր: Փոքրիկներին զվարճացրեցին հեքիաթների հայտնի հերոսները: Իրենց մասնակցությամբ փոկրիկների տոնական օրը գեղեցկացրեցին նաև Դո Ռե Մի համույթի սաներն ու այլ տաղանդավոր երեխաներ: Օրվա ընթացքում երեխաներին բաժանվեց պաղպաղակ:</p> <p>5. ՀՀ Սահմանադրության օրվան նվիրված միջոցառում: ՀՀ Սահմանադրության նվիրված միջոցառում «Մանկական» զբոսայգում իրականացավ համերգային ծրագիր՝ երգիչ երգչուհիների մասնակցությամբ:</p> <p>6. Վարդավառին նվիրված միջոցառում: Տոնական, գեղարվեստական-մասսայական թատերականացված շրջայց-միջոցառման կազմակերպում՝ վարչական շրջանի թաղամասերում:</p> <p>7. Գիտելիքի օրվան նվիրված միջոցառում: Գիտելիքի օրվա առթիվ վարչական շրջանի ղեկավարի կողմից կազմակերպվեց միջոցառում, որի ընթացքում կրթամշակութային հաստատությունների ղեկավարներին և աշխատակիցներին նվիրվեցին ծաղկեփնջեր:</p> <p>8. Անկախության օրվան նվիրված միջոցառում Համերգային ծրագրին մասնակցեցին սիրված երգիչներ, որոնք կատարեցին երգեր՝ նվիրված Հայաստանին ու հայրենիքին:</p> <p>9. Ուսուցչի տոնին նվիրված միջոցառում Ուսուցչի տոնի առիթով, բոլոր կրթամշակութային հաստատությունների աշխատակիցներ հրավիրվել են թատրոն՝ դիտելու գեղեցիկ ներկայացում:</p> <p>10. «Էրեբունի-Երևան» տոնակատարություն: Էրեբունի – Երևան տոնակատարությունը Էրեբունի վարչական շրջանում անցկացվեց մեկ օրվա</p>	<p>«Էլիտա ԷՄՎԵ» ՍՊԸ 31.08-01.09.2015թ.</p> <p>«Էլիտա ԷՄՎԵ» ՍՊԸ 20.09-21.09.2015թ.</p> <p>«Էլիտա ԷՄՎԵ» ՍՊԸ 03.10-05.10.2015թ.</p> <p>«Էլիտա ԷՄՎԵ» ՍՊԸ 10.10-12.10.2015թ.</p>	
--	--	--	---	--

Երևանի զարգացման 2015 թվականի ծրագրի իրականացման հաշվետվություն

			<p>ընթացքում 2 հատվածով: Համերգային ծրագրի ժամանակ հնչեցին հին ու նոր երգեր՝ նվիրված Երևանին:</p> <p>11. Ամանորյա տոնական միջոցառում: Տոնական, գեղարվեստական-մասսայական թատերականացված շրջայց-միջոցառման կազմակերպում՝ մասնակցությամբ՝ Ձմեռ պապի, Ձյունանուշի, հեքիաթների հերոսների, հրավիրված երգիչ - երգչուհիների, պարային համույթների, ծաղրածուի, ծաղրածու - ձեռնածուների:</p>	«Էլիտա ԷՄՎԵ» ՍՊԸ 20.12-25.12.2015թ.	
5	Սոցիալական ապահովություն				
5.1	Աջակցության ծրագրեր	<p>Ձուկված և վիրավոր ազատամարտիկների, բազմազավակ անապահով ընտանիքներին, Հայրենական պատերազմի վետերաններին, միայնակ տարեցներին և բնակչության սոցիալապես անապահով այլ խավերին կցուցաբերվի դրամական և նյութական աջակցություն: 2015թ. նախատեսվում է աջակցել բնակչության առողջության բարելավմանն ուղղված միջոցառումներին: Կանցկացվեն «առողջ կենսաձև», «պայքար ծխելու դեմ» և նմանատիպ այլ ծրագրեր, կշարունակվի համագործակցությունը առողջապահական կազմակերպությունների հետ, կիրականացվի տեսողության հետազոտման կարիք ունեցող անապահով բնակիչների</p>	<p>ԵՔ-ԲԸ ԾՁԲ -15/1-1</p> <p>Սոցիալապես անապահով և հարազատ չունեցող 61 անձանց հուղարկավորության համար տրամադրվել է գումար:</p> <p>Վարչական շրջանի սոցիալապես անապահով 1119 քաղաքացի օգտվել է իրականացված սոցիալական ծրագրերից, մասնավորապես ստացել են մանկական հագուստ, դեղորայք, դրամական օգնություն, մանկական կաթնախառնուրդ, պարենային օգնություն, գրենական պիտույքներ, հաշմանդամի սայլակ, երկարաճիտ կոշիկներ, վառելափայտ, սմարտֆոն, պլանշետ, մահճակալ և ներքնակներ: Ամանորի և Սուրբ Ծննդյան տոների կապակցությամբ 2200 ընտանիքի տրամադրվել է ամանորյա փաթեթ:</p> <p>Տրվել է պետական պատվերի շրջանակներում բուժվելու և վիրահատվելու 31 միջնորդագիր:</p> <p>Իրականացվել է «Ձեզ համար կանայք» ակցիան, որի շրջանակներում վարչական շրջանում բնակվող բազմաթիվ կանայք ենթարկվել են անվճար բուժզննման: Սոցիալապես անապահով 7 ընտանիքների ներկայացուցիչներ Երևանի քաղաքապետարանի ծրագրով ստացել են հանգստյան տան /Աղվերան/ անվճար ուղեգրեր:</p>	«Բնակչության հատուկ սպասարկում» ՀՈԱԿ 29.12.2014թ.-25.12.2015թ.	

Երևանի զարգացման 2015 թվականի ծրագրի իրականացման հաշվետվություն

		<p>աչքերի անվճար ստուգում և ատամնաբուժական ծառայությունների մատուցում: Կարմիր խաչի ուսումնադաստիարակչական կենտրոնի հետ կկազմակերպվեն արտակարգ իրավիճակներում առաջին օգնության դասընթացներ: Տեղաշարժման սահմանափակ կարողություններով կարիքավոր բնակիչներին աջակցություն կցուցաբերվի սայլակների ձեռքբերման գործում: Սոցիալական աջակցության կարիք ունեցող բնակիչների համար նախատեսվում է դրամական օգնություն, գույքահարկի զիջում, ձմռան վառելիքի, բուժօգնության և սոցիալական բնույթի այլ աջակցության տրամադրում: Կշարունակի գործել բարեգործական ճաշարանը: 2015թ. հունիս-օգոստոս ամիսներին վարչական շրջանի միակողմանի և երկկողմանի ծնողազուրկ, սոցիալապես անապահով և բազմազավակ ընտանիքների 7-13 տարեկան 90 դպրոցական իր ամառային արձակուրդի 20-օրյա հանգիստը կանցկացի ամենկական առողջարարական</p>	<p>Կազմակերպվել է կլոր-սեղան քննարկում բնակչության առողջության բարելավմանն ուղղված, ինչպես նաև առողջ կենսակերպ և արտակարգ իրավիճակներում առաջին օգնություն տրամադրելու թեմաներով: Տեսողության հետազոտման կարիք ունեցող սոցիալապես անապահով 25 քաղաքացի ենթարկվել է ակնաբուժական հետազոտության, 7 քաղաքացիների տրամադրվել է ակնոցներ: Վարչական շրջանի 260 դպրոցահասակ սոցիալապես անապահով, բազմազավակ, սիրիահայ ընտանիքների, ինչպես նաև հաշմանդամություն ունեցող երեխաների տրամադրվել է դպրոցական պայուսակներ՝ գրենական պիտույքներով: Կազմակերպվել է «Հեքիաթների կիրճ» մանկական առողջարարական ճամբար մեկնող /1-ին, 2-րդ և 3-րդ հերթափոխ/ 110 երեխաների հանգիստը: Իրականացվել են սիրիահայ ընտանիքների աջակցության ծրագրեր: Վարչական շրջանում բնակվող սիրիահայերին տրամադրվել է դեղեր, հագուստ, պարենային աջակցություն, սպասք, էլեկտրական սալիկներ, անկողնային պարագաներ, ծածկոցներ: 1 ընտանիքի համար վճարվել է աղբի գումար, 1՝ հուղարկավորության կազմակերպում, 30 ընտանիքի տրամադրվել է ամանոթյա փաթեթ: «Էրեբունի-Երևան 2797» տոնակատարության շրջանակներում թվով 275 ընտանիքների տրամադրվել է անհրաժեշտ կենցաղային տեխնիկա: Կազմակերպվել է վարչական շրջանում բնակվող 118 զինծառայողների ծնողների ԼՂՀ և ՀՀ սահմանամերձ զորամասեր իրականացվող այցը: Մշտապես վճարվում է 1 բազմանդամ ընտանիքի</p>		
--	--	--	---	--	--

Երևանի զարգացման 2015 թվականի ծրագրի իրականացման հաշվետվություն

		<p>ճամբարում:</p>	<p>օգտագործած էլեկտրաէներգիայի վարձավճարը: Վարչական շրջանում իրականացվել են սոցիալական և մշակութային 46 միջոցառումներ, որոնց մասնակցել է 1300 մարդ: Հրդեհի հետևանքով վնասված տները և տանիքները վերանորոգելու, ինչպես նաև երկու ամսվա ժամանակավոր կացարանի վարձավճարը նպատակով, կյանքի դժվարին իրավիճակում հայտնված 6 ընտանիքի տրամադրվել է նյութական և դրամական աջակցություն: Վճարվել է հրդեհի հետևանքով կյանքի դժվարին իրավիճակում հայտնված 1 ընտանիքի երկու ամսվա ժամանակավոր կացարանի վարձավճարը: 322 ընտանիքների տրամադրվել են թատրոնի տոմսեր, նվերներ, օրօրոց, դրամական աջակցություն:</p>		
5.2	Համագործակցություն		<p>«Հանս Քրիստիան Կոֆոեդ» բարեգործական հիմնադրամի անօթևանների կացարան է տեղափոխվել վարչական շրջանի տարածքում հայտնաբերված 16 անօթևան: Գերմանական Կարմիր Խաչի Բադեն-Վյուրտեմբերգի երկրամասային կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի հետ համատեղ վարչական շրջանում բացվել է «Գթության խոհանոցի» արտագնա սպասարկման կենտրոն՝ 60 շահառուների համար: «Նունե Եսայան» բարեգործական հիմնադրամ է ուղղորդվել սոցիալապես անապահով ընտանիքների 22 երեխա՝ երկարօրյա դասընթացների մասնակցելու: Շաբաթը 5 օր, 3-8-րդ դասարաններ հաճախող երեխաներին /ժամը 14.00-18.00, հասցե՝ Տիգրան Մեծի 26ա/ ուսուցանվում է հայերեն, ռուսերեն, անգլերեն, համակարգիչ, երգ, պար, նկարչություն, ինչպես նաև մեկ անգամ տրամադրվում է անվճար սնունդ:</p>		

Երևանի զարգացման 2015 թվականի ծրագրի իրականացման հաշվետվություն

			<p>Մոցիալական ապահովության, առողջապահության և ծրագրերի բաժնի աշխատակազմը «Նունե Եսայան» բարեգորական կազմակերպության 60 երեխաների հետ այցելել է Ծիծեռնակաբերդի հուշահամալիր՝ տարածքը ծաղիկներից մաքրելու կամավոր նախաձեռնությամբ:</p> <p>«Մենք կարող ենք» մտավոր խնդիրներ ունեցող երիտասարդների, երեխաների և նրանց ընտանիքների շահերի պաշտպանության հասարակական կազմակերպությանը վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի հարակից տարածքում տրամադրվել են սենյակներ և շինանյութ:</p> <p>«ՄենքԿարող ենք» մտավոր խնդիրներ ունեցող երիտասարդների, երեխաների և նրանց ընտանիքների շահերի պաշտպանության հասարակական կազմակերպության հետ համագործակցության արդյունքում՝ 6-րդ դպրոցի բարձր դասարաններում կազմակերպվել է սեմինար՝ «Բարության դասեր» թեմայով և ցուցահանդես: Կազմակերպվել է հանդիպում ազատամարտիկի հետ: «Մեր հաղթանակները» խորագրով միջոցառում: Նկարիչ Արայիկ-Նարեկի նկարների ցուցահանդես, Էդմոնդ Հովհաննիսյանի լուսանկարների ցուցահանդես, կենդանի երգեցողություն, փոքրիկ նկարիչների մրցույթ: Մրցույթի մասնակիցներին տրամադրվել է հուշանվերներ:</p> <p>Հունիսի 1-ի առթիվ «Մենք կարող ենք» հասարակական կազմակերպության 10 երեխաների տրամադրվել է նվերներ:</p> <p>«Էխո» հաշմանդամություն ունեցող երեխաներին աջակցող կենտրոնին տրամադրվել է տարածք՝</p>		
--	--	--	--	--	--

Երևանի զարգացման 2015 թվականի ծրագրի իրականացման հաշվետվություն

			<p>միջոցառում անցկացնելու համար: Միջոցառմանը հրավիրվել են «Էլմար» ստուդիայի հեքիաթային հերոսները և դերասանները:</p> <p>«Մատար» հաշմանդամների ՀԿ տրամադրվել է աղբաման, պատվիրվել և տրամադրվել է կազմակերպության տարբերանշանով ցուցանակ, կատարվել է բակի և հարակից փողոցի ասֆալտապատում:</p> <p>«Հանս Քրիստիան Կոֆոյեդ» բարեգործական հիմնադրամին տրամադրվել է 100 նստարան:</p> <p>7 միայնակ տարեցներ ընդգրկվել են «Առաքելություն Հայաստան» ԲԿ տնային սպասարկում և խնամք ստացող շահառուների ցանկում: Մեկ շահառուի տանն իրականացվել են շինարարական աշխատանքներ, անցկացվել է ջրագիծ 2 կետերով, ապակեպատվել է պատշգամբը, տրամադրվել է մահճակալ, հեռուստացույց, սառնարան:</p> <p>Մշտական բնակության վայր չունեցող 3 քաղաքացիներ, իրենց 3 երեխաների հետ տեղավորվել են «Լայթ հաուս» բարեգործական հիմնադրամի ապաստարանում:</p> <p>Կանանց աջակցման կենտրոնի ապաստարան է տեղափոխվել բռնության ենթարկված 1 քաղաքացի 2 երեխաների հետ:</p> <p>7 քաղաքացի ուղեգրվել է «Նունյոս» հայ-շվեդական հիմնադրամի կազմակերպած «Կար ու ձևի» կարճաժամկետ դասընթացներին մասնակցելու, 4 քաղաքացի կտորի վրա նկարագարում “բատիկ” և գորգագործություն, 4-ը՝ դիզայնի կարճաժամկետ դասընթացներին մասնակցելու:</p> <p>«Զոհված ազատամարտիկների ընտանիքների» ՀԿ-ին, «Միայնակ տարեցների և հաշմանդամների սոցիալական սպասարկման կենտրոնին» և «Առաքելություն Հայաստան» ԲԿ-ին տրամադրվել է</p>		
--	--	--	---	--	--

Երևանի զարգացման 2015 թվականի ծրագրի իրականացման հաշվետվություն

			<p>ավտոբուս: Կրթական հետազոտությունների և խորհրդատվությունների կենտրոնի հետ համատեղ կազմակերպվել է քննարկում՝ երեխաների խնամքի ու պաշտպանության կենտրոնացված հաստատություններում գտնվող երեխաների, նրանց ընտանիքների կարիքների գնահատման վերաբերյալ: 1 միայնակ տարեց տեղափոխվել է հատուկ խնամքի հաստատություն: 2 երեխա տեղավորվել է «Զատիկ» մանկական խնամքի կենտրոն: 1 երեխա հաճախում է ՄՊՄԿ-ում գործող դեղատնային խմբակ՝ անվճար հիմունքներով: «Գայանե» բարեգործական կազմակերպության հրավերով 50 երեխաներ դիտել են ամանորյան ներկայացում Հ.Մալյանի թատրոնում:</p>		
--	--	--	---	--	--

Կենտրոն վարչական շրջան					
Հ/հ	Ծրագրի կամ միջոցառման անվանումը	Նախատեսված աշխատանքների նկարագիր	Աշխատանքների իրականացման գործընթաց	Իրականացնող կազմակերպություն, կատարման ժամկետ	Նշումներ
1	2	3	4	5	6
1.	Տարածքային բարեկարգման աշխատանքներ				
1.1	Փողոցների ասֆալտ-բետոնե ծածկերի ընթացիկ վերանորոգում	2015թ. նախատեսվում է իրականացնել 103.5 հազ. քմ փողոցների, բակերի բարեկարգման և ասֆալտապատման աշխատանքներ, որից 10.000քմ Կենտրոն վարչական	N ԵՔ-ԲԸ-ԱՇՁԲ-15/78-11 Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել է 11.500 քմ բակային տարածքների ասֆալտ-բետոնե ծածկի վերանորոգման աշխատանք: Աշխատանքներն իրականացվել են Տ. Մեծ 53,49,39,31,33,26,28,36,36բ,36գ,36դ, 12 շենքերի, Զաքիյան 4, Մաշտոցի 40ա, 38, Թումանյան 22, 24, 28/20, 32, 34, 9, 10, 32/1,	«Տեր-Հայրապետյան Շին» ՍՊԸ Կնքման ամսաթիվը 02.03.2015թ, ավարտը	Երևանի բյուջեի վարչական շրջանի մասով տարեկան նախատեսված է իրականացնել 11500 քմ վերանորոգման աշխատանք / կնքված

Երևանի զարգացման 2015 թվականի ծրագրի իրականացման հաշվետվություն

		շրջանի ծրագրով:	Եզ. Կողբացու 67, 42, Սայաթ-Նովա 11, 13, 19, 8, 10, 12, 27, 29, 31, Նալբանդյան 25/14, 25ա, 96/5, 49, 51, Խանջյան 45, 71/1, Տպագրիչների 5ա, Աբովյան 64, 66, Լալայանց 47ա, Իսահակյան 10, 12, 14, 16, Քաջագնունու 4 բակերում, Խոբենացի 11,47,2-րդ փակուղի, Կողբացի 1, Խանջյան 15,47, Բյուսովի 38, Բաղրամյան 21,2, Թումանյան 27,29,35,1,27ա, Քաջագնունի 8,6, Նալբանդյան 41/1, Փարպեցի 4, Վարդանանց 6, Մաշտոցի 16,25, Գ.Էմինի փող., Անտառային փողոցի հատված, Պուշկինի 52,60,62, Մովսիկովյան փողոցի մայթ, Եր.Քոչար փողոցի մայթ, թիվ 21 մանկապարտեզի բակ, թիվ 4 մանկապարտեզին կից ճանապարհ, Թումանյան փողոցից Հյուսիսային պողոտա կապուղի:	29.09.2015թ.600	պայմանագրի համաձայն /: Կատարված աշխատանքների որակի և կատարման օրացուցային գրաֆիկի խախտում չկա
	Եզրաքարերի վերանորոգում		N ԵՔ-ԲԸ-ԱՇԹԲ-15/54 Կատարվել են 1406,1գծմ եզրաքարերի տեղադրման աշխատանքներ Սայաթ-Նովա 37,39 և Չարենցի 40,42,44, Թումանյան 35ա, Պուշկինի 60,62, Թումանյան 1, Խանջյան 35, Թումանյան 27,29, Նալբանդյան 50, Վարդանանց 5, Քաջագնունի 6, Բաղրամյան 21,23 շենքերի բակերում:	«Բելիս» ՍՊԸ 25.02. 30.09.2015թ	Կատարված աշխատանքների որակի և կատարման օրացուցային գրաֆիկի խախտում չկա
1.2.	Բակային տարածքների բարեկարգում	Նախատեսվում է իրականացնել 12 բակային տարածքների և խաղահրապարակների հիմնանորոգման աշխատանքներ:	N ԵՔ – ԲԸԱՇԶԲ-15/548 Երևանի բյուջեով վարչական շրջանի թվով 8 բակային տարածքներում իրականացվել են բարեկարգման աշխատանքներ: Կատարվել են 829,2քմ սալիկապատման, 2 ֆուտբոլի դաշտի ստեղծման /579քմ արհեստական խոտածածկ/, 4692,1 քմ կանաչապատման, 24 հատ խաղերի տեղադրման, 47 հատ արտաքին լուսավորման հենասյուների տեղադրման, 35 գծմ ոռոգման ցանցի նորոգման, 58 աղբամանների տեղադրման աշխատանքներ: Աշխատանքներն իրականացվել են Թումանյան 27,29, 35ա, 1, Նալբանդյան 50, Վարդանանց 5. Քաջագնունի 6, Բաղրամյան 21, 23, Սայաթ-Նովա 37,39, Պուշկինի 60, 62, Խանջյան 35 շենքերի բակերում: Բակային տարածքների բարեկարգման աշխատանքներ են իրականացվել նաև համատիրությունների միջոցներով Կենտրոն 1 համատիրության միջոցներով տեղադրվել են	«Բելիս» ՍՊԸ 25.02. 30.09.2015թ	Երևանի բյուջեի վարչական շրջանի մասով տարեկան նախատեսված է իրականացնել 8 բակերի բարեկարգման աշխատանք / կնքված պայմանագրի համաձայն /: Կատարված աշխատանքների որակի և կատարման օրացուցային գրաֆիկի խախտում չի արձանագրվել:

Երևանի զարգացման 2015 թվականի ծրագրի իրականացման հաշվետվություն

			մանկական խաղեր, իրականացվել են գունազարդման և բետոնե աշխատանքներ, եզրաքարերի տեղադրման և ցանկապատման աշխատանքներ: Կենտրոն համատիրության միջոցներով իրականացվել է մետաղե ճաղերի նորոգում և տեղադրում, ցայտաղբյուրների վերականգնում, մանակական և սպորտային խաղերի նորոգում, ներկում, նստարանների նորոգում, ներկում, մուտքերի մետաղական դռների նորոգում, սիգամարզերի մաքրում, եզրաքարերի և մայթեզրերի տոմետների վերականգնում, փողոցներից և բակային տարածքներից կուտակված քարերի հավաքում, զրուցատաղավարների նորոգում, ներկում, բակային տարածքում խոտի հնձում, շքամուտքերում աստիճանավանդակների նորոգում, աղբատնակների և աղբամուղերի նորոգում, հատակների բետոնապատում, խաղաղաշտերի ցանկապատերի նորոգում, բակերում ցանկապատ տարածքների ապամոնտաժում:	Կենտրոն և Կենտրոն 1 համատիրություններ	
1.3	Աստիճանների վերանորոգում	Կիրականացվեն 12 բակային տարածքների 12 աստիճանների վերանորոգման աշխատանքներ:	N ԵՔ-ԲԸ-ՍՇՁԲ-15/33 Աստիճանների վերանորոգման աշխատանքներ են իրականացվել 4 հատվածներում: Լեռ 34-ից դեպի Կոնդ տանող աստիճաններ, Բաղրամյան, Չարուբյան, Սարմենի և Անտառային փողոցների հատված, 2-րդ Աղյուսագործների փողոցից դեպի Սարի -Թաղ տանող աստիճաններ, Այգեստան 11 փող.-ից դեպի Այգեստան 9-րդ փող. տանող աստիճաններ:	«Լևոն և Աննա» ՍՊԸ 09.02.2015թ.- 30.09.2015թ,	Երևանի բյուջեի վարչական շրջանի մասով տարեկան նախատեսված է իրականացնել 4 հատ աստիճանների վերանորոգման աշխատանք
1.4	Հենապատերի վերանորոգում	Կվերանորոգվի 315քմ թվով 6 հենապատ:	N ԵՔ-ԲԸ-ՍՇՁԲ-15/34 Իրականացվել է 315քմ, 5 հատ հենապատերի վերանորոգման աշխատանք՝ Եր. Քոչար 3 , Չարենցի 1բ, Դեմիրճյան 33, Պուշկինի 51 և Ջավարյան 64 շենքերի բակերում:	«Լևոն և Աննա» ՍՊԸ 09.02.2015թ.- 30.09.2015թ	Երևանի բյուջեի վարչական շրջանի մասով տարեկան նախատեսվում է իրականացնել 5 հատ հենապատերի վերանորոգման աշխատանք

Երևանի զարգացման 2015 թվականի ծրագրի իրականացման հաշվետվություն

2.	Արտաքին լուսավորության ցանցի վերանորոգում		<p>Ծրագիրը իրականացվում է Երևանի քաղաքային ծրագրով: Աշխատանքներ են իրականացվել նաև «Բակային տարածքների բարեկարգում» ծրագրի շրջանակում: N ԵՔ – ԲԸԱՇՁԲ-15/548 Իրականացվել է 47 հատ արտաքին լուսավորման հենասյուների տեղադրում</p>	«Բելիս» ՍՊԸ 25.02. 30.09.2015թ	
3	Կանաչ տարածքների ընդլայնում, պահպանում	Կիրականացվեն կանաչ տարածքների ընդլայնման, պահպանման և ոռոգման ցանցերի ընթացիկ վերանորոգման աշխատանքներ, (Երևանի քաղաքապետարանի ծրագրով կիրականացվի նաև նոր ոռոգման ցանցի անցկացման աշխատանքներ Ալ.Մանուկյան փող.), այդ թվում՝ ծառատունկ (7500 ծառ և թուփ) և ծաղկային տարածությունների ավելացում, սիզամարգերի բարեկարգում, ջրագծերի վերականգնում:	<p>N ԵՔ-ՇՀԱՇՁԲ-15/1-4</p> <p>Կենտրոն վարչական շրջանի 241.9 հա տարածքներում իրականացվել է կանաչապատման աշխատանքներ: Աշխատանքներն իրականացվել են հրապարակներում, Մաշտոց. Սայաթ-Նովա, Բաղրամյան, Մյասնիկյան, Արշակունյաց և այլ պողոտաներում, Աբովյան, Տերյան, Թումանյան, Խանջյան, Բեյրութի, Գ. Լուսավորիչ, Ամիրյան, Քաջազնունի, Քոչար, Մ. Ադամյան, Ալ. Մանուկյան, Վարդանանց, Սարյան, Դեմիրճյան և այլ փողոցներում, Աբովյան պուրակ, Սարյան, 2750-ամյակի այգիներ, Ուսանողական այգի, Օղակաձև զբոսայգու 2,4,5,6-րդ հատվածներ, Գլխավոր պողոտա / Կողբացի-Մաշտոց, Մաշտոց-Սարյան, Հանրապետության-Նալբանդյան հատվածներ/. Կարապի լճի շրջակայք, Սարալանջի խճուղի, Օիժեռնակաբերդի զբոսայգի:</p>	«Կենտրոն կանաչապատում» ՓԲԸ 26.11.2014- 25.12.2015թ	
3.1.	Կանաչ տարածքների պահպանում և խնամք		<p>1. Կենտրոն վարչական շրջանի կանաչապատ տարածքներում իրականացվել է 7770100 քմ սիզամարգերի մաքրում թափված տերևներից, չորուկներից և աղբից: 2. 640500 քմ զբոսայգիների, ճանապարհների, հրապարակների, անցուղիների, աստիճանավանդակների մաքրում: 3. 1277500 քմ պատահական աղբի հավաքում կանաչապատ տարածքներից:</p>		

Երևանի զարգացման 2015 թվականի ծրագրի իրականացման հաշվետվություն

			<p>4. 949000 քմ կոմբինացված սիզամարգերի հունձ սիզաքաղ մեքենայով:</p> <p>5. 42300 քմ բահափոր:</p> <p>6. 43000 քմ սիզաքաղով հնձված խոտի հավաքում սիզամարգերից</p> <p>7. 17680 քմ հարթեցում փոցխով:</p> <p>8. 5500 քմ ծառերի բնաբաժակների փխրեցում:</p> <p>9. 24282 հատ ծառերի բուժում թունաքիմիկատով</p> <p>10. 33766 հատ ծառերի կրապատում:</p> <p>11. 2600 հատ փշատերև ծառերի, մշտադալար թփերի սնուցում հանքային պարարտանյութով:</p> <p>12. 22780գծմ թփերի ձևավորում`</p> <p>13. 380տ. Աղբի, կտրած ճյուղերի, չորուկների բարձում ավտոմեքենաները կանաչապատ տարածքներից:</p> <p>14. 3000 հատ վարդերի թփերի էտ</p> <p>15. 36229 քմ ծաղիկների քաղհան</p> <p>16. 380տ. Աղբի, կտրած ճյուղերի, չորուկների բեռնաթափում:</p> <p>17. 33160 քմ ծաղիկների սնուցում` հանքային պարարտանյութով</p> <p>18. 16649 խմ ջրող մեքենայից ռետինե խողովակով ոռոգում:</p> <p>19. 389900 քմ սիզամարգերի և ծաղկային տարածությունների ոռոգում` ռետինե խողովակով</p> <p>20. 6300 քմ չորացած ծաղիկների ցողունների հավաքում և ծաղկանոցից դուրս հանում:</p>		
3.2	Ծաղկային տարածքների ստեղծում և խնամք		<p>1. Կատարվել է 117180 քմ փոսերի պատրաստում 0,2 տրամագծով և 0,1 խորությամբ թաղարային ծաղիկների տնկման համար:</p> <p>2. Իրականացվել է 117180 քմ թաղարային ծաղիկների տնկում հողագնդով:</p> <p>3. Իրականացվել է 7240 քմ վարդակակաչների տնկում:</p>		
3.3.	Ծառատունկ, թփերի տնկում		<p>1. Կատարվել է 200 գծմ թփերի տնկում:</p> <p>2. 600 քմ վարդերի փթերի տնկում:</p> <p>3. 2550 հատ ծառերի տնկում:</p>		
3.4.	Չոր ծառերի		<p>1. Իրականացվել է 4773 հատ ծառերի ձևավորում:</p>		

Երևանի զարգացման 2015 թվականի ծրագրի իրականացման հաշվետվություն

	հատում և երիտասարդացում, ծառերի խոր էտ		2. 1048տ. աղբի, կտրած ճյուղերի, չորուկների բարձում ավտոմեքենաները:		
3.5.	Ոռոգման ցանցի վերանորոգում	Կիրականացվեն ոռոգման ցանցերի ընթացիկ վերանորոգման աշխատանքներ: (Երևանի քաղաքապետարանի ծրագրով կիրականացվի նաև նոր ոռոգման ցանցի անցկացման աշխատանքներ Ալ.Մանուկյան փող.):	1. Իրականացվել է 850 գծմ ոռոգման ցանցերի վերանորոգման աշխատանք: 2. Երևանի քաղաքային ծրագրով նոր ոռոգման ցանց է անցկացվել ամբողջ Ալ. Մանուկյան փողոցում:	Աշխատանքները իրականացրել է <Կենտրոն-Կանաչապատում >ՓԲԸ-ն: Աշխատանքները սկսվել են 2015թ. ապրիլին՝ ավարտվել 2015թ. սեպտեմբերին:	
3.6	Հուշարձանների պահպանում	Աշխատանքներ կիրականացվեն 46 հուշարձանների պահպանման ուղղությամբ:	N ԵՔ-ԲԸՇՁԲ-15/013 Իրականացվել է 46 հուշարձանների և հարակից տարածքների պահպանում և խնամք: Հուշարձանների և մշակութային արժեքների բազայտե կամ գրանիտե հարթակները ավլվել է, հեռացվել է աղբն ու փոշին և սրբվել է դիզվառելիքով կամ քիմնյութերով: Հուշարձանների արտաքին մակերեսից հեռացվել են եղանակային պայմաններից կամ այլ գործոններից առաջացած գոյացությունները: Պահպանվել և խնամվել են Կենտրոն վարչական շրջանի տարածքում տեղադրված հուշարձանները, կիսանդրիները և համալիրները:	«Բելլիս» ՍՊԸ Կնքման ամսաթիվ 22.01.2014թ, ավարտը 25.12.2015թ	Կատարված աշխատանքների որակի և կատարման օրացուցային գրաֆիկի խախտում չի արձանագրվել:
4	Բնակարանային ֆոնդի շահագործում, սպասարկում և նորոգում	Երևանի բյուջեով կիրականացվեն հարթ և թեք տանիքների վերանորոգման աշխատանքներ: Ոլորտում աշխատանքներ կիրականացվեն նաև համատիրությունների միջոցներով / վերելակների, շքամուտքերի, ջրամատակարարման և ջրահեռացման			

Երևանի զարգացման 2015 թվականի ծրագրի իրականացման հաշվետվություն

		խողովակաշարերի վերանորոգման և այլ աշխատանքներ:			
4.1.	Հարթ տանիքների նորոգում /իզոգամ/	Կիրականացվի բազմաբնակարան շենքերի 6000քմ հարթ տանիքի հիմնանորոգում:	<p>N ԵՔ-ԲԸ-ԱՇՁԲ-15/48</p> <p>Հաշվետու ժամանակահատվածում Երևանի բյուջեով իրականացվել է 8923 քմ հարթ տանիքների վերանորոգման աշխատանք:</p> <p>Աշխատանքներն իրականացվել են Եզ. Կողբացու 1, Բրյուսովի 21, Սարյան 31, 33, 35,20/1,4, Իսրայելյան 43 և Ամիրյան 15, Ծատուրյան 34, Նար-Դոսի 73, Խորենացու 47, Դեմիրճյան 29,33, Փարպեցու 11ա, Բսակովի 4/2, Չավարյան 1ա, Խորենացի 49, Վարդանանց 28, Քաջազունի 9,6, Ե.Քոչար 7, Քոչար 13, Վրացյան 71/1, հասցեներում:</p> <p>Համատիրության միջոցներով նույնպես իրականացվել են հարթ տանիքների վերանորոգման աշխատանքներ:</p> <p>Կենտրոն 1 համատիրության միջոցներով իրականացվել է 1266 քմ վերանորոգման աշխատանք: Աշխատանքներն իրականացվել են Բաղրամյան 1ին նրբ. 14, 31, փումանյան 31, Կողբացի 1,1ա,4,3ա Մաշտոցի 15,27, Սարյան 4,20/1,31,33,36,35, Ամիրյան 15,18ա, Իսրայելյան 37, Մոսկովյան 28, Դեմիրճյան 29,33, Չավարյան 2, Խորենացի 30, 45,47/1, Մաշտոցի 40ա,15, Բրյուսով 1, Թումանյան 31, հասցեներում:</p> <p>Կենտրոն համատիրության միջոցներով իրականացվել է 4370 քմ վերանորոգման աշխատանք: Աշխատանքներն իրականացվել են Հանրապետության 76, Չաքիյան 3, Խորենացի 47/1, Ազաթանգեղոս 7, Խորենացի 45, Նար-Դոս 1, Չավարյան 1, Թումանյան 11ա, Տ.Մեծ 31, Բաղրամյան 22ա, Ե. Քոչար 21/1, Պուշկին 3 հասցեներում:</p> <p>Կենտրոնում գործող այլ փոքր համատիրությունների կողմից իրականացվել է 564 քմ հարթ տանիքների վերանորոգման աշխատանք:</p>	«Լևոն և Աննա» ՍՊԸ Կնքման ամսաթիվը 09.02.2015թ, ավարտը 30.10.2015թ,	Երևանի բյուջեի վարչական շրջանի մասով տարեկան նախատեսված է իրականացնել 6500 քմ հարթ տանիքների վերանորոգման աշխատանք /իզոգամ/ / կնքված պայմանագրի համաձայն /:
4.2.	Թեք տանիքների նորոգում	Կհիմնանորոգվի Չաքյան 1	<p>N ԵՔ-ԲԸ-ԱՇՁԲ-15/35</p> <p>Հաշվետու ժամանակահատվածում Երևանի բյուջեով</p>	«Լևոն և Աննա» ՍՊԸ 09.02.2015թ-	Երևանի բյուջեի վարչական շրջանի

Երևանի զարգացման 2015 թվականի ծրագրի իրականացման հաշվետվություն

	/ազրոհերձաքար/	շենքի թեք տանիքը:	<p>իրականացվել է 2200 քմ թեք տանիքների վերանորոգման աշխատանք: Աշխատանքներն իրականացվել են Չաքյան նրբ. 1 շենք, Չարենցի 1բ հասցեում</p> <p>Կենտրոն 1 համատիրության միջոցներով իրականացվել է 2040 քմ վերանորոգման աշխատանք: Աշխատանքներն իրականացվել են Արշակունյաց 6,16,26, Բաղրամյան 1,21, Դեմիրճյան 40, Չաքյան 1ին նրբ. 1,2,4,6,8, Թումանյան 38, Լեո 11, Մաշտոցի 1,2,3,5դ,10,6,7,37, Մոսկովյան անց. 5,24,31, Սարյան 16,18,24,24ա,24բ,25,26, Պուշկին 49, Չաքյան 2,4,10, Լեո 11, Խորենացի 9,10,11,12,14,20, 26, Կիլիկիա 1,2, 4, 6, 5, Մոսկովյան անց. 5,24,31, Պարոնյան 1,4,6,7, 28ա, Գր. Լուսավորիչ 3,12, Չաքյան 2,6,10,8, Արշակունյաց 8,16,16ա, Փարպեցի 26, Իսրայելյան 21, Սպանդարյան 1, Թումանյան 35, Մոսկովյան 31, Իսրայելյան 21 հասցեներում:</p> <p>Կենտրոն համատիրության միջոցներով իրականացվել է 1450 քմ վերանորոգման աշխատանք: Աշխատանքներն իրականացվել են Թումանյան 5ա,6,22,1անց.6, Նալբանդյան 29,50,23,Աբովյան 31,26,62, Խորենացի 47,45, Ծատուրյան 34, Վարդանանց 14,15, Հանրապետության 78,Տպագրիչների 5, 8, Չաքյան 3, Մաշտոց 41,45ա, Տերյան 56, Ս.Մեծ 36գ,51,24,28, Չավարյան 1,8, Մայաթ-Նովա 20, 18, Նալբանդյան 50, 116, Ս. Մեծ 18, Աբովյան 62, 13, 34ա, 26, Խանջյան 31, Հանրապետության 62, Պուշկին 40, 3, Չարենց 5, 7 հասցեներում:</p> <p>Կենտրոնում գործող այլ փոքր համատիրությունների կողմից իրականացվել է 350 քմ թեք տանիքների վերանորոգման աշխատանք:</p>	30.10.2015թ	<p>մասով տարեկան նախատեսված է իրականացնել 2200 քմ թեք տանիքների վերանորոգման աշխատանք /ազրոհերձաքար/ /կնքված պայմանագրի համաձայն /:</p> <p>Կատարված աշխատանքների որակի և կատարման օրացուցային գրաֆիկի խախտում չի արձանագրվել:</p>
4.3	Վերելակների հիմնանորոգում	Վերելակների, ջրամուտքերի, ջրամատակարարման և ջրահեռացման խողովակաշարերի վերանորոգման, մուտքերի	<p>Համատիրությունների միջոցներով իրականացվել են 526 հատ վերելակների վերանորոգման աշխատանքներ, որից՝ Կենտրոն 1 համատիրության միջոցներով իրականացվել է 121 հատ վերանորոգման աշխատանք:</p> <p>Կենտրոն համատիրության միջոցներով իրականացվել է 405</p>		

Երևանի զարգացման 2015 թվականի ծրագրի իրականացման հաշվետվություն

		դռների և պատուհանների, մալուխների վերանորոգման աշխատանքները կրելու են շարունակական բնույթ, իրականացվելու են Կենտրոնում գործող համատիրությունների միջոցներով: Աջակցություն կցուցաբերվի համատիրություններին:	հատ վերելակի վերանորոգման աշխատանք:		
4.4	Ջրթափ խողովակների վերանորոգում		Համատիրությունների միջոցներով իրականացվել են 1301 գծմ ջրթափ խողովակների վերանորոգման աշխատանք, որից՝ Կենտրոն 1 համատիրության միջոցներով իրականացվել է 351 գծմ , Կենտրոն համատիրության միջոցներով իրականացվել է 950 գծմ :		
4.5	Մուտքերի պատուհանների ապակեպատում		Համատիրությունների միջոցներով իրականացվել են 276,52 քմ մուտքերի պատուհանների ապակեպատման աշխատանքներ, , որից՝ Կենտրոն 1 համատիրության միջոցներով իրականացվել է 160 քմ , Կենտրոն համատիրության միջոցներով իրականացվել է 116, 52 քմ :		
4.6	Ջրամատակարարման ներքին ցանցի վերանորոգում		Համատիրությունների միջոցներով իրականացվել են ջրամատակարարման ներքին ցանցի 3061 գծմ վերանորոգման աշխատանքներ, , որից՝ Կենտրոն 1 համատիրության միջոցներով իրականացվել է 2090 գծմ , Կենտրոն համատիրության միջոցներով իրականացվել է է 971 գծմ :		

Երևանի զարգացման 2015 թվականի ծրագրի իրականացման հաշվետվություն

4.7	Խողովակների ջերմամեկուսացում		Համատիրությունների միջոցներով իրականացվել են 344 գծմ խողովակների ջերմամեկուսացման աշխատանքներ, , որից՝ Կենտրոն 1 համատիրության միջոցներով իրականացվել է 284 գծմ , Կենտրոն համատիրության միջոցներով իրականացվել է 60 գծմ:		
4.8	Մուտքերի վերանորոգում		Համատիրությունների միջոցներով իրականացվել են 20 մուտքի վերանորոգման աշխատանք , որից՝ Կենտրոն 1 համատիրության միջոցներով վերանորոգվել է 18-ը , Կենտրոն համատիրության միջոցներով վերանորոգվել է 2 –ը:		
4.9	Մուտքերի , նկուղի և աղբախցիկի դռների տեղադրում		Համատիրությունների միջոցներով իրականացվել է 46 հատ մուտքի, նկուղի և աղբախցիկի տեղադրման աշխատանք, որից՝ Կենտրոն 1 համատիրության միջոցներով տեղադրվել է 31 հատ, Կենտրոն համատիրության միջոցներով 15 հատ:		
4.10	Կոյուղագծերի և ջրահեռացման համակարգերի փոխում		Կենտրոն համատիրության միջոցներով իրականացվել է 994 գծմ կոյուղագծերի և ջրահեռացման համակարգերի փոխում:		
4.12	Այլ աշխատանքներ		Կենտրոն 1 համատիրության միջոցներով Իրականացվել են շենքերի շքամուտքերի և հարթակների բետոնապատման , վերելակների հորանների մաքրման աշխատանքներ: Կենտրոն համատիրության միջոցներով իրականացվել են բակերի բարեկարգման աշխատանքներ, որից՝ մետաղե ճաղերի նորոգում և տեղադրում, ցայտաղբյուրների վերականգնում, մանակական և սպորտային խաղերի նորոգում, ներկում, նստարանների նորոգում, ներկում, մուտքերի մետաղական դռների նորոգում, ներկում, սիզամարգերի մաքրում, եզրաքարերի և մայթերերի		

Երևանի զարգացման 2015 թվականի ծրագրի իրականացման հաշվետվություն

			տոմսերի վերականգնում, փողոցներից և բակային տարածքներից կուտակված քարերի հավաքում, գրուցատաղավարների նորոգում, ներկում: Շքամուտքերում իրականացվել են աստիճանավանդակների նորոգուման, աղբատնակների և աղբամուղերի նորոգուման, հատակների բետոնապատման և նկարազարդման, աղբատարի ծածկի կառուցուման, ճաղավանդակների տեղադրման, մուտքի աստիճանների վերականգնման, աղբադռնակների նորոգման աշխատանքներ:		
4.13	Կողավորված փականներ		Կենտրոն համատիրության միջոցներով շենքերի մուտքերի վրա տեղադրվել են 9 հատ կողավորված փականներ:		
4.14	Կախովի փականներ		Կենտրոն համատիրության միջոցներով շենքերի տանիքների դռների և աղբադռների վրա տեղադրվել են 20 հատ կախովի փականներ:		
4.15	Մետաղական դռների տեղադրում		Կենտրոն համատիրության միջոցներով տեղադրվել են 10 հատ մետաղական դռներ :		
4.16	Ղեռատիզացիա /ախտահանում և միջատազերծում	Կիրականացվեն ղեռատիզացիոն աշխատանքներ	N ԵՔ-ԲԸՇՁԲ-15/2-2 Յուրաքանչյուր ամիս իրականացվել է 300808քմ ղեռատիզացիա /ախտահանում և միջատազերծում/ : Բազմաբնակարան շենքերում ղեռատիզացիոն աշխատանքներ են իրականացրել նաև Կենտրոնում գործող համատիրությունները:	«ԵրՄիք» ՍՊԸ 30.12.2014թ- 25.12.2015թ	
5	Կրթություն, մշակույթ և սպորտ	2015թ. շարունակական բնույթ են կրելու տոն և հիշատակի օրերին, ինչպես նաև առողջ ապրելակերպի խրախուսմանն ուղղված միջոցառումները:			
5.1	Մարզական միջոցառում	Կկազմակերպվեն 8 մարզական միջոցառումներ:	N ԵՔ-ԲԸՇՁԲ-15/19 Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել է 8	«Միթիթայ»ՍՊԸ Կնքման ամսաթիվը	Երևանի բյուջեի վարչական շրջանի մասով տարեկան նախատեսվում է

Երևանի զարգացման 2015 թվականի ծրագրի իրականացման հաշվետվություն

			մարզական միջոցառում, որից՝ 1. <Անկախության 24-րդ տարեդարձին նվիրված դպրոցականների մարզական խաղեր>, 2. Ազգային ժողովի գավաթի խաղարկությունը՝ 1-6-րդ դասարանցիների միջև, 3. «Սկսնակ շախմատիստների» առաջնությունը՝ Շախմատի դպրոցում, 4. վետերան շախմատիստների առաջնություն, 5. ՀՀ նախագահի մրցանակի համար անցկացվող «Լավագույն ընտանիք» մրցույթը, 6. «Առողջ սերունդ, պաշտպանված հայրենիք» բակային փառատոնը, 7. Կենտրոն վարչական շրջանի «Փոխանցիկ գավաթ» , 8. նախագորակոչային և գորակոչային տարիքի դպրոցականների ռազմամարզական խաղեր,	15.01.2015թ, ավարտը 01.10.2015թ,	իրականացնել 8 միջոցառում / կնքված պայմանագրի համաձայն /: Կատարված աշխատանքների որակի և կատարման օրացուցային գրաֆիկի խախտում չկա
5.2	Մշակութային միջոցառում	Կկազմակերպվեն 34 մշակութային միջոցառումներ:	<p>ՌԵՔ-ԲԸՄՁԲ-15/16</p> <p>Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել է 33 միջոցառում՝</p> <ol style="list-style-type: none"> 1. Բանակի օրվա կապակցությամբ՝ <ul style="list-style-type: none"> • Հանձնվել են շնորհավորական բացիկներ ուրոտի բարձրաստիճան պաշտոնյաներին: • Հունվարի 26-ին Կաթողիկե եկեղեցու հարակից տարածքում կազմակերպվել է. <ul style="list-style-type: none"> - Կենտրոն վարչական շրջանի զինակոչիկներին ճանապարհելու արարողություն, - նվերների հանձնում զինակոչիկներին , - ԿԳՆ գեղարվեստական դաստիարակության և մանկապատանեկան ստեղծագործության կենտրոնի «Արարատ» փողային նվագախմբի համերգային ծրագիր և քահանա Տեր Ավետիսի օրհնությունը զինակոչիկներին: • Բանակի օրվա տոնակատարության շրջանակներում Բ.Կանաչյանի անվ. արվեստի դպրոցում կազմակերպվել է «Թևանիկ» գեղարվեստական ֆիլմի ցուցադրությունը Մ.Նալբանդյանի անվ. հ.33, Մ.Խանջյանի անվ. հ. 53 և Երևանի հ.2 ավագ դպրոցի աշակերտների համար: 	«Միթիթայմ»ՄՊԸ Կնքման ամսաթիվը 16.01.2015թ, ավարտը 24.12.2015թ,	Երևանի բյուջեի վարչական շրջանի մասով տարեկան նախատեսվում է իրականացնել 33 միջոցառում / կնքված պայմանագրի համաձայն /: Կատարված աշխատանքների որակի և կատարման օրացուցային գրաֆիկի խախտում չկա

Երևանի զարգացման 2015 թվականի ծրագրի իրականացման հաշվետվություն

			<ul style="list-style-type: none"> • Հունվարի 29-ին կազմակերպվել է Ստ. Շահումյանի անվան թ. 1 դպրոցի աշակերտների այցը Եռաբլուր, որտեղ տեղադրվել է ծաղկեպսակ: 2. Փետրվարի 13-ին Երևանի Սբ. Կաթողիկե եկեղեցու բակում կազմակերպվել է Սուրբ Սարգսի տոնին, Տյառնընդառաջին և Բարեկենդանին նվիրված ցուցահանդես: Բացօթյա ցուցահանդեսին ներկայացված էին Բ. Կանայանի և Ք. Քուշնարյանի անվան արվեստի դպրոցների կերպարվեստի խմբակների սաների սիրո, գարնան և բնության զարթոնքի թեմաներով աշխատանքները: Ամենահաջողված նկարների հեղինակները ստացել են նվերներ՝ նկարչական ալբոմներ և գուաշներ: 2.1 Սբ. Զորավոր եկեղեցու հետ համատեղ կազմակերպվել է Տերընդեզի ծխական տոնակատարություն՝ ՄՍԳԴԿ և Ք. Քուշնարյանի արվեստի դպրոցի պարի խմբակների սաների մասնակցությամբ: Տրամադրվել է ձայնային սարքավորում: 2.2 Կենտրոն վարչական շրջանի բոլոր մանկապարտեզներում նշվել է Տեսնընդառաջի տոնը: 3. Փետրվարի 13-ին Երևանի Սբ. Կաթողիկե եկեղեցու բակում կազմակերպված ցուցահանդես-մրցույթի ընթացքում ընտրված լավագույն դիմակները ցուցադրվել են Երևանի քաղաքապետարանի կողմից կազմակերպված Բարեկենդանի միջոցառմանը: 4. Մարտի 8-ի կապակցությամբ Կառավարության ընդունելությունների տանը կազմակերպվել է տոնական միջոցառում՝ Կենտրոն վարչական շրջանի ենթակա կազմակերպությունների, մշակույթի և կրթության ոլորտների կին ղեկավարների ու վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի կանանց համար: Միջոցառման ընթացքում տրվել են պատվոգրեր և շնորհակալագրեր: Բոլոր մասնակից կանանց տրվել են ծաղկեփնջեր և նվերներ: 5. Թատրոնի միջազգային օրվա կապակցությամբ 		
--	--	--	--	--	--

Երևանի զարգացման 2015 թվականի ծրագրի իրականացման հաշվետվություն

			<p>շնորհավորական բացիկներ են ուղարկվել վարչական շրջանի տարածքում գտնվող թատրոնների գեղարվեստական ղեկավարներին և տնօրեններին: Վարչական շրջանի ղեկավարը կրթության այցելել է Հ. Մայրանի անվան կինոդերասանի թատրոն՝ անձամբ շնորհավորելով գեղարվեստական ղեկավար Նարինե Մայրանին և թատրոնի աշխատակազմին:</p> <p>6. Սբ. Զատիկի տոնի կապակցությամբ ապրիլի 5-ին Սբ. Զորավոր եկեղեցու բակում կազմակերպվել է տոնական համերգ՝ կենտրոն վարչական շրջանի արվեստի դպրոցների սաների և «Գոհար» մանկական պարային համույթի մասնակցությամբ,</p> <p>7. Ապրիլի 7-ի կապակցությամբ Կարապի լճի հարակից տարածքում կազմակերպվել է «Մտեղծագործում են կանայք» խորագրով ցուցահանդես-վաճառք, որին մասնակցել են նաև սիրիահայ կանայք և ՀՀ մարզերի ներկայացուցիչներ : Երաժշտական համարներով հանդես են եկել անհատ կատարողներ, Քուշնարյանի անվան արվեստի դպրոցի վոկալ բաժնի սաները և «Խենթություն» մաքնկական վոկալ համույթը:</p> <p>8. Ոստիկանի օրվա կապակցությամբ ապրիլի 16-ին բարձրաստիճան ոստիկաններին հանձնվել են շնորհավորական բացիկներ:</p> <p>9. Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին ընդառաջ՝ Ապրիլի 15-ին կազմակերպվել է Երևանի կենտրոնի մանկապատանեկան համալիր մարզադպրոցի «Հիշում ենք» խորագրով միջոցառումը: Ծաղկեպսակ է տեղադրվել Ծիծեռնակաբերդի Մեծ Եղեռնի զոհերի հիշատակը հավերժացնող հուշարձանին:</p> <p>10. Պարի միջազգային օրվա կապակցությամբ ապրիլի 28-ին Գլխավոր պողոտայում կազմակերպվել է տոնական համերգ «Գոհար» մանկական պարային համույթի ՄՍԳԴԿ-ի պարային համույթի և Բ.Կանայանի անվան արվեստի դպրոցի պարային խմբակի մասնակցությամբ:</p> <p>11. Զագի միջազգային օրվա կապակցությամբ ապրիլի 30-ին</p>		
--	--	--	---	--	--

Երևանի զարգացման 2015 թվականի ծրագրի իրականացման հաշվետվություն

			<p>«Ռիչ» բացօթյա սրճարանում կազմակերպվել է ջազ համերգ՝ Ջազային քոլեջի ուսանողների և Ք.Քուշնարյանի անվան արվեստի դպրոցի սաների մասնակցությամբ:</p> <p>12. Մայիսի 1-ի Աշխատավորության միջազգային օրվա կապակցությամբ Հյուսիսային պողոտայում կազմակերպվել է հ.13 երաժշտական գիշերօթիկ դպրոցի «Կիլիկիա» փողային նվագախմբի համերգը:</p> <p>13. Մայիսի 9-ի կապակցությամբ ծաղկեպսակներ են տեղադրվել Մարշալ Բաղրամյանի արձանին և Հաղթանակ զբոսայգու անհայտ զինվորի հուշարձանին: Հյուսիսային պողոտայում կազմակերպվել է տոնական համերգ՝ Յուրի Բախչյանի անվան մանկական ֆիլիարմոնիայի ձողային նվագախմբի «Երևանյան թմբուկներ» համույթի մասնակցությամբ: Բ.Կանաչյանի անվ. Արվեստի դպրոցում կազմակերպվել է ՀՀ ազգային հերոս Թաթուլ Կրպեյանի 50 ամյակին նվիրված միջոցառումը:</p> <p>14. Թանգարանների միջազգային օրվա կապակցությամբ շնորհավորական բացիկներ են ուղարկել վարչական շրջանի տարածքում գործող թանգարանների տնօրեններին:</p> <p>15. Հանրապետության օրվա կապակցությամբ կազմակերպվել է Ք.Քուշնարյանի և Բ.Կանաչյանի անվան արվեստի դպրոցների սաների այցը Սարդարապատ, որտեղ վերջիններս հանդես են եկել համերգային ծրագրով:</p> <p>16. Հունիսի 1-ի կապակցությամբ շրջանի 13 բակերում կազմակերպվել են տոնական միջոցառումներ, վիկտորիաններ, ուսումնական ծրագրեր և սպճորտային խաղեր՝ բաժանվել են հյուրեր և պաղպաղակներ:</p> <p>17. Կազմակերպվել է հ.10 մանկապարտեզի սաների այցը օղակաձև զբոսայգի և հյուրասիրություն:</p> <p>18. Ամփոփիչ համերգը տեղի է ունեցել Գլխավոր պողոտայում, որին մասնակցել են Ք.Քուշնարյանի և Բ.Կանաչյանի անվան արվեստի դպրոցների սաները: Հանդիսատեսին բաժանվել են հյուրեր:</p> <p>19. Հունիսի 24-ին՝ բուժաշտատողի օրվա կապակցությամբ վարչական շենքում կազմակերպվել է ընդունելություն</p>		
--	--	--	---	--	--

Երևանի զարգացման 2015 թվականի ծրագրի իրականացման հաշվետվություն

			<p>շրջանի տարածքում գործող առողջապահական հաստատությունների տնօրենների, բժիշկների և բուժքույրերի հետ: Հանձնվել են պատվոգրեր, շնորհակալագրեր և ծաղկեփնջեր:</p> <p>20. Հունիսի 26-ին նկարչության օրվա կապակցությամբ Գլխավոր պողոտայում ցուցադրվել են շրջանի արվեստի դպրոցների սաների լավագույն աշխատանքները: մասնակիցներին հանձնվել են նվերներ:</p> <p>21. «Երևանյան ամառ» միջոցառումների շրջանակում՝ Կենտրոն վարչական շրջանի Տիգրան Մեծի 36ա,բ,գ հասցեում հունիսի 1-ից մեկնարկել են «Ողջույն Կենտրոն» միջոցառումները՝ սիրված մուլտիերոսների, ծաղրածուների և աճպարարների մասնակցությամբ: Միջոցառումը ուղեկցվել է ճանաչողական խաղ-մրցույթներով երաժշտական և պարային կատարումներով: Ամռան ամիսներին բակային ճամբարներ են կազմակերպվել վարչական շրջանի տարբեր բակերում:</p> <p>22. Օգոստոսի 22-ին Հյուսիսային պողոտայում ազդարարվել է «Երևանյան ամառ 2015» բակային ճամբարների փակումը: Բակային ճամբարի փակմանը ելույթ են ունեցել Կենտրոն վարչական շրջանի Մանկապատանեկան ստեղծագործության և դաստիարակության կենտրոնի «Արմենիա» համույթը, «Ֆանտազիա» պարային համույթը, «Խենթություն» վոկալ համույթը և Երևանի պետական կրկեսի արտիստները:</p> <p>23. ՀՀ պետական խորհրդանշանների և ՀՀ սահմանադրության օրվան նվիրված՝ Համազգային թատրոնում կազմակերպվել է տոնական համերգ Կենտրոն վարչական շրջանի Մանկապատանեկան Ստեղծագործության և գեղագիտական դաստիարակության կենտրոնի սաների մասնակցությամբ:</p> <p>24. Մբ.Աննա եկեղեցու բակում նշվել է Մբ. Աստվածածնի Վերափոխման տոնը: Եկեղեցու բակում կազմակերպված տոնակատարությանը ելույթ են ունեցել ավանդական երգի և պարի <ՎԵՐԱԴԱՐՁ> համույթը, ՇԱՎԻՂ կրթամշակութային</p>		
--	--	--	--	--	--

Երևանի զարգացման 2015 թվականի ծրագրի իրականացման հաշվետվություն

			<p>նախաձեռնության անդամները, ՀՀ Մշակույթի վաստակավոր գործիչ, պարագետ Գ. Գինոսյանը: Շուրջպարերին և տոնական միջոցառմանը մասնակցել են նաև կենտրոնաբնականները, Կենտրոնի բազմաթիվ հյուրեր:</p> <p>Միջոցառման բոլոր մասնակիցներին բաժանվել է օրհնված խաղող:</p> <p>25. Սեպտեմբերի 20-ին և 21-ին Ջի Էմ Ջի մեդիա գրուպ» ՍՊԸ-ի և ՀՀ Ազգային Ժողովի հետ համատեղ Կենտրոն վարչական շրջանում անց է կացվել ՀՀ Անկախության 24-րդ տարեդարձին նվիրված ցուցահանդես-վաճառք, որտեղ ներկայացվել են ժողովրդական վարպետների և անհատ ստեղծագործողների աշխատանքներ:</p> <p>26. Սեպտեմբերի 20-ին կազմակերպվել է տոնական համերգ՝ վարչական շրջանի արվեստի դպրոցների սաների և ՄՄԳՂԿ-ի սաների մասնակցությամբ:</p> <p>27. Երաժշտության միջազգային օրվա կապակցությամբ՝ Կոմիտասի անվան պուրակում կազմակերպվել է համերգ: Մասնակցել են Բ. Կանայանի և Ք. Քուշնարյանի անվան արվեստի դպրոցների, Մայաթ-Նովայի անվ. երաժշտական դպրոցի, Ռ. Մելիքյանի երաժշտական քոլեջի և Մխիթար Սեբաստացի կրթահամալիրի սաներն ու ուսուցիչները / հոկտեմբերի 1-ին/:</p> <p>28. Հոկտեմբերի 6-ին՝ Գրադարանավարի օրվա կապակցությամբ «Էլիտ Պլազա» բիզնես կենտրոնում կազմակերպվել է տոնական միջոցառում: Հանձնվել են շնորհակալագրեր և ծաղկեփնջեր:</p> <p>29. Գրադարանավարի օրվա կապակցությամբ թիվ 22 գրադարանում կազմակերպվել է «Հանդիպման վայրը՝ գրադարան» միջոցառումը՝ նվիրված Ա. Իսահակյանի ծննդյան 140- ամյակին, որին մասնակցել են Վ. Վաղարշյանի անվ. թիվ 80 դպրոցի աշակերտները:</p>		
--	--	--	---	--	--

Երևանի զարգացման 2015 թվականի ծրագրի իրականացման հաշվետվություն

			<p>30. Հոկտեմբերի 21-ին Սրբ. Կաթողիկե և Սրբ. Աննա եկեղեցիների բակում նշվել է «Բերքի տոնը»: Միջոցառմանը մասնակցել են կենտրոնի մանկապարտեզների սաները: Միջոցառումը ուղեկցվել է երգ ու պարով, խաղերով և բերքով ու բարիքով լի զամբյուղներով:</p> <p>31. Նոյեմբերի 17-ին ԲՈՒՀ-երում նշվել է Ուսանողների միջազգային օրը: Ուսխորհուրդներին հանձնվել են տորթեր և շնորհավորական ուղերձներ:</p> <p>32. Ամանորյա միջոցառումներ</p> <p>Վարչական շրջանի 20 բակերում կազմակերպվել են տոնական ամանորյա միջոցառումներ՝ Ձմեռ պապիկի, հեքիաթի հերոսների մասնակցությամբ: Հանձնվել են նվերներ:</p> <p>33. Բ. Կանաչյանի անվան արվեստի Դպրոցում կազմակերպվել է «Ամանորյա խճանկար» միջոցառումը: 33.1.Ն. 22 գրադարանում կազմակերպվել է Ամանորին ընդառաջ միջոցառումը:</p>		
5.3	Կրթական միջոցառումներ	<p>Զարգացման ծրագրով տարեկան նախատեսված է իրականացնել 17 կրթական միջոցառում:</p> <p>Թիվ 7, 8, 10, 16, 17 և 19 մանկապարտեզներում և Քուչնարյանի անվ. երաժշտական դպրոցում կիրականացվեն</p>	<p>N ԵԶ-ԲԸՄՁԲ-15/15 Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել է 16 միջոցառում՝</p> <p>1. Փետրվարի 9-ին հայ մեծ բանաստեղծ Վահան Տերյանի ծննդյան 130-ամյակի կապակցությամբ կազմակերպվել է գրական ցերեկույթ՝ Կենտրոն վարչական շրջանում գտնվող Վ. Տերյանի արձանի մոտ՝ Ա. Պուշկինի անվան հ.8 դպրոցի սաների մասնակցությամբ: Անցորդների նվիրել ենք ծաղիկներ և Տերյանի</p>	«Միթիթայ»ՄՊԸ Կնքման ամսաթիվը 13.01.2015թ, ավարտը 31.10.2015թ,	Երևանի բյուջեի վարչական շրջանի մասով տարեկան նախատեսվում է իրականացնել 16 միջոցառում / կնքված պայմանագրի համաձայն /: Կատարված աշխատանքների որակի և կատարման

Երևանի զարգացման 2015 թվականի ծրագրի իրականացման հաշվետվություն

		<p>հիմնանորոգման աշխատանքներ:</p>	<p>բանաստեղծություններով բացիկներ:</p> <p>2. Խնկո-Ապոր անվան մանկական գրադարանի դահլիճում կազմակերպվել է Մայրենիի օրվան նվիրված ասմունքի ցերեկույթ, որտեղ աշակերտները ներկայացրել են Ս. Կապուտիկյանի բանաստեղծությունները: Միջոցառմանը մասնակցել են Ստ. Շահումյանի անվ. հ.1 հիմնական, հ.2 և Շնչենկոյի անվ. հ. 42 ավագ դպրոցների աշակերտները:</p> <p>3. Փետրվարի 25-ին Կենտրոն վարչական շրջանի հ. 22 գրադարանում,</p> <p>Անդրանիկ Օզանյանի ծննդյան 150-ամյակին ընդառաջ, կազմակերպվել է տոնական միջոցառում: Միջոցառմանը մասնակցել են Վ. Վաղարշյանի անվան հ. 80 դպրոցի 9-րդ դասարանի աշակերտները:</p> <p>5. Եվս մի միջոցառում կազմակերպվել է Օղակաձև զբոսայգում տեղադրված Ջորավարի արձանի մոտ: Համերգային ծրագրի ընթացքում հանդիսատեսին ներկայացվել է ազգային, հայրենասիրական երգ ու պար՝ համեմված Ջորավարի մասին ուշագրավ մեջբերումներով: Ելույթ ունեցան «Տարոն» ազգագրական երգի-պարի համույթը, ավանդական երգի և պարի «Օովակ» և «Նուբար» համույթները, Բ. Կանաչյանի անվան արվեստի դպրոցների դեղլահարների համույթը, Կենտրոն վարչական շրջանի ՄՄԳԴԿ-ի սաները: Միջոցառմանը ներկա էին նաև վարչական շրջանի հանրակրթական դպրոցներից Անդրանիկ անունը կրող աշակերտներ, ովքեր ներկայացրեցին Ջորավարի խոսքերը:</p> <p>4. Վերջին զանգի կապակցությամբ վարչական շրջանի ղեկավարը այցելել է Չեխովի անվ. հ. 55, Ս. Շնչենկոյի անվ. հ. 42 դպրոց, Մ. Նալբանդյանի անվ. հ. 33 դպրոց:</p> <p>6. Հունիսի 16-ին Պարոնյանի անվ. երաժշտական կոմեդիայի թատրոնում կազմակերպվել է տոնական</p>	<p>օրացուցային գրաֆիկի խախտում չկա</p>
--	--	-----------------------------------	--	--

Երևանի զարգացման 2015 թվականի ծրագրի իրականացման հաշվետվություն

			<p>միջոցառում՝ <Խաղաղություն աշխարհի մանուկներին> խորագրով: Միջոցառմանը մասնակցել են շրջանի մանկապարտեզների սաները՝ պարային բեմադրություններով ներկայացնելով աշխարհի 18 երկրների մշակույթները: Կազմակերպիչներին հանձնվել են շնորհակալագրեր և պատվոգրեր և խտասկավառակներ՝ միջոցառման տեսագրությամբ:</p> <p>7. Հունիս ամսվա վարչական շրջանի բոլոր մանկապարտեզներում անց են կացվել տարեվերջյան, ավարտական հանդեսներ: Թվով 845 երեխաների հանձնվել են դպրոցական պայուսակներ և գրենական պիտույքներ:</p> <p>8. Հուլիս-սեպտեմբեր ամիսներին ՀՀ Սփյուռքի նախարարության «Արի տուն» ծրագրի շրջանակներում Կենտրոն վարչական շրջանում հյուրընկալվել է 10 երեխա՝ 9 ընտանիքներում: Վարչական շրջանի ղեկավարը հյուրընկալել է երեխաներին՝ նվիրելով հուշանվերներ:</p> <p>9. Սեպտեմբերի 1-ին կազմակերպվել է Ստ. Շահումյանի անվան թ.1 և Խ. Աբովյանի անվան թ.2 դպրոցների 25-ական առաջին դասարանցիների շրջապատյուղ «Միթի տուր» ավտոբուսով: Երեխաներին նվիրվել են նկարազարդ այբուբեններ:</p> <p>10. Նույն օրը Մանկական երկաթուղում կազմակերպվել է <Առաջին դաս> տոնական միջոցառումը: Կենտրոն վարչական շրջանի ղեկավարի հրավերով ք. Եղվարդից միջոցառմանն են եկել մասնակցելու Թ. 3 դպրոցի առաջին դասարանցիները: Միջոցառման ընթացքում</p>		
--	--	--	--	--	--

Երևանի զարգացման 2015 թվականի ծրագրի իրականացման հաշվետվություն

			<p>Արտյոմ Դերվոյեդի վարպետության դասին:</p> <p>30. Երևանյան ամառ ծրագրի շրջանակներում թիվ 125 մակապարտեզի բակում կազմակերպվել է բակային ճամբար:</p> <p>31. Երևանի քաղաքապետարանի «Երևանյան ամառ 2015» եռամսյա ծրագրի շրջանակներում Նուբարաշեն վարչական շրջանի կենտրոնական զբոսայգում կազմակերպվել է «Ողջուն Նուբարաշենից», «Միշտ տոնական Երևան» խորագրով համերգային մեծ միջոցառում:</p> <p>32. Ազգային մշակույթին և արվեստին հաղորդակցվելու մատչելիությանը նպաստող ծրագրերի շրջանակներում վարչական շրջանի ղեկավարի աջակցությամբ կազմակերպվել է երիտասարդների այցը Կոմիտասի թանգարան-ինստիտուտ:</p> <p>33. Վարչական շրջանի ղեկավարի աջակցությամբ կազմակերպվել է վարչական շրջանի գրադարանի լավագույն փոքրիկ ընթերցողների մասնակցությունը Համազգային թատրոնում կայացած «Կախարդական լավաշը» ներկայացմանը:</p> <p>34. Սուրբ Աստվածածնի Վերափոխման տոնը հանդիսավորությամբ նշվել է Նուբարաշեն վարչական շրջանի Սուրբ Նահատակաց եկեղեցում:</p> <p>35. Վարչական շրջանի 11 փողոցին հարակից այգում «Երևանյան ամառ 2015» եռամսյա միջոցառումների շրջանակում կազմակերպվել է տոնական մեծ միջոցառում:</p> <p>36. Վարչական շրջանում «Օլե-Օլե» մանկական թաթերական կազմակերպության ծաղրածուների և</p>		
--	--	--	---	--	--

Երևանի զարգացման 2015 թվականի ծրագրի իրականացման հաշվետվություն

			<p>հեքիաթների հերոսների մասնակցությամբ կազմակերպվել է «Երևանյան ամառ 2015» եռամսյա ծրագրի ավարտն ազդարարող վերջին միջոցառումը:</p> <p>37. Վարչական շրջանի ղեկավարի աջակցությամբ ազգային մշակույթին և արվեստին հաղորդակցվելու մատչելիությանը նպաստող ծրագրերի շրջանակներում կազմակերպվել է երեխաների այցը Ժողովրդական արվեստի թանգարան:</p> <p style="text-align: center;">ԵՔ-ՊԸԾՁԲ-15/51 «Նուբարաշեն» ՓԲԸ 21.09.2015թ.</p> <p>38. ՀՀ անկախության 24-րդ տարեդարձին նվիրված վարչական շրջանում կազմակերպվել են հետևյալ միջոցառումները.</p> <ul style="list-style-type: none"> • Կազմակերպվել է այցելություն 11 փողոցին հարակից այգում տեղակայված «Զոհված ազատամարտիկների խաչքար», հարգանքի տուրք մատուցվել զոհված ազատամարտիկների հիշատակին և կատարվել ծաղկեղրման արարողություն: • ՀՀ անկախության 24-րդ տարեդարձին նվիրված սեպտեմբերի 21-ին Նուբարաշեն վարչական շրջանի կենտրոնական զբոսայգուն հարակից տարածքում կազմակերպվել է մեծ տոնական միջոցառում: Միջոցառումն ավարտվել է գեղեցիկ հրավառությամբ: • Վարչական շրջանի գրադարանում կազմակերպվել է գրքի ցուցահանդես նվիրված ՀՀ անկախության 24-րդ տարեդարձին և Մուսա լեռան հերոսամարտի 100-ամյակին: • Վարչական շրջանի և «Փոքր Միեր» կրթահամալիրի գրադարանների աշխատակիցների 		
--	--	--	--	--	--

Երևանի զարգացման 2015 թվականի ծրագրի իրականացման հաշվետվություն

			<p>համագործակցության շրջանակում կրթահամալիրի գրադարանում կազմակերպվել է բաց դաս և նկարների ցուցահանդես-մրցույթ՝ նվիրված ՀՀ անկախության 24-րդ տարեդարձին:</p> <ul style="list-style-type: none"> • ՀՀ անկախության օրվան նվիրված վարչական շրջանի մարզամշակութային կենտրոնում կազմակերպվել է «Ես եմ» ֆիլմի ցուցադրումը: <p>39. Ազգային մշակույթին և արվեստին հաղորդակցվելու մատչելիությանը նպաստող ծրագրերի շրջանակներում կազմակերպվել է վարչական շրջանի պատանիների այցը Հայաստանի ազգային պատկերասրահ:</p> <p>40. Կազմակերպվել է վարչական շրջանի բնակչության մասնակցությունը Էրեբունի վարչական շրջանում «Էրեբունի-Երևան-2797» տոնակատարության շրջանակներում կազմակերպված տոնական միջոցառումներին:</p> <p>41. Կազմակերպվել է երաժշտական դպրոցի աշակերտների հանդիպումը երաժշտագետ, Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի պրոֆեսոր Արմեն Բուդաղյանի հետ:</p> <p>42. Ուսանողների միջազգային օրվա առթիվ վարչական շրջանի ղեկավարի աջակցությամբ կազմակերպվել է վարչական շրջանի ուսանողների մասնակցությունը Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիրում կայացած համերգին:</p> <p>43. Կազմակերպվել է վարչական շրջանի բնակչության, ինչպես նաև ՀՀ մարզերից և արտասահմանյան երկրներից ժամանած հյուրերի մասնակցությունը «Էրեբունի-Երևան-2797» տոնակատարության շրջանակներում կազմակերպված տոնական միջոցառումներին:</p> <p>44. «Էրեբունի-Երևան-2797» տոնակատարության</p>		
--	--	--	--	--	--

Երևանի զարգացման 2015 թվականի ծրագրի իրականացման հաշվետվություն

			<p>շրջանակներում վարչական շրջան հյուրնկալված պատվիրակությունների անդամների մասնակցությամբ այցելություն է կազմակերպվել վարչական շրջանի սկզբնամասում տեղակայված Մեծ եղեռնի զոհերի հիշատակին նվիրված խաչքար, հարգանքի տուրք է մատուցվել և կատարվել ծաղկեղրման արարողություն:</p> <p>45. Գրադարանների գործունեության արդյունավետության ուղղությամբ իրականացվող աշխատանքների շրջանակում վարչական շրջանի թիվ 34 գրադարանի և «Հայկական մանրանկարչության կենտրոն» հիմնադրամի համագործակցության շրջանակում վարչական շրջանի Սրբոց Նահատակաց եկեղեցու բակում կազմակերպվել է «Հայոց մեծ եղեռնը դատապարտում են երեխաները» խորագրով միջոցառում:</p> <p>46. Գրադարանում կազմակերպվել է գրքի ցուցահանդես նվիրված Ավ. Իսահակյանի-140 և Բաֆֆու-180 ամյակներին:</p> <p>47. «Կինոաշուն» ազգային կինոյի ամիս» ծրագրի շրջանակում Ցեղասպանության 100-ամյակին նվիրված վարչական շրջանի մարզամշակութային կենտրոնում կազմակերպվել է «1915», «Փրկության քարտեզ», «Եթե բոլորը» ֆիլմերի ցուցադրումները:</p> <p>48. Ազգային մշակույթին և արվեստին հաղորդակցվելու մատչելիությանը նպաստող ծրագրերի շրջանակներում վարչական շրջանի ղեկավարի աջակցությամբ կազմակերպվել է երեխաների այցը Ավ. Իսահակյանի տուն-թանգարան:</p> <p>49. Գրադարանային հանդիպումների շրջանակում Նուբարաշեն վարչական շրջանի գրադարանում կազմակերպվել է հանդիպում գրող, մանկագիր Աննա Կոստանյանի հետ:</p> <p>50. Վարչական շրջանի թիվ 34 գրադարանի աշխատակիցների և գրող Աննա Կոստանյանի միջև</p>	
--	--	--	--	--

Երևանի զարգացման 2015 թվականի ծրագրի իրականացման հաշվետվություն

			<p>համագործակցության շրջանակում մարզամշակութային կենտրոնում կազմակերպվել է հայրենասիրական թեմայով գրական-երաժշտական հանդիպում:</p> <p>51. Գրադարանում կազմակերպվել է գրքի ցուցահանդես նվիրված արևմտահայ գրող Համաստեղի ծննդյան 120-ամյակին:</p> <p>52. Նուբարաշեն վարչական շրջանի մարզամշակութային կենտրոնում կազմակերպվել է դաս-միջոցառում «Հայ ազգային հագուստ» խորագրով:</p> <p>53. Ազգային մշակույթին և արվեստին հաղորդակցվելու մատչելիությանը նպաստող ծրագրերի շրջանակներում վարչական շրջանի ղեկավարի աջակցությամբ կազմակերպվել է երեխաների այցը Եղիշե Չարենցի տուն-թանգարան:</p> <p>54. Երաժշտական դպրոցում կազմակերպվել է հանդիպում Վիլլի Մոկացյանի կնոջ՝ Ջուլիետա Մոկացյանի հետ:</p> <p>55. Երաժշտական դպրոցում կազմակերպվել է Ամանորի տոնական միջոցառում, որին իրենց լավագույն կատարումներով ներկայացան դպրոցի սաներն ու ուսուցիչները:</p> <p style="text-align: center;">ԵՔ-ՊԸՄՁԲ-15/51 <Նուբարաշեն> ՓԲԸ</p> <p>23.12.2015թ.</p> <p>56. Ամանորի միջոցառումների շրջանակում վարչական շրջանի մարզամշակութային կենտրոնի դահլիճում կազմակերպվել է «Սպիտակաձյունիկը» հեքիաթ երաժշտական ներկայացումը Գ. Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոնի պատանի դերասանների ներկայացմամբ:</p> <p>57. Վարչական շրջանի մարզամշակութային կենտրոնում կազմակերպվել է տոնական համերգային միջոցառում:</p>		
4.2.	Կրթական		Հսկողություն է սահմանվել մանկապարտեզում		

Երևանի զարգացման 2015 թվականի ծրագրի իրականացման հաշվետվություն

	միջոցառումներ		<p>երեխաներին տրվող սննդի նկատմամբ և հետևողականությունն է ցուցաբերվել ուսումնադաստիարակչական աշխատանքների նկատմամբ:</p> <ol style="list-style-type: none"> 1. Ֆրանկոֆոնիայի օրերի շրջանակներում մարզամշակութային կենտրոնում հ.95 դպրոցի սաների մասնակցությամբ կազմակերպվել է միջոցառում՝ «Քայլենք բարեկամության կամրջով» խորագրով: 2. Վարչական շրջանի գրադարանում կազմակերպվել է գրքի ցուցահանդես՝ նվիրված Ղ.Աղայանի ծննդյան 175 ամյակին: 3. Գրադարանային շաբաթվա ընթացքում ակտիվ ընթերցողների հետ կազմակերպվել է հանդիպում «Գրադարանի դերը դպրոցականների կյանքում» խորագրով: 4. Վարչական շրջանի 175 դպրոցի նախակրթարանում կազմակերպվել է բաց դաս և ցուցահանդես նվիրված ցեղասպանության 100-ամյա տարելիցին: 5. Մայիսի 8-ին՝ Շուշիի ազատագրման օրվա կապակցությամբ Նուբարաշեն վարչական շրջանի հ.175 միջնակարգ դպրոցում կազմակերպվել է վարչական շրջանի գոհված ազատամարտիկների հիշատակի ցերեկույթ: 6. Վարչական շրջանի գրադարանում կազմակերպվել է մանկագիր, հեքիաթագիր, «Ծիծեռնակ» մանկական խմբագրության աշխատակից Սաթենիկ Ղազարյանի և վարչական շրջանում գործող թիվ 175 և 95 միջնակարգ դպրոցների ստեղծագործող աշակերտների հանդիպումը: 7. Մարզամշակութային կենտրոնի դահլիճում կազմակերպվել է հանրակրթական դպրոցների ավարտական դասարանների «Վերջին զանգ»-ի միջոցառումները: 		
--	---------------	--	---	--	--

Երևանի զարգացման 2015 թվականի ծրագրի իրականացման հաշվետվություն

			<p>8. Վարչական շրջանի դպրոցների և ՀՀ մարզերի դպրոցների հետ համագործակցային ծրագրերի շրջանակներում վարչական շրջանի պատվիրակությունը այցելել է Հաղրութի շրջանի Միքայել Մանվելյանի անվան միջնակարգ դպրոց:</p> <p>9. Թիվ 34 գրադարանում կազմակերպվել է ցուցահանդես՝ նվիրված Գ. Սունդուկյանի 190-ամյակին:</p> <p>10. Կազմակերպվել է մանկապարտեզն ավարտող երեխաների այցը Խնկո-Ապոբ անվան ազգային մանկական գրադարան:</p> <p>11. Կազմակերպվել է միջոցառում՝ նվիրված ՀՀ Սահմանադրության և ՀՀ պետական խորհրդանիշների օրվան:</p> <p>12. Վարչական շրջանի թիվ 34 գրադարանում կազմակերպվել են գրքի ցուցահանդեսներ՝ նվիրված Վախթանգ Անանյանի -110, Ռազմիկ Դավոյանի-75, և Խաչիկ Դաշտենցի -105 ամյակներին:</p> <p>13. Գրադարանների գործունեության արդյունավետության ուղղությամբ իրականացվող աշխատանքների շրջանակում վարչական շրջանի թիվ 34 գրադարանի և «Հայկական մանրանկարչության կենտրոն» հիմնադրամի միջև կնքված պայմանագրի շրջանակում ձեռք է բերվել և վարչական շրջանի երեխաներին բաժանվել Եղիշե Չարենցի «Դանթեական» պոեմի հիման վրա ստեղծված գունազարդման ալբոմներ՝ ծրագրի հետագա ցուցահանդես-մրցույթներին մասնակցելու համար:</p>		
--	--	--	--	--	--

Երևանի զարգացման 2015 թվականի ծրագրի իրականացման հաշվետվություն

			<p>14. Գիտելիքի, գրի և դպրության օրվան նվիրված վարչական շրջանի հանրակրթական դպրոցներում կազմակերպվել է միջոցառումները:</p> <p>15. Վարչական շրջանի թիվ 34 գրադարանում կազմակերպվել է բաց դաս միջոցառում՝ «Հայ ժողովրդի պահանջատիրությունը» խորագրով և նկարների ցուցահանդես նվիրված Մեծ Եղեռնի 100-ամյա տարելիցին:</p> <p>16. Կազմակերպվել է մանկապարտեզի ավագ խմբերի երեխաների այցը Ծիծեռնակաբերդի հուշահամալիր, ինչպես նաև դպրոցների բարձր դասարանների երեխաների այցը Ծիծեռնակաբերդի հուշահամալիր և Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ:</p> <p>17. ՀՀ անկախության օրվան նվիրված միջոցառումներ են կազմակերպվել վարչական շրջանի հանրակրթական դպրոցներում, նախակրթարանում:</p> <p>18. ՀՀ անկախության օրվան նվիրված միջոցառում է կազմակերպվել մանկապարտեզի բակում, որն ընթացել է վարչական շրջանում տեղակայված գորամասի նվազախմբի նվազակցությամբ:</p> <p>19. «Ուսուցչի օրվա» կապակցությամբ աշխատակազմի ներկայացուցիչները այցելել են վարչական շրջանում գործող մանկապարտեզ, նախակրթարան, երաժշտական և հանրակրթական դպրոցներ, փոխանցել Երևանի քաղաքապետի և վարչական շրջանի ղեկավարի շնորհավորանքները բոլոր ուսուցիչներին՝ մասնագիտական տոնի</p>		
--	--	--	--	--	--

Երևանի զարգացման 2015 թվականի ծրագրի իրականացման հաշվետվություն

			<p>կապակցությամբ:</p> <p>20. «Գրադարանավարի օրվա» և «Ուսուցչի օրվա» կապակցությամբ վարչական շրջանի ղեկավարը հյուրընկալել է վարչական շրջանում գործող կրթական հաստատությունների վաստակաշատ մանկավարժներին և գրադարանավարներին, շնորհավորել մասնագիտական տոնի առթիվ և նրանց հանձնել պատվոգրեր ու շնորհակալագրեր:</p> <p>21. Հանրակրթական դպրոցների հետ համագործակցության ծրագրերի շրջանակում կազմակերպվել է աշակերտների այցը հանրապետության խոշորագույն հրատարակչություններից մեկը՝ «Զանգակ», որտեղ երեխաները ծանոթացել են գրքի ստեղծման բարդ գործընթացին:</p> <p>22. «Գրադարանավարի օրվա» և «Ուսուցչի օրվա» կապակցությամբ վարչական շրջանի թիվ 34 գրադարանում կազմակերպվել է «Դարձի՛ր գրադարանի բարեկամ» կարգախոսով գեղեցիկ միջոցառում:</p> <p>23. Մայրաքաղաքի տոնի կապակցությամբ գեղեցիկ միջոցառում է կազմակերպվել հ.95 միջնակարգ դպրոցի բակում: Միջոցառման ավարտին դպրոցի հարակից տարածքում կազմակերպվել է ծառատունկ:</p> <p>24. Վարչական շրջանի հ.175 միջնակարգ դպրոցում կազմակերպվել է ասմունքի երեկո, որտեղ երեխաները ներկայացրեցին Ավ. Բսահակյանի, Վահագն Դավթյանի, Ե. Չարենցի բանաստեղծությունները:</p>		
--	--	--	--	--	--

Երևանի զարգացման 2015 թվականի ծրագրի իրականացման հաշվետվություն

			<p>25. Վարչական շրջանի և «Փոքր Միեր» կրթահամալիրի գրադարանների աշխատակիցների համագործակցության շրջանակում կրթահամալիրում կազմակերպվել է հանդիպում «Օիժեռնակ» ամսագրի խմբագիր գրող Անուշ Վարդանյանի և գրող-հրապարակախոս Ռուզաննա Ասատրյանի հետ:</p> <p>26. Վարչական շրջանի մարզամշակութային կենտրոնում կազմակերպվել է միջոցառում նվիրված մայրենի լեզվին:</p> <p>27. Մարզամշակութային կենտրոնում կազմակերպվել է թեմատիկ հանդիպում հանրակրթական դպրոցների 8-րդ դասարանների աշակերտների հետ և «Արտիստը» ֆիլմի դիտում:</p> <p>28. Երաժշտական դպրոցի գործունեության արդյունավետության ուղղությամբ իրականացվող աշխատանքների շրջանակում տնօրենի հրավերով Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի դոցենտ, դաշնակահարուհի Վարդուհի Մինասյանը վարպետության դասեր է անցկացրել դպրոցի դաշնամուրային բաժնում:</p> <p>29. Երաժշտական դպրոցում կազմակերպվել է միջոցառում վարչական շրջանում գործող հ.95 միջնակարգ դպրոցի սաների հետ համատեղ՝ նվիրված հայ և արտասահմանյան կոմպոզիտորներին:</p> <p>30. Նուբարաշեն վարչական շրջանի թիվ 34 գրադարանում կազմակերպվել է գեղեցիկ միջոցառում նվիրված Հրանտ Մաթևոսյանի ծննդյան 80-ամյակին:</p>		
--	--	--	--	--	--

Երևանի զարգացման 2015 թվականի ծրագրի իրականացման հաշվետվություն

			<p>31. Համագործակցելով վարչական շրջանի հ.175 միջնակարգ դպրոցի հետ՝ կազմակերպվել է տիկնիկային ներկայացման ցուցադրում դպրոցի 3-րդ դասարանի երեխաների բեմականացմամբ:</p> <p>32. Կազմակերպվել է երաժշտական դպրոցի 20 աշակերտների մասնակցությունը Հայաստանի ազգային ֆիլարմոնիկ նվագախմբի համերգին:</p> <p>33. Գրադարանային հանդիպումների շրջանակում Նուբարաշեն վարչական շրջանի գրադարանում կազմակերպվել է մանկագիր Սաթենիկ Ղազարյանի «Գիշերային մեղեդիներ» գրքի շնորհանդեսը:</p>		
5.	Մարզական միջոցառումներ	2015թ. շարունակական բնույթ է կրելու սպորտային միջոցառումների անցկացումը:	<p>1. Կազմակերպվել է ՀՀ անկախության 24-րդ տարեդարձին նվիրված 24-րդ մարզական խաղերի շրջանային փուլի մրցումները:</p> <p>2. Հայոց ցեղասպանության 100-ամյա տարելիցին նվիրված վարչական շրջանի մարզամշակութային կենտրոնում կազմակերպվել է ձյուդոյի ցուցադրական-պարապմունք և մրցույթ:</p> <p>3. Վարչական շրջանի հանրակրթական դպրոցների 2006-2007թթ. տարիքային խմբերում կազմակերպվել է շախմատի մրցաշար՝ նվիրված Հայոց ցեղասպանության 100-ամյա տարելիցին: Մրցույթի վերջում 1-ին, 2-րդ, 3-րդ տեղերը գրաված փոքրիկները պարգևատրվել են մեդալներով:</p> <p>N ԵՀ-15/10-2 «Լաքի-տրիո» ՍՊԸ</p> <p>4. Կազմակերպվել է վարչական շրջանի թիմերի մասնակցությունը ՀՀ անկախության 24-րդ տարեդարձին</p>		Երևանի բյուջեի վարչական շրջանի մասով տարեկան նախատեսվում է իրականացնել 5 միջոցառում /կնքված պայմանագրի համաձայն/:

Երևանի զարգացման 2015 թվականի ծրագրի իրականացման հաշվետվություն

			<p>նվիրված 24-րդ մարզական խաղերի քաղաքային փուլի մրցումներին՝ վոլեյբոլ, բասկետբոլ, հանդբոլ, սեղանի թենիս, ֆուտբոլ, ֆուտզալ, բադմինթոն, լողափնյա վոլեյբոլ մարզաձևերից:</p> <p>5. Կազմակերպվել է վարչական շրջանի թիմերի մասնակցությունը Սպարտակ մարզադպրոցում կազմակերպված Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողովի գավաթի խաղարկության խաղերի քաղաքային փուլի մրցումներին:</p> <p>6. Հայոց ցեղասպանության 100-ամյա տարելիցին նվիրված.</p> <ul style="list-style-type: none"> • Կենտրոնական զբոսայգում կազմակերպվել է շախմատի մրցաշար՝ «Ավագ և կրտսեր սերունդ» խորագրով: • Կազմակերպվել է վազքի մրցաշար 1998-2002 տարիքային խմբերի երեխաների մասնակցությամբ: <p>7. Կազմակերպվել է մանկապարտեզի երեխաների տեղափոխումը և մասնակցությունը քաղաքապետարանի կողմից Երեխաների պաշտպանության միջազգային օրվան նվիրված Ազատության հրապարակում կազմակերպված մարզական միջոցառմանը և ՀՀ Օլիմպիական կոմիտեի կողմից «Միկա» մարզադաշտում կազմակերպված մարզական միջոցառմանը:</p> <p>8. Կազմակերպվել է Հայաստանի Հանրապետության Նախագահի մրցանակի համար «Լավագույն մարզական ընտանիք» մրցույթի շրջանային փուլի մրցումները:</p> <p>9. «Երևանյան ամառ» ծրագրի շրջանակներում կազմակերպվել է սպորտային ուրախ խաղեր՝ վարչական շրջանի երեխաների մասնակցությամբ: N ԵՀ-15/10-2 «Լաքի-տրիո» ՍՊԸ</p> <p>10. Կազմակերպվել է վարչական շրջանի թիմերի մասնակցությունը «Առողջ սերունդ՝ պաշտպանված հայրենիք» 2015թ. բակային ավանդական փառատոնի քաղաքային փուլի մրցումներին՝ վոլեյբոլ, բասկետբոլ,</p>		
--	--	--	---	--	--

Երևանի զարգացման 2015 թվականի ծրագրի իրականացման հաշվետվություն

			<p>ֆուտբոլ, հանդբոլ, հեծանվավազք, շախմատ, շաշկի մարզաձևերով: Թիմերի մարզիկներին ապահովվել են միասնական մարզահագուստով, օրապահիկով, և կազմակերպվել է նրանց տեղափոխումը:</p> <p>11. Կազմակերպվել է «Նուբարաշեն մարզամշակութային կետրոն»-ի ձյուդոյի 2005-2007թթ. տարիքային խմբերի մարզիկների մասնակցությունը Երևան քաղաքում կազմակերպված ՀՄՄ բաց առաջնությանը:</p> <p>12. «Երևանյան ամառ» ծրագրի շրջանակներում կազմակերպված միջացառումների ընթացքում բազմաֆունկցիոնալ դաշտերում, բակերում, այգիներում բնակչության մասնակցությամբ կազմակերպվել է սպորտային և մարզատրամբանական ուրախ խաղեր:</p> <p>13. Կազմակերպվել է հեծանվավազքի մրցումներ վարչական շրջանի կենտրոնական զբոսայգուն հարակից տարածքում:</p> <p>14. «Երևանյան ամառ» ծրագրի շրջանակներում կազմակերպվել է վարչական շրջանի թիմի մասնակցությունը Ջրաշխարհում կազմակերպված «Երևանյան մարզական ամառ» մարզամշակութային տոնահանդեսին:</p> <p>15. Հայաստանի Հանրապետության անկախության 24-ամյակին նվիրված վարչական շրջանի կենտրոնական զբոսայգում կազմակերպվել է սպորտային ցուցադրական դաս:</p> <p>16. Անկախության տոնին նվիրված կազմակերպվել է տոնական վազք կենտրոնական զբոսայգու շրջակայքում:</p> <p>17. Կազմակերպվել է Հայաստանի Հանրապետության անկախության 24-ամյակին նվիրված մրցույթ՝</p>	
--	--	--	---	--

Երևանի զարգացման 2015 թվականի ծրագրի իրականացման հաշվետվություն

			<p>դպրոցահասակ երեխաների մասնակցությամբ:</p> <p>18. Ապահովվել է Նուբարաշեն վարչական շրջանի վոլեյբոլի թիմի մասնակցությունը Արաբկիր վարչական շրջանի վոլեյբոլի 2001-2002թթ. ծնված պատանիների բաց առաջնությանը՝ նվիրված ՀՀ անկախության 24-րդ տարեդարձին:</p> <p>19. Հանրակրթական դպրոցներում անկացվել է «Նախագորակոչային և գորակոչային տարիքի երիտասարդության հանրապետական ռազմամարզական խաղերի» ներդպրոցական փուլի մրցումները:</p> <p>ՌԵԶ-15/10-2 «ՖՈՏՈՆ»ՄՊԸ 22.11-23.11.2015թ</p> <p>Կազմակերպվել է 2015 թվականին անցկացվելիք նախագորակոչային և գորակոչային տարիքի երիտասարդության հանրապետական ռազմամարզական խաղերի շրջանային փուլի մրցումները:</p> <p>Բրազմաֆունկցիոնալ դաշտում կազմակերպվել է ֆուտբոլի խաղեր:</p> <p>Կազմակերպվել է «Նուբարաշեն մարզամշակութային կենտրոն» ՀՈԱԿ-ի 2001-2003թթ., 2004-2006թթ., 2006-2007թթ. տարիքային խմբերի ձյուդոյի սաների մասնակցությունը Թելման Քոչարյանի անվան հուշամրցաշարին:</p> <p>Ապահովվել է նախագորակոչային և գորակոչային տարիքի երիտասարդության հանրապետական ռազմամարզական խաղերի շրջանային փուլում 1-ին տեղը գրաված հ.95 միջնակարգ դպրոցի հավաքական թիմի մասնակցությունը քաղաքային փուլի մրցումներին: Մարզիկներին տրվել է սպորտային հագուստ և կազմակերպվել է նրանց տեղափոխությունը:</p> <p>Համագործակցելով վարչական շրջանի հ.95 միջնակարգ դպրոցի ֆիզիկուլտուրայի ուսուցչի հետ՝ կազմակերպվել է սպորտլանդիա 7-րդ դասարանների աշակերտների</p>		
--	--	--	---	--	--

Երևանի զարգացման 2015 թվականի ծրագրի իրականացման հաշվետվություն

			մասնակցությամբ: «Նուբարաշեն մարզամշակութային կենտրոն» ՀՈԱԿ-ի ձյուրոյի սաները մասնակցել են Հ.Մ.Մ. բաց առաջնությանը /մարզիչ Գ. Մկրտչյան/, և տարբեր քառային կարգերում երկու երեխա գրավել է 2-րդ տեղ, երեք երեխա 3-րդ տեղ:		
5.1.	Աջակցության ծրագրեր	Շարունակական բնույթ են կրելու անապահով բնակչության համար կազմակերպվող ծրագրերը: Ծնողագուրկ և անապահով ընտանիքների երեխաների համար ապահովվելու են Նուբարաշեն վարչական շրջանում գործող կրթամշակութային օջախների խմբակներում ընդգրկվածությունը: Շարունակական բնույթ են կրելու տոն և հիշատակի օրերին նվիրված միջոցառումների անցկացումը, մասնավորապես մայիսի 9-ին՝ Հաղթանակի օրվա կապակցությամբ, Հայրենական Մեծ պատերազմի մասնակից վետերաններին, արցախյան պատերազմի մասնակից 1-ին և 2-րդ խմբի զինհաշմանդամներին և զոհված ազատամարտիկների ընտանիքներին կտրամադրվի ֆինանսական աջակցություն: Դեկտեմբերի 3-ին՝ Հաշմանդամների միջազգային օրվա կապակցությամբ, այցելություն կկազմակերպվի հաշմանդամություն ունեցող անձանց և նրանց կհանձնվեն	1. № ԵՀ-15/10-3/1 Սոցիալապես անապահով 70 բնակչի ցուցաբերվել է ֆինանսական աջակցություն 2. № ԵՀ-15/10-3/2 Հաղթանակի օրվա կապակցությամբ աջակցություն է ցուցաբերվել 35 ընտանիքի /զոհված ազատամարտիկների ընտանիքներ, Արցախյան պատերազմի 1-ին և 2-րդ խմբի զինհաշմանդամներ և Հայրենական Մեծ պատերազմի մասնակիցներ/ 3. № - «ԵՔ – ԵՀՇՁԲ – 15/1-1» Զոհված, հաշմանդամ դարձած զինծառայողների, ծնողագուրկ ու սակավ ապահովված բազմազավակ ընտանիքների երեխաների ամառային հանգստի կազմակերպման ծրագրով 60 դպրոցահասակ երեխաներ իրենց ամառային հանգիստն են անցկացրել Հանքավանի «Լուսաբաց» ճամբարում: Երեխաների համար ձեռք են բերվել շապիկներ: Կազմակերպվել է այցելություն երեխաներին: Նրանց տրամադրվել են նվերներ, սպորտային պարագաներ և քաղցրավենիք: Սոցիալապես անապահով 6 բնակչի տրամադրվել է ֆինանսական աջակցություն: № ԵՀ – 15/10-3/2 Սոցիալապես անապահով 138 բնակչի տրամադրվել է Ամանորի սննդային փաթեթ: Հունիս և հոկտեմբեր ամիսներին իրականացվել է ԼՂՀ-ում և ՀՀ սահմանամերձ գոտիներում երևանաբնակ պարտադիր ժամկետային զինծառայողների ծնողների հաշվառում ու զորամասեր այցի կազմակերպում:	22.01.2015թ. – 25.12.2015 թ. 22.01.2015 թ. 09.05.2015 թ. «Էլիտբաս» ՍՊԸ 19.06.2015 թ. – 15.08.2015 թ. 17.03.2015 թ. 25.12.2015 թ.	

Երևանի զարգացման 2015 թվականի ծրագրի իրականացման հաշվետվություն

		<p>նվերներ: Ամանորի և Սուրբ Ծննդյան տոների կապակցությամբ Նուբարաշեն վարչական շրջանի սոցիալապես անապահով և առավել խոցելի խմբերին կտրամադրվեն ամանորյա սննդային փաթեթներ: Նուբարաշեն վարչական շրջանի անապահով ընտանիքների երեխաներին, զոհված ազատամարտիկների ընտանիքների երեխաներին, 1-ին և 2-րդ կարգի զինհաշմանդամների երեխաներին կտրամադրվեն ամառային հանգիստը ճամբարում անցկացնելու 60 ուղեգրեր:</p>	<p>Էրեբունի-Երևան-2797» տոնակատարության շրջանակներում վարչական շրջանի թվով 65 ընտանիք ստացել են կենցաղային տեխնիկա:</p>		
5.2.	Համագործակցություն	<p>Կշարունակվի համագործակցությունը հասարակական կազմակերպությունների հետ:</p>	<p>Վարչական շրջանը տարվա ընթացքում շարունակելով համագործակցությունը «Շողիկ» հայկական բարեգործական հասարակական կազմակերպության, «ԱՄՔՈՐ ԱՐՄԵՆԻԱ» հ/կ, «ԼԵՆԱ» հ/կ, «Գայանե « հ/կ, «Մատար» հ/կ հետ՝ իրականացրել է տարբեր սոցիալական ծրագրեր (հագուստի, ձմեռային կոշիկների, հիգիենայի պարագաների, գրենական պիտույքների, խաղալիքների, հաշմանդամների անվասայլակների, ձեռնափայտերի տրամադրում), որում ընդգրկվել են շուրջ 275 շահառու:</p>	<p>01.01.2015 թ. – 25.12.2015 թ.</p>	
5.3.	Այլ ծրագրեր		<ol style="list-style-type: none"> 1. Իրականացվել են սոցիալական աջակցության տարբեր ծրագրեր /կյութական, պարենային և ֆինանսական/, որում ընդգրկվել է շուրջ 325 շահառու: 2. Հայոց բանակի կազմավորման 23 ամյակի կապակցությամբ երկու զինծառայող ունեցող 1 բնակչի տրվել է նվեր և ծաղիկներ: 3. Մարտի 8-ին՝ կանանց միջազգային օրվա կապակցությամբ վաստակաշատ թոշակառու 5 ուսուցչի տրամադրվել են նվերներ և ծաղիկներ: 		

Երևանի զարգացման 2015 թվականի ծրագրի իրականացման հաշվետվություն

			<ol style="list-style-type: none"> 4. Անհատ բարերարի հետ համագործակցության արդյունքում կազմակերպվել է միջոցառում սոցիալապես անապահով և հաշմանդամություն ունեցող 40 երեխաների համար: 5. Ապրիլի 2-ին՝ Աուտիզմի իրազեկման համաշխարհային օրվա շրջանակներում 3 բնակչի տրամադրվել է ֆինանսական աջակցություն: 6. Մայրության և գեղեցկության տոնի կապակցությամբ «Նուբարաշեն» պոլիկլինիկայում սոցիալապես անապահով 10 հղի կանանց համար կազմակերպվել է թրեյնինգ, որի ավարտին նրանց նվիրվել են ծաղիկներ և մանկական սրբիչներ: 7. Վարչական շրջանի գեղեցկության սրահներիցի մեկի հետ համագործակցության արդյունքում սոցիալապես անապահով 58 բնակիչ օգտվել են անվճար վարսավիթական ծառայություններից: 8. Տնային պայմաններում միայնակ տարեցների և հաշմանդամների սոցիալական սպասարկման կենտրոնին վարչական շրջանի ղեկավարի աջակցությամբ տրամադրվել է ավտոբուս՝ միայնակ տարեցների և հաշմանդամների այցը Օշականի եկեղեցի, Բյուրականի աստղադիտարան, ռեստորանային համալիր և համերգին ապահովելու համար: 9. Մտավոր թերզարգացում ունեցող երեխաների թիվ 11 հատուկ /օժանդակ/ դպրոցի երեխաներին տրամադրվել են խաղալիքներ, հագուստ, հիգիենայի պարագաներ և քաղցրեղեն: 10. Վարչական շրջանի ղեկավարի աջակցությամբ 3 սոց. անապահով միայնակ թոշակառուի տրամադրվել է դեղորայք: 11. Մեպտեմբերի 21-ին՝ անկախության տոնի առթիվ վարչական շրջանում կազմակերպված միջոցառման ժամանակ երեխաներին բաժանվել է պաղպաղակ: 12. Տարեցների միջազգային օրվա կապապցությամբ 18 	
--	--	--	---	--

Երևանի զարգացման 2015 թվականի ծրագրի իրականացման հաշվետվություն

			<p>տարեց բնակչի տրամադրվել է սննդային փաթեթ: Ծաղիկներ և քաղցրավենիք է բաժանվել պատահական անցորդ տատիկներին և պապիկներին:</p> <p>13. Էրեբունի-Երևան 2797 տոնակատարությունների շրջանակում, հյուրընկալվել են Գեղարքունիքի մարզի Արծվանիստ համայնքի 20 դպրոցահասակ երեխաներ: Ապահովվել է նրանց մասնակցությունը տոնակատարության շրջանակներում</p> <p>14. կազմակերպված միջոցառումներին, նրանց այցելությունը տեսարժան վայրեր: Երեխաների համար կազմակերպվել է հյուրասիրություն, հանձնվել նվերներ և ապահովվել նրանց տեղափոխումը Արծվանիստ:</p> <p>15. Դեկտեմբերի 3-ին՝ հաշմանդամների միջազգային օրվա կապակցությամբ վարչական շրջանի ղեկավարի աջակցությամբ հաշմանդամություն ունեցող 40 բնակչի տրամադրվել են հիգիենայի պարագաներ:</p> <p>16. «Մի կտոր ջերմություն» ակցիայի շրջանակներում խմորեղեն է բաժանվել նուբարաշենաբնակ 30 միայնակ տարեցների:</p> <p>17. Սոցիալապես անապահով, հաշմանդամություն ունեցող, նպաստառու ընտանիքների 60 երեխայի տրամադրվել է Ամանորի ներկայացման տոմսեր:</p> <p>№ ԵՔ-ԲԸԾՁԲ – 15/42 1.Ընտանիքի մահացած անդամի հուղարկավորության ծախսերը փոխհատուցելու համար 15 ընտանիքի ցուցաբերվել է դրամական փոխհատուցում:</p>		
7	Առողջապահություն	Պետպատվերի շրջանակներում վիրահատության և բուժման 50 միջնորդագրեր կտրամադրվեն սոցիալական համապատասխան խմբերին:	Պետ. պատվերի շրջանակներում անվճար բուժօգնություն ստանալու նպատակով 12 քաղաքացու տրվել են միջնորդագրեր: «Ձեզ համար կանայք» և «Երևանյան ամառ» առողջապահական ակցիաների շրջանակներում վարչական շրջանի պոլիկլինիկայում անվճար	12.01.2015 թ. – 25.12.2015 թ.	

Երևանի զարգացման 2015 թվականի ծրագրի իրականացման հաշվետվություն

			<p>հետագոտություն է անցել 380 բնակիչ: Վարչական շրջանի սոցիալապես անապահով 7 հաշմանդամներ առողջության վերականգման նպատակով Երևանի քաղաքապետարանի կողմից ուղեգրվել են Ադվերանի «Գանձաղբյուր» առողջարան:</p>		
--	--	--	---	--	--

Շենգավիթ վարչական շրջան					
Հ/հ	Ծրագրի կամ միջոցառման անվանում	Նախատեսված աշխատանքների նկարագիր	Աշխատանքների իրականացման գործընթաց	Իրականացնող կազմակերպություն, կատարման ժամկետ	Նշումներ
	2	3	4	5	6
1.	Տարածքային բարեկարգման աշխատանքներ				
1.1	Փողոցների ասֆալտ-բետոնե ծածկերի ընթացիկ վերանորոգում	2015թ. նախատեսվում է իրականացնել շուրջ 130.0 հազ. քմ ասֆալտ-բետոնե ծածկի վերանորոգման աշխատանքներ:	ԵՔ-ԲԸԱՇՁԲ-15/78-16 Իրականացվել են ասֆալտապատման աշխատանքներ 114,0 հազ. քառ. մետր հետևյալ հասցեներում՝ Արարատյան 62/1, 62/2, 66 շենքերի հարակից տարածք Շիրակի 2, 4, 6Ա շենքերի հարակից տարածք Շիրակի 2-րդ նրբ. 14 շենքերի հարակից տարածք Մանթաշյան 6, 4/7 շենքերի հարակից տարածք Գ. Նժդեհի 27/1 շենքերի հարակից տարածք Շիրակի 1-րն, 2-րդ,և 3-րդ օբյեկտների (շենքերի) հարակից տարածք, Շիրակի 20 շենքերի հարակից տարածք,Արտաշիսյան 88 բակային և միջբակային տարածքներում, <<Կարմիր Բուր>> պոլիկլինիկայի հարակից տարածք, հ. 12 դպրոցի հարակից տարածքում,Վ. Շենգավիթ 2-րդ փողոց, Արարատյան փողոց,Ս. Տարոնցու փ., Ս. Տարոնցու նրբ., Եղ. Թադևոսյան նրբ., Ն. Շենգավիթ 11 փ., Ն. Շենգավիթ 6փ. Նորագավիթ 1-ին փ. 2-րդ նրբ., Նորագավիթ 2-րդ փ. 1-ին նրբ.,Նորագավիթ 13փ., Նորագավիթ 14 փ.,Նոր Խարբերդ թաղամաս,Եղբայրության փ., Եղ. Թադևոսյան փ.,Մանթաշյան փ., Մանթաշյան փ. Նրբանցք, Մանանդյան փ., Հ. Հովհաննիսյան փ., Տիմիրյազևի փ.	«Նարինանյան» ՍՊԸ 02.03.2015թ.- 30.10.2015թ.	Նախատեսված շուրջ 130.0 հազ. քմ ասֆալտ-բետոնե ծածկի վերանորոգման աշխատանքները ներառում են նաև քաղաքային ծրագիրը, սակայն 2015թ. համար բյուջեով հաստատվել է շուրջ 114,0 հազ. քմ:

Երևանի զարգացման 2015 թվականի ծրագրի իրականացման հաշվետվություն

			Ղարիբջանյան փ., Կատովսկի փ.:		
1.2	Եզրաքարերի վերանորոգում	2015թ. նախատեսվում է 3500գծմ եզրաքարերի հիմնանորոգում և վերանորոգում:	ԵՔ-ԲԸԱՇՁԲ-15/28 Իրականացվել է ընդհանուր առմամբ 3500 գծմ եզրաքարերի նորոգման և տեղադրման աշխատանքներ հետևյալ հասցեներում՝ Գ. Նժդեհի հրապարակում և Արարատյան փողոցում, Եղ. Թաղևոսյան նրբանցքում /Ա. Կարապետյանի անվ. այգու մոտ/ ,Ն. Շենգավիթի 6-րդ փողոցում, Եղ. Թաղևոսյան նրբ., Արարատյան, Եղբայրության, Մանթաշյան, Շիրակի, Բագրատունյաց, Մանանդյան, Ս. Տարոնցու, փողոցներում և փողոցներին հարող բակային տարածքներում Գ. Նժդեհի հրապարակում, Արշակունյաց պողոտայի և Բագրատունյաց փողոցի խաչմերուկում:	«Համախոհ» ՍՊԸ 30.01.2015-30.09.2015	
1.3	Բակային տարածքների բարեկարգում	Իրականացվելու է 15 բակային տարածքի ընթացիկ վերանորոգման աշխատանքներ: Նախատեսվում է իրականացնել 6 բակի բարեկարգման աշխատանքներ, կտեղադրվեն 20 մանկական և 60 սպորտային խաղ, 22 զրուցատաղավար, 128 նստարան:	N ԵՔ-ԲԸԱՇՁԲ-15/30 Բարեկարգվել են 6 բակային տարածք հետևյալ հասցեներում. Եղ. Թաղևոսյան 2 շ Ս. Տարոնցի նրբ. 13 շ Շիրակի 2-րդ և 3-րդ օբյեկտ /շենք/ Շիրակի 72 շ Բագրատունյաց 20 և 22 շ Հ. Հովհաննիսյան փող. / Կարմիր Բլուրի հնավայրի հարևանությամբ կառուցվել է այգի/:	«Համախոհ» ՍՊԸ.Ժամկետը՝ 04.02.2015-30.10.2015	
			N ԵՔ-ԲԸԱՇՁԲ-15/118 Ընթացիկ վերանորոգման աշխատանքներ են կատարվել Ս. Տարոնցի նրբ. 14, 16, Գ, Նժդեհի փող.		

Երևանի զարգացման 2015 թվականի ծրագրի իրականացման հաշվետվություն

			<p>30/1, 30/2, Մանանդյան փող. 9, 9ա, Եղբայրության 3, 3ա, Նիզամի 13, Մանանդյան 14 շենքերի, Կարմիր Բլուրի հ. 5, Արշակունյաց 46/22., Արշակունյաց 48/2 շ., Ֆրունզե 6/3 և 6/4 շ., Չեխովի 10շ., Բագրատունյաց 11 և 11ա շ., Ս. Տարոնցու 15շ., Մանթաշյան 1 և 3շ., Շիրակի 2-րդ և 3-րդ օբյեկտ /շենք/ (կատարվել է լրացուցիչ բարեկարգման աշխատանքներ) հասցեներում: Աշխատանքներն ավարտվել են:</p> <p>Վարչական շրջանի և համատիրությունների համատեղ ուժերով բակային տարածքների ընթացիկ նորոգման աշխատանքներ են կատարվել հետևյալ 15 հասցեներում՝ Ս. Տարոնցի նրբ. 14, 16, Գ, Նժդեհի փող. 30/1, 30/2, Մանանդյան փող. 9, 9ա, Եղբայրության 3, 3ա, Նիզամի 13, Մանանդյան 14 շենքերի, Կարմիր Բլուրի հ. 5, Արշակունյաց 46/22., Արշակունյաց 48/2 շ., Ֆրունզե 6/3 և 6/4 շ. և Չեխովի 10շ. հասցեներում: Վարչական շրջանի տարածքում 2015թ. ընթացքում տեղադրվել են 20 մանկական և 60 սպորտային խաղ, 22 գրուցատաղավար և 128 նստարան:</p>		
1.4	Արտաքին լուսավորության ցանցի վերանորոգում		Տե՛ս կոմունալ տնտեսության վարչության հաշվետվությունը:		
2. Կանաչ տարածքների ընդլայնում պահպանում և ոռոգում					
2.1	Կանաչ տարածքների պահպանում և խնամք	Նախատեսվում է ընդարձակել կանաչ տարածքները, ստեղծել սիզամարգեր, անտառ-պուրակներ, ընդլայնել ոռոգման ցանցը: Կստեղծվի անտառ-պուրակ Կարմիր Բլուր հնավայրին կից (500քմ) և Արշակունյաց պողոտայի գուգահեռ՝ Նորագավիթի երկաթգծի կամուրջից մինչև Շիրակի փողոց հատվածում	<p>ԵՔ-ՇՀԱՇՁԲ-15/1-9 Համաձայնագիր 1 Կատարվել են այգիների, պուրակների և սիզամարգերի տերևներից և աղբից մաքրման աշխատանքներ: Ստեղծվել է Կարմիր բլուր հնավայրին կից անտառ-պուրակ /500քմ/: Արշակունյաց պողոտայի գուգահեռ՝ Նորագավիթի երկաթգծի կամուրջից մինչև Շիրակի փողոց հատվածում (7000քմ) տնկվել է 100 հատ սոսի և հացենի տեսակի ծառեր: Կատարվել են կանաչ տարածքներից մացառների հեռացման /100000 քմ/, ծառերի չորուկների, կոճղաշիվերի կտրման /14500 ճյուղ/ և բնաբաժակների</p>		

Երևանի զարգացման 2015 թվականի ծրագրի իրականացման հաշվետվություն

		(7000քմ): Նախատեսվում է բարեկարգել Կոմիտասի անվան զբոսայգին՝ 4.7հա:	փխրեցման աշխատանքներ: Կատարվել է խոտհունձ Կոմիտասի անվան պանթեոնի տարածքում, Եղբայրության փողոցում: Կատարվել են ծառերի չորուկների, կոճղաշիվերի կտրման /17000 ճյուղ/ և բնաբաժակների փխրեցման աշխատանքներ /200 քմ/: Կատարվել է խոտհունձ սիզաքաղ մեքենայով և գերանդիով:		
2.2	Սիզամարգերի և ծաղկային տարածքների ստեղծում և խնամք	Կիրականացվի սիզամարգերի ընդլայնում հետևյալ հասցեներում՝ Նիզամի փողոց՝ 870 քմ, Շիրակի փողոց՝ 5300 քմ, Հ. Հովսեփյան փողոց՝ 1053 քմ, Մանանդյան փողոց՝ 1660 քմ, Բագրատունյաց փողոց՝ 550 քմ:	Ծաղկանոցները փխրեցվել են: Փխրեցվել և ոռոգվել են ծաղկանոցներում կակաչների՝ աշնանը տնկված սոխուկները: Կազմվում են ծաղկային և գեղարվեստական ձևավորման նախնական էսքիզները: Կատարվել են կակաչների սոխուկների հողից հանման, չորացման և պահեստավորման աշխատանքներ: Տնկվել է 113000 ծաղիկ և 2000 հատ վարդ: Ծաղկանոցները փխրեցվել են, տնկվել են պետունյա, գերան (փիփերթ), տակետես, գեորգինա, ցինյա, պորտուլակ, բեզոնիա, գեմֆրենա, շան բերան տեսակի ծաղիկներ, ընդամենը՝ 23800 հատ: Հ.Հովսեփյան փողոցում ստեծվել է 420 քմ սիզամարգ:		Հ.Հովսեփյան փողոցում 1053 քմ սիզամարգի փոխարեն ստեղծվել է 420 քմ, որովհետև ջրագիծ անցկացվել է 420քմ: Նիզամի փողոց՝ 870 քմ, Շիրակի փողոց՝ 5300 քմ, Հ. Մանանդյան փողոց՝ 1660 քմ, Բագրատունյաց փողոց՝ 550 քմ ջրագծի բացակայության պատճառով չի իրականացվել սիզամարգերի ստեղծման աշխատանքներ:
2.3	Ծառատունկ		<ul style="list-style-type: none"> Կատարվել է ըստ հասցեների հաշվառում դատարկ բնաբաժակների և ըստ ծառատեսակների միաժամանակ սկսվել են փոսերի փորման աշխատանքները ծառատունկի և շաբաթօրյակի կազմակերպման համար: 		

Երևանի զարգացման 2015 թվականի ծրագրի իրականացման հաշվետվություն

			<ul style="list-style-type: none"> • Նախատեսվում է տնկել 631 ծառ հետևյալ հասցեներում՝ Արշակունյաց պողոտայում՝ 240, Բագրատունյաց փ. 48, Չեխովի փողոց՝ 55, Մանթաշյան փողոց՝ 19, Արտաշիսյան փողոց՝ 74, Մայիսի 9-ի փ.՝ 18, Մանանդյան փողոց՝ 24, Անանուն փողոց՝ 15, «Շողակաթ» ՀՀ հարող պուրակում՝ 46, Մ.Գորգիսյանի անվան պուրակում՝ 20, Երևանյան լճին հարող տարածք՝ 45, Հ.Հովսեփյան փ.՝ 17, Եղբայրության փ.՝ 10: • Գնդաձև ակացիա տեսակի ծառեր են տնկվել Արշակունյաց պողոտայում՝ 45 հատ, Մ.Գորգիսյանի անվան այգում՝ 20, «Շողակաթ» ՀՀ հարող պուրակում՝ 25: • Տնկվել է 3000 ծառ հետևյալ հասցեներում՝ Արշակունյաց պողոտայում՝ 157, Բագրատունյաց փ. 48, Չեխովի փողոց՝ 55, Մանթաշյան փողոց՝ 19, Արտաշիսյան փողոց՝ 74, Մայիսի 9-ի փ.՝ 18, Մանանդյան փողոց՝ 24, Անանուն փողոց՝ 15, «Շողակաթ» ՀՀ հարող պուրակում՝ 46, Մ.Գորգիսյանի անվան պուրակում՝ 20, Երևանյան լճին հարող տարածք՝ 45, Հ.Հովսեփյան փ.՝ 17, Եղբայրության փ.՝ 10, մանկապարտեզների, դպրոցների, համատիրությունների կողմից տնկվել են 2200 հատ ծառ, Արշակունյաց պողոտայում՝ Կոմիտասի անվան այգու դիմացի հատվածում տնկվել է 82 հատ կիպարիս: «Կարմիր բլուր» հնավայր՝ 170 հատ: Աշնանային ծառատունկը կազմակերպելու համար կատարվել են նոր տնկվող ծառերի հաշվառում՝ • Սոսի՝ 187 հատ • Հացենի՝ 1100 հատ., • Գնդաձև ակացիա՝ 105 հատ., 		
--	--	--	--	--	--

Երևանի զարգացման 2015 թվականի ծրագրի իրականացման հաշվետվություն

			<ul style="list-style-type: none"> • Բարդի՝ 100 հատ., • Ընդամենը՝ 1492 ծառ • Թփեր /բիրուչինա/՝ 1500 հատ. • Ծառատունկն իրականացնելու համար նախապես կատարվել է փոսերի փորման աշխատանքներ՝ ըստ հասցեագրված տարածքների: • Աշնանային ծառատունկի ժամանակ <<Շենգավիթ-Կանաչապատում>> ՓԲԸ կողմից տնկվել են թվով 990 ծառեր (հացենի, սոսի, բարդի, գնդաձև ակացիա), • Կարմիր բլուր հնավայրի հարակից պուրակում՝ թվով 50 մշտադալարներ, • բիրուչինա տեսակի թփեր՝ 500 հատ, • համատիրությունների կողմից՝ 503 ծառեր • դպրոցների, մանկապարտեզների կողմից՝ 625 ծառեր (խնձորենի, կաղնի, հացենի), <p>Ընդամենը 2168 հատ ծառ, 500 հատ թուփ:</p>		
2.4	Հուշարձանների պահպանում		<p>Մաքրվել են Նորագավիթ 1-ին փողոցում տեղադրված «Զոհվածների», Արշակունյաց պողոտայի վերջնամասում՝ Էրեբունի օդանավակայանին կից «Զոհված օդաչուների» հուշարձանների շրջակայքը. «Շենգավիթ» պատմամշակութային հնավայրի շրջակայքը, Շիրակի փողոցի հ.14 շենքին փակցված Մովսես Գորգիսյանի հուշաքարի հարակից տարածքը: Բարեկարգման և կանաչապատման աշխատանքներ են կատարվել Եղ. Թադևոսյանի կիսանդրու հարակից տարածքում:</p>		
2.5	Չոր ծառերի հատում և երիտասարդացում, ծառերի խոր էտ		<p>Կատարվել է 1 հատ չոր ծառի հատում, 2268 ծառերի երիտասարդացում և 178 ծառերի խոր էտ:</p> <p>Ծառերի էտման և ձևավորման աշխատանքներ են կատարվել հետևյալ հասցեներում՝ Բագրատունյաց փողոց, Արտաշիսյան փողոց, Գ.Նժդեհի փողոց, Հ.Հովսեփյան փողոց:</p> <p>Կոմիտասի այգում՝ Պանթեոնի տարածքում</p>		

Երևանի զարգացման 2015 թվականի ծրագրի իրականացման հաշվետվություն

			<p>կրապատվել է շուրջ 350 ծառ:</p> <p>Բակային տարածքներում կատարվել է ծառերի էտման և ձևավորման աշխատանքներ հետևյալ հասցեներում՝ Արտաշիսյան 2-րդ նրբ. 1 տան մոտ, Արտաշիսյան փող. հ.86 շենքի մոտ, Մայիսի 9 փող. հ. 6 շենքի էտնամաս, Եղբայրության փող. հ.17 ա շենքի մոտ, Շիրակի փող. 13 շենքի բակ, Նժդեհի 8 և 10 շենքերի բակ:</p> <p>6 հատ չոր ծառի հատում Գ. Նժդեհի 27/1,1 հատ Ե. Թադևոսյան 7 հասցեում:</p> <p>Կատարվել են նաև խաչմերուկներում լուսացույցի տեսանելիությանը խանգարող ծառերի ճյուղերի հեռացման աշխատանքներ:</p> <p>Մշտադալարների բուժման աշխատանքներ են կատարվել հետևյալ հասցեներում՝ Կոմիտասի անվ. պանթեոնում, Արշակունյաց պողոտայում, Գ. Նժդեհի փողոցում:</p> <p>Ծառերի բուժման աշխատանքներ են կատարվել հետևյալ հասցեներում՝ Ե. Թադևոսյան փող. հ. 10 հ. 12 Արշակունյաց պող. հ. 49/22, 46/1, 50/1, Գ. Նժդեհի փող. հ. 9 ր 6/5, Եղբայրության փող. հ.7 և հ. 5, Նիզամի փող. հ.24 շենքերի բակերում:</p> <p>Վթարային ծառերի հատման և մասնակի ձևավորման աշխատանքներ են կատարվել հետևյալ հասցեներում՝ Ա. Կարապետյանի անվ. պուրակ /111 ծառ/, Կարմիր բլուր հնավայրի հառակից տարածք /17 ծառ/, Չեխովի փող. /17 ծառ/, Շիրակի փող. /212 ծառ/, Անանուն փող. /22 ծառ/, Արշակունյաց պող. /69 ծառ/, Բագրատունյաց փող. / 12 ծառ/, Եղ. Թադևոսյան փող. /7 ծառ/, Եղբայրության փող. /3 ծառ/, Ս. Տարոնցի փող /17 ծառ/, Ս. Տարոնցի նրբ. 4-րդ շ./1 ծառ/, Ս. Տարոնցի 11 շ. /1 ծառ/, Արշակունյաց փող. հ. 48/3 շ. /2 ծառ, Արշակունյաց պող. հ.30 շ. /3 ծառ/, Արշակունյաց պող. հ. 51 շ. բակ /20 ծառ/, Արտաշիսյան 59/1 / 1ծառ /, Արտաշիսյան 39 շ/ 1 ծառ/, Շահամիրյանների 22 /2 / Բագրատունյաց փող. հ.12 շ.բակ /1 ծառ/, Եղբայրության</p>		
--	--	--	---	--	--

Երևանի զարգացման 2015 թվականի ծրագրի իրականացման հաշվետվություն

			փող. հ 16շ. բակ /2 ծառ/, Եղբայրության 22 շ /4 ծառ/, Մանթաշյան փող. հ.28 .բակ /2 ծառ/, Կաշեգործների 155/1 /3 ծառ/, Արշակունյաց պողոտա, Էրեբունի օդանավակայանի հարող տարածք /, Եղբայրության 22 շ /4 ծառ/, Գ. Ժդեհի 16 և 18 շ /4 ծառ/, Գ. Նժդեհի 1շ /1 ծառ/, Ֆրունզե 60ա /1ծառ/, Հ18 դպրոցի բակ /27 ծառ/:		
2.6	Ոռոգման ցանցի վերանորոգում	Կիրականացվի ոռոգման ցանցի վերանորոգում հետևյալ հասցեներում՝ Նիզամի փ. 750գծմ, Շիրակի փ. 6000գծմ, Հ.Հովսեփյան փ. 500գծմ, Մանանդյան փ. 1050գծմ, Բագրատունյաց փ. 1500գծմ:	Վարչական շրջանի միջոցներով նոր ոռոգման ջրագիծ է անցկացվել հետևյալ հասցեներում՝ Բագրատունյաց փողոցից դեպի Իսակովի պողոտա տանող թեք լանջում /200 գծմ/, Կարմիր Բլուր հնավայրի հարակից տարածքում (450գծմ), Երևանյան լճի հարակից պոմպակայանից մինչև <<Ալաշկերտ>> մարզահամալիրին հարող լանջ (310 գծմ), Հ.Հովսեփյան փողոց՝ 300 գծմ, Շիրակի փողոց՝ 1087 գծմ: Ոռոգման ցանցի խողովակների ներկման աշխատանքներ են կատարվել՝ Գ.Նժդեհի փողոցում՝ 2200գծմ, Գ.Նժդեհի հրապարակում՝ 500գծմ, Բագրատունյաց փողոցում՝ 1200 գծմ, Եղ.Թադևոսյան փողոցում՝ 300գծմ: Ոռոգման ցանցի խողովակների վերանորոգման աշխատանքներ են կատարվել հետևյալ հասցեներում՝ Գ. Նժդեհի անվ. հրապարակում, Եղ.Թադևոսյան, Եղբայրության, Ֆրունզե, Մանանդյան փողոցներում, Կոմիտասի անվ. Պանթեոնում, Շողակաթ Հ/Ը հարող պուրակում, Մ. Գորգիսյանի անվ. պուրակում, Գ. Նժդեհի փող. Հ.9շ. բակ, Բագրատունյաց փող. 21 շ բակ, Բագրատունյաց 40ա շ. բակ, Արշակունյաց պող. հ.44 շենքի կամարանցումի մոտ:		Բյուջեով հաստատված ոռոգման ցանցի վերանորոգման, ինչպես նաև նոր ցանցի կառուցման աշխատանքներն իրականացվել են:
3.Բնակարանային ֆոնդի շահագործում, սպասարկում և նորոգում					
3.1	Հարթ տանիքների նորոգում /իզոգամ/	Նախատեսվում է իրականացնել 4358քմ հարթ տանիքների վերանորոգման աշխատանքներ:	N ԵՔ-ԲԸԱՇՁԲ-15/60 Վերանորոգվել է 6140 քմ հարթ տանիք հետևյալ հասցեներում՝ Արարատյան 7 Եղ. Թադևոսյան 6, 8, , Արշակունյաց 42/3, 44/3, Գ. Նժդեհի 27/1, Չեխովի 27, Լագոյի 4, Շիրակի 7ա, Աերացիա 1/10, Արշակունյաց 30, Շիրակի 58/1, Արագածի 26, Շնչենկո 10, Ն. Շենգավիթ	«Վ.Վարդանյան» ՍՊԸ 06.03.2015-01.10.2015	Պայմանագիրը հաստատելիս ավելացել է հարթ տանիքների վերանորոգման աշխատանքների

Երևանի զարգացման 2015 թվականի ծրագրի իրականացման հաշվետվություն

			11 փող. 37/3, Ն. Շենգավիթ 11-րդ փող. 39/2, Չեխովի 1, Չեխովի 8, Բագրատունյաց 51, Բագրատունյաց 53, Ս. Տարոնցու 7/2, Ս. Տարոնցու 7/3, Մարվարտի 85/1, Շնչենկո 4, Արարատյան 5, Եղ. Թադևոսյան 6, Մանանդյան 1/2, Ֆրունզե 6/2, Ֆրունզե 8/1, 18, Վ. Շենգավիթ 2-րդ փող. 20/2, Վ. Շենգավիթ 2-րդ փող. 20/3:		ծավալը:
3.2	Թեք տանիքների նորոգում /ազրոհերձաքար/	Նախատեսվում է իրականացնել 9100քմ թեք և 3500զժմ անձրևատար խողովակների վերանորոգման աշխատանքներ:	ԵՔ-ՇՀԱՊՁԲ-15/97-1 Համատիրություններին տրամադրված ցինկապատ թիթեղներով փոխվել է 4860զմ անձրևատար խողովակ, ազրոջիֆերով վերանորոգվել է 9130քմ թեք տանիք:	«Համախոհ» ՍՊԸ 25.03.2015 - 30.09.2015	
3.3	Վերելակների հիմնանորոգում		ԵՔ-ԲԸԱՊՁԲ-15/15 Վերանորոգվել են Արշակունյաց պողոտայի հ. 42 շենքի 1-ին մուտքի, Արշակունյաց պողոտայի հ. 48/1 շենքի 2-րդ մուտքի, Գ. Նժդեհի փողոցի 28 շենքի 2-րդ մուտքի, Գ. Նժդեհի 26 շենքի և Եղ. Թադևոսյան փողոցի հ. 12/2 շենքի վերելակները:	«Ույուտ վերելակ» ՍՊԸ 26.03.2015 - 01.10.2015	
3.4	Մուտքերի վերանորոգում	Շենքերի շքամուտքերի բարեկարգման աշխատանքների շրջանակում կտեղադրվի 122 դուռ:	Ն ԵՔ-ԲԸԱՇՁԲ-15/29 Վերանորոգվել է 122 մուտք, տեղադրվել է 157 դուռ Չեխովի 11, Մանանդյան 29, Ս. Տարոնցու3, Ս. Տարոնցու5, Ս.Տարոնցունրբ13, Ս.Տարոնցունրբ16, Շիրակի 70, Շիրակի 72, Շիրակի 1-ինօբյեկտ, Շիրակի 2-րդօբյեկտ, Շիրակի 3-րդօբյեկտ, Եղ. Թադևոսյան 2, Արտաշիսյան 51/17շենքերի Մայիսի 9-ի 9, Չեխովի 38 , Շիրակի 4-րդնրբ. 1, Շիրակի 4-րդնրբ. 2, Շիրակի 4-րդնրբ. 3, Շիրակի 4-րդնրբ. 4, Շիրակի 4-րդնրբ. 5, Շիրակի 4-րդնրբ. 6, Շիրակի 4-րդնրբ. 7, Շիրակի 4-րդնրբ. 9, Շիրակի 4-րդնրբ. 10, Շիրակի 4-րդնրբ. 11, Շիրակի33, Շիրակի 72, Բագրատունյաց 22/2, Բագրատունյաց 22/3, Բագրատունյաց 26ա, Բագրատունյաց 28, Մանթաշյան2, Մանանդյան 9ա, Մանանդյան16, Մանթաշյան 4/2, Նիզամի 13, Մանանդյան 14, Եղ. Թադևոսյան 3 շենքերի մուտքերում:	«Աֆալան» ՍՊԸ 18.02.2015 - 01.10.2015	Կատարված աշխատանքների որակի և կատարման օրացույցային գրաֆիկի խախտում չի արձանագրվել

Երևանի զարգացման 2015 թվականի ծրագրի իրականացման հաշվետվություն

	4.Կրթություն, մշակույթ և սպորտ				
4.1	Կրթական միջոցառումներ	2015 թվականին նախատեսվում են շինարարական և բարեկարգման աշխատանքներ հ.հ. 126 և 133 մանկապարտեզներում: Մանկապարտեզներում կիրականացվեն սանհանգույցների, կոյուղագծերի, ինչպես նաև ջրագծերի նորոգման և ներքին հարդարման աշխատանքներ:	N ԵՔ-ԲԸԱՇՁԲ-15/69 N ԵՔ-ԲԸԱՇՁԲ-15/70 Հ. 126 մանկապարտեզում իրականացվել են մասնակի վերանորոգման աշխատանքներ: Հ.133, հ. 146 և 139 մանկապարտեզներում իրականացվել է սանհանգույցների, կոյուղագծերի, ինչպես նաև ջրագծերի նորոգման և ներքին հարդարման աշխատանքներ: Համագործակցության բազմազան ծրագրեր են իրականացվել Սյունիքի մարզի, ՌԴ Ստավրապոլ, Սոչի քաղաքների և ԼՂՀ դպրոցների ու մանկապարտեզների հետ:	«Կոմերցիալ պարտներս» ՍՊԸ 03.03.2015թ.- 01.10.2015թ.	
4.2	Մարզական միջոցառումներ	Առողջ ապրելակերպի խթանմանն ուղղված կկատարվեն մարզական միջոցառումներ, ֆլեշմոբեր, սպորտլանդիաներ, մրցումներ: Նախատեսվում է մարզական գույքի արդիականացում: Քայլեր կձեռնարկվեն մարզադպրոցների գործունեության արդյունավետության բարձրացման ուղղությամբ:	Վարչական շրջանում իրականացվել է 6 սպորտային միջոցառում՝ "ՀՀ անկախության տարեդարձին նվիրված մարզական խաղեր", "ՀՀ ԱԺ գավաթի խաղարկություն", "Երեխաների օրվան նվիրված սպորտլանդիա", "Լավագույն մարզական ընտանիք", "Առողջ սերունդ՝ պաշտպանված հայրենիք մարզական փառատոն", "Նախագորակոչային և գորակոչային տարիքի երիտասարդության ռազմական խաղեր": Միաժամանակ վարչական շրջանում կատարվել են բակային ֆուտբոլի, բասկետբոլի, շախմատի և այլ մրցաշարեր: Քաղաքացիներին դեպի սպորտը ուղղորդելու և առողջ ապրելակերպ քարոզելու նպատակով մարզաառողջարարական աշխատանքներ են իրականացվել վարչական շրջանի բակերում:		
4.3	Մշակութային միջոցառումներ	Միջոցներ կձեռնարկվեն լուծելու և բարելավելու մշակութային հիմնարկների շենքային պայմանները՝ առաջնային ուշադրություն	Հիմնանորոգման աշխատանքներ են իրականացվել Ա.Տիգրանյանի անվան երաժշտական դպրոցում, թիվ 5 մշակույթի կենտրոնում, հ.16, 32 գրադարաններում: Իրականացվել են մի շարք մշակութային միջոցառումներ՝ Հայոց բանակի 23-րդ տարեդարձ,		

Երևանի զարգացման 2015 թվականի ծրագրի իրականացման հաշվետվություն

		<p>դարձնելով տանիքի, ջրագծերի և կոյուղագծերի ներքին ցանցի և ջերմամեկուսացման և էներգախնայող համակարգերին:</p> <p>Կանցկացվեն տոն և հիշատակի օրերին նվիրված միջոցառումներ:</p> <p>Կազմվել է Եղեռնի 100-ամյակին նվիրված միջոցառումների ծրագիր, համաձայն որի նախատեսվում է կազմակերպել թվով 14 միջոցառում, ինչպես վարչական շրջանի մշակութային կրթօջախներում, այնպես է Ծիծեռնակաբերդի հուշահամալիրում:</p>	<p>Մայրության և գեղեցկության տոն, Սիրո բարեխոս Սուրբ Սարգսի և երիտասարդների տոն, Տեսառնընդառաջի տոն, Թատրոնի միջազգային օր, հանդիպումներ գրողների, արվեստագետների հետ, Մեծ եղեռնի 100-ամյա տարելից, Այցելություն Ցեղասպանության թանգարան և Ծիծեռնակաբերդի հուշահամալիր, Ցեղասպանության զոհերի հիշատակին նվիրված հուշ-ցերեկույթի կազմակերպում, ֆիլմի դիտումներ, Ծիծաղի միջազգային օրվան, Սուրբ Զատիկին, Կանանց տոնին, Մայիսյան Հաղթանակներին, Հայրենական Մեծ պատերազմում տարած հաղթանակի 70 ամյակին, երեխաների պաշտպանության միջազգային օրվան, Եզդի ազգի ցեղասպանության, Սահմանադրության, ՀՀ խորհրդանիշների օրվան, Սբ. Գևորգի հիշատակության օրվան, Վարդավառի տոնին, Խաղողօրհնեքի տոնին, ձախլիկների միջազգային օրվան և ՀՀանկախության 24-ամյակին նվիրված միջոցառումներ:</p> <p>Մայիսի 27-ին Գ.Նժդեհի անվան հրապարակում տեղի ունեցավ համերգային մեծ ծրագիր նվիրված Հանրապետության տոնին: Հունիս ամսին վարչական շրջանում մեկնարկեց <<Երևանյան ամառ 2015>> ծրագիրը, որի շրջանակներում տեղի ունեցան տարատեսակ մշակութային միջոցառումներ, շուրջ ծրագրեր, նկարչության բաց պարապմունքներ, սպորտլանդիաներ, կենդանի տիկնիկների մասնակցությամբ միջոցառումներ:</p> <p>Երևանի քաղաքապետարանի աջակցությամբ՝ Հայաստանում Մեծ Բրիտանիայի դեսպանատան հետ համագործակցության ծրագրի շրջանակում, Շենգավիթ վարչական շրջանի Ա. Տիգրանյանի անվան երաժշտական դպրոցի դահլիճում համերգային ծրագրով հանդես է եկել Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ թագավորության 6-րդ գնդի փողային նվագախումբը, որի կազմում</p>		
--	--	---	---	--	--

Երևանի զարգացման 2015 թվականի ծրագրի իրականացման հաշվետվություն

			<p>ընդգրկվել են նաև երաժշտական դպրոցի մանկավարժներն ու սաները: Հ.126, 127,128, 129, 132, 133, 135, 136, 137, 139, 140,141, 142, 143, 144, 146 և 147 մանկապարտեզների սաների համար «Մետրո» թատրոնում բեմադրվել է ամանորյա թատերական ներկայացումներ: Շենգավիթ վարչական շրջանում Ամանորին և Սուրբ ծննդյան տոներին նվիրված գլխավոր միջոցառումը տեղի ունեցավ դեկտեմբերի 28-ին Գ. Նժդեհի անվան հրապարակում:</p>		
5.Սոցիալական ապահովություն					
5.1	Աջակցության ծրագրեր	<p>Նախատեսվում է միջոցներ ձեռնարկել Ներքին Չարքախ թաղամասի պոլիկլինիկայի շենքային և գույքային պայմանների բարելավման ուղղությամբ: 2015թ. սոցիալականաջակցության ծրագրերը շարունակական բնույթ են կրելու: Նախատեսվում է սոցիալական աջակցության ծրագրերի շրջանակի ընդլայնում՝ հասարակական կազմակերպությունների, գործարար ոլորտի հետ համագործակցության արդյունքում:</p>	<p>ԵՔ-ԲԸՕԶԲ-15/1-1 Հարազատ չունեցող անձանց և սոցիալապես անապահով ընտանիքների համար հուղարկավորության կազմակերպման ծառայությունների տրամադրում՝ 96 շահառու: Սոցիալական տարբեր խնդիրներ ունեցող շուրջ 10824 ընտանիքներին տրամադրվել է հետևյալ աջակցությունները՝ Մնունդ՝ 3237 ընտանիքի, որից 92 սիրիահայ, 2000 ընտանիք ընդգրկվել են Ս.Զատիկի ծրագրում, վառելավայտ՝ 27 ընտանիքի, կոշիկ՝ 152, սպորտային կոշիկ՝ 3, հագուստ՝ 329, մարզական հագուստ՝ 123 ընտանիքի, պայուսակներ և գրենական պիտույքներ՝ 680, կանացի պայուսակ՝ 10, գրենական պիտույքներ՝ 22, խաղալիքներ՝ 278, անվասայլակ՝ 18, որից 1 սիրիահայ, 2 գույգ հենակ՝ , քայլակ՝ 4, տակդիր՝ 22, անկողնային պարագա՝ 153 որից 44 սիրիահայ, մանկապարտեզի սաներին անկողնային պարագա՝ 123, կենցաղային սարք՝ 283, խոհանոցային պարագաներ՝ 9, համակարգիչ՝ 2, հեռախոս՝ 1, հեռուստացույց՝ 2, տպիչ սարք՝ 6, նստարան՝ 1-ՀԿ, դեղորայք՝ 1, բժշկական օգնություն տրամադրելու միջնորդություն՝ 6,անօթևանների</p>	Բնակչության հատուկ սպասարկում» ՀՈԱԿ	

Երևանի զարգացման 2015 թվականի ծրագրի իրականացման հաշվետվություն

